

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԳԵՆԵՐԱԼ- ՄԱՅՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հեղինակը շնորհակալություն է հայտնում
ԱՍԱՏՈՒՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ՝ գրքի ստեղծման
մտահղացման և նրա ծախսերը հոգալու համար:
Հովանավորը գիրքը նվիրում է Հայրենական մեծ պատերազմում
զոհված պապի հիշատակին և հոր 65-ամյակին:

Автор благодарит
АСАТУРА ВЛАДИМИРОВИЧА АЙРАПЕТЯНА
за идею создания книги и за содействие в ее издании.
Спонсор посвещает книгу памяти, погибшего в Великой
Отечественной войне, деда и 65-летию отца.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԳԵՆԵՐԱԼ – ՄԱՅՈՐ
# ՎԼԱԴԻՄԻՐ ԱՄԱՏՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 2007

929:355.484(479.25) Հարությունյան Կ.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

К. А. АРУТЮНЯН

# ГЕНЕРАЛ–МАЙОР
# ВЛАДИМИР АСАТУРОВИЧ АЙРАПЕТЯН

А 92347 / II

ЕРЕВАН 2007

ՀՏԴ 325:355/359 (479 25)
ԳՄԴ 66.3 (2Հ) + 68.49 (2Հ) 243
Հ 300h

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագրական կոլեգիա՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Վլադիմիր Բարխուդարյան,**
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Աշոտ Մելքոնյան**
գեներալ-մայոր՝ **Ռաֆիկ Կարապետյան**

Գրախոսներ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
**Հրանտ Աբրահամյան**
պատմական գիտությունների դոկտոր
**Մուրադ Կարապետյան**

Պատ. խմբագիր՝ – **Ա. Ա. Մելքոնյան**

***Հարությունյան Կ. Ա.***
Հ 300 h Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան:/.– Եր.: «Զանգակ–97», 2007.– 296 էջ+84 նկ.:

Հարուստ փաստական նյութերի և մասնակիցների հուշերի հիման վրա գրքում լուսաբանվել է ՀՀ ԶՈՒ հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի վարչության առաջին պետ. գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի կենսագրությունը և նրա գործունեությունը Հայկական բանակում հրթիռահրետանային զորքերի հիմնադրման ու մարտական կիրառման գործում, Արցախյան պատերազմում, որ սանձազերծված էր Ադրբեջանի կողմից: Հավելվածում բերվել են գեներալի մասին մարտական ընկերների հուշերը, մամուլում տպագրված նյութերը, հարցազրույցները, հոդվածները և զորախմբի բնութագրող մի շարք փաստաթղթեր:

Գիրքը նվիրված է գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի ծննդյան 65-ամյակին և նախատեսված է երիտասարդ սերնդի, զինծառայողների ու ընթերցող լայն շրջանների ռազմահայրենասիրական դաստիարակության համար:

Հ $\frac{0803010413}{0003(01)-2007}$ 2007 թ.

ԳՄԴ 66 3(2Հ)+68.49(2Հ)243

ISBN 978-99941-1-327-9

© Հարությունյան Կ., 2007 թ.
© «Զանգակ–97», 2007 թ.

# ԳՐՔԻ ՄԱՍԻՆ



Անչափ գովելի է ու բարձր գնահատանքի արժանի ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ղեկավարության ու գիտական խորհրդի՝ Ղարաբաղյան գոյամարտի ու նրա բովով անցած զորահրամանատարների հայրենանվեր գործունեությանը վերջապես անդրադառնալու և լայն հասարակությանը ներկայացնելու նախաձեռնությունը:

Մեր մատաղ սերնդին ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու համար այդպիսի հանրամատչելի գրքերն ու գրքույկները այսօր խիստ անհրաժեշտ են և շատ կարևոր, քանի որ աճող սերունդը, հատկապես դպրոցների բարձր դասարանների աշակերտները, զորակոչային տարիքի մեր պատանիները աղոտ պատկերացում ունեն թե՛ մեր մղած պատերազմի և թե՛ այդ պատերազմում մեր ձեռքբերումների մասին: Առավել ևս, նրանք հաճախ չգիտեն, թե այդ պատերազմում ովքեր կռեցին մեր հաղթանակը, ում ռազմագիտական, զորավարական հնարքներն էին, որոնք ժողովրդին բերեցին ոչ միայն բարոյական հաղթանակներ, այլև շատ դարեր հետո վերջապես ազատագրեցին ու հային վերադարձրին նրա կորցրած տարածքները, հայկական գյուղերն ու քաղաքները, դարեր շարունակ ավերված, քարուքանդ եղած մեր մասունքները՝ եկեղեցիներն ու կրթօջախները:

Եվ ահա իմ ձեռքի տակ է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի՝ տպագրության պատրաստ «Գեներալ–մայոր Վլադիմիր Աստուրի Հայրապետյան» փաստավավերագրական հիասքանչ աշխատանքը, որում հեղինակը գիտական պատմաբանին յուրահատուկ բծախնդրությամբ

ու մանրակրկիտ վերլուծությամբ ներկայացնում է Արցախյան գոյամարտի և հանրապետության սահմանների անձեռնմխելիության համար մղված մարտերում մեր բանակի և նրա հրետանու գործողությունները, որի օրրանի մոտ կանգնած է եղել իմ վաղեմի ընկեր ու լավ բարեկամ, Հայոց բանակի հրթիռահրետանային զորքերի կազմակերպիչներից ու ստեղծողներից մեկը՝ բանակի ճանաչված ու հարգված հրամանատար, ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի վարչության պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը:

Գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանին ճանաչում է, նրա անձի նկատմամբ մեծ հարգանք է տածում բանակի ողջ սպայակազմը: Եվ գիտեն նրան միայն դրական չափորոշիչներով, ճանաչում են որպես գիտակ, բազմափորձ հրետանավորի, և, որ ամենակարևորն է, որպես մեծ հայրենասերի, իր հողին կպած հայ մարդու, որի նպատակը իր հայրենիքը ազատ ու անկախ տեսնելն է, իր ազգի բարօրությունն ու երջանկությունը:

Այդ նպատակների համար նա կռվել ու հաղթել է:

Ահա այն զինվորականն ու ռազմական գործիչը, որի անցած ուղին, գործունեության ու ծառայության յուրաքանչյուր աստիճանն ընդօրինակման են արժանի: Այդպիսի մարդկանց կյանքի ամեն մի դրվագը յուրահատուկ դպրոց է աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության համար:

*ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ,*
*գեներալ–լեյտենանտ՝ Ս. ՄԻՐԶՈՅԱՆ*[1]

---

[1] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ, գեներալ–լեյտենանտ Ստեփան Վահանի Միրզոյանն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է զինվորական ծառայությանը:

ԽՍՀՄ զինված ուժերում ծառայել է մինչև 1990 թ., այնուհետև կամավոր թողել է ծառայությունը Խորհրդային բանակում, վերադարձել հայրենիք և լծվել բանակաշինության ու Հայաստանի Հանրապետության սահմանների անվտանգության ապահովման գործին: Գլխավորել է ՀՀ ՊՆ կադրերի վարչությունը, եղել է զորամիավորման հրամանատար, իսկ 2000 թ. մարտից մինչ օրս Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետն է:

Ստեփան Վահանի Միրզոյանը Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների, հասարակության մասին գիտությունների միջազգային, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային, Հայկական տեխնոլոգիական և ինժեներական, Ֆրանսիայի «Արարատ» միջազգային, Ռուսաստանի անվտանգության, պաշտպանության և իրավակարգի ակադեմիաների անդամ է:

# ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կազմավորման և ԽՍՀՄ–ի փլուզումից հետո խիստ հրամայական և հրատապ պահանջ դարձավ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի սահմանները ադրբեջանական զավթիչների լայնածավալ հարձակումներից պաշտպանելու խնդիրը:

1990թ. սեպտեմբերին Երևանում կազմավորվեց Հատուկ գունդը, իսկ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում և Մեղրիում ձևավորվեցին հինգ վաշտեր: Հայաստանի փաստացի անկախությունը նոր իրավական և գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման գործում: Բացի այդ, հանրապետության տարբեր շրջաններում մեկը մյուսից անկախ գործում էին շուրջ 80 կամավորական ջոկատներ, որոնք իրենց խիզախ գործողություններով փորձում էին կասեցնել ադրբեջանական զավթիչների հարձակումները:

1991թ. մայիսի 4-ին ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծվեց պաշտպանության պետական կոմիտե, որը զգալի աշխատանք կատարեց այդ ջոկատների ու վաշտերի համալրման և գործողությունները մեկ միասնական կենտրոնից ղեկավարման ուղղությամբ: Նման կառույց էր ստեղծվել նաև Լեռնային Ղարաբաղում: 1991թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց հանրապետության 22 նախարարությունների, այդ թվում՝ պաշտպանության նախարարություն ստեղծելու վերաբերյալ: Դեկտեմբերին օրենքներ ընդունվեցին զինապարտության և զինվորական ծրագրման մասին: 1992թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» որոշումը՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց ազգային բանակի ստեղծումը: Այդ օրն էլ պաշտոնապես տոնվում է որպես Հայկական բանակի տոն: ՀՀ առաջին պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Զավենի Սարգսյանը, որը մինչ այդ եղել էր խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ: Վազգեն Սարգսյանը ուներ բարձրագույն կրթություն, ճանաչված բանաստեղծ և արձակագիր էր, ուներ բնատուր կազմակերպչական տաղանդ, անձամբ մասնակցել էր Հայաստանի սահմանների ինքնապաշտպանական մարտերին, մեծ հեղինակություն էր վայելում երկրապահ-կամավորականների շրջանում, հանդիսանում նրանց սիրված հրամանատարը: Կառավարության որոշմամբ նորաստեղծ նախարարության ենթակայու-

թյանը հանձնվեցին ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչությունները ու առանձին բաժինները: 1992թ. մայիսին ՀՀ պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին[1]:

Վազգեն Սարգսյանը լավ էր գիտակցում, որ առանց արհեստավարժ սպայական կադրերի հնարավոր չէ ստեղծել կանոնավոր բանակ: Այդ պատճառով էլ նա դիմեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարին՝ թույլատրել Հայաստանում ծառայել ցանկացող հայազգի զինծառայողներին վերադառնալ Հայաստան և ծառայությունը շարունակել հայկական զինված ուժերի շարքերում: Հայաստանի պաշտպանության նախարարի կոչը լայն արձագանք գտավ հատկապես Ռուսաստանի զինված ուժերում ծառայող հայ զինվորականության շրջանում: Չնայած Հայաստանում տիրող տնտեսական ծանր վիճակին, պատերազմական պայմաններին, հայ գեներալներից և սպաներից ամենահայրենասերները, թողնելով իրենց լավ վարձատրվող զինվորական պաշտոնները, արձագանքելով նախնիների արյան կանչին, արհամարհելով Հայաստանում իշխող մութը, սովը, ցուրտը, բազմաթիվ այլ զրկանքներ, եկան Հայաստան և կամավոր կերպով լծվեցին հայրենիքի պաշտպանության սրբազան գործին:

«Դրանց թվում էին այսօր արդեն գեներալ-գնդապետներ Գուրգեն Դալիբալթայանը, Միխայիլ Հարությունյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր–Գրիգորյանցը, Հրաչ Անդրեսյանը, Քրիստափոր Իվանյանը, Մկրտիչ Աբրահամյանը, Յուրի Խաչատուրովը, Միխայիլ Գրիգորյանը, գեներալ-մայորներ Արկադի Տեր-Թադևոսյանը, Արտուշ Հարությունյանը, Մուրազ Սարգսյանը, Լեոնիդ Մարտիրոսովը, Վլադիմիր Հայրապետյանը, Ալիկ Սարգսյանը, Մարտին Կարապետյանը, Տիգրան Գասպարյանը, Ալիկ Միրզաբեկյանը և շատ ուրիշներ: Այս անձանց կողքին ես չեմ կարող չնշել գեներալ-լեյտենանտ Անատոլի Զինևիչի անունը, որի համար Հայաստանը դարձավ երկրորդ հայրենիք»[2]:

Հայկական զինուժի կազմավորման գործում իր արժանի ավանդը ներդրեց խորհրդային բանակի գեներալ-մայոր Գուրգեն Հարությունի Դալիբալթայա-

---

[1] Թվական տվյալները վերցված են ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթից, որը արտասանվել է ՀՀ զինուժի 10-ամյակին նվիրված նիստում, «Հայ Զինվոր», 2-9 փետրվարի, 2002թ., թիվ 4, էջ 3-4:

[2] Սերժ Սարգսյան, «Բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավականն է», «Ամարաս», Երևան, 2002թ.

նը, որը եղել է ՀՀ զինուժի գլխավոր շտաբի առաջին պետը, մասնակցել է Շուշիի ազատագրման գործողությունների իրականացմանը:1992թ. նրան շնորհվել է Հայկական բանակի գեներալ-լեյտենանտի, 1996թ.՝ գեներալ-գնդապետի կոչում: 1995թվականից մինչև 2007թ. փետրվարը ՀՀ նախագահի խորհրդականն եր և ՀՀ ռազմական գլխավոր տեսուչը:

Հայկական զինված ուժերի շինարարության, հանրապետության սահմանները ադրբեջանական զավթիչներից պաշտպանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդին Ադրբեջանի ավելի քան 70-ամյա գաղութային լուծը թոթափելու և թշնամու կողմից զավթված հայկական պատմական հողերի ազատագրման նպատակով Հայաստան եկած զորավարների թվում էր նաև Նորատ Տեր-Գրիգորյանցը, որը 1992թ. օգոստոսի 10-ին նշանակվեց Հայաստանի Հանրապետության ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ և շատ բան արեց հայրենիքի պաշտպանության և բանակաշինության գործում: 1992թ. ապրիլից Հայաստանում էր գտնվում խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտ Հրաչ Հմայակի Անդրեսյանը, որը նշանակվել էր ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ: Մինչ այդ նա խորհրդային բանակում վարել էր դիվիզիայի և բանակի հրամանատարի, զինվորական օկրուգի շտաբի պետի ու զինվորական խորհրդի անդամի բարձր պաշտոններ: Գալով Հայաստան՝ նա անձամբ ղեկավարեց Լաչինի պաշտպանական և հատկապես Քելբաջարի 2-րդ (1994թ.) մարտական գործողությունները: 1993թ. հոկտեմբերից 1994թ. հունիս նա վարեց Հայաստանի ԶՈւ գլխավոր շտաբի պետի պաշտոնը. մինչև նշված ժամանակահատվածում նրան հաջողվեց ապահովել բանակի բոլոր կառույցների արդյունավետ համագործակցությունը պատերազմի ընթացքում և նախադրյալներ ստեղծեց վերջնական հաղթանակի համար: Գեներալ-լեյտենանտ Հ.Անդրեսյանը այն եզակի զինվորական անհատականություններից էր, որը համարձակ և հիմնավորված ձևով առաջադրում էր իր տեսակետը պաշտպանության նախարար Վ.Սարգսյանին կարևոր որոշումների կայացման գործում: Վերջինս մեծ հարգանքով ընդունում էր գեներալի առաջարկությունները՝ որպես արդիական, հիմնավորված և ճիշտ զինվորական մտահղացում:

Առաջինների թվում Հայաստան եկած խորհրդային բանակի գեներալներից էր հրետանու գեներալ-մայոր Քրիստափոր Իվանի Իվանյանը, որը, չնայած իր պատկառելի տարիքին, 1992թ. գարնանը ներկայացել է ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին և առաջարկել իր ծառայությունները:

72-ամյա գեներալը սկզբում նշանակվեց մոտոհրաձգային բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար, մարտնչեց Լեռնային Ղարաբաղում և Սյունիքի արևելյան ճակատում: 1994թ. հունվարի 28-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Ք.Ի.Իվանյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում:

ՀՀ ԶՈւ համալրման գործում հսկայական ներդրում է ունեցել խորհրդային բանակի գեներալ-մայոր Արտուշ Թադևոսի Հարությունյանը: 1992թ. նա ՀՀ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալն էր, 1992-1993թթ.՝ Գորիսի օպերատիվ ուղղության հրամանատարը, մասնակցել է Արցախի պաշտպանական մարտերին, 1996 թ.–ից մինչ օրս՝ ՀՀ զինվորական կոմիսարը:

Արցախյան պատերազմի ակտիվ մասնակիցն է Արկադի Իվանի Տեր-Թադևոսյանը, որը հատկապես աչքի ընկավ 1992 թ. մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրման ժամանակ: 1992 թ. նրան շնորհվել է Հայկական բանակի գեներալ-մայորի կոչում: Ա. Ի. Տեր-Թադևոսյանը զինվորականության և ժողովրդական լայն զանգվածների շրջանում հայտնի է «Կոմանդոս» պատվանունով: Այժմ նա գլխավորում է ՀՀ պաշտպանական և մարզատեխնիկական ընկերության կենտրոնական խորհրդի աշխատանքները:

Հայկական զինուժի կազմավորման գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանը (1992-1993թթ. եղել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, 1994-1997թթ.՝ ՊՆ բազմաբնույթ ռազմահրամանատարական ուսումնարանի (այժմ՝ ինստիտուտ) պետ, այնուհետև՝ ՀՀ ՊՆ հատուկ հանձնարարությունների գծով գեներալ, այժմ՝ ՊՆ բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի նախագահ), գեներալ-մայոր Մուրազ Սարուխանի Սարկիսյանը, որը 1992 թվականին նշանակվեց ՀՀ ՊՆ մարտական պատրաստության վարչության պետ, մեծ է նրա դերը ինչպես ՀՀ զինված ուժերի կազմավորման, այնպես նրա սահմանների պաշտպանության գործում, խորհրդային բանակի բարձրաստիճան սպաներ (գնդապետներ և փոխգնդապետներ)՝ Միխայիլ Հարությունի Հարությունյանը (այժմ՝ ԶՈւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ, 2007 թ. ապրիլի 24–ին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար), Միխայիլ Գուրգենի Գրիգորյանը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ, ՀՀ ՊՆ հատուկ հանձնարարությունների գծով գեներալ), Յուրի Գրիգորի Խաչատուրովը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ) Էնրիկո Ալեքսանդրի Ապրիամովը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ), Մկրտիչ Աշոտի Աբրահամյանը (այժմ՝ գեներալ-լեյտենանտ, 1992-2000 թթ.՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ), Լեոնիդ Արմենակի Մարտիրոսովը (այժմ՝ գեներալ-մայոր, 1993-2000 թթ. եղել է ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ-գլխավոր շտաբի պետի տեղակալ, մասնակցել է Շուշիի ազատագրմանը), Ալիկ Գեղամի Սարգսյանը (1992-1998թթ. եղել է ՀՀ ՊՆ հակաօդային պաշտպանության զորքերի հիմնադիր հրամանատարը և առաջին պետը, գեներալ-մայորի կոչում է ստացել 1995թ.), Սեմյոն Խորենի Հակոբյանը (եղել է ՀՀ ՊՆ թիկունքի վարչության շտաբի պետ, բրիգադի հրամանատար, ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի պետ, 2001թ. ստացել է գեներալ-մայորի կո-

չում), Ստեփան Վահանի Միրզոյանը (գեներալ-լեյտենանտ, 1990թ. նշանակվել է ՀԽՍՀ զինկոմի տեղակալ զորակոչի գծով, 1994թ.՝ ՀՀ ՊՆ կադրերի վարչության պետ, 1997-2000թթ. զորամիավորման հրամանատար, 2000 թ.-ից առ այսօր՝ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ) :

ՀՀ ԶՈւ կազմավորման գործին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել գեներալ-մայոր Ռաֆիկ Միքայելի Կարապետյանը, որը 1984 թվականից ղեկավարում էր հանրապետության ԴՕՍԱԱՖ-ի, ապա պաշտպանական և մարզատեխնիկական ընկերության հանրապետական կոմիտեի աշխատանքները: Նա մեծ աջակցություն ցուցաբերեց նորաստեղծ Հայկական բանակին՝ տրամադրելով իր իրավասության տակ գտնվող ուսումնամարտական ռազմական տեխնիկան, զենքը, զինամթերքը և այլ նյութական միջոցներ, այժմ նա ՀՀ վետերանների խորհրդի նախագահ է:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի կազմավորման գործում, ինչպես նաև ադրբեջանցի զավթիչների դեմ մղված ազգային–ազատագրական պայքարում մեծ ավանդ ներդրեցին գեներալ-լեյտենանտներ Մանվել Սեկտորի Գրիգորյանը, Սեյրան Մուշեղի Օհանյանը (2007 թ. մայիսի 11-ին նշանակվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ), Գուրգեն Գառնիկի Մելքոնյանը, Սամվել Անդրանիկի Բաբայանը, գեներալ-մայորներ Սեյրան Ֆիրդուսու Սարոյանը, Հայկազ Պապիկի Բաղմանյանը, Ժորա Սահակի Գասպարյանը, Հմայակ Վարազդատի Հարոյանը, Աստվածատուր Ավետիքի Պետրոսյանը և ուրիշներ:

ՀՀ և ԼՂՀ զինված ուժերի կայացման գործը ղեկավարել են ՀՀ առաջին նախագահ Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ նախագահ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը, 1997-1998թթ.՝ ՀՀ վարչապետ, 1998 թ –առ այսօր՝ ՀՀ նախագահ, ՀՀ պաշտպանության նախարարներ Վազգեն Զավենի Սարգսյանը, Սերժ Ազատի Սարգսյանը:

Հայկական զինված ուժերի, հատկապես նրա հրետանային և հրթիռային զորքերի կազմավորման գործում իր արժանի ավանդն է ներդրել խորհրդային բանակի գնդապետ Վլադիմիր Աստուրի Հայրապետյանը: Նա Հայաստան եկավ 1992թ. փետրվարի սկզբին Ռուսաստանի զինված ուժերի Սիբիրյան զինվորական օկրուգից, որտեղ վարում էր 28-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու հրամանատարի գեներալական պաշտոնը: Մինչ այդ Վ.Ա.Հայրապետյանը անցել էր 31 տարվա զինվորական ուղի, վարել դասակի, մարտկոցի, դիվիզիոնի, գնդի հրամանատարի, կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու զորքերի շտաբի պետի, ապա կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու գլխավոր հրամանատարի պաշտոններ, ավարտել է Թբիլիսիի հրետանային զինվորական ուսումնարանը (1961-1964 թթ.) և Լենինգրադի (Ս.Պետերբուրգ) հրետանային զինվորական ակադեմիան (1968-72 թթ): 1992թ. հունիսի 10-ին գալով Հայաստան՝ գնդապետ Վ.Ա.Հայ-

րապետյանը ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հրամանով նշանակվել էր ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի վարչության պետ: Նշանակման առաջին իսկ օրվանից գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը անմիջապես ձեռնամուխ է եղել ՀՀ ԶՈւ հրետանային և հրթիռային զորքերի ստեղծմանն ու կազմավորմանը, նրա պատասխանատվությամբ, ջանքերով և մեծ եռանդով ստեղծված առաջին հրետանային մարտկոցները, այնուհետև հրետանային դիվիզիոնները արդեն 1992թ. հուլիս ամսից և ամբողջ 1993-1994թթ. ընթացքում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան ադրբեջանական քոչվոր զավթիչների հարձակումները հետ մղելու, նրանց կողմից բռնազավթված հայկական հողերի ազատագրման մարտերին: «Պատերազմի աստված» հրետանու հուժկու և նպատակասլաց մարտական կիրառումը ռազմական մեծ նշանակություն ունեցավ հատկապես Լաչինի մարդասիրական միջանցքի պահպանման և հանրապետության արևելյան սահմանների ամրապնդման և պաշտպանության գործում, որտեղ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանն անձամբ էր ղեկավարում հրետանու մարտական գործողությունները: 1992թ. հոկտեմբերի 8-ին Լաչինի մոտակայքում գտնվող Ձերտի գյուղի մոտ տեղի ունեցած մարտում գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը աջ ձեռքից վիրավորվում է, սակայն մարտադաշտից չի հեռանում և մնում է մինչև մարտական առաջադրանքի հաղթական ավարտը: Հրետանու հուժկու և դիպուկ հարվածներից քաջալերված հայկական հետևակը ոչ միայն կարողացավ բարեհաջող կազմակերպել Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանությունը, այլև ընդլայնել այն:

Հրթիռային և հրետանային զորքերի կազմավորման աշխատանքներին զուգահեռ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը 1992թ. նոյեմբերին և դեկտեմբերին մասնակցեց նաև Մարտակերտի, 1993թ. ապրիլ – մայիսին՝ Կապանի շրջանի Ճակատեն, Շիկահող, Սրաշեն և Ծավ գյուղերի ճակատային գծի, 1993թ. հունիսին՝ Մարտակերտի պաշտպանական, 1994թ. հունվարի 1-ից մինչև փետրվարի 24-ը՝ Քելբաջար (Քարվաճառ) - Օմարի լեռնանցքի ազատագրման մարտերին:

Կապանի մատույցներում հակառակորդի ջախջախման և նրա հարակից շրջաններից ադրբեջանական քոչվոր-զավթիչներին դուրս վռնդելու և լեռնագործների քաղաքի անվտանգությունն ապահովելու մարտերում հրետանային ստորաբաժանումների կրակը հմուտ ղեկավարելու համար Կապանի քաղաքապետարանը հետագայում՝ 2003թ. հուլիսի 30-ին գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանին շնորհեց Կապան քաղաքի «պատվավոր քաղաքացու» կոչում:

Ինչպես հայտնի է, մարտական գործողությունները շարունակվեցին մինչև 1994թ. մայիսի 16-ը, երբ ադրբեջանական կողմը նորանոր կորուստներից խուսափելու համար ստիպված էր դադարեցնել իր իսկ սանձազերծած պատերազմը և զինադադար կնքել:

Հաշվի առնելով գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի կազմակերպչական մեծ ընդունակությունները և կատարած շնորհակալ աշխատանքը հայկական զինուժի հրետանային և հրթիռային զորքերի կազմավորման ու ղեկավարման գործում, Արցախյան պատերազմում նրա ակտիվ մասնակցությունը՝ 1994թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձի օրը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին առաջինների թվում շնորհվեց գեներալ-մայորի կոչում[1]:

Հայրենիքը բարձր է գնահատել նաև Հայաստանի սահմանամերձ մարտերում ցուցաբերած խիզախությունն ու արիությունը, ինչպես նաև հրետանային, հրթիռային զորքերի կազմավորման և մարտական կիրառման գործում ձեռք բերած հաջողությունները՝ հրետանու հմուտ հրամանատարին պարգևատրելով Մարտական խաչի 2-րդ աստիճանի և «Վարդան Մամիկոնյան» շքանշաններով, «Արիության համար», «Մարշալ Բաղրամյան», «Անդրանիկ Օզանյան», «Դրաստամատ Կանայան», «Գարեգին Նժդեհ» և այլ մեդալներով:

Զինադադարի կնքումից հետո մինչև 2003թ. հոկտեմբերի 16-ը գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը անմնացորդ իր ուժերն ու կարողություններն է նվիրաբերել հայկական զինուժի հրետանային և հրթիռային զորքերի կատարելագործման և ամրապնդման գործին, բազմակողմանի օգնություն ցույց տվել հրետանային զորամասերի հրամանատարներին՝ ուսումնամարտական առաջադրանքները բարձր մակարդակով կատարելու համար: 2003թ. հոկտեմբերի 16-ին համաձայն «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ 60 տարին լրացած գեներալը տարիքի պատճառով անցավ թոշակի: Սակայն հաշվի առնելով գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի 42-ամյա զինվորական անբասիր ծառայությունը և նրա գիտելիքներն ու հարուստ փորձը՝ պաշտպանության նախարարի որոշմամբ նրան ընդգրկեցին նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի կազմում:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը այսօր էլ շարունակում է մասնակցություն ցուցաբերել ՀՀ ԶՈւ ամրապնդման գործին և իր հարուստ զինվորական գործը ուսուցանել հրթիռահրետանային զորքերում ծառայող սպաներին և զինվորներին:

Տողերիս հեղինակը, որը 1918-1945թթ. հայկական զորամասերի պատմության, 1939 - 1945թթ. Երկրորդ համաշխարհային և 1941 - 1945թթ. Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության, մարշալներ Հովհաննես Բաղրամյանի, Արմենակ Խանփերյանցի կյանքի ու գործունեության մասին հրատարակել է 12 մենագրություն, բազ-

---

[1] Վ. Ա. Հայրապետյանի հետ նույն հրամանագրով գեներալ-մայորի կոչում շնորհվեց Միխայիլ Գուրգենի Գրիգորյանին, Հմայակ Վարազդատի Հարոյանին և Սամվել Անդրանիկի Բաբայանին:

մաթիվ այլ գիտական աշխատություններ, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանին ճանաչում է դեռևս 1960-ական թվականներից: Սկզբում նրա մասին ես իմացել եմ նրա հորաքրոջ տղաներ Սոսից և Հրանտից, ապա նրա հորեղբոր տղա Վազգեն Պետրոսի Վարդանյանից, որը Հայրենական մեծ պատերազմի մասնակից էր և աչքի էր ընկել հատկապես 1944-1945թթ. ֆաշիստական զավթիչներից Չեխոսլովակիայի ազատագրման մարտերում, որի համար նրան շնորհվել էր Բռնոյի պատվավոր քաղաքացու կոչումը: Հետագայում աշխատանքիս բնույթը և կնոջս կողմից ազգակցական կապերը ինձ հնարավորություն տվեցին ավելի մոտիկից ծանոթանալու գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի հետ: Այդ ամենը հնարավորություն տվեց ինձ գիրք գրելու գեներալի մասին, որը շատ ուսանելի կլինի մատաղ սերնդի համար և կնպաստի նրա ռազմահայրենասիրական դաստիարակության գործին, ինչպես նաև հայկական բանակի հրետանավորների մասնագիտական զարգացմանը:

Հարկ է նշել, որ առ այսօր նման բնույթի գրքեր են գրվել գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի, գեներալ–լեյտենանտ՝ Հրաչ Անդրեսյանի, Քրիստափոր Իվանյանի, Մանվել Գրիգորյանի, Միխայիլ Գրիգորյանի և Հայկազ Բաղմանյանի մասին: Մեր կարծիքով՝ նման ուսումնասիրություններ պետք է շատ կատարվեն: Հայրենիքի զինված պաշտպանության գործի նվիրյալների մասին դեռ բազմաթիվ գրքեր կգրվեն: Պետք է գիտականորեն ուսումնասիրվի նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի կազմավորման և կայացման պատմությունը, վեր հանվի ադրբեջանական քոչվոր զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազգային–ազատագրական պատերազմի պատմությունը: Այս ասպարեզում կարևոր գործ կարող է կատարել ՀՀ Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը: Այդ նպատակով պետք է պաշտոնապես ինստիտուտի «Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» թեմատիկ խմբի հիման վրա ստեղծել ռազմական պատմության բաժին, որի հիմնական խնդիրներից մեկը կդառնա հայկական զինուժի պատմության ուսումնասիրությունը հնուց մինչև մեր օրերը: Այդ բաժինը պետք է սերտորեն համագործակցի ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ, ԸՆՏԱՆԻՔ

Վլադիմիր Աստուրի Հայրապետյանը ծնվել է 1942թ. հունիսի 25-ին ՀՀ Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում՝ զինծառայողի ընտանիքում: Նրա հայրը՝ Աստուր Ջհանգիրի Հայրապետյանը, ծնվել է 1918թ. Կապանի շրջանի Ներքին Մազրա գյուղում, որը տեղակայված էր Շիշկերտ և Լիճք գյուղերի արանքում: 1937թ. Աստուր Հայրապետյանը զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը և ծառայել Լենինգրադի զինվորական օկրուգում: Երբ 1939թ. նոյեմբերի 30-ին սկսվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, կրտսեր հրամանատար Ա.Ջ.Հայրապետյանը օկրուգի 7-րդ բանակի կազմում մասնակցեց մինչև 1940թ. մարտի 13-ը տևած այդ կարճատև, բայց չափազանց արյունահեղ մարտերին:

7-րդ բանակը, որի հրետանու պետն էր գեներալ-մայոր Միքայել Արտեմի Պարսեղովը, սկզբից մինչև վերջ գրոհում էր Լենինգրադից 32 կմ հյուսիս ֆինների կառուցած երկարատև պաշտպանական ամրացված համակարգը, որը կոչվում էր ֆիննականավոր ռազմական և պետական գործիչ, մարշալ Կարլ Մաններհայմի անունով: Մաններհայմի պաշտպանական համակարգն ուներ 135 կմ երկարություն և 90 կմ խորություն: Այն բաղկացած էր մի քանի պաշտպանական հանգույցներից, որոնք հագեցված էին բնական (գետեր, անտառներ) և արհեստական (լարափակոցներ, ականադաշտեր, հակատանկային խանդակներ) փակոցներով: Ընդհանուր առմամբ «Մաններհայմի գիծը» ուներ ավելի քան 2000 դզոտներ ու դոտեր, 136 կմ ընդհանուր երկարությամբ արգելափակոցներ, մի քանի հազար կմ լարափակոցներ, զրահիտե գլաքարերի շերտեր, մետաղյա ռելսերից պատրաստված հակատանկային արգելախաչուկներ և այլն: Չնայած ձմեռային սառնամանիքի դաժան պայմաններին և ֆիննական զորքերի հերոսական դիմադրությանը՝ Կարմիր բանակին հաջողվեց ծանր կորուստների գնով հաղթահարել «Մաններհայմի գծի» բազմաշերտ պաշտպանական համակարգը և հաղթանակ տանել: Մարտերում զոհվածների թվում էին Աստուր Հայրապետյանի համաերկրացիներ Հայկազ Մակիչի Ավետիսյանը (Ծավ գյուղից, Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի եղբայրը), Գարեգին Սմբատի Խաչատրյանը, Արտեմ Ավանեսի Առաքելյանը, Արծվիկ Պատվականի Հովհաննիսյանը (Շիկահող գյուղից), Սարգիս Մովսեսի Կոստանդյանը (Գեղանուշ գյուղից) և ուրիշներ:

«Մաններհայմի գծի» ամրությունները ավերելու գործում մեծ դեր էր կատարել հրետանին: Հրետանու կրակը հմտորեն ղեկավարելու համար 7-րդ բանակի հրետանու պետ Միքայել Պարսեղովին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1940թ. մարտի 21-ի հրամանագրով շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Նույն թվականի հունիսի 4-ին նրան առաջինների թվում շնորհվեց հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում: Ասատուր Հայրապետյանը շատ էր հպարտանում իր երկրացու հաջողություններով և որոշեց, որ եթե տղա ունենա, նա անպայման պետք է զինվորական դառնա՝ հրետանու հերոս հրամանատարի նման, իսկ անունն էլ կդնի Վլադիմիր:

1940թ. վերջերին Ասատուր Հայրապետյանը զորացրվեց Կարմիր բանակի շարքերից, վերադարձավ տուն և աշխատանքի անցավ Կապանի հացամթերումների գրասենյակում: 1941թ. սկզբներին նա ամուսնացավ համագյուղացի Նուբար Առուստամի Աղասյանի հետ: Սակայն կարճ տևեց ամուսնական կյանքն ու խաղաղ աշխատանքը: 1941թ. հունիսի 22-ին սկսվեց Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Չնայած Ասատուր Հայրապետյանը ամրագրված (բրոնյա) ուներ բանակ չմեկնելու համար, սակայն նա մի քանի անգամ դիմեց զինկոմիսարիատ՝ կամավոր ռազմաճակատ մեկնելու խնդրանքով: 1942թ. գարնանը վերջապես Ասատուր Հայրապետյանին որպես կամավոր ուղարկեցին ռազմաճակատ: Այդ ժամանակ ընտանիքում արդեն երեխայի էին սպասում:

Ասատուրը մարտնչեց Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի կազմում, մասնակցեց Խարկովի ուղղությամբ 1942թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցած կատաղի և արյունահեղ մարտերին, ճաշակեց խորհրդային զորքերի համատարած նահանջի դառնությունները, հասավ մինչև Ստալինգրադ և մասնակցեց հերոս քաղաքի պաշտպանությանը: Հենց այդ օրերին էր, որ նա ստացավ այնքան բաղձալի նամակը, որտեղ կինը հայտնում էր, որ տղա են ունեցել և անունը դրել են Վլադիմիր: Տուն ուղարկած պատասխան նամակում Ասատուրը հայտնում էր, որ անչափ ուրախ է որդու ծննդյան օրվա առթիվ և մինչև արյան վերջին կաթիլը կմարտնչի հիտլերյան զավթիչներին Ստալինգրադի պատերի տակ ջախջախելու և դեպի Կովկաս նրանց ճանապարհը փակելու համար: «Ես հավատում եմ, որ հաղթանակը մերը կլինի,-նամակում գրել է Ասատուրը,- գուցե ես այդ ժամանակ կենդանի չլինեմ և չտեսնեմ որդուս: Խնդրում եմ, որ ֆիննական պատերազմից իմ բերած զինվորական վերնաշապիկից շոր կարեք տղայիս համար, երբ գնա դպրոց: Նրան կմեծացնեք և կզինվորագրեք հայրենիքին»:

Առաջ անցնելով՝ նշենք, որ Նուբարը պատվով կատարեց ամուսնու պատվիրանը: Երբ Վոլոդյան մեծացավ և հաճախեց գյուղի դպրոցի առաջին դասարան, մայրը նրա համար խնամքով պահած զինվորական վերնաշապիկից շոր կարեց: Փոքրիկ Վոլոդյային սազում էր այդ հագուստը,



Գեներալ Վ. Հայրապետյանի ծնողները մայրը Նուբարը (մահացել է 1949 թ.) հայրը Ասատուրը (զոհվել է 1944 թ.)



Ձախից Վոլոդյան (7 տարեկան) հորաքրոջ Հայկանուշի երեխաների՝ Նորայի և Հրանտի հետ



Երևան քաղաքի Շահումյանի շրջանի N 90 դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Վ. Հայրապետյանը,1958 թիվ



Ուսման գերազանցիկ, 3-րդ կուրսի ուսանող կուրսանտ Վ. Հայրապետյան ք. Թբիլիսի, 1963 թ.



Թբիլիսիի հրետանային ուսումնարանի կուրսանտներ ձախից Մենալավ Գրիգորյանը. աջից Վլադիմիր Հայրապետյանը, 1963 թ.



Լեյտենանտ Վ. Հայրապետյան, Թբիլիսի, 1964 թ.



Կուրսանտ Վ. Հայրապետյանը արձակուրդի ժամանակ իր դպրոցական ընկերների հետ, ձախից Աբրահամ Կարաբաջակյանը, Խաչիկ Նիկողոսյանը, Զավենը և Ավետիք Բարսեղյանը, ք. Երևան, 1963 թ.

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Նորապսակներ Վլադիմիր և Խաթուն Հայրապետյանները, ք. Երևան, 1965 թ.



Վ. Հայրապետյանը իր որդու Ասատուրի հետ (մեկ տարեկան), Գերմանիա, 1968 թ.



Командир взвода гвардии лейтенант А.Айрапетян ставит боевую задачу командиру отличного отделения разведки гвардии сержанту Б. Кульвердиеву.

Фото: К. Бутырина



Դասընկերները ձախից ավագ լեյտենանտ Վլադիմիր Հայրապետյանը և Աբրահամ Կարաբաջակյանը, ք. Երևան, 1968 թ.



Կապիտան Վլադիմիր Հայրապետյանը Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիայի ուսանող, 1970 թ.



Վ. Հայրապետյանի հայրը Աստուրը Սովետա-ֆիննական պատերազմի մասնակից, 1940 թ.



Գեներալի հորաքույրը Հայկանուշը, պապը Ջհանգիրը (1-ին համաշխարհային պատերազմի մասնակից: ռուսական զորքերի զինվոր) և հայրը Ասատուրը. Խորհրդա-ֆինական և Հայրենական մեծ պատերազմների մասնակից)



Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանի գերեզմանին որդին գնդապետ Վլադիմիր Հայրապետյանը, և թոռը Ասատուր Հայրապետյանը. ք. Միխալովցե (Սլովակիա). 1987 թ.




Գնդապետ Վ. Հայրապետյանը Խորհրդային բանակի զոհված զինվորների եղբայրական գերեզմանի հուշահամալիրում, 1988 թ., ք. Միխալովցե (Սլովակիա)

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ



На могиле отца, подполкоевник В. Айрапетян и майор В. Яковлев, г. Михаловце, братская могила погибших советских воинов (1941-45 гг.), 1988 год.



Հավերժ հիշատակ ծնողներիս իրենց որդի Օնիկ Հայրապետյանից (գեներալի հորեղբայրը): Կանցնեն դժվարին օրերն այս, բայց մոտենում է մեր հաղթանակի վերադարձի օրը, որը կայակվի ոչ հեռու ապագայում: Ձախից մարտական ընկերս Սամիկոն Թադևոսյանը. 30.11.1944 թ.



Կենտրոնում գեներալի հորեղբայր Շավարշ Հայրապետյանը իր մարտական ընկերների հետ, ք. Բելցի, 10.05. 1945 թ.

ՀՅՄԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



Գեներալի քեռիները աջից Մամիկոնը և Արտաշը. (երկուսն էլ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ. 1941-45 թթ.)



Полковник Исаджанян Михаил Меликович (участник ВОВ 1941-45 гг.)



Մայոր Վլադիմիր Հայրապետյան. հրետանային գնդի շտաբի պետ. ք. Ուսսուրիյսկ. 1975 թ.



Գնդի շտաբի պետ մայոր Վլադիմիր Հայրապետյանը իր տիկնոջ Խաթունի հետ, 1975 թ., ք. Ուսսուրիյսկ (Հեռավոր Արևելք)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Վլադիմիր Հայրապետյանը իր սիրելի դստեր Գայանեի հետ (7 տարեկան) Պրիմորյե. գ. Պանտելեյմոնովկա. 1978 թ.



Հրետանային գնդի հրամանատար փոխգնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան (Հեռավոր Արևելք. Պրիմորե. գ. Պանտելեյմոնովկա, 1980 թ.



Գնդապետ Վլադիմիր Հայրապետյանի ընտանիքը՝ տիկին Խաթունը, որդին Ասատուրը, դուստրը Գայանեն, ք. Կրասնոդար, 1986 թ.



Վլադիմիր Հայրապետյանի ընտանիքը՝ կինը Խաթունը, որդին Ասատուրը, և դուստրը Գայանեն, 1981 թ., ք. Պետրոպավլովսկ–Կամչատսկի

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



Գնդի հրամանատար, փոխգնդապետ Վլ. Հայրապետյանը իր տեղակալների հետ, ձախից մայոր Մարչենկոն, փոխգնդապետ Կուզինը, մայոր Բարանովը և մայոր Վ. Ալեքսեենկոն



Գեներալ–լեյտենանտ Վ. Նևիդնիկը, ձախից Հեռավոր Արևելքի ռազմական օկրուգի հրթիռահրետանային զորքերի պետը, հրետանային գնդի (զ/մ - 40888) հրամանատար փոխգնդապետ Վ. Հայրապետյանը և դիվիզիայի հրետանու պետ գնդապետ Սեմյոն Կոգանը, գ. Պանտելեյմոնովկա, 1978 թ.



Աջից հրետանային գնդի հրամանատար փոխգնդապետ Վլադիմիր Հայրապետյանը և նրա բարձրաստիճան հյուրերը կենտրոնում բանակի գեներալ Պետրովը և բանակի գեներալ Տրետյակը (Հեռավոր Արևելք), Պրիմորյե, գ. Պանտելեյմոնովկա, 1978 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Վ. Հայրապետյանը միշտ էլ ձգտել է իր հերթական արձակուրդը անցկացնել իր հայրենիքի չքնաղ բնության գրկում. երկու մարտական ընկերների Վլադիմիր Հայրապետյանի և Ալիկ Մարտիրոսյանի ընտանիքները, իսկ աջից Մհեր Իսաջանյանը իր տիկնոջ Նարինեի հետ. Լուսակերտ, Բջնի, 1987 թ.




Слева майор Вячеслав Шкробиенко, полковник Владимир Айрапетян, полковник Анатолий Маркушевич, 1980 г., город Петропавловск-Камчатский

՝որով շատ էր հպարտանում ընկերների մոտ:Նա երդվեց, որ երբ մեծանա, կկատարի իր պատվիրանը և անպայման զինվորական կդառնա...

Ստալինգրադում ճակատամարտի հաղթական ավարտից երեք ամիս անց հրամանատարությունը մարտերում աչքի ընկած Ասատուր Հայրապետյանին 1943թ. ապրիլին ուղարկեց՝ սովորելու կրտսեր լեյտենանտների դասընթացներում: Դասընթացներն ավարտելուց հետո լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը նույն թվականի հոկտեմբերի 4-ին նշանակում ստացավ 3-րդ գվարդիական բանակի 34-րդ հրաձգային կորպուսի 6-րդ հրաձգային դիվիզիայի 181-րդ հրաձգային գնդում՝ որպես վաշտի հրամանատար: Այդ դիվիզիայի շարքերում լեյտենանտ Ա.Հայրապետյանն ակտիվորեն մասնակցեց լայնահուն Դնեպր գետի անցման և Աջափնյա Ուկրաինայի ազատագրման մարտերին, արժանացավ գվարդիական կոչման: Չնայած նա մարտերում չորս անգամ վիրավորվեց, բայց բուժվելուց հետո վերադարձավ հարազատ զորամաս: 1944թ. հոկտեմբերի 4-ից գվարդիայի լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը Չորրորդ ուկրաինական ռազմաճակատի 138-րդ հրաձգային դիվիզիայի 650-րդ հրաձգային գնդի շարքերում որպես հրաձգային վաշտի հրամանատար մասնակցում էր Արևելա-կարպատյան մարտական գործողությանը: Այդ գործողության շնորհիվ խորհրդային զորքերը հաղթահարեցին Արևելա-կարպատյան լեռնաշղթան և դուրս եկան Արևելյան Սլովակիա: 138-րդ հրաձգային դիվիզիան ակտիվորեն մասնակցեց այդ գործողությանը և մեկը մյուսի հետևից գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեց Սլովակիայի Բուկովեց, Ռոստոկ, Ուստիե Պուտիլա, Պետրուս բնակավայրերը, մարտերով հաղթահարեց Տիսսա և Օնդավա գետերը, նոյեմբերի 26-ին մասնակցեց Միխալովցի քաղաքի ազատագրմանը:

Այդ մարտերում ցուցաբերած սխրանքների համար գվարդիայի լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը ներկայացվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանի: Ավաղ, նրան վիճակված չէր ստանալ պարգևը: Նոյեմբերի 30-ին Միխալովցի շրջանում գտնվող Կուցանի գյուղի ազատագրման մարտում գվարդիայի լեյտենանտ Ասատուր Հայրապետյանը զոհվեց քաջի մահով: Կռվից հետո ընկերները զինվորական բոլոր պատիվներով նրան հողին հանձնեցին Կուցանի գյուղում: Ավելի ուշ՝ պատերազմի ավարտից հետո, խիզախ սյունեցու աճյունը, ինչպես նաև Խորհրդային բանակի 20 հազար զոհվածների աճյունները տեղափոխվեցին Միխալովցի քաղաք և թաղվեցին եղբայրական գերեզմանոցում:

Ասատուրն իր վերջին նամակը գրել էր 1944թ. նոյեմբերի սկզբներին: Այնուհետև նրա ծնողները և կինը ստացան «սև թուղթը», որտեղ նշված էր. «Ձեր որդին՝ գվարդիայի լեյտենանտ Արտյուշա (Ասատուր) Ջհանգիրի Հայրապետյանը, հերոսաբար զոհվեց ռազմաճակատում 1944թ. նոյեմբերի 30-ին»: Սակայն նրա զոհվելու վայրը նշված չէր: Միայն իր զոհվելուց 44 տարի անց

Խորհրդային բանակի գնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին հաջողվեց երկարատև որոնումներից հետո պարզել հոր զոհվելու և գերեզմանի վայրը: Սլովակիայի տեղական իշխանությունների թույլտվությամբ Վ.Հայրապետյանը պատվիրեց հուշաքար, որի վրա ամրագրվեց հոր նկարը և փորագրվեց՝ «Գվարդիայի լեյտենանտ Արտյուշա (Ասատուր) Ջհանգիրի Հայրապետյան, 1918-30.11.1944թ.»:

Ի դեպ, Ասատուրի երկու կրտսեր եղբայրները՝ Օնիկը և Շավարշը, նույնպես գտնվում էին գործող բանակում և կռվում տարբեր ռազմաճակատներում:

Մեզ հաջողվեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում պարզել Օնիկ Ջհանգիրի Հայրապետյանի ճակատագիրը:

Օնիկը ծնվել էր 1923թ. Կապանի շրջանի Ներքին Մազրա գյուղում, սովորել գյուղի 7-ամյա դպրոցում, 1939թ. ընդունվել կոմերիտմիության շարքերը: 1942թ. օգոստոսի 18-ին 19-ամյա պատանին զորակոչվել էր Կարմիր բանակի շարքերը և մարտնչել Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի 4-րդ հրաձգային վաշտում՝ որպես սանիտար: Նա իր խիզախությամբ աչքի էր ընկել Հյուսիսային Կովկասի, հատկապես Թաման թերակղզու և Կերչ քաղաքի ազատագրման մարտերում: Թամանի համար մղված ծանր մարտերում միայն 1943թ. սեպտեմբերի 30-ին կարմիրբանակային Օնիկ Հայրապետյանը, վտանգի ենթարկելով սեփական կյանքը, մարտադաշտում առաջին անհրաժեշտ օգնությունն էր ցույց տվել 13 վիրավոր մարտիկների, ապա նրանց իրենց անձնական զենքերի հետ միասին հանել առաջին գծից: Ցուցաբերած սխրանքի համար անձնազոհ սանիտարը գնդի հրամանատար փոխգնդապետ Երվանդ Կարապետյանի 1944թ. հունվարի 23-ի 05 հրամանով պարգևատրվել էր «Արիության համար» մեդալով[1]: Հաշվի առնելով Օնիկ Հայրապետյանի քաջությունը՝ հրամանատարությունը նրան ուղարկեց՝ վերապատրաստվելու դիպուկահարների կարճատև դասընթացներում: 1944թ. հունվարի 23-30-ը 390-րդ գնդի դիպուկահար զինվոր, կարմիրբանակային Օնիկ Հայրապետյանը Կերչ քաղաքի համար մղված մարտերում իր դիպուկահար հրացանով ոչնչացրեց գերմանական 12 զինվոր և սպա: Ցուցաբերած արիության համար գնդի հրամանատար Երվանդ Կարապետյանը նրան ներկայացրեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանի: Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի 1944թ. ապրիլի 3-ի թիվ 011 հրամանով կարմիրբանակային Օնիկ Հայրապետյանը պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով[2]: Շուտով նրան շնորհվեց նաև կրտսեր սերժանտի կոչում և առաջ քաշվեց ջոկի

---

[1] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ. 33, ց. 717037, գ. 1185, թ.308

[2] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ. 89-րդ հրաձգային դիվիզիայի,ց. 2, գ.34, թ. 201

հրամանատարի օգնականի պաշտոնում: Կրտսեր սերժանտ Օ.Ջ.Հայրապետյանի ջոկը Կերչի ազատագրումից հետո՝ 1944թ. մայիսի 7-ից 12-ը, աչքի ընկավ Ղրիմի, հատկապես Սևաստոպոլ քաղաք-նավահանգստի ազատագրման մարտերում: Ավաղ, նրան բախտ չվիճակվեց հայ թամանցիների հետ հաղթարշավը ավարտել Բեռլինում և խրոխտ հայկական քոչարի պարել պարտված Բեռլինի Ռայխստագի պատերի տակ: 1945թ. հունվարի 19-ին նա հերոսաբար զոհվեց Լեհաստանում՝ Ռուսկի Բրուդ կոչվող բնակավայրից հապավ ընկած անտառում թաքնված թշնամու մեծաթիվ՝ 6000-անոց զորախմբի դեմ մղված անհավասար դաժան մարտում: Այդ մարտում հերոսի մահով զոհվեցին դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալ, գնդապետ Գրիգոր Բլբուլյանը, 531-րդ հրետանային գնդի հրամանատար, փոխգնդապետ Վասիլի Տինսկին, ծանր վիրավորվեց 390-րդ հրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Երվանդ Կարապետյանը և ուրիշներ:

Ասատուրի և Օնիկի եղբայր Շավարշը, չնայած մարտերով հասավ Գերմանիա, բայց բախտ չունեցավ հաղթանակի բերկրանքը վայելելու Բեռլինում: Նա մարտերից մեկում ծանր վիրավորվեց և որպես առաջին կարգի հաշմանդամ վերադարձավ տուն ու շուտով ստացած վերքից մահացավ Շիշկերտում: Ուստի պատահական չէր, որ երբ 1967թ. հուլիսի 27-ին Ներքին Մազրա գյուղի տեղում[1] բացվեց համագյուղացիների, ինչպես նաև Վլադիմիր Հայրապետյանի, Վազգեն և Ռազմիկ Վարդանյանների, Գրիշա Աղասյանի և Հրանտ Խաչանյանի մասնակցությամբ կառուցված Հայրենական մեծ պատերազմում զոհված 35 մազրացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը, ապա Շավարշ Հայրապետյանի անունը փորագրվեց Ասատուրի, Օնիկի, ինչպես նաև նրանց հորեղբոր տղա Վահան Վարդանի Հայրապետյանների անունների կողքին:

Հայրենական մեծ պատերազմում իր կատարած սխրանքներով աչքի է ընկել նաև գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի մոր եղբայրը՝ Մամիկոն Ռուստամի Հարությունյանը (ծնված 1915թ. Ներքին Մազրա գյուղում): ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի պարգևատրման բաժնում մեզ հաջողվեց պարզել, որ գլխավոր հրամանատարության ռեզերվի 9-րդ առանձին գվարդիական կործանիչ-հակատանկային հրետանային բրիգադի 329-րդ գվարդիական կործանիչ-հակատանկային գնդի 3-րդ հրետանային մարտկոցի վարորդ, գվարդիայի կրտսեր սերժանտ Մամիկոն Հարությունյանը գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Ձյուզինի 1944թ. սեպտեմբերի 5-ի 07 հրամանով պարգևատրվել է «Արիության համար» մե-

---

[1] Ներքին Մազրա գյուղը (մի շարք լեռնային փոքր գյուղերի թվում) 1939թ. լուծարքի էր ենթարկվել: Նրա բնակիչների մի զգալի մասը բնակություն էր հաստատել հարևան Շիշկերտ և Ծավ գյուղերում, մնացածը՝ Կապանում և Երևանում:

դալով: Մենք գտանք նաև նրա պարգևատրման թերթիկը, որտեղ ասված էր. «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից «Արիության համար» մեդալով եմ պարգևատրում 3-րդ մարտկոցի վարորդ, գվարդիայի կրտսեր սերժանտ Մամիկոն Ռուստամի Հարությունյանին՝ այն բանի համար, որ 1944թ. օգոստոսի 30-ին հրետանային և ականանետային կրակի տակ հրանոթը դուրս բերեց բաց դիրքեր և օգնեց հաշվարկին կրակ մղել հարձակման անցած հակառակորդի հետևակի վրա»[1]: Ի տարբերություն Հայրապետյան եղբայրների՝ Մամիկոն Հարությունյանը վայելեց հաղթանակի բերկրանքը Պրագայում և այնուհետև վերադարձավ տուն: Ավարտելով Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ նա որպես ուսուցիչ, ապա դպրոցի տնօրեն է աշխատել Մեղրիի շրջկենտրոնի, այնուհետև Ազարակի միջնակարգ դպրոցներում և արժանացել Հայաստանի վաստակավոր մանկավարժի կոչման: Նա կյանքից հեռացավ հանգիստ խղճով՝ իրենց նպատակին հասցնելով երեխաներին: Տղան՝ Լյովան, այսօր Երևանում դպրոցի տնօրեն է և հաջողությամբ է շարունակում հոր գործը: Նա բարեկամական սերտ կապեր է պահում իր հորաքրոջ տղայի՝ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի հետ: Այդ կապերը շարունակվում են նաև առ այսօր:

Գեներալի մյուս քեռին՝ Արտաշը, նույնպես Հայրենականի մեծ պատերազմի մասնակից է, ապրում է Երևանում, մշտապես հետաքրքրվել է իր քրոջ որդու ճակատագրով, նմանապես նրա և նրա երեխաների նկատմամբ մեծ հարգանք ունի գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը:

Հայրենական մեծ պատերազմում իր սխրանքներով աչքի էր ընկել նաև Միքայել (Մուխան) Մելիքի Իսաջանյանը, որը Վլադիմիր Հայրապետյանի բարեկամն էր (հորաքրոջ ամուսնու՝ Աբգարի եղբոր որդին): Մարտերում ցուցաբերած խիզախության համար նա պարգևատրվել էր Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի երկու շքանշաններով, «Մարտական ծառայությունների համար» և այլ մեդալներով: Պատերազմի վերջում գվարդիայի մայոր Մ.Մ. Իսաջանյանը մարտնչում էր գեներալ-գնդապետ Կ.Ն. Գալիցկու 11-րդ գվարդիական բանակի շարքերում, բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնականն էր: Մինչ այդ խիզախ սպան աչքի էր ընկել Կուրսկի ճակատամարտում և գեներալ-գնդապետ Հ. Ք. Բաղրամյանի 1943թ. սեպտեմբերի 28-ի թիվ 085 հրամանով պարգևատրվել Կարմիր աստղի շքանշանով[2]: Իր մարտական ուղին գվարդիայի մայոր Մ.Մ. Իսաջանյանը ավարտել էր Արևելյան Պրուսիայում, մասնակցել Քյոնիգսբերգի (այժմ՝ Կալինինգրադ) գրավմանը, արժանացել Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի[3]: Պատերազմից հետո նա շարու-

---

[1] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ.33, ց. 717037, գ. 1082, թ. 305
[2] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ.33, ց. 686044, գ. 227, թ. 178
[3] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ.33, ց. 687572, գ. 923, թ. 200

նակել էր զինվորական ծառայությունը, սովորել և ավարտել Մ.Վ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, նշանակվել բանակի շտաբի պետ: 1965թ. դեկտեմբերին գնդապետի կոչումով զորացրվել է բանակի շարքերից և ապրել ու աշխատել Երևանում, ապա Մոսկվայում: Միքայել Խաչանյանի մարտական հարուստ կենսագրությունը մշտապես վառ օրինակ է հանդիսացել Վ.Ա.Հայրապետյանի համար, ոգևորել նրան արհեստավարժ զինվորականի դժվարին, բայց պատվավոր և հայրենանվեր ծառայության ընթացքում:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո կյանքը ծանր դասավորվեց պատերազմում զոհված Հայրապետյան եղբայրների ընտանիքի համար:

Չկարողանալով տանել որդիների ծանր կորուստը՝ վշտից մահացան նրանց ծնողները՝ փոքրիկ Վոլոդյայի հոգսը թողնելով հարսի՝ Նուբարի ուսերին: Ծանր էր ապրուստը Շիշկերտում, որտեղ Ներքին Մազրայի լուծարումից հետո բնակություն էր հաստատել պատերազմում զոհված Ասատուրի կինն ու երեխան: Դառը մանկություն բաժին ընկավ փոքրիկ Վոլոդյային: Նա դեռ նոր էր հասցրել դպրոց գնալ, երբ 1949 թ. մահացավ մայրը: Նրա խնամակալութունը ստանձնեց Հայկանուշ հորաքույրը, որի ամուսինը՝ մազրացի Աբգար Խաչանի Դանիելյանը[1], նույնպես զոհվել էր Հայրենական մեծ պատերազմում՝ կնոջ խնամքին թողնելով չորս անչափահաս երեխաների: Հինգերորդը դարձավ Վոլոդյան:

Վոլոդյան ուներ ևս մեկ հորեղբայր՝ Սերյոժա Հայրապետյանը՝ ծնված 1929թ.: Նա շատ փոքր էր և, բնականաբար, իր եղբոր որդուն չէր կարող խնամակալություն անել: Այժմ նա տարեց մարդ է, ապրում է Նոր Հաճնում, որի և նրա երեխաների՝ Համլետի, Ջուլիետայի և Անահիտի նկատմամբ գեներալ Վ.Հայրապետյանը ունի մեծ հարգանք:

Մինչև 1956թ. Վոլոդյան հորաքրոջ երեխաների հետ սովորեց Շիշկերտ գյուղի յոթամյա դպրոցում: Դասերից հետո ազատ ժամանակ նա հորաքրոջ տղաների՝ Սոսի և Հրանտի, և աղջկա՝ Նորայի հետ միասին օգնում էր հորաքրոջը խնամելու անասուններին, մասնակցում տնամերձ հողամասի փորելու, ջրելու և այլ աշխատանքներին: Իսկ դպրոցական արձակուրդների օրերին մասնակցում էր կոլտնտեսության խոտհնձի և բերքահավաքի աշխատանքներին: Չնայած հետպատերազմյան տնտեսական ծանր պայմաններին ու զրկանքներին՝ Վոլոդյան դպրոցում լավ էր սովորում, աչքի ընկնում բարձր առաջադիմությամբ և կարգապահությամբ: Նրանից շատ գոհ էին հատկապես մաթեմատիկայի և պատմության ուսուցիչները:

Պատերազմի վերջերին և անմիջապես հետպատերազմյան տարիներին Շիշկերտում լեգենդներ էին պատմում համագյուղացի գվարդիայի փոխգն-

---

[1] Պատերազմից առաջ Աբգար Դանիելյանը աշխատել է որպես Շիշկերտ գյուղի կոլտնտեսության նախագահ:

դապետ, մեքենայացված բրիգադի հրամանատար Նավասարդ Թևանի Հարությունյանի մասին: Նրա բրիգադը 1943թ. դեկտեմբերին ակտիվ մասնակցություն է ունեցել Ուկրաինայի Վիննիցայի մարզի Կազատին քաղաքի ազատագրման մարտերին: Կազատին քաղաքը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրվեց 1943թ. դեկտեմբերի 28-ին: Առաջինների թվում քաղաք մտավ գվարդիայի փոխգնդապետ Ն. Թ.Հարությունյանի հրամանատարությամբ գործող 21-րդ գվարդիական մեքենայացված բրիգադը, որը մարտնչում էր 1-ին ուկրաինական ռազմաճակատի 1-ին տանկային բանակի կազմում: Կազատինի ազատագրման մարտերում բրիգադի գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած անձնական խիզախության համար քաջարի հրամանատարը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1944թ. հունվարի 8-ի հրամանագրով պարգևատրվեց այն ժամանակ ԽՍՀՄ բարձրագույն մարտական պարգևով՝ Լենինի շքանշանով[1]: Ավաղ, խիզախ հրամանատարը զոհվեց պարգևատրման հրամանագիրը հրապարակվելուց երկու օր անց՝ հունվարի 10-ին Ուկրաինայի Վիննիցայի մարզի Իլյինեցկի շրջանի Տրոշչա գյուղում՝ իր մարտական պոստում: Մարտից հետո զինվորական մեծարանքներով հերոս հրամանատարի դին թաղվել է Իլյինեցկի շրջկենտրոնում:

Փոքրիկ Վոլոդյան մշտապես մեծ հետաքրքրությամբ էր լսում համագյուղացի հերոս զորավարի մասին պատմության ուսուցչի հուզիչ պատմությունները, որոնք նրա վրա մեծ տպավորություն էին թողնում: «Երբ մեծանամ,- ասում էր նա իր դասընկերներին,-ես էլ կդառնամ գվարդիայի փոխգնդապետ, բրիգադի հրամանատար և կնմանվեմ մեր խիզախ համագյուղացուն»:

1956թ. Հայկանուշ հորաքրոջ ընտանիքը Շիշկերտից տեղափոխվեց Երևանի Շահումյանի շրջան (այժմ՝ Մալաթիա-Սեբաստիա համայնք) և բնակություն հաստատեց այնտեղ: Վոլոդյան նոր վայրում ուսումը շարունակեց Շահումյանի շրջանի թիվ 90 միջնակարգ դպրոցում, որն ավարտեց 1960թ.: Հասունության ատեստատում, որը նա ստացել էր հունիսի 27-ին, մաթեմատիկայի, գծագրության, ԽՍՀՄ և հայ ժողովրդի պատմության առարկաների դիմաց դրված էին միայն գերազանց գնահատականներ:

Դպրոցում սովորելու տարիներին ուսման մեջ առաջադիմությամբ և կարգապահությամբ աչքի ընկած պատանուն ընդունեցին կոմերիտմիության շարքերը:

Դպրոցն ավարտելուց հետո, ընտանիքի հոգսերը որոշ չափով թեթևացնելու նպատակով Վոլոդյան 1960թ. աշխատանքի ընդունվեց Երևանի Շահումյանի շրջանի տրիկոտաժի ֆաբրիկայում և այնտեղ աշխատեց մինչև 1961թ. հուլիս ամիսը: Կարճ ժամանակահատվածում նա մասնագիտանում է իր աշխատանքում, որի համար նա երախտագիտությամբ է հիշում իր մոր՝ Նուբա-

[1] ՌԴ ՊՆ ԿԱ, ֆ. 33, ց. 686043, գ. 12, թ. 66

րի հորեղբոր որդի Գրիշա Աղայանի մասին, որը մեծ համբավ ուներ ֆաբրիկայում և արժանացել էր պետական բարձր պարգևների: Շատ ուշադիր են եղել Վոլոդյայի նկատմամբ նաև Գրիշայի եղբայրները՝ Սերյոժան և Ղևոնդը, որդին՝ Կորյունը:

Վոլոդյան մշտապես ջերմ հարաբերություններ է պահպանել նաև իր մորաքույրների՝ Անահիտի, Մարգոյի և Վալյայի, ընտանիքների հետ, որոնք ամեն կերպ փորձել են փոխարինել իրենց մեծ քրոջը՝ Նուբարին (մահացել է 1949թ.): Չորս քույրերից այսօր կենդանի է միայն Վոլոդյայի մեծ մորաքույրը՝ Անահիտը, որին նա սիրում և հարգում է ինչպես հարազատ մորը: Անահիտն ունի մեծ ընտանիք՝ տղաները՝ Վասիլը, Աղվանը, աղջիկները՝ Վարսիկը, Անուշը ու Լաուրան: Աղվան Գրիգորյանը մասնակցել է Արցախյան պատերազմին Վահան Զատիկյանի ջոկատի կազմում, վերընտրվել է Մալաթիա-Սեբաստիա համայնքապետի պաշտոնում, արժանացել պետական պարգևների:

Գեներալը բարեկամական կապեր է պահպանել նաև մյուս մորաքրոջ՝ Մարգոյի երեխաների հետ, նույն թվում՝ Կարոյի, Կարենի, Կամոյի ու նրանց քույրերի՝ Մառլենայի ու Մարիետայի հետ, որի որդին է ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Արամ Մարգարյանը: Ամենօրյա կյանքում նա շատ է կապված Կարենի հետ, որն իրեն դրսևորել է որպես շատ բարեկամասեր, ազնիվ, շատ աշխատասեր և միշտ պատրաստ՝ օգնելու իր հարազատներին, կանգնելու նրանց կողքին նեղ օրերին:

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Վոլոդյան երբեք չէր մոռանում զինվորական դառնալու հոր պատգամը, ինչպես նաև համագյուղացի մեքենայացված բրիգադի հերոս հրամանատարին: Երբ եկավ բանակ զորակոչվելու ժամանակը, նա ներկայացավ Շահումյանի շրջանի զինկոմիսարիատ և դիմեց զինվորական ուսումնարան ուղարկելու խնդրանքով: Զինկոմիսարիատում հաշվի առնելով երիտասարդ, ֆիզիկապես առողջ, մաթեմատիկական առարկաներից դպրոցը գերազանց գնահատականներով ավարտած զինակոչիկի դիմումը՝ նրան ուղարկեցին սովորելու Անդրկովկասյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի Թբիլիսիի հրետանային ուսումնարանում: Ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո 19-ամյա պատանին 1961թ. սեպտեմբերի 1-ին ընդունվեց մարտական հարուստ ավանդույթներ և լավ համբավ ունեցող այդ զինվորական հաստատությունը: Նույն թվականի հոկտեմբերի 19-ին կուրսանտ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը ընդունեց զինվորական երդումը և այդ օրվանից մինչև այսօր նվիրվեց հայրենիքի զինված պաշտպանության սուրբ գործին: Ուսումնարանի փառքի սենյակում փակցված էր Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, պատերազմի նախօրյակին ուսումնարանն ավարտած հրետանային մարտկոցի հրամանատար, լեյտենանտ Սերգեյ Անդրեյի (Մամբրեի) Օգանովի նկարը: Օգանովի ինտերնացիոնալ անձնակազմ ունեցող մարտկոցի 24 հրետանավորներ 1941թ. նոյեմբերի 17-18-ին Դոնի Ռոստովի Մեծ Սալի գյուղի մոտ գտնվող Բերբեր Օբա Կուրգանի շրջանում անհավասար մարտի էին բռնվել հակառակորդի 50 տանկերի հետ և խփել նրանցից 30-ին: Մարտկոցի անձնակազմը այդ դաժան մենամարտում զոհվել էր, բայց իրենց պաշտպանած տեղամասում կյանքի գնով կատարել մարտական առաջադրանքը: Լեյտենանտ Սերգեյ Օգանովը ծառայում էր Հարավային ռազմաճակատի 56-րդ բանակի 317-րդ հրաձգային դիվիզիայի 606-րդ հրաձգային գնդում: Նրան Խորհրդային Միության հերոսի կոչում էր շնորհվել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1943թ. փետրվարի 22-ի հրամանագրով: Օգանովի անունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հրամանով հավերժ գրանցվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարանի անձնակազմի ցուցակում[1]: Ամեն օր տողանի ժամանակ հանդիսավոր կերպով հնչում էր հերոս հայորդու անունը և հպարտությամբ լցնում կուրսանտ Վլադիմիր Հայրապետյանի հոգին: Թե՛ ուսումնական պարապմունքների, թե՛ Վազիանիի մար-

---

[1] Герои Советского Союза. Краткий биографический словарь, том 2, М. Военное издательство, 1988, с. 189

զական ճամբարի հավաքների գործնական հրետավարժությունների ժամանակ կուրսանտ Վլադիմիր Հայրապետյանը աչքի էր ընկնում իր գերազանց առաջադիմությամբ և ֆիզիկական պատրաստվածությամբ, ինչպես նաև բարձր կարգապահությամբ: Այդ են վկայում նրա ստացած գնահատականները՝ մարտավարություն՝ գերազանց, հրետանային-հրաձգային պատրաստություն՝ գերազանց, հրետանու նյութական մաս՝ գերազանց, կրակային պատրաստություն՝ գերազանց, ֆիզիկական պատրաստություն՝ գերազանց և այլն: Վ. Հայրապետյանը մեծ ջանասիրությամբ ուսուցանում էր հրետանային գիտությունը, օրինակ ծառայում ուսումնական մարտկոցի կուրսանտների համար, և պատահական չէր, որ մարտկոցի հրամանատար, կապիտան Գորբատովի որոշմամբ ժողով է անցկացվում հետևյալ թեմայով. «Սովորել և տիրապետել հրետանավորի մասնագիտությանը այնպես, ինչպես դա անում է կուրսանտ Վլադիմիր Հայրապետյանը»: 1963թ. դեկտեմբերին ուսումնարանի կուսակցական կազմակերպությունը ուսման գերազանցիկ կուրսանտին ընդունում է ԽՄԿԿ շարքերը:

Թբիլիսիում սովորելու տարիներին կուրսանտ Վ.Ա.Հայրապետյանը, բացի զինվորական գործին ու մարտական տեխնիկային տիրապետելուց, իր ընկերների հետ միասին ծանոթանում է Վրաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրերի հետ: Կուրսանտներն այցելում են Ռուսթավելու պողոտայի վրա գտնվող պատմության ու ազգագրության թանգարան, Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա լինում մի շարք ներկայացումների բեմադրությանը, Հավլաբարում ականատես լինում Հայկական պետական թատրոնի դերասանների խաղին, լինում Թբիլիսիի Սուրբ Գևորգ հայոց մայր եկեղեցում, որի բակում թաղված են Սայաթ-Նովան, ռուսական բանակի հայ գեներալներ Արշակ Տեր-Ղուկասովը, Իվան Լազարևը, Բեհբութ Շելկովնիկովը, Խոջիվանքի հայկական պանթեոնում գլուխ խոնարհում Հովհաննես Թումանյանի, Րաֆֆու, Գաբրիել Սունդուկյանի, Ռափայել Պատկանյանի, հայոց այլ մեծերի շիրիմների առջև: Այդ ամենը զգալի չափով նպաստում է ապագա զորահրամանատարի մտահորիզոնի ընդլայնման, վրաց և հայ ժողովուրդների՝ դարերի խորքերից եկող բարեկամական կապերի, օտարերկրյա զավթիչների դեմ համատեղ մղած ազգայինազատագրական մարտերի ժամանակ սերտ համագործակցության մասին արժեքավոր փաստեր ու գիտելիքներ ձեռք բերելուն:

Ուսումնարանի հրամանատարությունը ուսման առաջադիմությամբ աչքի ընկնող կուրսանտ Վ.Ա.Հայրապետյանին երկու անգամ արձակուրդ ուղարկեց Երևան՝ հարազատների մոտ: Հրետանու ապագա զորահրամանատարը իր բարեկամներին ու դպրոցական տարիների ընկերներին հպարտությամբ էր ցուցադրում իր զինվորական, կուրսանտական համազգեստը, որը նրան շատ էր սազում: Հայկանուշ հորաքույրը հիանում և հպարտանում էր պատե-

րազմում զոհված իր Ասատուր եղբոր տղայի հաջողություններով. «Բալա՛ ջան, դու արդարացնում ես եղբորս՝ Ասատուրի երազանքը: Դու իսկական զինվորական կդառնաս»,– ասում էր հորաքույրը՝ համբուրելով Վլադիմիրի ճակատը:

1964թ. հուլիսի 28-ին Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը գերազանցության կարմիր դիպլոմով ավարտում է Թբիլիսիի 26 կոմիսարների անվան հրետանային ուսումնարանը՝ լեյտենանտի կոչումով: Նույն թվականի սեպտեմբերի 14-ին լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը նշանակում է ստանում Անդրկարպատյան զինվորական օկրուգի 38-րդ բանակի 128-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի 327-րդ գվարդիական մոտոհրաձգային գնդում՝ որպես 57 քք-անոց հակատանկային հրանոթների դասակի հրամանատար: Գունդը տեղաբաշխված էր Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի Ուժգորոդ քաղաքում: Այդ պաշտոնում լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը ծառայում է մինչև 1966թ. մայիսի 19-ը, նրա դասակը այդ կարճ ժամանակամիջոցում աչքի է ընկնում գնդում, հաղթող ճանաչվում զորավարժությունների ժամանակ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1965թ. մայիսի 7-ի հրամանագրով լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը պարգևատրվում է «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 20 տարին» մեդալով: Դա երիտասարդ սպայի առաջին մարտական պարգևն էր: Հաշվի առնելով խոստումնալից հրետանավոր հրամանատարի ունակությունները՝ գնդի հրամանատարությունը 1966թ. մայիսի 19-ին լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանին վստահում է 120 մմ ականանետների մարտկոցի կառավարման դասակի հրամանատարի պաշտոնը, որը նա վարում է մինչև 1966թ. սեպտեմբերի 13-ը:

Անդրկարպատյան զինվորական օկրուգի զորամիավորումները և զորամասերը տեղաբաշխված էին լեռնաանտառոտ գեղատեսիլ տեղանքում, որը շատ նման էր երիտասարդ սպայի հայրենի գյուղի բնաշխարհին: Միայն թե այստե՛ղ լեռներն ավելի ցածր բարձրություն ունեին, քան հարազատ Սյունյաց սարերը:

Վլադիմիրը դեռ ուսումնարանում սովորելու ժամանակ որոշել էր ավարտելուց հետո գնալ զոհված հոր հետքերով և շուտով պարզեց, որ հայրը ժամանակին մարտնչել է Կարպատներում և զոհվել այնտեղ: Ուստի որոշեց օգտվել առիթից և գտնել հոր զոհվելու վայրը: ԽՍՀՄ ՊՆ կենտրոնական արխիվից նրա հարցմանը պատասխանել էին, որ գվարդիայի լեյտենանտ Արտյուշա (Ասատուր) Ջհանգիրի Հայրապետյանը զոհվել է 1944թ. նոյեմբերի 30-ին և թաղված է Անդրկարպատյան մարզի Ուժգորոդի շրջանի Կուցանի գյուղում: Սակայն Անդրկարպատյան մարզի և Ուկրաինայի հանրապետական զինկոմիսարիատներ Վ.Ա.Հայրապետյանի արած հարցմանը պատասխանեցին, որ Անդրկարպատյան մարզում Կուցանի անունով գյուղ չկա: Ինչևէ, դա չհուսահատեցրեց հոր գերեզմանի տեղը փնտրող ծնողասեր սպային, որը հետագայում դիմեց տարբեր ատյաններ և ի վերջո հասավ իր նպատակին: Բայց այդ մասին ավելի ուշ:

1966թ. Անդրկարպատյան զինվորական օկրուգի զորքերը մասնակցեցին

խոշորամասշտաբ զորավարժությունների, որը հայտնի է «Վլտավա» ծածկանունով: Զորավարժությունների ժամանակ լեյտենանտ Վ.Հայրապետյանի ստորաբաժանումը աչքի ընկավ մարտական առաջադրանքը կատարելիս և գնդում գրավեց առաջնակարգ տեղերից մեկը: Ականանետայինները բարդ, լեռնաանտառոտ տեղանքում և կլիմայական անբարենպաստ պայմաններում չունեցան կողմնորոշման ոչ մի շեղում, իսկ բաց թողած ականների գերակշռող մասը ոչնչացրել էր թիրախները: Զորավարժություններում հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու համար դասակի անձնակազմը արժանացավ օկրուգի հրամանատար, գեներալ-գնդապետ Պ.Ն. Լաշչենկոյի շնորհակալությանը: Դասակի հաջողության մեջ մեծ էր հրամանատարի՝ լեյտենանտ Վ.Ա. Հայրապետյանի ավանդը: Ահա թե ինչպես են նրան բնութագրել ականանետային մարտկոցի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Ժարովը, գնդի շտաբի պետ, փոխգնդապետ Տրոքոնյաչան, գնդի հրամանատարի տեխնիկայի գծով տեղակալ, գվարդիայի փոխգնդապետ Գ. Բեսեդկովը, 327-րդ գվարդիական մոտոհրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ Գամովը և ուրիշներ. «1964թ. հոկտեմբերից մինչև 1965 թ. հոկտեմբեր 120 բբ ականանետային մարտկոցի կրակային դասակի հրամանատարի պաշտոնում իրեն դրսևորել է որպես կարգապահ սպա: Իր ծառայողական պարտականությունների կատարմանը վերաբերվում է բարեխիղճ ձևով: Մասնագիտական պատրաստվածությունը լավ է, առողջական վիճակը՝ նույնպես: Ֆիզիկապես լավ է զարգացած: Անձնական զենքից կրակում է բավարար: Դասակը մարտական և քաղաքական ուսուցման հիմնական առարկաների գծով պատրաստված է լավ: Դասակում առկա տեխնիկան և սպառազինությունը պահպանվում է լավ վիճակում: Կարգապահությունը դասակում գտնվում է բավարար վիճակում: Վերադասին և ենթականերին վերաբերվում է շատ հարգալից: Ենթակաների և իր հանդեպ պահանջկոտ է: Ակտիվորեն մասնակցում է ստորաբաժանման հասարակական կյանքին: Դասակում ճիշտ է կազմակերպել սոցիալիստական մրցությունը: Գաղափարապես զարգացած է, բարոյապես՝ տոկուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. համապատասխանում է դասակի հրամանատարի պաշտոնին և արժանի է առաջխաղացման»:

1966թ. սեպտեմբերի 13-ին լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը նշանակում է ստանում Գերմանիայում տեղաբաշխված խորհրդային զորքերի խմբում՝ սկզբում որպես 3-րդ համազորային բանակի 207-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 41-րդ մոտոհրաձգային գնդի 120 բբ ականանետային դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատար: 1967 թ. հոկտեմբերի 26-ին հմուտ հրետանավորին շնորհվում է ավագ լեյտենանտի կոչում: Ավագ լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանի մարտկոցը մշտապես առաջնակարգ տեղեր է գրավում ամենամյա զորավարժությունների ժամանակ, որոնք անց էին կացվում Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության և Չեխոսլովակի-

այի բանակների համատեղ ուժերով: Ձեռք բերած հաջողությունների համար մարտկոցի անձնակազմը արժանացավ ԽՍՀՄ պաշտպանության նախարար, Խորհրդային Միության հերոս, մարշալ Ս.Ա.Գրեչկոյի հուշադրոշին, որն անձամբ ավագ լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանին հանձնեց Գերմանիայում խորհրդային զորախմբի հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Պ.Կ.Կոշևոյը: Նույն թվականի դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ավագ լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը պարգևատրվեց «ԽՍՀՄ զինված ուժերի 50 տարին» մեդալով: Հաշվի առնելով երիտասարդ, խոստումնալից հրետանավոր սպայի մարտավարական և հրամանատարական ունակությունները՝ հրամանատարությունը 1968թ. օգոստոսի վերջերին ավագ լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանին թույլատրեց ընդունվել Լենինգրադի Մ.Ի. Կալինինի անվան հրետանային ռազմական ակադեմիա:

Մինչ այդ նա հերթական արձակուրդներից մեկի ժամանակ՝ 1965թ. հուլիսի 21-ին, Երևանում ամուսնացել էր դեռ դպրոցական տարիներից սիրած աղջկա՝ Խաթուն Գևորգի Գույումջյանի հետ, որն ընդունել էր ամուսնու ազգանունը: 1967թ. հունվարի 12-ին ծնվել էր նրանց առաջնեկ տղան, որին առանց վարանելու տվել էին Ասատուր անունը:

1968թ. օգոստոսին հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները՝ ավագ լեյտենանտ Վ.Ա.Հայրապետյանը սեպտեմբերի 1-ին ընդունվում է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) Մ.Ի.Կալինինի անվան զինվորական հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետը: Ընտանիքի հետ միասին նա բնակություն հաստատեց Լենինգրադում:

Լենինգրադի հրետանային ակադեմիան հիմնադրվել էր 1953թ.: Նրա հիմնական նպատակը ԽՍՀՄ հրետանային-հրթիռային զորքերի համար բարձրագույն հրամանատարական և ինժեներական կադրեր պատրաստելն էր: Այն կառուցված էր քաղաքի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ Նևա գետի ափին: Վլադիմիր Հայրապետյանի ուսման առաջին տարիներին՝ 1968-1969թթ, ակադեմիայի պետը հրետանու գեներալ-գնդապետ Վ.Ս.Կորոբչենկոն էր, 1969թ. ակադեմիայի պետ նշանակվեց հրետանու գեներալ-գնդապետ Պ.Ֆ.Սլիպչենկոն: Ակադեմիայում սովորողների ուսման գործընթացը տևում էր 4 ուսումնական տարի: Այդ տարիներին ուսանողները պետք է յուրացնեին 29 առարկա, որոնց թվում՝ բարձրագույն մաթեմատիկա, ֆիզիկա, էլեկտրատեխնիկա, ռազմական արվեստի պատմություն, մարտավարություն, հրետանային կրակի կառավարում, բալիստիկա և այլն: Վերջում ավարտողները երեք առարկաներից պետք է հանձնեին պետական քննություններ: Ակադեմիան ուներ տեխնիկական անհրաժեշտ սարքավորումներով կահավորված լաբորատորիաներ, դիդակտիկ նյութերով հարուստ լսարաններ, որտեղ դասավանդում էին իրենց առարկաներին գերազանց տիրա-

պետող դասախոսներ: Նրանցից շատերը մասնակցել էին Հայրենական մեծ պատերազմին: Վ.Ա.Հայրապետյանը, չնայած չուներ ռուսական կրթություն (նա ավարտել էր հայկական դպրոց), բայց նա յոթ տարի բանակում անընդմեջ ծառայության արդյունքում ազատ տիրապետում էր ռուսերենին: Ուստի պատահական չէր, որ նա ակադեմիայում սովորում էր միայն լավ ու գերազանց գնահատականներով: Բացի հիմնական առարկաների ուսուցումից և գործնական պարապմունքներից, որոնք անց էին կացվում Լենինգրադի մարզի Լուգայի և այլ վարժակայաններում, ուսանողների համար կազմակերպվում էին էքսկուրսիաներ` թանգարաններով և ճարտարապետական հոյակերտ կառույցներով հարուստ, պատմական և հեղափոխական անցյալ ունեցող քաղաքի և մարզի տեսարժան վայրեր: Վ.Ա.Հայրապետյանի վրա մեծ տպավորություն էին թողել Էրմիտաժի գանձերը և հատկապես Ռուսական թանգարանի պատկերասրահները, որտեղ պահվում էին հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու մեծադիր կտավները:

Հաշվի առնելով ուսման ընթացքում ձեռք բերած հաջողությունները` վերադաս հրամանատարությունը Վ.Ա.Հայրապետյանին 1970թ. նոյեմբերի 18-ին` Հրետանու և հրթիռային զորքերի տոնի նախօրյակին, շնորհեց կապիտանի զինվորական կոչում: Ակադեմիայում սովորելու տարիներին Վ.Ա.Հայրապետյանը պարգևատրվեց նաև «Զինվորական արիության համար» (1970թ. ապրիլի 3-ին) և «Անբասիր ծառայության համար» 3-րդ աստիճանի մեդալներով: Ավարտական տարվա նախօրյակին` 1971թ. դեկտեմբերի, 21-ին Լենինգրադում ծնվեց Վ.Ա.Հայրապետյանի աղջիկը` Գայանեն:

1972 թ. հունիսի 23-ին լավ և գերազանց գնահատականներով ավարտելով Լենինգրադի Մ. Ի. Կալինինի անվան հրետանային զինվորական ակադեմիան` կապիտան Վ. Ա. Հայրապետյանը նշանակում ստացավ Կարմրադրոշ բելոռուսական զինվորական օկրուգում` որպես 51-րդ գվարդիական հրետանային դիվիզիայի 1359-րդ թնդանոթային հրետանային գնդի (տեղակայված Օսիպովիչ քաղաքում) դիվիզիոնի հրամանատար: Դիվիզիոնի մեջ մտնում էր 3 հրետանային մարտկոց` շուրջ 140 մարդուց բաղկացած անձնակազմով: Այն հանդիսանում էր հրետանային զորքերի հիմնական կրակային և մարտավարական ստորաբաժանումը, որի հստակ գործողություններից կախված էր հրետանային զորամասի մարտական առաջադրանքի հաջողությունը: Երկու տարի Բելոռուսական զինվորական օկրուգում ծառայելուց հետո կապիտան Վ. Ա. Հայրապետյանին 1974թ. օգոստոսի 26-ին նշանակում են Հեռավոր–արևելյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի 5-րդ առանձին բանակի 123-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի 48-րդ գվարդիական մոտոհրաձգային գնդի հրետանային դիվիզիոնի հրամանատար: Զորամասը տեղաբաշխված էր Պրիմորսկի երկրամասի Ուսսուրիյսկի շրջանում` Խասան լճի մերձակայքում` Չինաստանի և Կորեայի սահմանում` Կրասկի-

նո ավանում: 1938թ. հուլիս-օգոստոս ամիսներին այստեղ Կարմիր բանակի զորամասերը արժանի հակահարված են հասցրել ճապոնական ռազմամոլներին և ջախջախել ԽՍՀՄ սահմանն անցած սամուրայներին:

Ստանձնելով դիվիզիոնի հրամանատարությունը՝ կապիտան Վ.Ա.Հայրապետյանը կարողացավ կարճ ժամանակամիջոցում հարմարվել նոր միջավայրին և 1974թ. աշնանային տեսչական ստուգումների ժամանակ արժանանալ հրամանատարության խրախուսանքին: Դիվիզիոնի անձնակազմը թե՛ մարտական, թե՛ քաղաքական պատրաստությունից ցույց տվեց միայն լավ ցուցանիշներ: Անձամբ կապիտան Վ.Ա.Հայրապետյանը հանրագումարային ստուգումների ժամանակ բոլոր առարկաների գծով ցույց տվեց լավ, իսկ հրետանային և տեխնիկական առարկաների գծով միայն գերազանց արդյունքներ: Նրա վերառակավորման փաստաթղթերից մեկում 1975թ. հունվարի 15-ին 48-րդ գվարդիական մոտոհրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Կալինինը և 123-րդ գվարդիական մոտոհրաձգային դիվիզիայի հրթիռային զորքերի ու հրետանու պետ, գվարդիայի գնդապետ Նիկոնովը նշել են. «Որպես հրետանային դիվիզիոնի հրամանատար ծառայելու ընթացքում կապիտան Վ.Ա.Հայրապետյանն իրեն դրսևորել է կարգապահ, բարեխիղճ և ճշտակատար, իր և իր ենթակաների հանդեպ պահանջկոտ սպա: Զբաղեցրած պաշտոնին պատրաստված է լավ... Մեծ ուշադրություն է դարձնում դիվիզիոնի տեխնիկայի և սպառազինության մշտական մարտական պատրաստականության վրա: Շարային պատրաստության գծով կոփված է, ֆիզիկապես լավ է զարգացած: Ավագ և կրտսեր ծառայակիցներին դիմում է հարգալից և տակտով: Ծառայության մեջ ճշտապահ է և սկզբունքային, հակված է շտաբային աշխատանք կատարելու: Կենցաղում համեստ է, բարոյապես կայուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. միանգամայն համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին: Արժանի է առաջքաշման՝ հրետանային գնդի շտաբի պետի պաշտոնում»:

1975թ. փետրվարի 10-ին կապիտան Վ.Ա.Հայրապետյանը առաջ է քաշվում նույն օկրուգի 15-րդ գվարդիական հրետանային դիվիզիայի 669-րդ կործանիչ հակատանկային գնդի հրամանատարի տեղակալ-գնդի շտաբի պետի պաշտոնում: Նույն թվականի փետրվարի 20-ին Վ.Ա.Հայրապետյանին շնորհվեց մայորի զինվորական կոչում: Մայոր Վ.Ա.Հայրապետյանը շուրջ 10 ամիս՝ մինչև 1975թ. նոյեմբերը, ծառայեց նոր, պատասխանատու պաշտոնում և հրամանատարության առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար նույն թվականի նոյեմբերի 21-ին առաջ քաշվեց Հեռավորարևելյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի 15-րդ համազորային բանակի 135-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 378-րդ հրետանային գնդի հրամանատար: Նույն հրամանով Վ.Ա.Հայրապետյանին վաղաժամկետ շնորհվեց փոխգնդապետի զինվորական կոչում: Փոխգնդապետ Վ.Ա.Հայրապետյանը մինչև 1980թ. հուլիսի 1-ը ծառայեց գնդի հրամանատարի այդ պատասխանա-

տու պաշտոնում և ձեռք բերեց մարտավարական և վարչատնտեսական հիմնական միավոր հանդիսացող զորամասի ղեկավարման մեծ հմտություն, որը կարևոր դեր խաղաց զորահրամանատարի կայացման գործընթացում: Գունդը տեղաբաշխված էր Հեռավոր արևելյան զինվորական օկրուգի Պանտելեյմոնովկա բնակավայրի շրջանում: Նրա ատեստավորման 1978թ. սեպտեմբերի 29-ի թիվ 20 արձանագրության մեջ, որը ստորագրված է 15-րդ համազորային բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Բ.Սորոկինի, բանակի քաղբաժնի պետ գնդապետ Ա. Բելենկոյի, մարտական պատրաստության գծով բանակի հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Ա.Վոլկովի և ատեստացիոն հանձնաժողովի մյուս անդամների կողմից և հաստատվել 15-րդ համազորային բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վ.Դուբինինի և Հեռավոր արևելյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի հրամանատար, բանակի գեներալ, Խորհրդային Միության հերոս Ի.Մ. Տրետյակի կողմից, նշված է.

«Փոխգնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը հրետանային գնդի հրամանատարի պաշտոնում ծառայության ժամանակ իրեն դրսևորել է որպես կարգապահ, ճշտակատար, իր և իր ենթակաների հանդեպ պահանջկոտ սպա: Պարբերաբար զբաղվում է գաղափարական-տեսական գիտելիքները բարձրացնելու վրա՝ գործնական աշխատանքում հմտորեն հենվելով կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների վրա:

Անձամբ զինվորական գործում պատրաստված է լավ, կանոնագրքերը և հրահանգները գիտի և դրանք հմտորեն է օգտագործում գործնականում: Կարող է լավ կազմակերպել և մեթոդապես ճիշտ անցկացնել ենթակաների հետ տարվող աշխատանքները: Մարտավարական զորավարժությունների ժամանակ նախաձեռնող է, լավ է կողմնորոշվում ցանկացած իրադրության մեջ, աշխատասեր է:

Ժամանակակից մարտի բնույթն ու առանձնահատկությունները, հրետանու օգտագործումը ճիշտ է հասկանում: Բոլոր զորավարժությունների ժամանակ գնահատվել է դրական:

Հոգատարություն է դրսևորում մարդկանց հանդեպ, ժամանակին խորամուխ է լինում նրանց կարիքների մեջ: Ավագ հրամանատարների դիտողություններին վերաբերվում է ճիշտ, քննադատաբար է գնահատում իր գործունեությունը:

Մարտական և քաղաքական պատրաստության արդյունքներով գունդը 1977թ. ուսումնական տարվա ընթացքում և 1978թ. ուսումնական տարվա ձմեռային ուսուցման շրջանում ցույց տվեց միայն լավ գնահատականներ...

Ակտիվորեն մասնակցում է անձնակազմի հետ տարվող քաղաքական աշխատանքներին, շատ ժամանակ է հատկացնում ենթակաների դաստիարակման գործին: Գնդում առկա տեխնիկային ծանոթ է շատ լավ, կրակում և վարում է վստահորեն: Հրետանային-հրաձգային և հատուկ պատրաստության գծով ունի ամուր ունակություններ, կարողանում է իր փորձը վստահորեն փոխանցել ենթականերին:

Բարոյապես կայուն է, քաղաքավարի, ազնիվ: Ենթակաների և վերադա-

սի մոտ ունի մեծ հեղինակություն: Ֆիզիկապես կոփված է, առողջությունը լավ: Շարային տեսակետից քարետես է, հագուստը մշտապես խնամքով հարդարված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանում է: Իր քաղաքական, գործնական հատկություններով ու հակումներով կարող է առաջ քաշվել որպես դիվիզիայի հրթիռահրետանային զորքերի պետ կամ հրետանային դիվիզիայի հրամանատարի տեղակալ-դիվիզիայի շտաբի պետի պաշտոնում»:

Գնդի հրամանատար եղած ժամանակ փոխգնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ԽՍՀՄ պաշտպանության նախարար, Խորհրդային Միության մարշալ Դ.Ֆ.Ուստինովի 1977թ. հունվարի 6-ի թիվ 6 հրամանով պարգևատրվեց «Անբասիր ծառայության համար» 2-րդ աստիճանի մեդալով: Մեկ տարի անց՝ 1978թ. փետրվարի 21-ին, փոխգնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով արժանացավ «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի շքանշանի: Դրանից մեկ ամիս առաջ գնդի հրամանատարը պարգևատրվել էր «ԽՍՀՄ զինված ուժերի 60 տարին» հոբելյանական մեդալով:

Հաշվի առնելով փոխգնդապետ Վ.Ա.Հայրապետյանի զինվորական ունակությունները՝ հրամանատարությունը նրան առաջ քաշեց Հեռավոր արևելյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի 51-րդ համազորային բանակի 25-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պատասխանատու պաշտոնում: Կորպուսի զորքերը տեղաբաշխված էին Կամչատկայում, իսկ շտաբը գտնվում էր Կամչատկայի Պետրոպավլովսկ քաղաքում: Մեկ տարի անց՝ 1981թ. մայիսի 7-ին, Վ.Ա.Հայրապետյանին շնորհվեց գնդապետի զինվորական կոչում: Այդ պաշտոնում գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ծառայեց մինչև 1982թ. մայիսի 25-ը:

Նոր պաշտոնում ևս Վ.Ա.Հայրապետյանը իրեն դրսևորեց որպես քաղաքականապես գրագետ, գործիմաց, իր և իր ենթակաների նկատմամբ պահանջկոտ սպա: Նրա ատեստացիոն փաստաթղթում, որն ընդգրկում էր գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի կորպուսի հրետանու շտաբի պետի պաշտոնում 1980թ. նոյեմբեր-1982թ. հունվար կատարած աշխատանքը, նշված է. «Պարբերաբար աշխատում է իր գաղափարական-տեսական գիտելիքների բարձրացման վրա, ակտիվորեն մասնակցում է կուսակցական-քաղաքական աշխատանքներին, զեկուցումներով և զեկույցներով հանդես է գալիս ստորաբաժանումների անձնակազմերի առջև: Իր ծառայողական պարտականությունների կատարմանը վերաբերվում է բարեխղճորեն: Վստահված պաշտոնում յուրացրել է տարբեր տեսակի մարտական գործողությունների ժամանակ հրթիռային զորքերի ու հրետանու պլանավորման և մարտական կիրառման սկզբունքները: Մասնագիտական և տեխնիկական պատրաստվածությունը բարձր է: Կարողանում է լավ կազմակերպել և մեթոդապես ճիշտ անց-



Ք. Պետրոպավլովսկ–Կամչատսկի. Հեռավոր Արևելք. – 1981 թ., աջից երկրորդը գնդապետ Վ. Հայրապետյանը մի խումբ սպաների հետ



На сборах начальников артиллерии дивизий и корпусов Северо-Кавказского военного округа. Справа пятый участник сборов полковник В. Айрапетян, г. Буйнакск (Дагестан), 1985 г.



Գնդապետ Վ. Հայրապետյան և գնդապետ Ն. Սոկոլով, ք. Կրասնոդար, 1983 թ.
Слева полковник Владимир Айрапетян и полковник Николай Соколов., г. Краснодар, СКВО, 1983 г.



Բարեկամներս մայրիկիս շիրիմին, աջից Ռազմիկ Վարդանյանը, գ. Շիշկերտ, 2003 թ.



Գնդապետ Վ. Ա. Հայրապետյան, 1991 թ.



Հրետանային հրամանատարական դիտակետում ձախից ՊՆ փոխնախարար Մ Աբրահամյանը. Վ. Հայրապետյանը. Ն. Մուրադյանը և Պահլևունին



Դաշտային պարապմունքների ժամանակ



Քաջ Նժդեհի արձանի մոտ. Հայոց բանակի գեներալներ, Միքայել Գրիգորյանը, Վլադիմիր Հայրապետյանը, 1.11.2001 թ., Լուսակերտ



Մարտական ընկերները՝ ձախից Քաջիկ Մնացականյանը, Վ. Հայրապետյանը և Գ. Մելքոնյանը:



Զինվորական երդման ընդունման ժամանակ գեներալ Վ. Հայրապետյանը շնորհավորում է նորակոչիկ Արսեն Գրիգորյանին



Գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը ելույթ է ունենում Լուսակերտի ուսումնական գնդի զինվորների առաջ, ձախից հրետանային զորքերի վետերան գնդապետ Կամո Մանուկյանը



Գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյան, պաշտպանության նախարար Ս. Սարգսյան, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյան



Հանդիպում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչների հետ



Տոնակատարությունը Սարդարապատում



На выпуске первой группы офицеров—артиллеристов с высшим образованием для ВС РА присутствует начальник РВиА ВС РА генерал-майор В. Айрапетян, г. Казань, 19.06.1999 г.



Զորավարժությունների ժամանակ, Մարտակերտ, 2002 թ.



Արցախի հերոս, գեներալ-մայոր Ժորա Գասպարյան *



Արցախում *



Արցախում *



Արցախում *

* *Լուսանկարները Սեյրան Օհանյանի «**XXI** դարի բանակը» գրքից*



Դեպի ռազմաճակատ, աջից Ներսես Մուրադյանը, Վլադիմիր Հայրապետյանը և Մարատ Ղարիբյանը



Վեհափառի մոտ. Սուրբ էջմիածին, 19.10. 2003 թ.



Պետական պարգևի հանձնումը զոհված գնդապետ Առնո Տատինցյանի որդուն Վիգենին, գեներալ Վ. Հայրապետյանի աշխատասենյակում. 2001 թ.



Գեներալ Վ. Հայրապետյանը և զորամասի հրամանատար Խ. Խաչատրյանը



Մոնթեի տիկինը Հայոց բանակի մի խումբ սպաների հետ



Մարտական ընկերները՝ գեներալներ Վլադիմիր Հայրապետյանը և Մուրազ Սարկիսյանը, ք. Երևան, 1995 թ.



Աջից առաջին շարքում գնդապետ Յ. Խաչատուրովը, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը, Քեռին, գնդապետ Է. Ապրիամովը (1995թ.)



Բալախովիտի հրետանային գնդի (առաջին) հրամանատար գնդապետ Ալբերտ Աշոտի Դավթյան. զոհվել է 1994 թ., բոլորի հիշողության մեջ նա մնացել է որպես ազնիվ, ընկերասեր և հայրենիքին նվիրված սպա



Հայկական բանակի հրետանու 10-րդ տարելիցի օրը զեկույցով հանդես է գալիս հրթիռա հրետանային զորքերի վարչության պետ, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը, Բալահովիտ, 2002 թ., 19 հոկտեմբերի



Հրետանային հրանոթ–հուշարձանի մոտ գեներալներ Վ. Հայրապետյանը և Է. Ասրիամովը, ք. Գյումրի

կացնել պարապմունքները: Հրամանատարաշտաբային զորավարժություններ ընթացքում ցուցաբերում է նախաձեռնություն և աշխատասիրություն:
Խորհրդային բանակի կանոնագրքերը և հրահանգները լավ գիտի և դրանցով ղեկավարվում է մշտապես:
Իր հանդեպ վերադասի արված քննադատությանը արձագանքում է ճիշտ, ընդունակ է քննադատորեն գնահատել իր գործունեությունը արագ և գործնականորեն վերացնել աշխատանքում նկատված թերությունները:
Բարոյապես կայուն է, հարգալից, ազնիվ: Ֆիզիկապես առողջ է: Շարային գծով մշտապես բարետես է, հագուստը խնամքով հարդարված: Նվիրված է հայրենիքին և իր մասնագիտությանը:
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Համապատասխանում է բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնին: Իր գործնական և բարոյական հատկանիշներով արժանի է առաջքաշման հրետանային դիվիզիայի հրամանատարի կամ բանակի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնում»:
Ատեստացիոն փաստաթղթի տակ ստորագրել են 25-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու հրամանատար, գնդապետ Անատոլի Մարկուշևիչը, կորպուսի հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Արբարովը, կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Վ.Կավերինը:
Բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի աշխատանքները հաջողությամբ կազմակերպելու համար գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի 1982թ. հունվարի 12-ի թիվ 7 հրամանով պարգևատրվեց «Անբասիր ծառայության համար» I-ին աստիճանի մեդալով:
1982թ. մայիսի 25-ին գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը նշանակում է ստանում Հյուսիս կովկասյան զինվորական օկրուգում: Նույն թվականի օգոստոսի 28-ին նա ստանձնում է օկրուգի Կրասնոդար քաղաքում տեղակայված 12-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնը և այն վարում մինչև 1986թ. սեպտեմբերի 5-ը:
«12-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնում ծառայելու ժամանակ գնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանն իրեն դրսևորել է որպես գրագետ, պահանջկոտ, ճշտակատար և աշխատասեր սպա,- գրված է զորահրամանատարի ատեստացիոն փաստաթղթերից մեկում, որը ստորագրել են 12-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի և հրետանու պետ, գնդապետ Կացյուբան, կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Վ.Ռաշիբաևը և Հյուսիս կովկասյան զինվորական օկրուգի շտաբի պետ, գեներալ-մայոր Գ.Ռևինը: — Իր ծառայողական պարտքի կատարմանը վերաբերվում է բարեխղճորեն:
Մասնագիտական, տեխնիկական պատրաստության, զենքի նոր տեսակների ու զինամթերքի իմացության գծով ունի բարձր գիտելիքներ: Հրթիռային զորքերի և հրետանու գործողությունների պլանավորման և մարտական կի-

ւառման սկզբունքները սերտել և հմտորեն է օգտագործում ուսուցման և վարժանքների ընթացքում: Որպես կազմակերպիչ և մեթոդիստ պատրաստված է, ընդունակ լուծելու ցանկացած առաջադրված խնդիր: 1986թ. մայիսին անցկացված զորավարժությունների ժամանակ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի և նրա գլխավորած շտաբի աշխատանքները գնահատվել է լավ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին: Իր գործնական և բարոյական հատկանիշներով արժանի է առաջ քաշվելու բանակի հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնին»:

Այնուհետև՝ 1986-1990 թթ., գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը նման պաշտոն է վարում 28-րդ բանակային կորպուսում, որը տեղակայված էր Չեխոսլովակիայի Օլոմուց քաղաքում, իսկ 1989թ. նշանակվում է նույն կորպուսի հրթիռահրետանային զորքերի գլխավոր հրամանատար և ըստ հաստիքների նախատեսված էր «գնդապետ-գեներալ-մայոր» զինվորական կոչում: Չեխոսլովակիայում նա վերջապես գտնում է իր հոր՝ 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ակտիվ մասնակից Ասատուր Հայրապետյանի գերեզմանը և կատարում իր որդիական պարտքը: Այդ մասին հուզիչ հոդված է տպագրվում Չեխոսլովակիայում տեղակայված խորհրդային զորքերի «Советский солдат» թերթի 1989թ. փետրվարի 12-ի համարում:

ԽՍՀՄ պաշտպանության նախարարի 1990թ. մարտի 19-ի թիվ 314 (1) 00460 ղեկավար հրահանգի համաձայն՝ 28-րդ բանակային կորպուսը փոխադրվում է Սիբիրյան զինվորական օկրուգ և տեղակայվում Ռուսաստանի Կեմերովոյի մարզի Կեմերովո քաղաքում:

Չնայած բնակլիմայական ծանր պայմաններին, որին քաջածանոթ էր գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը դեռևս Կամչատկայում ծառայության տարիներին, կարճ ժամանակամիջոցում նոր միջավայրում կորպուսի հրամանատարությունը կարողանում է ոչ միայն կանոնավոր հունի մեջ գցել նոր ենթակայություն ստանձնած զորամասերի մարտական և քաղաքական պատրաստության գործընթացը, այլև փայլուն ցուցանիշների հասնել 1990-1991թթ. ուսումնական տարում, հաջողությամբ անցկացնել պլանավորված զորավարժությունները հրթիռահրետանային զորքերում, ինչպես նաև տեսչական ստուգումները:

Չնայած գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ծառայությունը անց էր կացնում հայրենիքից հեռու, բայց նա մշտապես սրտատրոփ հետևում էր այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին:

1988թ. հունվար-փետրվար ամիսներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բացարձակ մեծամասնություն կազմող և հնուց ի վեր հայրենիքում ապրող հայ բնակչությունը, հավատալով Մ.Ս.Գորբաչովի վերակառուցման ծրագրերին, խաղաղ ցույցերի էր դուրս եկել Ադրբեջանի կազմից դուրս գալու և մայր Հայաստանին միանալու նպատակով: Հիշեցնենք, որ Արցախը

ղարեր շարունակ հանդիսացել է պատմական Հայաստանի նահանգներից մեկը և Խորհրդային Ադրբեջանին էր բռնակցվել ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո-յի հուլիսի 5-ի ախրահռչակ որոշմամբ՝ Ի.Վ. Ստալինի ճնշմամբ: 1988թ. հուն-վար-փետրվարյան խաղաղ ցույցերին Խորհրդային Ադրբեջանի կառավա-րությունը պատասխանեց Սումգաիթում հայերի կոտորածներով (փետրվարի 27-29-ին), որտեղ մոլեռանդ ադրբեջանցիների զոհ դարձան բազմաթիվ հա-յեր, փախստական դարձան ավելի քան 18 հազար հայեր: Բռնություններն ու գազանությունները հայերի նկատմամբ ծավալվեց նաև Ադրբեջանի հայաշ-ատ[1] վայրերում, որոնք ավարտվեցին 1990թ. հունվարին Բաքվում հայերի դեմ իրագործված ջարդերով: Ադրբեջանը լրիվ հայաթափվեց հայերից, որոնք իրենց ստեղծագործ աշխատանքով մեծ լումա էին ներդրել Ադրբեջանի տն-տեսության և մշակութային կյանքի զարգացման ասպարեզում: Գնդապետ Վ.Ա. Հայրապետյանը սրտի կսկիծով է հիշում ինչպես այդ, այնպես էլ Հա-յաստանի հյուսիսային շրջաններում 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած 9 բալանոց երկրաշարժը, որն ընդգրկեց Խորհրդային Հայաստանի տարած-քի 40 տոկոսը, և որին զոհ գնաց ավելի քան 25000 մարդ:

Երկրաշարժի պահին գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը ծառայում էր Չե-խոսլովակիայի Օլոմոուց քաղաքում և 28-րդ բանակային կորպուսի հրթիռա-յին զորքերի և հրետանու շտաբի պետն էր: Ինչպես ամբողջ օկրուգի, այնպես էլ կորպուսի անձնակազմը դրամական և նյութական օգնություն ցույց տվեց երկրաշարժից տուժածներին: Անձամբ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը մի քանի անգամ իր աշխատավարձի զգալի մասը փոխանցեց մեծ արհավիրքից տուժածների և աղետի գոտու վերականգնման հաշվին: Իսկ երբ արդեն ադր-բեջանական բանակը, որը կարողացել էր տիրանալ ռուսական 4-րդ բանակի զենքին ու սպառազինությանը և ագրեսիա սկսել Լեռնային Ղարաբաղի և Հա-յաստանի Հանրապետությունների հանդեպ, գնդապետ Վ.Ա.Հայրապետյա-նը դիմեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին իրեն ուղարկել Հայաստանի Հանրապետության բանակում ծառայելու: 1992թ. մա-յիսի 17-ին գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի դիմումը հարգվեց և ավիացիայի մարշալ Եվ. Ի. Շապոշնիկովի հրամանով նա զործուղվեց ՀՀ պաշտպանու-թյան նախարարության տրամադրության տակ:

---

[1] 1989թ. մարդահամարի տվյալներով հայ բնակչության թվաքանակը Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմել է 390.5 հազ. մարդ, նույն տվյալներով Հայկական ԽՍՀ-ում ադրբեջան-ցիների թիվը կազմել է 84.2 հազ. մարդ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

1.ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՎՈՒՄ (1992թ. հուլիս-1994թ. մայիսի 16)

1992թ. մայիսի 9-ին հաղթանակով էր ավարտվել Շուշիի ազատագրումը հայկական ուժերի՝ երկրապահների և նորաստեղծ զինվորական ստորաբաժանումների կողմից: Հայկական մշակույթի զարգացման գործում պատմական մեծ դեր կատարած Շուշի քաղաքը, որը կարևոր ռազմավարական նշանակություն ուներ Արցախի համար, որտեղից ամեն օր ադրբեջանական զինվորները հրետակոծության տակ էին պահում Ստեփանակերտը, ազատագրվել էր քոչվոր ցեղերի հետնորդներ հանդիսացող ադրբեջանցիներից, որոնք քաղաքի հայկական եկեղեցին վեր էին ածել զինապահեստի: Սակայն Շուշիի հաղթանակը գլխապտույտ առաջացրեց որոշ հայ պետական և քաղաքական գործիչների մոտ, որոնց թվաց, թե հաղթանակը վերջնական է: Ինչպես հայտնի է, ադրբեջանցիները, օգտվելով հայերի թույլ տված սխալներից, 1992 թ. հունիսի վերջերին լայնածավալ հարձակում սկսեցին ոչ միայն Արցախում, այլև Հայաստանի Հանրապետության ողջ արևելյան սահմաններում՝ Տավուշից մինչև Սյունիք: Մեկը մյուսի հետևից ընկան Արծվաշենը, Գետաշենը, Շահումյանը, Մարտակերտի մի զգալի մասը: Ադրբեջանական ավիացիան և հրետանին սկսել էին ավելի ու ավելի հաճախակի դարձնել Հայաստանի խաղաղ բնակչության ռմբակոծումներն ու հրետակոծությունները: 1992թ. ամռանը տողերիս հեղինակը պատմական գիտությունների թեկնածուներ Աշոտ Մելքոնյանի (այժմ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Ավիկ Հարությունյանի և Երևանի պատմության թանգարանի փոխտնօրեն Լուսինե Ամիրջանյանի հետ միասին ականատես է եղել Գորիսի Վերիշեն թաղամասի հրետակոծությանը, որը մեծ ավերածություններ պատճառեց դպրոցին և նրա շրջակա տներին, հրդեհվեցին ցորենի արտերը: Գորիսեցիները ունեցան նաև մարդկային կորուստներ: Ահա այսպիսի պայմաններում էր, որ գնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը 1992թ. փետրվարի սկզբին ներկայացավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար Վազգեն Զավենի Սարգսյանին[1]: Վազգեն Սարգսյանը նրան ընդունեց մեծ սիրով և հաշվի առնելով գնդապետի 31-ամյա ծառայությունը հրետանային և հրթիռային զորքերում և հայրենիքի պաշտպանության սուրբ գործին ծա-

---

[1] Վ. Զ. Սարգսյանն այդ պաշտոնին էր նշանակվել 1992թ. հունվարի 28-ին, այդ օրն էլ հետագայում համարվել է ՀՀ զինված ուժերի կազմավորման օր:

ռայելու ցանկությունը՝ իր 1992թ. հունիսի 13-ի թիվ 579 հրամանով Վլադիմիր Աստուրի Հայրապետյանին նշանակեց ՀՀ ՊՆ իրթիռային և հրետանային զորքերի վարչության առաջին պետ:

Վ.Ա. Հայրապետյանը լավ է հիշում այդ հանդիպման մանրամասները. «Մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումներից տեղեկանալով Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի հանդեպ սկսած ագրեսիայի մասին և զգալով, որ իմ զինվորական կարողությունները այս օրհասական պահին պետք կգան իմ ժողովրդին՝ ես 1992թ. փետրվարի սկզբին արձակուրդ վերցրի և եկա Երևան: Հաստատ որոշել էի, որ հրետանավոր մասնագետի իմ երեք տասնյակ տարիների հարուստ փորձն ու գիտելիքները պետք է նվիրեմ հայրենիքիս պաշտպանության սուրբ գործին: Վազգեն Սարգսյանն ինձ վրա ազգի ճակատագրով մտահոգված մարդու և պետական մտածողության տեր գործչի տպավորություն թողեց: Նա մեծ ուշադրությամբ լսեց ինձ, հավանություն տվեց որոշմանս և համապատասխան մակագրություն արեց դիմումիս վրա: Վազգենի նման հայրենասեր մարդու վերաբերմունքը և հայրենիքի պաշտպանության գործի հանդեպ նրա ունեցած մտահոգությունը ինձ մոտ ավելի ուժեղացրեց Ռուսաստանից Հայաստան տեղափոխվելու որոշումս: Ես հաստատ համոզվեցի, որ հայրենիք վերադառնալով՝ ես կնպաստեմ հայկական զինված ուժերի կազմակերպման և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում իմ ժողովրդի փրկության գործին: Վազգեն Սարգսյանի հետ առաջին հանդիպումից հետո ես վերադարձա Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի Սիբիրյան զինվորական օկրուգի 28-րդ բանակային կորպուս, որը տեղաբաշխված էր Կեմերովոյի մարզում: Որոշ ժամանակ անց Ռ-Դ պաշտպանության նախարար, ավիացիայի մարշալ Շապոշնիկովի 1992թ. մայիսի 17-ի թիվ 0710 հրամանի համաձայն՝ ես գործուղվեցի Հայաստան՝ հետագա զինվորական ծառայությունս ՀՀ զինված ուժերում շարունակելու նպատակով»:

ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի պետ, գնդապետ Վ.Ա. Հայրապետյանի առջև սկզբում ծառացան չորս կարևոր խնդիրներ.

1. հարկավոր էր կարճ ժամանակամիջոցում համալրել հրամանատարական կազմը հրետանային ուսումնարաններ ավարտած սպաներով,

2. ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ հրանոթներ, զենք և զինամթերք՝ ի հաշիվ Հայաստանում տեղակայված 7-րդ գվարդիական բանակի զորամասերի և զինանոցների [1],

---

[1] ՀՀ պաշտպանության նախարար Վ.Սարգսյանի 1992թ. հուլիսի 20-ի հրամանով գնդապետ Վ. Ա. Հայրապետյանի վրա էր դրված ռուսական 7-րդ գվարդիական բանակի հրետանային սպառազինության ընդունման գործը:

3. կահավորել ձեռքի տակ եղած զորանոցները, ստեղծել հրաձգարաններ, վարժակայաններ, հրետանային ստորաբաժանումներ և զորամասեր,

4. միաժամանակ հարկավոր էր սահմանամերձ շրջաններում մարտնչող նորաստեղծ զորամասերը համալրել հրետանու մարտական ստորաբաժանումներով, որոնք պետք է իրենց հուժկու կրակային ուժով սատար կանգնեին մարտնչող ֆիդայիներին ու մոտոհրաձիգներին:

Ամենից առաջ հարկավոր էր հաշվառման ենթարկել Հայաստանում գտնվող հրետանավոր սպաներին և նրանցով համալրել ինչպես հրետանու վարչությունը, այնպես էլ հրետանային զորամասերը: Այդ գործում գնդապետ Վ. Հայրապետյանին մեծ օգնություն ցույց տվեցին ՀՀ զինկոմիսարիատների աշխատակիցները: Կարճ ժամանակամիջոցում գնդապետի ձեռքին էին հրետանային ուսումնարաններ և ակադեմիաներ ավարտած շուրջ 50 սպաների ցուցակները: Նրանցից յոթը նշանակումներ ստացան հրետանու վարչությունում, իսկ մյուսները նորաստեղծ զորամասերում: Այսպես, օրինակ՝ հրետանային ակադեմիա ավարտած գնդապետ Առնո Արշակի Տատինցյանը նշանակվեց վարչության շտաբի պետ, իսկ նրա ավտովթարից զոհվելուց հետո այդ պաշտոնում նշանակվեց գնդապետ Լեոն Արշավիրի Միքայելյանը, որին Վ. Հայրապետյանը ճանաչում էր դեռևս Թբիլիսիի ռազմական ուսումնարանում սովորելու ժամանակ որպես բանիմաց և շատ հայրենասեր մարդու: Նա շտաբի պետի պարտականությունները երկար տարիներ կատարեց փառք ու պատվով, մասնակցեց Քելբաջարի ազատագրման առաջին օպերացիային: Այժմ նա անցել է թոշակի և մշտապես ջերմ հարաբերություններ է պահպանում իր մարտական ընկերոջ հետ: Նրա տեղակալ-օպերատիվ բաժնի պետ նշանակվեց Թբիլիսիի հրետանային ուսումնարանի շրջանավարտ, փոխգնդապետ Ներսես Սերգեյի Մուրադյանը, որն ակտիվ մասնակցություն ունեցավ մարտական գործողություններին և հրետանու կայացմանը, շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ նշանակվեց գնդապետ Կամո Սրապիոնի Մանուկյանը (ավարտել է հրետանային ակադեմիա), օպերատիվ բաժնի ավագ սպա նշանակվեց մայոր Յուրի Դմիտրիի Ավդյուխինը, որն ավարտել էր Կրասնոդարի հրետանային ուսումնարանը, վարչության մարտական պատրաստության բաժնի պետ նշանակվեց փոխգնդապետ Բաբկեն Ջալալի Աբրահամյանը, նրա տեղակալ նշանակվեց Երվանդ Շաքարի Հասրաթյանը, որոնք ավարտել էին Թբիլիսիի հրետանային ուսումնարանը:

Հրետանային բրիգադի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Միխայիլ Գուրգենի Գրիգորյանը, որին հետո փոխարինեց փոխգնդապետ Ռազմիկ Ռաֆիկի Գարեգինյանը, հրետանային գնդերի հրամանատարներ՝ փոխգնդապետներ Էնրիկո Ալեքսանդրի Ապրիամովը, Ալբերտ Աշոտի Դավթյանը, այնուհետև՝ Ալբերտ Լեոնի Մկրտչյանը, Ռայմոնդ Արմենակի Մագաուզյանը. բրիգադի հրետանու պետեր, փոխգնդապետներ Սերգեյ Լեոնի Բար-

սեդյանը, Վազգեն Գերասիմի Հեքումյանը, Առաքել Գևորգի Հովսեփյանը, ԼՂՀ ՊԲ հրետանու պետ՝ գնդապետ ժորա Սահակի Գասպարյանը, որոնք տարբեր ժամանակների ընթացքում ավարտել էին հրետանային ուսումնարաններ և ակադեմիաներ:

Վերը նշված սպաներից Վլադիմիր Հայրապետյանը դասում է իր ամենաակտիվ օգնականների շարքին, որոնք մեծ ավանդ ունեին ԶՈւ հրետանու կայացման կարևոր գործում: Նախկին Խորհրդային բանակի, այնուհետև ռուսական բանակի Բալախովիտի հրետանային գնդի ընդունումը Հայկական բանակի կազմի մեջ, որը գլխավորում էր անձամբ Վ.Հայրապետյանը, նրա այն հարցին, թե ով է ցանկանում ծառայել Հայաստանի զինված ուժերում, միայն դրական պատասխան տվեց փոխգնդապետ Ալբերտ Լևոնի Մկրտչյանը (այժմ՝ գնդապետ, հրթիռահրետանային զորքերի վարչության պետի տեղակալ), որը, տարիներ շարունակ լինելով Լուսակերտում տեղակայված հրետանային ուսումնական գնդի հրամանատար, ծավալուն աշխատանք է կատարել կրտսեր մասնագետներ պատրաստելու կարևոր գործում և արժանացել բարձր գնահատականի:

Հրետանու վարչության աշխատակիցները, գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի ղեկավարությամբ, իրենց մշտական ուշադրության կենտրոնում էին պահում հրետանային զորամասերի հաստիքային ձևավորման, համալրման, մարտական պատրաստության որակի և արդյունավետության, սպայական կազմի մասնագիտական ուսուցման, հրետանային զորքերի կառավարման ունակությունների և մարտական պատրաստականության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Անձամբ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը հոգ էր տանում, որ խրախուսվեն մարտերում աչքի ընկած հրամանատարները, ժամանակին նրանց շնորհվեն հերթական զինվորական կոչումները: Սակայն այդ կարևոր գործին ՀՀ պաշտպանության նախարարության ոչ բոլոր աշխատակիցներն էին արձագանքում ժամանակին, հատկապես կադրային սպաների հերթական կոչումներ շնորհելու հարցում, որը սաստիկ զայրացնում էր պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին, իսկ նա բոլորին համոզում էր, որ միայն կադրային սպաների մասնակցությամբ հնարավոր կլինի բանակաշինությունում հասնել բարձր արդյունքների և վերջնական հաղթանակի Արցախյան պատերազմում:

Այսպես, օրինակ՝ գնդապետ Վ. Հայրապետյանի համառ միջնորդությամբ 1992թ. աշնանը գնդապետի կոչում շնորհվեց 6-րդ հրետանային բրիգադայի հրամանատար Միխայիլ Գուրգենի Գրիգորյանին[1], հրետանու վարչության

---

[1] Մ.Գ. Գրիգորյանին գնդապետի ուսադիրներ հանձնեց ՀՀ ՊՆ հրթիռային-հրետանային զորքերի վարչության պետ, գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը Գյումրիում 1992թ. նոյեմբերի 19-ին հրետանային բրիգադի անձնակազմի շարքի առջև՝ ԽՍՀՄ ԶՈւ հրետանու օրը:

օպերատիվ բաժնի պետ Ներսես Սերգեյի Մուրադյանին, թիվ 67984 զորամասի հրետանու պետ Էդիկ Սերգեյի Վարդանյանին, փոխգնդապետի կոչում՝ բրիգադի շտաբի պետ Մարտին Նազարի Կարապետյանին, նրա տեղակալ Գալուստ Գառնիկի Սարգսյանին, մայորի կոչում՝ դիվիզիոնի շտաբի պետ Սամվել Մկրտիչի Ավետիսյանին, կապիտանի կոչում՝ մարտկոցի հրամանատարներ Սպարտակ Սերյոժայի Բուդուրյանին, Վարդան Սերգեյի Գևորգյանին, Աշոտ Ռաֆիկի Գրիգորյանին, Սամվել Սերյոժայի Հայրապետյանին, ավագ լեյտենանտի կոչում՝ Արմեն Ռուբենի Արշակյանին և այլոց:

Ինչպես արդեն նշեցինք, 1992թ. հունիսի վերջերին Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ հարձակողական մարտական գործողություններ սկսեցին Լեռնային Ղարաբաղում և ՀՀ արևելյան սահմաններում, որի հետևանքով թշնամուն անցան Շահումյանի և Մարտակերտի շրջանների մեծ մասը: 1992թ. հուլիսին պաշտպանական մարտեր էին ընթանում Նոյեմբերյանի, Իջևանի և Տավուշի շրջաններում: Նույն թվականի օգոստոսի վերջերից և սեպտեմբերի սկզբներին թեժ մարտեր էին գնում Լաչինի մարդասիրական միջանցքի համար, որը հանդիսանում էր կյանքի ճանապարհ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև: Սեպտեմբերի վերջերին Ղուբաթլուից 12կմ հյուսիս-արևելք՝ Մուրադխանլուի շրջանում, ադրբեջանցիները հարձակողական գործողություններ վարելու նպատակով ստեղծեցին մի զորախումբ, որը բաղկացած էր տանկային մի բրիգադից, երկու մոտոհրաձգային գումարտակներից և ավազակային մի քանի ջոկատներից: Հոկտեմբերի 1-ին թշնամու խմբավորումը հրետանային և ավիացիոն նախապատրաստությունից հետո հարձակման անցավ՝ նպատակ ունենալով փակել Լաչինի միջանցքը: Մինչև հոկտեմբերի 3-ը տեղի ունեցած կատաղի մարտերում թշնամու զորքերին հաջողվեց հետ վերցնել 8 գյուղ և դուրս գալ Լաչին քաղաքից 3կմ հարավ-արևելք: Հակառակորդի մեկ ուրիշ զորախումբ, որը հարձակման էր անցել հյուսիս-արևմուտքից՝ Գոչազ-Տիգին 1-ին շրջանից, մոտենում էր Լաչինին: Ադրբեջանցիներին թվում էր, թե հաղթանակը մոտ է:

Լաչինի միջանցքի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով նախարարի հրամանով այնտեղ գործուղվեցին ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեսյանը, ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի պետ, գնդապետ Վլադիմիր Հայրապետյանը, բարձրաստիճան այլ սպաներ: Գնդապետ Վ.Հայրապետյանի առջև մարտական առաջադրանք էր դրված՝ կազմակերպել հրետանային մարտկոցներից կազմված պաշտպանական, հարվածային հզոր ուժ ունեցող մի հրետանային զորախումբ և նրա ուժերով հետ մղել հակառակորդի հարձակումը: Կարճ ժամանակահատվածում Լաչինի մատույցներում կրակային դիրքեր գրավեցին Գյումրիի նորաստեղծ գնդերից մեկ հրթիռային և մեկ հրետանային դիվիզիոններ:

Գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեսյանը, զանվելով զորքերի մարտական դիրքերում, կարողացավ կայունացնել և ակտիվացնել մեր զորքերի պաշտպանական դիրքերը, հմտորեն ղեկավարել առկա զորատեսակները և ուժերը, նույն թվում՝ երկրապահ ջոկատները և նորաստեղծ ստորաբաժանումները՝ բաց գիտակցելով իր պատասխանատվությունը հայրենիքի հետագա ճակատագրի հարցում:

Լաչինի միջանցքի շրջանում կատաղի մարտեր ծավալվեցին: Ադրբեջանցիները ձգտում էին ինչ գնով էլ լինի, հայերին դուրս բշել այնտեղից և փակել Հայաստանից Լեռնային Ղարաբաղ տանող «կյանքի ճանապարհը»: Այդ մարտերում հայկական հետևակային ստորաբաժանումներին և ջոկատներին անգնահատելի օգնություն ցուցաբերեցին հրետանավորները: Հրանոթային և ականանետային դիպուկ կրակից մեկը մյուսի հետևից շարքից դուրս էին գալիս թշնամու տանկերն ու զրահամեքենաները, լռեցվում էին նրանց կրակակետերը, նոսրացվում հարձակվողների շարքերը: Հրետանու նպատակային և հուժկու հարվածները խուճապ առաջացրին հակառակորդի շարքերում և մեծ չափով ոգևորեցին մեր տղաներին: Հրետանու խմբավորման մեջ էր մտնում նաև Գ-արուն Աբգարյանի «Գ-րադ» կայանը, որը նա սպասարկում և կրակում էր ընդամենը մեկ զինվորի՝ Անդրեյի հետ՝ 7-8 զինվորի փոխարեն: Դա, իհարկե, մարտական սխրանք էր, որի մասին մեծ ոգևորությամբ է պատմում գեներալ Վ.Հայրապետյանը: Նրա օգնությամբ Գ-արունը դարձավ կադրային հրետանավոր, այժմ նա գնդապետ է, զորամասի հրամանատար:

Հարձակման անցած թշնամին, կրելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ, ստիպված էր թուլացնել գործողության տեմպերը, կանգ առնել, այնուհետև նահանջել: Հայկական զորքերն իրենք անցան հակահարձակման և մինչև հոկտեմբերի կեսերը վերականգնեցին նախկին դիրքերը, ամրացան պաշտպանական նոր բնագծում, որը թույլ էր տալիս ավելի հուսալիորեն պաշտպանել Հայաստանը Ղարաբաղի հետ կապող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Լաչինի միջանցքը:

Այդ մարտերի ընթացքում գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը իր հրամանատարական դիտակետից հստակորեն ղեկավարում էր հրետանու գործողությունները, հաճախ ինքը կանգնում հրանոթի կամ ականանետի մոտ և նրանց անձնակազմերին ցույց տալիս դիպուկ կրակելու արվեստը, անձնական օրինակով ոգևորում հայ մարտիկներին: Չնայած հոկտեմբերի 9-ին Ջերթի գյուղի մոտակայքում տեղի ունեցած մարտում խիզախ հրետանավոր հրամանատարը վիրավորվում է աջ ձեռքից, սակայն նա չի հեռանում մարտի դաշտից և այնտեղ մնում է մոտոհրաձիգների հետ մինչև մարտական առաջադրանքի հաղթական ավարտը:

Լաչինի միջանցքի պաշտպանման և ընդլայնման գործողությունները ղեկավարելու գործում գեներալ-լեյտենանտ Հ.Հ.Անդրեսյանից, բացի գնդապետ Վ.Ա.Հայրապետյանից, զգալի օգնություն ցույց տվեցին ՀՀ ՊՆ մարտական պատրաստության վարչության պետ, գեներալ-մայոր Մուրազ Սարկիսյանը, Սիսիանի գնդի հրամանատար, փոխգնդապետ Հովիկ Ազոյանը, Գորիսի վաշտի և ֆիդայական ջոկատի մարտական գործողությունները ղեկավարող կապիտան Կամո Քոչունցը (այժմ՝ գեներալ-մայոր), հրետանավոր գնդապետներ Ալբերտ Դավթյանը, Վլադիմիր Մխիթարյանը և ուրիշներ: Հաշվի առնելով Շուշիի, Մարտակերտի, հատկապես Լաչինի մարտական գործողության ժամանակ հակառակորդի ջախջախման և նրա հետքաշման գործում հրետանու կատարած դերը՝ մեկ տարի անց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի սեպտեմբերի 30-ի թիվ 417 հրամանով հոկտեմբերի 19-ը հռչակվեց որպես հայկական զինուժի Հրետանու օր, որը տոնվում է մինչև այսօր:

Վերքը բուժելուց հետո գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը 1992թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցեց Մարտակերտի շրջանում տեղի ունեցած պաշտպանական ծանր մարտերին, որոնց ընթացքում ադրբեջանական զինուժը հայկական հրետանու դիպուկ կրակից կրեց զրահատեխնիկայի միջոցների և մարդկային զգալի կորուստներ: Իրավիճակը Մարտակերտի շրջանում կայունացավ, որը հնարավորություն տվեց 1993թ. հունվար–փետրվար–մարտ ամիսներին զարգացնել ձեռք բերած հաջողությունը և զավթիչներից ազատագրել բռնազավթված գյուղերի մեծ մասը:

1992 թ. ամռանը և աշնանը, ինչպես նաև դեկտեմբերին դրությունը շատ լարված էր Կապանի շրջանում, հատկապես Կապան քաղաքում: Ադրբեջանցիները, որոնք դեռևս 1929թ. Անդրֆեդերացիայի ղեկավարությանը կաշառելու միջոցով Կապանի շրջանից զավթել էին 21 գյուղ[1] և իրենց սահմաններն անմիջականորեն մոտեցրել լեռնագործների քաղաքին, հնարավորություն էին ստացել Ողջի գետի աջ ափի բարձունքներից, որը գտնվում էր թշնամու ձեռքում, սովորական հրազենային զենքից վնաս պատճառել խաղաղ բնակչությանը: Այսպես, օրինակ՝ 1992թ. հունիսի 11-ին ադրբեջանցիները 1929 թ. զավթած Ղազանչի գյուղից կրակ էին բացել դիմացի հայկական Գեղանուշ գյուղի վրա և տան պատշգամբում սպանել 10-րդ դասարանցի Մանուկին ու մնացել անպատիժ: Դրա հետ մեկտեղ քաղաքին ավերիչ հարվածներ էին հասցնում թշնամու հրետանին և ավիացիան: Այսպես, օրինակ՝ 1992թ. օգոստոսի 19-ին հրթիռակոծվել էր Կապան քաղաքը և պատճառվել մեծ ավերածություններ: Կային խաղաղ բնակչության զոհեր և վիրավորներ:

[1] Այդ մասին դեռևս «Երկիր» թերթի 1992թ. հուլիսի 1-ի համարում մենք մանրամասն բացատրություն էինք տվել:

«Գրադի» արկերից երկուսն ընկել էին իմ աներոջ՝ Տիգրան Մինասյանի սեփական տան վրա (Օրջոնիկիձե, այժմ՝ Գարեգին Նժդեհի փողոց, տուն 99) և կիսով չափ ավերել այն: Նույն թվականի նոյեմբերի 9-ին «Գրադի» արկերից մեկն ընկել էր Կապանի Թումանյան փողոցի 9-րդ շենքի մուտակայքում: Պայթյունի ալիքից փշրվել են շենքի պատուհանների բոլոր ապակիները: Այդ շենքում էին ապրում հայրս ու մայրս: Շենքի բնակիչները ռմբակոծությունից փրկվելու համար պատսպարվում էին ներքնահարկում, որը վերածվել էր յուրահատուկ ռմբապաստարանի: Մինչև այսօր որպես հիշատակ պահում եմ արկի մի բեկոր, որն ընկել էր մորս բարձի վրա: Դրանից երկու տարի անց, չդիմանալով հաճախակի կրկնվող ռմբահարումներին, մայրս վախճանվեց սրտի կաթվածից:

1992թ. դեկտեմբերի 12-ին՝ օրը ցերեկով, Կապանի վրա խուզող թռիչքով հայտնվեցին ադրբեջանական երեք ռմբակոծիչ ինքնաթիռներ, որոնք ցածր բարձրությունից ռմբակոծեցին քաղաքը արգելված գնդիկավոր ռումբերով: Հատկապես տուժեցին Հունան Ավետիսյանի անվան թաղամասը և Շահումյան փողոցի վրա գտնվող հացի խանութի մոտ հերթի կանգնած մարդիկ: Զոհերի թիվը անցնում էր 40-ից: Այդ ռմբակոծման ժամանակ ավիառումբի պայթյունից ցնցակաթված ստացավ եղբայրս: Բացի այդ ադրբեջանական զորքը գրավել էր Գորիս-Կապան տանող պետական ճանապարհի զգալի մասը՝ շրջափակելով Կապանը: Կապանցիները ստիպված էին մեծ դժվարություններ կրելով շրջանցել Գորիսը և Կապան հասնել Տաթև-Տանձավեր-Նորաշենիկ գյուղական անբարեկարգ ճանապարհով: Բնականաբար, դադարել էին նաև երկաթուղային և օդային հաղորդակցությունները Երևանի և Կապանի միջև (այն շարունակվում է նաև առ այսօր):

Հարկավոր էր շուտափույթ կարգով մարտական գործողություն ձեռնարկել՝ հակառակորդին Կապանի մատույցներից վռնդելու և բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով: 1992թ. դեկտեմբերի կեսերին Կապանում տեղաբաշխված հայկական զինուժի ստորաբաժանումները և ինքնապաշտպանական երկրապահ ջոկատներն անցան հարձակման: Հաջող գործողության շնորհիվ թշնամուց ետ խլվեց Կապանի վրա իշխող ռազմավարական նշանակություն ունեցող 13 գյուղ, որոնք 1929թ. Ադրբեջանին էր «նվիրել» Անդրֆեդերացիայի կենտգործկոմը: Այդ հաջող գործողության շնորհիվ բացվեցին նաև շրջանի Ազարակ-Եղվարդ, Կապան-Ճակատեն-Շիկահող-Սրաշեն-Ներքին Հանդ -Ծավ և Շիշկերտ տանող ճանապարհները: Կապան քաղաքը փրկվել էր հրազենային զենքի կրակից, սակայն դեռ շարունակվում էին օդային հարձակումները:

Կապանի շրջանում տեղի ունեցած մարտական գործողությունը ղեկավարում էր ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեսյանը: Նրան օգնում էին ՊՆ մարտական պատրաստության վարչության պետ,

գեներալ-մայոր Մուրազ Սարկիսյանը (ծնվել է Կապանի շրջանի Ներքին Խոտանան գյուղում), 97-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար, գնդապետ Միխայիլ Գրիգորյանը, գնդապետներ՝ Յուրի Խաչատուրովը, Էնրիկո Ապրիամովը, Իվան Ղուկասովը: Վերջիններիս անգնահատելի աջակցություն էին ցույց տալիս տեղի իշխանության ներկայացուցիչները, հատկապես Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի տնօրեն Դերենիկ Մարգարյանը, միլիցիայի պետ Էդիկ Բարսեղյանը (այժմ՝ գեներալ-մայոր), շրջանի գործկոմի նախագահ Սլավիկ Հայրապետյանը, քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ Ռաֆիկ Սարուխանյանը, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Ռոման Նավասարդյանը, գլխավոր ինժեներ (այժմ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն) Մաքսիմ Հակոբյանը, Կապանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Գառնիկ Առաքելյանը և ուրիշներ:

Կապանի մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցեցին նաև նորաստեղծ հրետանային ստորաբաժանումները, Սիսիանի աշխարհազորային ջոկատը՝ Հովհաննես Ազոյանի, Էջմիածնի ջոկատը՝ Մանվել Գրիգորյանի, «Արաբո» ջոկատը՝ Մանվել Եղիազարյանի հրամանատարությամբ: Այդ մարտերում իր խիզախությամբ աչքի ընկավ կապանցիներից կազմված գումարտակը՝ կապիտան Լեոնիդ Գրիգորյանի հրամանատարությամբ (այժմ՝ փոխգնդապետ, Կապանի զինվորական կոմիսար), տանկի հրամանատար շիկահողցի Լավրենտ Աղաբեկյանը, նրա համագյուղացիներ՝ հետախույզ, սերժանտ Կարեն Աղայանը, դասակի հրամանատար, լեյտենանտ Ժորա Մինասյանը, ականանետային հաշվարկի հրամանատար Անդրանիկ Օնիկի Մինասյանը, Տ-72 տանկի մեխանիկ-վարորդ Հարություն Դավթյանը /Մալիշկայից/ և շատ ուրիշներ:

Ինչպես Լաչինում և Մարտակերտում, այնպես էլ Կապանում հրետանային ստորաբաժանումների կրակի ղեկավարման և հետևակի հետ հրետանու փոխգործողությունների համաձայնեցման աշխատանքը դարձյալ գլխավորում էր գնդապետ Վլադիմիր Հայրապետյանը:

1992թ. դեկտեմբեր և 1993թ. հունվար ամիսներին Կապանում կազմավորվեց 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը, որի մեջ ընդգրկվեցին այդ ուղղությամբ գործող բոլոր զինվորական ստորաբաժանումները: ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի որոշմամբ՝ գնդապետ Վլադիմիր Հայրապետյանի համաձայնությամբ բրիգադի հրամանատար նշանակվեց Խորհրդային բանակում 21 տարվա զինվորական ստաժ ունեցող, Թբիլիսիի բարձրագույն հրետանային ուսումնարանի ու Լենինգրադի հրետանային ակադեմիայի շրջանավարտ և արդեն Գյումրիի 6-րդ հրետանային բրիգադի հրամանատարությունը ստանձնած գնդապետ Միխայիլ Գուրգենի Գրիգորյանը, որը բարձր պատասխանատվությամբ կատարեց մարտական խնդիրները: Կապանի շրջանում հակաօդային պաշտպանության ստորաբաժա-

նումները ղեկավարում էր գնդապետ Ալիկ Գեղամի Սարգսյանը, որը Խորհրդային բանակում ծառայել էր ավելի քան 35 տարի, ավարտել էր Սերծբալթյան հակաօդային պաշտպանության ռազմատեխնիկական բարձրագույն ուսումնարանը, Մոսկվայի Ն.Ե.Ժուկովսկու անվան ռազմական ակադեմիան: 1995թ. սեպտեմբերի 21-ին նրան շնորհվել է գեներալ-մայորի կոչում:

1993թ. գարնանը հակառակորդը հարձակողական գործողություններ ձեռնարկեց Կապանի շրջանում՝ կորցրած դիրքերը վերադարձնելու նպատակով, բայց ուժեղ հակահարված ստանալով՝ ետ շպրտվեց: Գնդապետ Վլադիմիր Հայրապետյանն այդ օրերին դարձյալ իր մարտական ընկերների մոտ էր և փոխհամաձայնեցնում էր հրետանու և հրթիռային կայանքների գործողությունները Ճակատեն-Շիկահող-Սրաշեն-Ներքին Հանդ-Ծավ ճակատային գծում: Հրամանատարական դիտակետեր մտնելուց առաջ պարտադիր ստուգում էր կապի միջոցների, օպտիկական սարքերի, հրանոթների, «Գրադ» կայանների և անձնակազմի պատրաստությունը կրակային դիրքերում: Կապանի 97-րդ մոտոհրաձգային բրիգադը օրեցօր հզորացավ, ուժեղացավ հատկապես հրետանին, բավականին ակտիվ դրսևորեց իրեն հրետանու պետ Առաքել (Ալիկ) Գևորգի Հովսեփյանը, հրետանային ստորաբաժանումների հրամանատարներ Գարուն Աբգարյանը, Սամվել Պողոսյանը և ուրիշներ: Նկատի ունենալով այդ ուղղության կարևորությունը՝ այնտեղ հաճախ էին գործուղվում Էնրիկո Ապրիամովը, նրա գնդի հակատանկային ստորաբաժանումները, որոնք մեծ պատասխանատվությամբ կատարեցին մարտական խնդիրները:

Նույն թվականի փետրվար-մարտ ամիսներին մարտական գործողություններ ծավալվեցին նաև Մարտակերտի շրջանում: Շնորհիվ հրետանու աջակցության՝ հայկական զինված ուժերը թշնամուց ազատագրեցին շրջանի բռնազավթված գյուղերի մի մասը: Հակառակորդը ստիպված էր հայերին զիջել մի շարք կարևոր ռազմավարական դիրքեր: Զարգացնելով ձեռք բերված հաջողությունները՝ Մարտակերտի, Մարտունու և Շուշիի պաշտպանական շրջանների զորամասերը 1993թ. ապրիլին սկսեցին Քելբաջարի (Քարվաճառի) ազատագրման գործողությունը: Լաչինի մարդասիրական միջանցքի բացումից հետո շատ կարևոր էր Հայաստանի և ԼՂՀ-ի միջև բացել երկրորդ ամենակարճ ճանապարհը: Արևմուտքից՝ Վարդենիսի և Ջերմուկի կողմից, ղարաբաղյան զորքերին ընդառաջ էին գալիս Հայկական բանակի զորամասերը և ստորաբաժանումները, նրանց հետ էր գեներալ-լեյտենանտ Գ. Դալիբալթայանը, գեներալ-մայոր Ս. Ս. Մարտիրոսյանը, գնդապետներ Յու. Խաչատուրովը, Գ. Մելքոնյանը, Ս. Սարոյանը, իսկ հրետանու վարչությունից՝ շտաբի պետ, գնդապետ Լևոն Միքայելյանը: Ապրիլի վերջերին մարտական գործողությունը ավարտվեց հայկական զորքերի փառահեղ հաղթանակով: Քարվաճառի շրջանը և Օմարի լեռնանցքը ազատագրված էին ադր-

բեջանական զավթիչներից: Ամենուր քանդված վիճակում երևում էին հայկական եկեղեցիների ու վանքերի ավերակները, կանգուն մնացած խաչքարերը, որոնք վառ ապացույց էին այն բանի, որ դրանք հայերից բռնազավթված տարածքներ են: Միաժամանակ այդ գործողության հետ ԼՂՀ 4-րդ պաշտպանական շրջանի զորամասերը ադրբեջանցիներից ազատագրեցին Մարտակերտ քաղաքը, որում մեծ դեր խաղացին Մանվել Գրիգորյանի ղեկավարած զորախումբը և երկրապահների ջոկատները:

1993թ. ամռանը մարտերը Հայաստանի հարավ արևելյան շրջաններում և Լեռնային Ղարաբաղում ընթանում էին հայկական զորքերի նորանոր հաջողություններով: Հուլիս-օգոստոս ամիսներին նրանք ազատագրեցին Աղդամի շրջանը, այդ թվում՝ Աղդամ քաղաքը, որի շնորհիվ Ստեփանակերտ, Շուշի քաղաքները և նրանց շրջակայքի բնակավայրերը ազատվեցին թշնամու հրետանու հրետակոծությունից: Օգոստոսին հայկական զորքերը հակառակորդից մաքրեցին Զանգելանի, Ջաբրաիլի և Ղուբաթլուի շրջանները, որի հետևանքով Կապանի,Գորիսի շրջանների բնակչությունը վերջնականապես ազատվեց հակառակորդի «գրադների», «ալազանների» և հեռահար հրանոթների կրակից: Մարտակերտի, Քարվաճառի, Զանգելանի, Ջաբրաիլի և Ղուբաթլուի շրջանները հակառակորդի զորքերից մաքրման մարտերում վճռական դեր կատարեց նաև «պատերազմի աստված» հրետանին,,որը գործում էր գնդապետ Վ.Ա.Հայրապետյանի ընդհանուր հրամանատարությամբ: Նա էր որոշում հրետանու զորախմբերի կազմը, հատկացվող զինամթերքի քանակը, հրամանատարական կազմը և ներկայացնում համապատասխան, զեկուցագրեր պաշտպանության նախարարի հաստատմանը:

Հրետանավորների կատարած աշխատանքը շատ բարձր գնահատվեց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի կողմից: 1993թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ ԶՈւ Հրետանու օրվա[1] առաջին տարեդարձի առթիվ նրա տրված հրամանում ասված էր. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շինարարության ընթացքում ստեղծվեցին հրետանային միավորումներ, զորամասեր և ստորաբաժանումներ, որոնք այժմ մեր հայրենիքի կրակային վահանն են: Առաջնակարգ մարտական տեխնիկան, որին անձնակազմը տիրապետում է կատարելությամբ, պատրաստ է կատարել Հայաստանի Հանրապետության պաշտպանության ցանկացած խնդիր: Հրետանավոր մարտիկները ջոկատների և այլ զորատեսակների հետ միասին արիաբար մարտնչեցին մեր հայրենիքի արևելյան սահմանների պաշտպանության մարտերում: Հրետանին իրեն հատկապես վառ դրսևորեց 1992թ. հոկտեմբերին Լաչինի մարդասիրական միջանցքի պահպանման մարտերում: Ներկա-

---

[1] Հրետանու օրը սահմանվել էր ՀՀ ՊՆ Սերժ Սարգսյանի և գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանի 1993թ. սեպտեմբերի 30-ի հրամանով:

յումս հրետանավոր մարտիկներն իրենց մարտական վարպետությունն են կոփում ուսումնական հրապարակներում և հրաձգարաններում, արթուն կանգնած են արևելյան սահմաններում և մարտական իրադրության մեջ են դիմավորում իրենց տոնը: Հրետանու օրվա տոնը լավ ցուցանիշներով են դիմավորում Ռ.Ռ.Գարեգինյանի, Է. Ա. Ապրիամովի, Մ. Գ. Գրիգորյանի, Ա.Ա.Դավթյանի ղեկավարությամբ զործող զորամասերի հրետանավորները: Հրետանու օրվա տոնի առթիվ շնորհավորում եմ հրետանային միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների ողջ անձնակազմին: Հայրենական հրետանու ստեղծման և ձևավորման գործում ներդրած անձնական ավանդի, հրետանու մարտական օգտագործման ժամանակ ցուցաբերած խիզախության և հմուտ ղեկավարման ու մարտական պատրաստականության գործում ցուցաբերած բարձր ցուցանիշների համար ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1.Պարգևատրել անվանական մարտական զենքով՝

գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանի Իվանյանին, ՀՀ ԶՈւ հրետանու պետ, գնդապետ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին, ԼՂՀ ԶՈւ հրետանու պետ, գնդապետ Ժորա Իսահակի Գասպարյանին, հրետանային զորամասերի հրամանատարներ, գնդապետներ՝ Ռազմիկ Ռաֆիկի Գարեգինյանին, Էնրիկո Ալեքսանդրի Ապրիամովին, Ալբերտ Աշոտի Դավթյանին:

2.Շնորհել զինվորական կոչումներ՝

Գնդապետ՝

փոխգնդապետ Էդիկ Սերգեյի Վարդանյանին, զորամասի հրետանու պետ,

փոխգնդապետ Ներսես Սերգեյի Մուրադյանին, զորամասի շտաբի օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ՝

մայոր Մարտին Նազարի Կարապետյանին, զորամասի շտաբի պետ...

մայոր Գևորգ Միշիկի Զիլալյանին, զորամասի հրամանատար,

մայոր Գալուստ Գարեգինի Սարկիսյանին, զորամասի շտաբի պետի տեղակալ, մայոր Ալբերտ Մխիթարի Ղազարյանին, բոլոր դասախոս, սմայոր՝

կապիտան Սամվել Մկրտիչի Ավետիսյանին, դիվիզիոնի շտաբի պետ...

5. Միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարներին՝ հրետանու օրվա տոնի առթիվ անցկացնել հանդիսավոր ժողովներ, հրապարակել համապատասխան հրամաններ և կազմակերպել սպորտային-մասսայական միջոցառումներ:

6.ՀՀ պաշտպանության նախարարության թիկունքի պետին՝ լրացուցիչ մթերք հատկացնել զորամասերում տոնական ճաշկերույթ կազմակերպելու համար, ՀՀ ՊՆ ֆինանսական վարչության պետին՝ զորամասեր փոխանցել անհրաժեշտ չափով գումար անձնակազմի պարգևատրման համար:

7.ՀՀ պաշտպանության նախարարին՝ 1993թ. հոկտեմբերի 19-ին մարտական դրոշ հանձնել 6-րդ հրետանային բրիգադին:

8.Հավատում եմ, որ մեր հրետանավորները առաջիկայում ևս իրենց զինվորական պարտքը կկատարեն օրինակելի կերպով:

Հրամանը հասցնել բոլոր միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների անձնակազմերին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սերժ Սարգսյան:

Մենք ամբողջությամբ չհրապարակեցինք վերոհիշյալ փաստաթուղթը, սակայն այնտեղ տրված են հրետանու ստեղծման գործում և մարտական գործողություններում իրենց արժանի լուման ներդրած սպաների, ենթասպաների, սերժանտների, նույնիսկ շարքայինների անունները, որոնք արժանացել են տարբեր աստիճանի կոչումների, դրամական պարգևների և շնորհակալությունների: Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի տեսադաշտից դուրս չէին մնում մարտերում աչքի ընկած հրետանավորները: Հետագայում, երբ հիմնադրվեցին Հայաստանի Հանրապետության պետական պարգևները, նա հոգ էր տանում, որ նրանք արժանան նաև շքանշանների և մեդալների:

Վ.Ա.Հայրապետյանն իր առօրյա աշխատանքում մշտապես ուշադրության կենտրոնում էր պահում նաև հրթիռահրետանային զորամասերի և ստորաբաժանումների մարտական պատրաստության խնդիրը: Նա նորաստեղծ հրետանային և հրթիռային զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարներին սովորեցնում էր թշնամու ագրեսիան խափանելու նպատակով մշտական պատրաստության մեջ պահել հրթիռահրետանային զորքերը, մարտերում ձգտել ու հասնել մեր հրետանու կրակային առավելությանը, որը կապահովի հայկական զորքի և նրա հրետանու առջև դրված մարտական խնդիրների նպատակասլաց կատարումը:

Գեներալ Վ.Ա.Հայրապետյանը հրթիռային և հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարների ուշադրությունն էր հրավիրում համազորային զորքերի հետ հրթիռահրետանային զորքերի համագործակցության կատարելագործման վրա՝ նպատակ ունենալով հաջող ու արդյունավետ օգտագործել հրթիռային զորքերի և հրետանու կրակային հարվածները մարտական խնդիրների կատարման ժամանակ, կրակային խնդիրները կատարել նվազագույն քանակի արկերով և հրթիռներով, պահանջում էր մարզել սպաներին և անձնակազմին, որպեսզի կրակային խնդիրները կատարվեն կարճ ժամանակամիջոցում և բարձր ճշտությամբ:

ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի մարտական պատրաստության հիմնական խնդիրներից էր հրթիռային զորքերի և հրետանու սպաների հրամանատարական պատրաստության մակարդակի բարձրացումն ու կատարելագործումը: Վարչության պետը խնդիր էր դրել, որ հասնեն նրան, որպեսզի ամեն մի հրետանավոր սպա բարդ իրադրության պայմաններում հաջողությամբ կատարի հրետանու պատրաստության դասընթացով սահմանված կրակային խնդիրները, իր ձեռքի տակ ունենա այն բոլոր սարքերը, որոնք



Գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը իր հորաքրոջ աղջկա Ռուզաննա Արմենակի Ավանեսյանի հետ, ք. Կապան, 2000 թ.



Գեներալ Վ. Հայրապետյանի հյուրն է վաստակաշատ հրետանավոր գնդապետ Ռայմոնդ Մագաուզյանը, որը մեծ ավանդ ունի բանակաշինության գործում



Գ. Նժդեհի արձանի մոտ. մի խումբ հրետանավոր սպաների հետ են գեներալներ Վ. Հայրապետյանը, Ա. Զինևիչը, Մ. Գրիգորյանը և Ա. Սարկիսյանը, գնդապետներ Հ. Մանվելյանը, Կ. Մանուկյանը և գնդի հրամանատար Ա. Մկրտչյանը. Լուսակերտ, 1996 թ.



Գեներալներ Մ. Գրիգորյանը և Վ. Հայրապետյանը հայտնի նկարիչ Օնիկ Գաուկյանի հետ, 2006 թ.



Հայկական բանակի մի խումբ սպաներ իրենց կանանց հետ Աթենքում (Հունաստան, 2000 թիվ)



Հայկական բանակի 15-րդ տարելիցի օրը, ձախից գնդապետ Ալեքսանդր Օգանով, Հակոբ Հակոբյան, գեներալ–մայոր Վ. Հայրապետյան, Ա. Մկրտչյան, Կլիմենտ Հարությունյան, Աղվան Գրիգորյան և Սուրեն Բարսեղյան, Երևան, 28.01.2007 թ.



Հրանոթի տեխնիկական ստուգման ժամանակ. գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը և նրա զինակից, մարտական ընկեր, զորամասի հրամանատար գնդապետ Գարուն Աբգարյանը



Слева начальник штаба РВиА ВС РА, полковник Альберт Мардоян, генерал-майор Владимир Айрапетян и представитель управления РВиАВС РФ полковник Михаил Юрьевич Орлов

# ДИПЛОМ

## С ОТЛИЧИЕМ

И № 879988

Настоящий диплом выдан гр. Айрапетяну Володе Асатуровичу

в том, что он ..... в 1961 году поступил ..... в Тбилисское артиллерийское Краснознамённое училище им. 26 Бакинских комиссаров,

и в 1964 году окончил...... полный курс названного училища

по специальности ремонт и эксплуатация артиллерийского вооружения

Решением Государственной квалификационной комиссии от 21. июля 1964 года

гр. Айрапетяну В. А.

присвоена квалификация техника-механика

*Председатель Государственной квалификационной комиссии* генерал-майор артиллерии (Чистяков)

*Начальник училища* генерал-майор артиллерии (Беседин)

*Секретарь* подполковник (Соколов)

Город Тбилиси 26. июля 1964 года

Регистрационный № 1292

Московская типография Гознака. 1960

# ВЫПИСКА

## ИЗ ЭКЗАМЕНАЦИОННЫХ ВЕДОМОСТЕЙ К ДИПЛОМУ № И-879988

Айрапетян Володя Аватурович

**За время пребывания в Тбилисском Артиллерийском Краснознаменном училище им. 26-ти Бакинских комиссаров с 1961 г. по 1964 г. показал следующие знания:**

| | |
|---|---|
| 1. История КПСС | отлично |
| 2. Тактика | отлично |
| 3. Артиллерийско-стрелковая подготовка | отлично |
| 4. Материальная часть артиллерии | отлично |
| 5. Ремонт артсистем | отлично |
| 6. Физическая подготовка | отлично |
| 7. Партийно-политическая работа | отлично |
| 8. Огневая служба | отлично |
| 9. В/ топография и А. Р. | отлично |
| 10. Связь и управление | отлично |
| 11. Военно-инженерная подготовка | хорошо |
| 12. Оружие массового поражения | отлично |
| 13. Огневая подготовка из стрелкового оружия | зачтено |
| 14. Строевая подготовка | отлично |
| 15. Уставы Советской Армии | отлично |
| 16. Военная администрация | — |
| 17. История военного искусства | зачтено |
| 18. Военно-медицинская подготовка | — |
| 19. Автотракторная подготовка | отлично |
| 20. Основы высшей математики | хорошо |
| 21. Иностранный язык (английский) | отлично |
| 22. Техническая механика | отлично |
| 23. Техническое черчение | хорошо |
| 24. Электротехника и радиотехника | отлично |
| 25. Технология и обработка металлов | отлично |
| 26. Основы педагогики и психологии | хорошо |
| 27. Методическая подготовка | отлично |
| 28. Стажировка | отлично |

**Сдал государственные экзамены по предметам:**

| | |
|---|---|
| 1. История КПСС | отлично |
| 2. Тактика | отлично |
| 3. Артиллерийско-стрелковая подготовка | отлично |
| 4. Материальная часть артиллерии, боеприпасы, приборы | отлично |
| 5. Физическая подготовка | отлично |

**Врио начальника Учебного отдела подполковник** [подпись] **(Мурадов)**

Место печати

Гор. Тбилиси 20 Июля 1964 года.

Регистрационный № 1232

Г-304064

тип. ТАКУ з. 21

# ДИПЛОМ

Э № 928023

Настоящий диплом выдан Айрапетяну Владимиру Асатуровичу

в том, что он в 1968 году поступил в Военную артиллерийскую ордена Ленина Краснознаменную академию им. М.И. Калинина

и в 1972 году окончил полный курс названной академии

по специальности „Командно-штабная специальных войск и артиллерии"

Решением Государственной экзаменационной комиссии от „23" июня 1972 г.

Айрапетяну В.А.

присвоена квалификация офицера с высшим военным образованием

Председатель Государственной экзаменационной комиссии
Генерал-лейтенант артиллерии (Грозев)

Начальник академии
Генерал-лейтенант артиллерии (Сяпченко)

Секретарь
Полковник-инженер (Бобин)

М. П.

Город Ленинград „24" июня 1972 г.

Регистрационный № 6376

| Награжден орденом | № ордена |
|---|---|
| „За службу Родине в ВС СССР" 3 ст. | 23749 |

Указом Президиума Верховного Совета СССР

от „21" февраля 1978 г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.
от „...." .......... 19..... г.

М. П.

Секретарь Президиума Верховного Совета СССР [подпись]

„...." .......... 19..... г.

И № 009413

---

„ЗА ВОИНСКУЮ ДОБЛЕСТЬ. В ОЗНАМЕНОВАНИИ 100-ЛЕТИЯ СО ДНЯ РОЖДЕНИЯ ВЛАДИМИРА ИЛЬИЧА ЛЕНИНА"




# УДОСТОВЕРЕНИЕ

Айрапетян
Володя
Асатурович

от имени ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
награжден юбилейной медалью

„ЗА ВОИНСКУЮ ДОБЛЕСТЬ. В ОЗНАМЕНОВАНИЕ 100-ЛЕТИЯ СО ДНЯ РОЖДЕНИЯ ВЛАДИМИРА ИЛЬИЧА ЛЕНИНА"

...ской ...алинина ...ерии генерал-лейтенант ... (...ИПЧЕНКО)

(должность, [подпись]

воинское звание)

М. П.

„15" апреля 1970 года.

*За нашу Советскую Родину!*



УЧИТЬСЯ ВОЕННОМУ ДЕЛУ НАСТОЯЩИМ ОБРАЗОМ.

В. И. ЛЕНИН

# ГРАМОТА

НАГРАЖДАЕТСЯ

подполковник АЙРАПЕТЯН Владимир Асатурович

за умелое руководство боевой и политической подготовкой части и в связи с переходом на другую должность.

Выражаю уверенность в том, что Вы и впредь будете примером в исполнении служебных обязанностей, честно служить Родине – Союзу Советских Социалистических Республик.

КОМАНДИР В/ЧАСТИ 92910
ПОЛКОВНИК [signature]
В.КАТАНАЕВ






# ГРАМОТА

НАГРАЖДАЕТСЯ

Полковник
АЙРАПЕТЯН Владимир Асатурович

За высокие показатели в боевой и политической подготовке, примерную воинскую дисциплину, усердие, проявленное по службе, и выполнение социалистических обязательств.

Выражаю уверенность, что Вы и впредь будете служить примером выполнения служебного долга по укреплению оборонного могущества нашей социалистической Р о д и н ы !

КОМАНДИР ВОЙСКОВОЙ ЧАСТИ 20650
ГЕНЕРАЛ-МАЙОР _______ В.ПИВОВАРОВ

"[redacted]" ноября 1983 г.





*За нашу Советскую Родину!*

НАШ ЛОЗУНГ ДОЛЖЕН БЫТЬ ОДИН — УЧИТЬСЯ ВОЕННОМУ ДЕЛУ НАСТОЯЩИМ ОБРАЗОМ...

*В. И. ЛЕНИН*

# ГРАМОТА

НАГРАЖДАЕТСЯ

полковник

АЙРАПЕТЯН ВЛАДИМИР АСАТУРОВИЧ

За достигнутые успехи в боевой и политической подготовке, примерную воинскую дисциплину, добросовестное исполнение своего служебного долга и в ознаменование 72-й годовщины Великой Октябрьской социалистической революции.

[illegible] ВОЙСКОВОЙ ЧАСТИ ПП 3945[illegible]
[illegible]-МАЙОР [illegible] Е.МЕЩЕРЯКОВ

"6" ноя[illegible] года

Войсковая часть ... Полевая почта ... 39454

Изд. № [illegible] Г 541862
Зак. тип. УВИ МО Зак. 2092

օգնում են սպային և հնարավորություն տալիս արագ և ճշգրիտ պատրաստելու հրետանու կրակային հարվածի բոլոր տվյալները:

Նա զորամիավորումների հրետանու պետերից, զորամասերի հրամանատարներից և մոտոհրաձգային բրիգադների հրետանու պետերից պահանջում էր հատուկ ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ սպաների պատրաստությունը մասնագիտական առարկաներից, հատկապես հրետանու հրաձգության և կրակի կառավարումից, սպայական հաշվարկների կազմով մարտական պատրաստության նորմացույցների կատարման, հրետանային սարքավորումների, հատիքային սպառազինության և տեխնիկայի վրա մարտական աշխատանքի կատարմանը միայն սպաներից կազմված հաշվարկներով, կատարելագործել նրանց տեսական գիտելիքները և գործնական ունակությունները:

Հրթիռահրետանային զորքերի վարչության պետ Վ.Ա. Հայրապետյանը նրանցից պահանջում էր կտրուկ բարձրացնել հրետանային կրակի և հրթիռային հարվածների ճշգրտությունը և արդյունավետությունը: Հրետանային կրակի վարժանքների ժամանակ սպաների հետ պարապելիս անպայման պետք էր հաշվի առնել հրետանու պատրաստության դասընթացի կրակային խնդիրների ճշգրիտ և ժամանակին կատարումը, ինչպես նաև՝ նախկինում նշանափորձված նպատակակետերից կրակի տեղափոխումը: Վարչության պետը պահանջում էր նրանցից՝ գտնել ուղիներ և մեթոդներ հրետանավոր սպաների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման ուղղությամբ, սահմանել հատուկ հսկողություն համապատասխան պետերի կողմից:

Վարչության պետը խնդիր էր դնում նաև ԼՂՀ պաշտպանության բանակի, մոտոհրաձգային բրիգադների, մոտոհրաձգային գնդերի հրետանու պետերի և հրետանային զորամասերի հրամանատարների առջև, հատուկ ուշադրություն դարձնել այն հրետանային ստորաբաժանումներին, որոնք տանում են մարտական հերթապահություն, հատկապես հրամանատարական դիտակետերի հետախուզական ջոկերին, ժամանակին վերլուծել հետախուզական տվյալները, կատարելագործել կրակային դիրքերի (հիմնական, պահեստային, ժամանակավոր) և հրամանատարական դիտակետերի ինժեներական սարքավորումները, որոնք պետք է ապահովեն կրակի վարման որակի բարձրացումը և հրետանու ստորաբաժանումների պաշտպանվածությունը հակառակորդի հարվածներից:

Գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը դրա հետ մեկտեղ մեծ ուշադրություն էր դարձնում հրետանային ստորաբաժանումների ուսումնանյութական բազայի կատարելագործման վրա, հասնում նրան, որ բոլոր զորամասերում հրետանավորների համար լինեն կահավորված դասարաններ՝ մասնագիտական և տեխնիկական պատրաստությունից, որ յուրաքանչյուր զորամասում լինի հաստատված պլան այդ խնդրի լուծման համար: Նրա ուշադրության

կենտրոնում էին նաև հրացանահրետանային հրաձգարանների, փոքր հրետանային հրաձգարանների շինարարության, սպայական կադրերի պատրաստման և նրանց մասնագիտական կատարելագործման խնդիրները: Գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը հատուկ ուշադրություն էր դարձնում նոր կազմավորված և կազմավորվող հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների վրա, հատկապես նրանց մարտական ներդաշնակման և մարտունակության բարձրացման կատարելագործման վրա:

1993թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռ.Ս.Քոչարյանի հրամանով ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորվեցին ԼՂՀ Պաշտպանության բանակի: ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի վարչության պետ, գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը մեծ տեղ հատկացրեց նաև պաշտպանության բանակի հրետանային զորամասերի և ստորաբաժանումների կազմավորման ու համալրման աշխատանքների վրա: Նրա միջնորդությամբ ՊԲ հրետանու բաժնի պետ նշանակվեց խորհրդային բանակում 25 տարվա ստաժ ունեցող, Թբիլիսիի բարձրագույն հրետանային ուսումնարանի շրջանավարտ, գնդապետ Ժորա Իսահակի Գասպարյանը: Առաջ անցնելով նշենք, որ 1996թ. Ժ.Ի.Գասպարյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում, իսկ 2006 թ. նրան շնորհվել է Արցախի հերոսի կոչում: Մարտական ընկերները մինչ այսօր ջերմ հարաբերություններ են պահպանում և մշտապես իրար օգնության հասնում:

1993թ. դեկտեմբերի 26-ին ադրբեջանական զինուժը լայնածավալ հարձակում սկսեց հայերի դեմ երեք ուղղություններով՝ 300կմ ճակատով, Արաքսից մինչև Օմարի լեռնանցք: Ադրբեջանական բանակին մեծ օգնություն էին ցույց տալիս թուրքական բանակի սպաները՝ որպես զինվորական խորհրդականներ, ավելի քան 1500 աֆղան մոջահեդներ, նույնքան էլ չեչեն՝ գրոհայիններ և իսլամական մի շարք երկրներից ներմուծված վարձկաններ, զգալի թիվ էին կազմում վարձկան դիպուկահարները: Օգտվելով Օմարի լեռնանցքը պաշտպանող հայ զինվորների ծանր կացությունից (սառնամանիք, փոքրաթիվ բանակություն, նորակոչիկ չմարզված զինվորներ, տաք հանդերձանքի պակասություն) և հանկարծակի հարձակման հետևանքով ընձեռած հնարավորությունից՝ հակառակորդին հաջողվեց Քելբաջարի շրջանում հետ գրավել մի շարք գյուղեր, ինչպես նաև ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Օմարի լեռնանցքը [1]:

1993թ. դեկտեմբերին և 1994թ. հունվարի սկզբին տեղի ունեցած մարտերում իր անմահ սխրանքով աչքի ընկավ հրետանային դիվիզիոնի շտաբի պետ, ավագ լեյտենանտ Վահագն Ալեքսանդրի Հակոբյանը (ծնվել է 1964թ. փետրվարի 27-ին Գյումրի քաղաքում, ավարտել Սումի քաղաքի Ֆրունզեի անվան հրետանային բարձրագույն ուսումնարանը): Նա ակտիվ մասնակցել է Աֆ-

[1] Տես «Հայ Զինվոր», 9-16 դեկտեմբերի 2006թ., թիվ 48, էջ 9:

ղանստանում տեղի ունեցած մարտական գործողություններին և ձեռք բերել մարտական հարուստ փորձ: Արցախյան ազատագրական պատերազմին նա մասնակցել էր առաջին իսկ օրերից ազատամարտիկների շարքերում: Երբ կազմավորվեց Հայկական բանակը, Վահագնը անմիջապես դիմեց Վ.Հայրապետյանին և մտավ ՀՀ ԶՈւ շարքերը՝ սկզբում որպես Բալահովիտի գնդի մարտկոցի հրամանատար, ապա դիվիզիոնի շտաբի պետ: Նա ակտիվորեն մասնակցել էր Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների և Արցախի համար մղվող մարտերին: Ինչպես նշել է «Հայ Զինվոր» թերթը, «Ավագ լեյտենանտ Հակոբյանի մարտկոցը պաշտպանական և ազատագրական մարտերի ժամանակ ոչնչացրել է թշնամու երկու «Գրադ» կայանք, այլ ռազմական տեխնիկա և կասեցրել կենդանի ուժի առաջընթացը»:

Ավաղ, Քարվաճառի արծիվը, ինչպես կնքել էին նրան զինակից ընկերները, հերոսաբար զոհվեց 1994թ. հունվարի 19-ին:Մարտի թեժ պահին նա փոխարինել էր զոհված գնդացրորդին և անհավասար մարտում եռ մղել մարտկոցի ուղղությամբ հարձակվող թշնամու մեծաթիվ ուժերը: Հայրենիքը բարձր է գնահատել հրետանավոր սպայի սխրանքը՝ հետմահու նրան շնորհելով «կապիտան» զինվորական կոչում, նրա անունը հավերժ գրանցվել է դիվիզիոնի անձնակազմի ցուցակում, պարգևատրել «Արիության համար» մեդալով, ԵԿՄ «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով:

Գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը, բարձր գնահատելով Վահագն Հակոբյանի հերոսական սխրանքները մարտի դաշտում, իր ելույթներում հրթիռահրետանային զորքերի անձնակազմի առաջ և ռազմական հոդվածներում հաճախ է օրինակ բերում նրա բարձր մասնագիտական պատրաստությունն ու հայրենասիրական մոտեցումը հանուն հաղթանակի:

Արցախյան պատերազմի ակտիվ մասնակիցների շարքերում էր նաև հրետանավոր Գուրգեն Մերուժանի Արշակյանը (ծնվել է 1964թ. սեպտեմբերի 24-ին Արթիկի Գետափի գյուղում): 1989թ. օգոստոսի 3-ից Գուրգեն Արշակյանը ծառայում էր Բալահովիտում տեղակայված ռուսական հրետանային գնդում՝ որպես 8-րդ մարտկոցի ավագ, իսկ 1992թ., երբ նշված գունդը ընդունվեց Հայկական բանակի կազմի մեջ, Գ. Արշակյանը՝ որպես աչքի ընկնող զինվորական, նույն զորամասում նշանակվում է գնդի հետախուզական մարտկոցի հրամանատար: Նա նոր պաշտոնում ցուցաբերեց այնպիսի անձնական և ծառայողական հատկանիշներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, բարեխղճությունը, կարգապահությունը, պահանջկոտությունը և բարյացակամ վերաբերմունքը պարտականությունների կատարման գործընթացում: Հաշվի առնելով Գ.Արշակյանի ծառայության հանդեպ բարձր պատասխանատվության զգացումը՝ գնդի հրամանատարությունը 1993թ. հուլիս ամսից նրան վստահեց դիվիզիոնի հրամանատարի պաշտոնակատարի պարտականությունները: 1992թ. օգոստոսից մինչև սեպտեմբերի 12-ը մասնակցել էր Կարմիրի շրջանի Ճամբարակ գյուղի պաշտպանական մարտե-

րին, իսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Լաչինի միջանցքի պաշտպանությանը, 1993թ. հունվար և փետրվար ամիսներին՝ Կապանի պաշտպանական մարտերին: 1994թ. հունվարից Գ. Արշակյանը մասնակցել էր Քելբաջարի ազատագրման մարտերին, իսկ 1994թ. փետրվարի 24-ին Գուրգեն Արշակյանը իր վերջին հրաժեշտը տվեց կնոջը՝ Կարինեին, վեց տարեկան Գրիգորին և երեքամյա զույգ երեխաներին՝ Սաթենիկին և Նարեկին, ու մեկնեց մարտադաշտ: Նա բազմիցս կյանքը վտանգելով անձամբ էր գնում հետախուզության, և ճակատագրական եղավ 1994թ. մարտի 7-ը: Այդ օրը նա, իր հետ վերցնելով շարքային Ոդումյան Սասունին և գտնվելով թշնամու թիկունքում, նկատվում է հակառակորդի կողմից ու շրջապատվում. սկսվում է անհավասար մարտ: Երբ մոտենում են Գ. Արշակյանի զինակից ընկերները, մարտն արդեն վերջացած էր, և նրանք տեսնում են տասնյակ սպանված ազերիների ու ծանր վիրավորված Գ.Արշակյանին և Ս. Ոդումյանին: Նրանք փորձում են Գ.Արշակյանին հասցնել զինվորական հոսպիտալ, սակայն ծանր վերքերից նա մահանում է:

Կինը՝ Կարինե Արշակյանը, շարունակելով ամուսնու հայրենանվեր գործը ազգային բանակում, ներկայումս ծառայում է Բալահովիտի հրետանային գնդում՝ որպես տեղագրական ծառայության պետ, արժանացել է սպայական կոչման՝ «մայոր»:

Գուրգեն Մերուժանի Արշակյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով, և նրան՝շնորհվել է «կապիտան» զինվորական կոչում:

Հետմահու կապիտանի կոչումը և հայրենիքի պարգևներին Վահագն Հակոբյանը և Գուրգեն Արշակյանը ներկայացվել են գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի կողմից. նա բարձր է գնահատում Վահագնի և Գուրգենի մարտական սխրանքները ու գտնում է, որ նրանք արժանի են ավելի բարձր պարգևների: Փառք ու պատիվ հայրենիքի համար զոհված մեր բոլոր հայորդիներին, նրանք բոլորը կհիշվեն Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ: Այդ առումով գովասանքի է արժանի իմ լավ բարեկամ, անվանի գրող Սասուն Գրիգորյանի մեծածավալ հայրենանվեր աշխատանքը՝ ի դեմս նրա «Հավերժության լուսամատյան» և «Հավերժախոս պանթեոն» հանրագիտարանների, որտեղ պատկերված և լուսաբանված են Արցախյան պատերազմի բոլոր արժանի հայորդիները և վերոհիշյալ հրետանավորները:

Դաժան մարտեր էին ծավալվել նաև արևելյան ճակատում՝ Աղդամի, Ասկերանի և Մարտակերտի, ինչպես նաև հարավային՝ Ֆիզուլի-Հորադիզ ուղղություններով: Հորադիզի ուղղությամբ գործող հակառակորդը օգտվում էր ավիացիայի ներկա ուժերի գերակշռությունից: Հակառակորդի հարձակումը շարունակվեց մինչև 1994թ. փետրվարի 24-ը: Հարավում նրանց հաջողվել էր հետ գրավել Հորադիզ քաղաքն ու համանուն երկաթուղային կայարանը:

Հայկական զինուժը, վերախմբավորելով ուժերը, մոբիլիզացիայի շնորհիվ համալրելով ստորաբաժանումները, օգտագործելով բոլոր նյութատեխնիկական միջոցները, հակառակորդին հասցրեց հուժկու հակահարված, որի շնորհիվ ոչ միայն կանգնեցվեց նրա առաջխաղացումը, այլև նա դուրս շպրտվեց Քարվաճառի գրաված գյուղերից, ամենակարևորը՝ Օմարի լեռնանցքից: Հայկական ուժերի հակահարվածը, զորավարին հատուկ տաղանդով, պատրաստվեց և իրականացվեց ԳԾ պետ գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեսյանի գլխավորությամբ: Նրա ակտիվ զինակից օգնականներն էին ինքնապաշտպանական զորքերի պետ, գնդապետ Վ.Հայրապետյանը, գնդապետներ Յու. Խաչատուրովը, Ֆելիքս Գզողյանը, Ալեքսանդր Բալբաբյանը, փոխգնդապետներ Սեյրան Սարոյանը, Հայկազ Բաղմանյանը և մի շարք այլ բարձրաստիճան հրամանատարներ:

Ձմեռային դժվարին պայմաններում ինքնապաշտպանական զորախմբեր ստեղծելու կարևոր գործում Վ.Հայրապետյանին ակտիվ օգնություն են ցույց տվել հրետանավոր սպաներ Մարտին Կարապետյանը, Գուրգեն Արշակյանը, Ալբերտ Դավթյանը, Ժորա Գասպարյանը, Վարդան Աթոյանը, Արամայիս Բաղդասարյանը, Պողոս Աբրահամյանը, Արմեն Արշակյանը և մի շարք այլ հայրենասեր հրետանավորներ:

Ձախողվեց ադրբեջանցիների մտադրությունը Հայաստանը Արցախին կապող երկրորդ «կյանքի ճանապարհը» վերացնելու և այլ խլամական հակահայկական ծրագրեր:

Այսօր, երբ Քելբաջարի (Քարվաճառի) ազատագրման դաժան մարտերից անցել է արդեն 13 տարի, գեներալ-մայոր Վ.Հայրապետյանը մեծ հուզմունքով և հարգանքով է հիշում նշված մարտերի գլխավոր հրամանատար, ՀՀ ԶՈւ ԳԾ պետ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Հմայակի Անդրեսյանին, որը դեռ այն ժամանակ մեծ նշանակության և բարձր գնահատականի է արժանացրել ինքնապաշտպանական զորքերի մարտական մասնակցությունը Օմարի լեռնանցքի գրավմանը, ինչպես նաև մեր քաջարի զինվորների, երկրապահների ու հրամանատարների սխրագործությունները [1]:

Քարվաճառի շրջանի ամբողջական ազատագրումը և Օմարի լեռնանցքում ամրապնդվելը մեծ չափով ապահովեց Մարտակերտի շրջանում մարտնչող հայկական ուժերի թիկունքը և նպաստեց նրանց հաղթանակին: Հակառակորդը խուճապի էր մատնվել և անկանոն նահանջում էր՝ հայերին թողնելով հսկայական քանակությամբ զենք, զինամթերք և մարտական տեխնիկա: Տեսնելով, որ հայերը, զարգացնելով հարձակումը, կարող են հասնել

---

[1] Գեներալ-լեյտենանտ Հ.Անդրեսյանի մահվան առաջին տարելիցի ժամանակ գեներալ-մայոր Վ.Հայրապետյանը նրա մասին հիշողություններ է գրել, որը տպագրվում է սույն գրքում, էջ 211- 213:

մինչև Գանձակ (Գյանջա, Կիրովաբադ) և դուրս գալ Քուռ գետի աջ ափ, Ադրբեջանի կառավարությունը դիմեց Ռուսաստանին՝ միջնորդ լինել հայերի հետ զինադադար կնքելու գործընթացին: 1994թ. փետրվարի վերջին Մոսկվայում հանդիպեցին Ռուսաստանի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Պավել Գրաչովը, Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները, ինչպես նաև ԼՂՀ ներկայացուցիչները: Բանակցությունների հետևանքով կողմերի միջև ստորագրվեց համաձայնություն, որով նախատեսվում էր մարտական գործողությունների դադարեցում 1994թ. մարտի 1-ից:

Սակայն հարաբերական որոշ դադարից հետո ադրբեջանցիներն իրենց յուրահատուկ խարդախությամբ փետրվարի 27-ին հարձակում սկսեցին Ֆիզուլու շրջանից: Հայկական զորքերը անմիջապես ուժգին հարված հասցրին ուխտադրուժ թշնամուն և ստիպեցին նրան մարտի 10-ին թողնել նաև Հորադիզ բնակավայրը: Թշնամու ձեռքում մնաց միայն քաղաքից երկու կիլոմետրի վրա գտնվող երկաթուղային կայարանը: Միայն Հորադիզի մարտերում հայկական հրետանու կրակից խփվեց թշնամու երեսունհինգ տանկ, որոնցում մեծ բաժին ուներ Գյումրիի հակատանկային գունդը, որի հրամանատարն էր այն ժամանակ փոխգնդապետ Էնրիկո Ապրիամովը, որը ներկայումս ՀՀ ԳԾ պետի առաջին տեղակալն, ունի գեներալ-լեյտենանտի կոչում:

Քարվաճառի ազատագրման և Օմարի լեռնանցքի գրավման մարտերին, սկսած 1994թ. հունվարի 1-ից մինչև փետրվարի 25-ը, իր ակտիվ մասնակցությունն ունեցավ հրթիռահրետանային զորքերի հրամանատար, գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը: Այդ մարտերում նա փոխհամաձայնեցնում էր հայկական հրթիռահրետանային զորքերի գործողությունները հակաօդային ուժերի, ավիացիայի և հետևակային ստորաբաժանումների հետ: Անհրաժեշտության դեպքում գնդապետ Վ. Հայրապետյանը, հաճախ անձամբ էր կառավարում հրետանու կրակը, հարկ եղած դեպքում կանգնում հրանոթի նշանացույցի մոտ և դիպուկ կրակով ոչնչացնում թշնամու կրակակետերը, մեծ կորուստներ պատճառում նրա կենդանի ուժին և տեխնիկային: Ահա թե ինչ է գրված զորապետի պարգևատրման թերթիկներից մեկում, որով գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը կատարած սխրանքի համար ներկայացվել էր մարտական պարգևի. «Կատաղի մարտեր էին ընթանում Քելբաջար-Օմարի լեռնանցքի հատվածում: Վլադիմիր Հայրապետյանը գնահատելով պահի կարևորությունը, Սեյդլարից «Դ-30» մարտկոցի լցված 4 հրանոթ ԿամԱԶ-ով վարորդի հետ տեղափոխում է Դեմիրչիդամի բարձունք այն պահին, երբ թուրք խումբը մոտեցել էր Սեյդլարին, և վերահաս վտանգը դառնում էր անխուսափելի, արհամարհելով անձնական անվտանգությունը՝ Վլադիմիր Հայրապետյանը բարեհաջող տեղափոխում է հրանոթները, արագ վերացնում անսարքությունները և բերում մարտական վիճակի: 85 քք տրամաչափի հրանոթով ուղիղ նշանառությամբ հարվածելով Յանշակի և Յանշակիբինայի տարածքում դասավորված հակառակորդի ստվար շարայուներին, առաջացնելով խուճապ թշնամու զորքի մեջ՝ կասեցվում է նրա առաջխաղացու-

մը, և հայկական ուժերը, ունենալով զգալի առավելություն, բաշալերվելով կատարվածից, հակահարձակման և ակտիվ գործողությունների միջոցով կարողացան ազատագրել Օմարի բարձունքն ու հարակից բնակավայրերը»:

Սակայն ամեն ինչ չէ, որ ընթանում էր բարեհաջող: Համազորային զորամասերի որոշ հրամանատարների մեղքով հարավային՝ Հորադիզի ուղղությամբ հակառակորդի ձեռքն անցավ երեք 122 միլիմետր տրամաչափի հրանոթ իրենց քարշակների և անձնակազմի հետ միասին: Քելբաջարի շրջանում կիրճերից մեկում՝ Սեյդլարի մարտական դիրքերում, նահանջի ժամանակ Վանաձորի գնդի հրետանային դիվիզիոնից լքել և դիրքերում էին թողնվել չորս 122 է միլիմետրանոց տրամաչափի Դ-30 հրանոթներ: Սակայն շնորհիվ հրթիռահրետանային զորքերի պետ, գնդապետ Վ. Ա. Հայրապետյանի՝ ժամանակին արված անձնական սխրանքի՝ հրանոթները փոխադրվեցին թշնամու «քթի» տակից և դուրս բերվեցին նոր դիրքեր: Հետագայում այդ հրանոթները զգալի չափով նպաստեցին Քելբաջարի շրջանում հակառակորդի խմբավորման ջախջախմանը մարտական գործողությունների ժամանակ:

Նորաստեղծ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերի փաստացի իրավիճակը խիստ անհանգստացնում էր Վ.Ա.Հայրապետյանին, որը հաճախ անձամբ էր դիմում ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին և ստանում նրա միջամտությունն ու հուսալի օգնությունը տարբեր բնագավառներում, որն օրեցօր հզորացնում էր այդ շատ կարևոր զորատեսակը: Պատերազմական պայմաններում նա մեծ մտահոգությամբ ակտիվ գործողություններ էր ձեռնարկում ՌԴ պաշտպանության նախարարության համապատասխան համակարգերի հետ՝ հրթիռահրետանային զորամասերի վերազինման, համալրման, նոր միջոցների ներդրման հրթիռահրետանային զորքերի ռազմակիրառական բնագավառում, նրանց կատարելագործման և արդյունավետության հասնելու համար:

Հայկական արդյունաբերական որոշ ձեռնարկությունների բազայի վրա ստեղծվեցին իրական հնարավորություններ կազմակերպելու ԿՍ-19 կարկտահար հրանոթների վերանորոգման աշխատանքները ու նրանց մարտական կիրառումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հրանոթների առկա քանակը մեծ էր՝ ստեղծվեցին լրացուցիչ հրետանային ստորաբաժանումներ, որը բավականին հզորացրեց մեր հրետանին:

Ռուսաստանը որոշակի չափով համալրեց Հայաստանին հանձնված և մասամբ թալանված հրետանային համակարգերը, ձեռք բերվեցին հրետանային օպտիկական սարքեր, հեռաչափեր և վերանորոգման համար անհրաժեշտ միջոցներ:

Մեծ աշխատանք տարվեց նախկին խորհրդային, իսկ հետագայում ռուսական բանակում ծառայած հայ հրետանավորների համախմբման, նրանց կարճատև դասընթացների և ուսուցման համար:

Մարտերի ընթացքում հաճախ հրետանին կարիք էր զգում պահեստամասերի և քսայուղերի, որի հետևանքով հրանոթները դուրս էին գալիս շարքից:

Իսկ ԶՈւ թիկունքի վարչությունում դեռ չէր լուծվել դրանց մատակարարման հարցը: Անհրաժեշտ պահեստամասեր ձեռք բերելու նպատակով 1994թ. մարտի 24-ից մինչև ապրիլի 10-ը գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը գեներալ-լեյտենանտ Անդրեսյանի հովանավորությամբ գործուղվեց Դոնի Ռոստով-Կրասնոդար-Մայկոպ (որտեղ նա ծառայել էր ժամանակին) և կազմակերպեց դրանց ձեռքբերման և Հայաստան առաքման գործը: Ձեռնարկված միջոցառումները մեծ դեր և նշանակություն ունեցան հրթիռահրետանային զորքերի հզորացման և պատերազմի վերջնական ավարտին ու հաղթանակին հասնելու ճանապարհին: Հայկական հրետանին սկսեց ավելի ուժգին հարվածներ հասցնել թշնամուն և շարքից հանել նրա մարտական տեխնիկան ու կենդանի ուժը: Քելբաջարի, Մարտակերտի, Ֆիզուլու, Հորադիզի շրջաններում հայկական զինուժի տարած փայլուն հաղթանակներից հետո ադրբեջանական զորքերը, որոնք իրենց հույսը դրել էին օտարերկրյա վարձկանների վրա, խիստ բարոյալքված էին: Սովորական էին դարձել ամենօրյա խմբակային դասալքության և հրազենով ինքնավիրավորման դեպքերը: Վերևներում իրար վրա էին բարդում պատերազմում կրած պարտության պատճառները, փնտրում քավության նոխազներ: Փորձված դիվանագետ, հին չեկիստ Հեյդար Ալիևը նորանոր մարդկային, նյութական և տարածքային կորուստներից խուսափելու նպատակով ստիպված էր 1994թ. մայիսի 16-ին Մոսկվայում կնքել հայ-ադրբեջանական զինադադար, որով վերջ տրվեց ռազմական գործողություններին: Այդ զինադադարը որոշ խախտումներով պահպանվում է առ այսօր:

Զինադադարի կնքումից մի քանի օր անց՝ 1994թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձի օրը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում: Գեներալի ուսադիրները մայիսի 28-ին բարձր տոնական մթնոլորտում Սևանի ափին Վ.Հայրապետյանին հանձնեց անձամբ ՀՀ առաջին նախագահը: Նույն հրամանագրով գեներալ-մայորի կոչում շնորհվեց նաև գնդապետ Միխայիլ Գուրգենի Գրիգորյանին, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գնդապետ Հմայակ Վարազդատի Հարությունին և ԼՂՀ ՊԲ հրամանատար, գնդապետ Սամվել Անդրանիկի Բաբայանին: Նրանք Հայկական բանակի առաջին զորահրամանատարներից էին, որոնց շնորհվում էր գեներալական կոչում: Վլադիմիր Հայրապետյանին նախօրեին շնորհավորեց ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, որը միշտ բարձր էր գնահատում նրա հայրենանվեր ծառայությունը:

Զինադադարի կնքումից հետո ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի պետ, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը ավելի մեծ հնարավորություն ստացավ իր կազմակերպչական մեծ ունակությունները, մարտական հարուստ փորձը և կամային բարձր հատկանիշները նվիրել հայկական զինուժի հրթիռահրետանային զորքերի կատարելագործման և զարգացման գործին:

# ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1994թ. մայիս-2003 թ. հոկտեմբեր)

Խաղաղ պայմաններում ինչպես ՀՀ զինված ուժերը, այնպես էլ ԼՂՀ պաշտպանության բանակը, նրանց հրամանատարական կազմը լայն հնարավորություն ստացան նոր թափով լծվելու բանակաշինության գործին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Ինչպես նշել է պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը. «Բանակաշինության գործընթացն ընդգրկեց ռազմական համակարգի, առանց բացառության, բոլոր ոլորտները՝ բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրական հիմքի ապահովում: Բանակաշինության հիմնական խնդիրներից մեկը կադրերի պատրաստությունն է: Այդ նպատակով ստեղծվեցին ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանը, որը հետագայում վերաճեց ռազմաավիացիոն ինստիտուտի[1], պաշտպանության նախարարության զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը, այսօր արդեն Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետը, որը մինչև օրս զինված ուժերի համար պատրաստել է շուրջ 1300 շրջանավարտ սպաներ: Շարունակվել են նաև սպայական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը արտասահմանյան երկրների ռազմաուսումնական հաստատություններում: Մասնավորապես Ռուսաստանի Դաշնության և Հունաստանի Հանրապետության ռազմական հաստատություններում ուսումնառել և այսօր շարունակում են իրենց ուսումը ավելի քան 1500 սպա և կուրսանտ:

Հաշվի առնելով, որ զինված ուժերի սպաների մի զգալի մասը կազմում են ինքնապաշտպանական-կամավորական ջոկատների մարտիկները՝ նրանց որակավորման և վերապատրաստման նպատակով ստեղծվեց սպաների որակավորման բարձրացման կենտրոնը, որն իր գործունեության ընթացքում տվել է շուրջ 1500 սպա-շրջանավարտ: Շուրջ 1000 շրջանավարտ է տվել ենթասպաների դպրոցը: ԶՈւ կառուցվածքի կատարելագործման, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի հուսալի պաշտպանությունը կազմակերպելու, ղեկավարումը կոորդինացնելու, մարտական պատրաստականությունը բարձրացնելու նպատակով մի քանի ուղղություններով ստեղծվեցին բանակային զորամիավորումներ[2]՝ համախմբելով համապատասխան տարածաշրջաննե-

---

[1] 2005 թ. ապրիլի 1-ից ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հրամանով ռազմաավիացիոն ինստիտուտը կոչվել է ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցի անունով:

[2] Կորպուսներ

րի զորամասերի գործունեությունը: Կոմպլեկտավորվեցին կենտրոնական ապարատի վարչությունները, բաժինները ու ծառայությունները, կայացան հրետանու, հակաօդային պաշտպանության օդուժի զորատեսակները, կազմավորվեցին հետախուզության, կապի, ինժեներական զորքերը, որոնք կատարեցին իրենց վրա դրված խնդիրները պատերազմի ժամանակ, այժմ էլ մարտունակ են, պատրաստ՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները»[1]:

Հայկական զինված ուժերի հրետանային և հրթիռային զորքերի կայացման և նրանց մարտավարական ունակությունների ամրապնդման գործում մեծ դեր կատարեց ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի վարչության պետ, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը, որն իր ամբողջ ուժերն ու եռանդը նվիրաբերեց հայկական հրետանու կատարելագործման, նրա մարտունակության բարձրացման, հայրենիքի սահմանների պաշտպանության հուսալի կրակային վահան ստեղծելու վեհ առաքելությանը: Նա իր հարուստ զինվորական և մարտական փորձը փոխանցում էր հրետանային զորամասերի երիտասարդ հրամանատարներին, մոտոհրաձգային զորամասերի հրետանու պետերին, դիվիզիոնների և մարտկոցների հրամանատարներին: Զինվորական ծառայության և հատկապես հրետանային զորամասերում և ստորաբաժանումներում, թե ինչպես պետք է կազմակերպվի մարտական պատրաստությունը, ինչպես պետք է ամփոփվի մարտական պատրաստության արդյունքները, վարչության պետի կողմից մշակվել էր հրետանու պետերի և հրամանատարների համապատասխան աշխատակարգը, որն ընդունվել էր հրետանային բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը միշտ էլ պահանջկոտ է եղել ոչ միայն հրթիռահրետանային զորամասերի սպաների նկատմամբ. նա կրկնակի պահանջկոտ է եղել իր և ենթակա վարչության անձնակազմի նկատմամբ: Վարչության սպաները պետք է լինեին պրոֆեսիոնալ հրետանավորներ, ունենային բարձր մասնագիտական պատրաստություն, կարգապահ և օրինակելի: Զորամասեր գործուղվելիս նրանք ստանում էին առաջադրանքներ: Նա անձամբ հաստատում էր նրանց աշխատանքային պլանները, իսկ գործուղումից վերադառնալիս պահանջում նրանցից գրավոր զեկուցագրեր կատարված աշխատանքների մասին:

Վարչության պետը և ծառայակիցները բաց գիտակցում էին, որ պատերազմը դեռևս չի ավարտվել, կնքվել է միայն զինադադար, և թշնամին հարմար պահի է սպասում մարտական գործողությունները վերսկսելու համար: Ուստի գեներալ-մայոր Վ. Ա. Հայրապետյանի ղեկավարությամբ վարչու-

---

[1] Սերժ Սարգսյան Հայկական բանակի 10 տարին, «Հայ զինվոր», 2-9 փետրվարի, 2002 թ., թիվ 4, էջ 5:

թյան սպաները առաջին հերթին ձեռնամուխ եղան հրետանու մարտական պատրաստության որակի հետագա բարձրացման և զորքերի անձնակազմի կարգապահության ամրապնդման գործին:

Վ. Հայրապետյանը բարձր է գնահատում վարչության սպաների կատարած աշխատանքը ՀՀ ԶՈւ հրթիռահրետանային զորքերի կայացման գործում՝ հատկապես նշելով գնդապետներ Լևոն Միքայելյանի, Մարատ Ղարիբյանի, Ներսես Մուրադյանի, Բաբկեն Աբրահամյանի, Ազատ Փիլոյանի, Հրանտ Մանվելյանի, Ալբերտ Մարդոյանի, Վալերի Կարապետյանի, Սամվել Վանեսյանի, Հենրիկ Ալիխանովի, Գրիգոր Բաղդյանի, իսկ երիտասարդ սպաներից՝ Գարիկ Հակոբյանի, Միքայել Նազարեթյանի, Արա Առաքելյանի, Արմեն Հարությունյանի, Սեյրան Վարդանյանի, Գագիկ Պետրոսյանի, Հովիկ Հոխիկյանի անունները:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը նշում է նաև պաշտպանության բանակի այն հրետանավորներին, որոնք իրենց արժանի տեղն ունեն Արցախյան պատերազմի հաղթական ավարտի հայրենանվեր գործում: Նրանցից են գեներալ-մայոր Ժորա Գասպարյանը, գնդապետներ Յուրի Քարամյանը, Սամվել Աբրահամյանը, Ֆելիքս Պողոսյանը, փոխգնդապետներ Գենադի Բաղդասարյանը, Ռաֆիկ Գրիգորյանը, Ջալալ Հարությունյանը, Սերգեյ Առուստամյանը, Սուրեն Ստեփանյանը, Էմիրջան Ասլանյանը, Ալեքսանդր Աբրահամյանը, Սլավիկ Բախշյանը, Հայկ Ծառյանը և ուրիշներ:

Վ.Ա.Հայրապետյանը դրվատանքով է նշում այն երիտասարդ սպաների անունները, որոնք պատերազմի սկզբին դեռ լեյտենանտներ էին, բայց մշտապես գտնվում էին ուշադրության կենտրոնում: Հրետանու պետը նրանց օգնում էր ինչքան հնարավոր էր այն ժամանակ, որպեսզի նրանք կայանան որպես հրթիռահրետանային զորքերի մասնագետներ: Նրանց թվում էին այժմ գնդապետներ Սևադա Հովհաննիսյանը, Սեդրակ Սեդրակյանը, Խաչատուր Խաչատրյանը, Արմեն Մզիկյանը, Արմեն Հարությունյանը, Մուշեղ Մխիթարյանը, Գրիգոր Զարմանյանը, Արմեն Արշակյանը, Տիգրան Մանուկյանը, փոխգնդապետներ Մկրտիչ Մարտիրոսյանը, Էմիլ Ղանդյանը, Արմեն Գալստյանը, Գագիկ Սեյրոյանը, Մարատ Հովհաննիսյանը, Դավիթ Օքարյանը և ուրիշներ, որոնք այսօր իրենց արժանի տեղն ունեն ՀՀ ԶՈւ հրթիռահրետանային զորքերում:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը շնորհակալ գործ կատարեց նաև Ջրվեժում հրետանավոր սպաների վերապատրաստման առաջին դասընթացների, Լուսակերտում առաջին ուսումնական հրետանային գնդի, ՀՀ ՊՆ զինվորական բազմաբնույթ ուսումնարանի հրետանային ամբիոնի բացման հարցում: Նրա համառության և ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվեց հրետանու ամբիոնը, որը դարձավ հզոր ուսումնամեթոդական բազա հրետանավոր սպաների պատրաստման համար: Նա ուսումնարանի առաջին պետ, իր մարտական ընկերոջ՝ գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանի

հետ մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի հրետանային ամբիոնը համալրվեր փորձառու հրետանավոր սպա-դասախոսներով, որոնք իրենց գիտելիքները և հարուստ փորձը փոխանցեցին ապագա հրետանավորներին: Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը ժամանակին կազմել էր համապատասխան մանրամասն առաջարկություն ուսումնարանի հրետանային ամբիոնի բացման առթիվ և այն ներկայացրել պաշտպանության նախարարություն և ուսումնարանի պետին: Ժամանակի ընթացքում մշակվեցին նաև ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի վարչության պետի գործառնական պարտականությունները, նրա առջև դրված հիմնական խնդիրները: Ամենից առաջ հրթիռահրետանային զորքերի վարչության պետը ղեկավարում էր ՀՀ ԶՈՒ հրթիռահրետանային զորքերի կատարելագործման և զարգացման աշխատանքները, ապահովում էր հրետանային միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների մշտական մարտական և մոբիլիզացիոն պատրաստականությունը, ղեկավարում ենթակա զորքերի և շտաբների օպերատիվ և մարտական պատրաստության աշխատանքը: Նա անձամբ մշակում էր ԶՈՒ հրետանու մարտական անձնակազմի և կազմակերպչական-հաստիքային կառույցների կատարելագործման ու զարգացման պլաններ, հետևում դրանց կատարմանը: Վարչության պետը հետևում էր հրետանու մարտական կիրառման հիմունքների, կանոնագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և կիրառման ընթացքին, անձամբ կազմում դրանց իրականացման պլաններ ու ղեկավար հրահանգներ: Գեներալն անձամբ էր մշակում և ՀՀ պաշտպանության նախարարին ներկայացնում հայկական զինված ուժերի համար նոր զենք ու տեխնիկա ձեռք բերելու առաջարկություններ: Ամենօրյա լարված աշխատանքում, որն սկսվում էր առավոտյան ժամը 8-ին և ավարտվում ժամը 23-ին, վարչության պետը իր հսկողության տակ էր պահում ՀՀ ՊՆ գիտահետազոտական ինստիտուտներում և գործարաններում հրետանային հատուկ տեխնիկայի վերանորոգման և վերականգնման պատվերների մշակման և դրանց կատարման հսկման գործընթացը: Այդ կարևոր բնագավառում նա հենվում էր իր տեղակալ, գնդապետ Մարատ Սեմյոնի Ղարիբյանի պարտաճանաչ և արդյունավետ աշխատանքի վրա, որը մեծ աշխատանք էր կատարում հրետանու սպառազինությունը, հատկապես հակատանկային միջոցները մարտունակ պահելու կարևոր գործում:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը զգալի աշխատանք էր կատարում ռազմական ուսումնական հաստատությունների, սպայական դասընթացների, հրետանավոր սպաների և կրտսեր մասնագետների (սերժանտների) կայացման բնագավառում: Նա գործուն մասնակցություն էր ցուցաբերում իր ենթակայության տակ գտնվող զորքերի համար ղեկավար կադրերի, ինչպես նաև ուսումնական հաստատությունների և հրետանային ուսումնական զորամասերի համար սպաների և ենթասպաների ընտրության և տեղաբաշխման գործին: Վարչության պետը մշտապես վերահսկում էր ՀՀ զինված ուժե-

րում գտնվող բոլոր հրետանային միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների ճիշտ կիրառման գործընթացին: Խաղաղ շինարարության տարիներին հայկական հրետանային զորքերի ղեկավարման գործը ավելի կանոնավորվեց, երբ 1994թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ պաշտպանության նախարարը հատուկ հրաման ընդունեց «ՀՀ զինված ուժերի ղեկավարման կանոնադրությունը հաստատելու մասին»: ՀՀ ԶՈւ հրետանու պետը ենթարկվում էր ՀՀ պաշտպանության նախարարին և հանդիսանում էր ՀՀ ԶՈՒ հրետանու անձնակազմի անմիջական պետը: Հրետանու պետը ղեկավարում էր ՀՀ ԶՈՒ հրետանու վարչության աշխատանքները, ամեն ամիս որոշում նրա առջև դրված խնդիրները և վերահսկում դրանց կատարումը: Նա մասնակցում էր ԶՈւ մարտական պատրաստության և մոբիլիզացիոն պլանի մշակման աշխատանքին և կազմակերպում այդ պլանի իրականացումը հրետանու գծով: Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը ղեկավարում էր ինչպես վարչությանը անմիջական ենթակա զորամասերի, այնպես էլ միավորումների և զորամասերի հրետանու մարտական պատրաստության գործընթացը: Նա հսկողություն էր իրականացնում հրետանու մարտական կիրառումն իրագործող սպաների պատրաստության վրա, ինչպես նաև անցկացնում էր զորավարժություններ և ստուգիչ պարապմունքներ հրետանային զորամիավորումների, զորամասերի և սպայական անձնակազմի համար: Վարչության պետը մեծ ուշադրություն էր հատկացնում հրետանու հաստիքային կառուցվածքի կատարելագործման վրա՝ հաշվի առնելով մարտական նշանակությունը և առաջադրված խնդիրները: Նա մշտապես հսկողություն էր իրականացնում կազմավորման գործընթացի վրա, հետևում, որ դրանք ժամանակին համալրվեն որակյալ հրետանային կադրերով և համապատասխան տեխնիկայով: Նա անմիջական մասնակցություն էր ցուցաբերում ՀՀ ԶՈՒ հրետանու մարտական կիրառման գծով պլանների մշակման աշխատանքին: Տարեկան մեկ անգամ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը ստուգումներ էր անցկացնում՝ պարզելու հրթիռահրետանային զորքերի համալրվածությունը, սպառազինության, մարտական տեխնիկայի և զինամթերքի հաշվառման վիճակը, ստուգման արդյունքների վերաբերյալ հատուկ հրամանով տեղյակ պահում հրետանային բոլոր միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների սպայական կազմին: Նա հսկում էր նաև պաշտպանության նախարարության վերանորոգման գործարաններում հրետանային զենքի վերանորոգման գործընթացը, ղեկավարում հրետանու ուսումնանյութական բազայի ստեղծման և սարքավորման կատարելագործման աշխատանքը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին գեներալը համապատասխան առաջարկություններ էր ներկայացնում պաշտպանության նախարարությանը՝ հրետանու համար սպառազինություն, օպտիկական, կապի միջոցներ և այլ կարևոր սարքեր գնելու նպատակով:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը լավ էր ճանաչում հրետանային մի-

ավորումների, զորամասերի և ստորաբաժանումների սպաների և ենթասպաների, ինչպես նաև բանակային հրետանու ղեկավար կազմի գործնական և բարոյական հատկանիշները: Նա անձամբ էր ղեկավարում հրետանային զորամասերում ծառայելու նպատակով պահեստազորից սպաների ու ենթասպաների, ինչպես նաև ՀՀ և արտասահմանյան համապատասխան ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու նպատակով թեկնածուների ընտրության աշխատանքը: Համաձայն գոյություն ունեցող կարգի՝ նա մասնակցում էր զինված ուժերի հրետանու մարտական վիճակը բացահայտելու նպատակով արված անսպասելի ստուգայցերին, տեղերում օգնում՝ վերացնելու նկատված թերությունները: Նրա պարտականությունների մեջ էին մտնում համալրման նպատակով ժամանած հրետանավոր սպաների ըստ միավորումների և զորամասերի բաշխման աշխատանքը:

Գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի հետ համաձայնեցված, հրետանու վերաբերյալ հրամանների նախագծեր էր պատրաստում ՀՀ պաշտպանության նախարարին ներկայացնելու համար: Նա ջանում էր վեր հանել զինված ուժերի հրետանու հետ կապված պրոբլեմային հարցերը, ժամանակին դրանց մասին զեկուցել պաշտպանության նախարարին և նրա տեղակալին, հետամուտ լինել այդ հարցերի լուծման վերաբերյալ վերադասի որոշումների ընդունմանը և նրանց կատարման ընթացքին: Իր ամենօրյա աշխատանքում վաքչության պետը մշտապես հետևում էր հրետանային միավորումներում և զորամասերում զինվորական ամուր կարգապահության ամրապնդման, մարտական և մոբիլիզացիոն պատրաստականության աշխատանքներին, հրետանու մարտական պատրաստության բարձրացման գործընթացին: Գեներալը մշտապես ուսումնասիրում էր զինված ուժերի հրետանու վիճակը և պարբերաբար այդ մասին զեկուցում ՀՀ պաշտպանության նախարարին կամ նրա տեղակալին: Նա մեծ ուշադրություն էր դարձնում հրետանու անվտանգ օգտագործման կանոններին, հետևում, որ հրաձգության, զինավարժության պարապմունքների, մարտական տեխնիկայի և սարքերի հետ տարվող աշխատանքների ժամանակ իր ենթակաները անպայման կիրառեն զենքի անվտանգ օգտագործելու կանոնները:

ՀՀ ՊՆ հրթիռային զորքերի և հրետանու պետ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը չէր հանգստացել զինադադարով՝ լսելով Ադրբեջանի ղեկավարության կողմից կատարվող ամենօրյա լկտի հայտարարությունները, որ Ղարաբաղը կվերադարձվի Ադրբեջանին զինվորական ուժի միջոցով, նա մշակեց հատուկ ծրագիր, որով նախատեսվում էր Հայկական բանակի հրթիռահրետանային զորքերն ամրապնդելու և ավելի մարտունակ դարձնելու հետևյալ խնդիրները.

—Հրթիռահրետանային զորամասերի և ստորաբաժանումների պահելը մշտական մարտական պատրաստականության վիճակում, կարճ ժամանա-

կահատվածում հակառակորդին պատասխան հրթիռային և կրակային հարվածներ հասցնելու և նրա ազդեսիան խափանելու նպատակով՝ ստեղծելով կրակային առավելություն, որը կապահովի զինուժի և նրա հրետանու առջև դրված մարտական խնդիրների կատարումը.

—կատարելագործել հրթիռային զորքերի և հրետանու համագործակցությունը համազորային զորամիավորումների (զորամասերի) հետ՝ նպատակ ունենալով հաջող և արդյունավետ օգտագործել հրթիռային զորքերի և հրետանու կրակային հարվածները օպերացիայի (մարտի) խնդիրների կատարման ժամանակ. -Ուսումնական տարում բարձրացնել և կատարելագործել հրթիռային զորքերի հրետանու սպաների հրամանատարական պատրաստության մակարդակը: Հասնել նրան, որպեսզի ամեն մի հրետանավոր սպա բարդ իրադրության պայմաններում հաջողությամբ կատարի հրետանու պատրաստության դասընթացով սահմանված կրակային խնդիրները, բանակային կորպուսների հրետանու պետերին, զորամասերի հրամանատարներին, մոտոհրաձգային բրիգադների (գնդերի) հրետանու պետերին՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ սպաների պատրաստությունը մասնագիտական առարկաներից, հատկապես հրետանու հրաձգության և կրակի կառավարումից, սպայական հաշվարկների կազմով մարտական պատրաստության նորմացույցների կատարման, հրետանային սարքավորումների, հատուկ սպառազինության և տեխնիկայի վրա մարտական աշխատանքի կատարմանը, կատարելագործել նրանց տեսական գիտելիքները և գործնական ունակությունները. - Կտրուկ բարձրացնել հրետանային կրակի և հրթիռային հարվածների ճշգրտությունն ու արդյունավետությունը: Այդ նպատակով կրակի կառավարման և ղեկավարման (հրթիռների արձակման տվյալների նախապատրաստման) ամեն մի վարժանք անցկացնել կրակի կառավարման և ղեկավարման (հրթիռի արձակման) նախնական պատրաստությունով՝ հաշվի առնելով տեխնիկական, օդերևութաբանական և բալիստիկական պայմանները: Հրետանային կրակի ժամանակ սպաների հետ պարապելիս հաշվի առնել հրետանու պատրաստության դասընթացի կրակային խնդիրների ճշգրիտ և ժամանակին կատարումը, ինչպես նաև նախկինում նշանափորձված նպատակակետերից կրակի տեղափոխումը.

—Գտնել ուղիներ և մեթոդներ հրետանավոր սպաների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման ուղղությամբ, սահմանել հատուկ հսկողություն համապատասխան պետերի կողմից.

—Պաշտպանության բանակի, բանակային կորպուսների, մոտոհրաձգային բրիգադների, մոտոհրաձգային գնդերի հրետանու պետերին, հրետանային զորամասերի հրամանատարներին հատուկ ուշադրություն դարձնել այն հրետանային ստորաբաժանումներին, որոնք տանում են մարտական հերթապահություն, հատկապես հրամանատարական դիտակետերի հետա-

խուզական ջոկերին, ժամանակին վերլուծել հետախուզական տվյալները.

—Կատարելագործել կրակային դիրքերի (հիմնական, պահեստային և ժամանակավոր), հրամանատարական դիտակետերի ինժեներական սարքավորումները, որոնք պետք է ապահովեն կրակի վարման որակի բարձրացումը և հրետանու պաշտպանվածությունը հակառակորդի հարվածներից.

—Հրթիռահրետանային զորքերի վարչությանը՝ վերամշակել և ՀՀ պաշտպանության նախարարի հաստատմանը ներկայացնել հրետանու պատրաստման նոր դասընթացներ.

—Շարունակել հրետանային ստորաբաժանումների ուսումնանյութական բազայի կատարելագործումը, հասնել նրան, որ բոլոր զորամասերում հրետանավորների համար ունենալ կահավորված դասարաններ՝ մասնագիտական և տեխնիկական պատրաստությունից, յուրաքանչյուր զորամասում ունենալ հաստատված պլան այդ խնդրի լուծման համար.

—Բացառել հրացանահրետանային հրաձգարանների, փոքր հրետանային հրաձգարանների շինարարության ծախողումը և հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել նպատակային, ընդլայնել ուսումնական հրետանային գնդի և ուսումնական հրետանային դիվիզիոնի, ռազմական ինստիտուտի և բարձրագույն սպայական դասընթացների ուսումնանյութական բազան.

—Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել հրետանու մասնագետների պատրաստման գործընթացի հսկումը բոլոր ուսումնական հաստատություններում՝ ռազմական ինստիտուտում, բարձրագույն սպայական դասընթացներում, ուսումնական հրետանային գնդում և ուսումնական հրետանային դիվիզիոնում, միաժամանակ մեծ ուշադրություն դարձնել նրանց մասնագիտական պատրաստության կատարելագործմանը:

Բերենք մեկ օրինակ գեներալի աշխատանքային առօրյայից պատերազմի իրադրության պայմաններում: Երբ ինտենսիվ հրետակոծության հետևանքով որոշ հրետանային ստորաբաժանումներում շարքից դուրս էին գալիս հրանոթները, և տեղերում հնարավոր չէր դրանք կարգի բերել, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի առաջարկությամբ ստեղծվեցին շարժական հրետանային արհեստանոցներ, որոնց միջոցով վերանորոգվեցին սահմանամերձ շրջաններում (Գորիս, Կապան, Երասխ, Ճամբարակ, Լեռնային Ղարաբաղ և այլն) շարքից դուրս եկած հրանոթները և օպտիկական նշանացույցերը: Նշված մեթոդն իրեն արդարացրեց: Այդ կարևոր գործում արդյունավետ էր աշխատում սկզբում ենթասպա, իսկ այժմ փոխգնդապետ Միքայել Պետրոսի Նազարեթյանը, որը շարունակում է իր ծառայությունը հրետանու վարչությունում:

Բացի այդ, ստեղծվեցին հրետանային հրաձգարաններ, մասնագիտական լսարաններ, բավականին բարձրացվեց դրանց հագեցվածությունը, բարելավվեց սպաների դաշտային հանդերձավորումը, հրետանային զո-

ЗА НАШУ СОВЕТСКУЮ РОДИНУ

# ГРАМОТА

## награждается

полковник

АЙРАПЕТЯН ВЛАДИМИР АСАТУРОВИЧ

За достигнутые успехи в боевой и политической подготовке, примерную воинскую дисциплину и в честь 70-ти летия Великой Октябрьской Социалистической Революции.

Выражаю уверенность, что Вы и впредь будете служить примером в выполнении своего служебного долга на благо нашей Великой Родины.

КОМАНДИР ВОЙСКОВОЙ ЧАСТИ ПП 39454
ГЕНЕРАЛ-МАЙОР В.МАЛАШКЕВИЧ

НАЧАЛЬНИК ПОЛИТИЧЕСКОГО ОТДЕЛА ЧАСТИ
ПОЛКОВНИК Н.КОШЕЛЕВ

"6" ноября 1987 г.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

„50 лет ВООРУЖЕННЫХ СИЛ СССР“



## УДОСТОВЕРЕНИЕ

Старшему лейтенанту

А и Р А П Е Т Я Н

Володе Асатуровичу

в соответствии с Указом ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР от 26 декабря 1967 года награжден юбилейной медалью

„50 лет ВООРУЖЕННЫХ СИЛ СССР“

От имени ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР медаль вручена

22. февраля 19 68 года

Командир в/ч п.п. 86860

(должность, воинское звание и

Подполковник — /Гутиев/

(подпись лица, вручившего медаль)

---

„50 лет ВООРУЖЕННЫХ СИЛ



## УДОСТОВЕРЕНИЕ

Подполковник

АЙРАПЕТЯН

Владимир Асатурович

в соответствии с Указом ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР от 28 января 1978 года награжден юбилейной медалью

„60 лет ВООРУЖЕННЫХ СИЛ СССР“

От имени ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР медаль вручена

23. февраля 19 78 года

КОМАНДИР В/ЧАСТИ 92910

М. П. ГЕНЕРАЛ-МАЙОР — ГУСЕВ

(подпись лица, вручившего медаль)

ЗА НАШУ СОВЕТСКУЮ РОДИНУ

# ГРАМОТА

## награждается

полковник

АЙРАПЕТЯН Владимир Асатурович

За достигнутые успехи в боевой и политической подготовке и в ознаменование 43-й годовщины Победы Советского народа в Великой Отечественной войне.

Выражаем уверенность, что Вы и впредь будете служить примером в выполнении своего служебного и партийного долга на благо нашей Великой Родины!

КОМАНДИР ВОЙСКОВОЙ ЧАСТИ ПП 39454
ГЕНЕРАЛ-МАЙОР О.СМИРНОВ

НАЧАЛЬНИК ПОЛИТИЧЕСКОГО ОТДЕЛА ЧАСТИ
ПОДПОЛКОВНИК Н.КОШЕЛЕВ

Войсковая ... Полевая 39454

" 9 " мая 1988 года

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

70 лет ВООРУЖЕННЫХ СИЛ СССР



## УДОСТОВЕРЕНИЕ

Айрапетян

Владимир

Асатурович

в соответствии с Указом ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР от 28 января 1988 года награжден юбилейной медалью

„70 ЛЕТ ВООРУЖЕННЫХ СИЛ СССР"

От имени ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР медаль вручена

„20" февраля 1988 года

Командир войсковой части пп 39454
(должность, воинское звание и
генерал-майор
М. П.
подпись лица, вручившего медаль)

О. Смирнов

---

**ЗА БЕЗУПРЕЧНУЮ СЛУЖБУ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ СССР**

Капитан
звание,

Айрапетян
фамилия,

Володя Асатурович
имя и отчество

Приказом Министра Обороны СССР № 196 от „11" декабря 1971 г. награжден медалью „За безупречную службу" 3 степени.

звание и подпись командира

части (начальника учреждения)

м. п.

„9" февраля 1972 г.

Приказом Министра Обороны СССР № 6 от „6" января 1977 г. награжден медалью „За безупречную службу" II степени.

ВРИО Командира В/Ч 35505
звание и подпись командира
Полковник Н. Подгорный
части (начальника учреждения)

м. п.

„ " 19 г.

Приказом Министра Обороны СССР № 7 от „12" января 1982 г. награжден медалью „За безупречную службу" I степени.

ВРИО Командира В/Ч 35505
звание и подпись командира
Полковник Н. Подгорный
части (начальника учреждения)

м. п.

„21" февраля 1982 г.

МПФ Гознака. 1961.




# УДОСТОВЕРЕНИЕ

Айрапетян
Владимир
Асатурович

за безупречную долголетнюю службу в Вооруженных Силах СССР от имени Президиума Верховного Совета СССР приказом Министра обороны СССР

№ 4 от „12" января 1987 г.

награжден медалью

„ВЕТЕРАН ВООРУЖЕННЫХ СИЛ СССР"

Командир войсковой части пп 39454
генерал-майор (должность)

(воинское звание)

М.П. В. Малашкевич
(подпись)

„ " февраля 1987 г.

---

МЕДАЛЬ
«МАРШАЛ СОВЕТСКОГО СОЮЗА ЖУКОВ»



100 ЛЕТ СО ДНЯ РОЖДЕНИЯ

Айрапетян
Владимир
Асатурович

в соответствии с Указом Постоянного Президиума Съезда народных депутатов СССР от 20 февраля 1997 г. награжден юбилейной медалью "МАРШАЛ СОВЕТСКОГО СОЮЗА ЖУКОВ"

Председатель Постоянного Президиума Съезда народных депутатов СССР
(С. УМАЛАТОВА)



ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ
Շքանշան

000130

Հայաստանի Հանրապետության
նախագահի

2000 թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

« 18 »-ի հրամանագրով

ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՍԱՏՈՒՐԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

պարգևատրված է

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ շքանշանով
շքանշան № 118

Հայաստանի Հանրապետության նախագահի
աշխատակազմի ղեկավար

---



ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
Շքանշան

000008

Հայաստանի Հանրապետության
Նախագահի

2003 թ սեպտեմբերի

« 20 »-ի հրամանագրով

ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՍԱՏՈՒՐԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

պարգևատրված է

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ շքանշանով
շքանշան № 008

Հայաստանի Հանրապետության Նախագահի
աշխատակազմի ղեկավար

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
1999 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ ԵՎ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆՀ – 382 ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակման 8-րդ տարեդարձի առթիվ պաշտպանության նախարարության հրետանային զորքերի վարչության պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ պարգևատրել Արիության մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



ԱՐԻՈՒԹՅԱՆ

Մեդալ

000651

Հայաստանի Հանրապետության
նախագահի
1999թ. սեպտեմբերի
«20»-ի հրամանագրով
Վլադիմիր
Խաչատուրի
Հայրապետյանը
պարգևատրված է
ԱՐԻՈՒԹՅԱՆ մեդալով
Վկայական № 624
Հայաստանի Հանրապետության նախագահի
աշխատակազմի ղեկավար

---

Մարշալ Հ.Ք.Բաղրամյանի անվան
Մեդալ



Հայաստանի Հանրապետության
Պաշտպանության Նախարարություն

Պարգևատրում է

Վլադիմիր Խաչատուրի
Հայրապետյանին

Հայաստանի Հանրապետության
Պաշտպանության նախարարի
հրաման
619 15 նոյեմբ. 1997թ.

ՀՀ Պաշտպանության նախարար
Վ.Սարգսյան



«ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ» ՄԵԴԱԼ

№ 0055

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարություն

Պարգևատրում է

Վլադիմիր Ասատուրի
Հայրապետյանին

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի հրաման 516

25. 06. 2002թ.

ՀՀ պաշտպանության նախարար

Ս. Սարգսյան



«ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» ՄԵԴԱԼ

№ 0061

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարություն

Պարգևատրում է

Վլադիմիր Ասատուրի
Հայրապետյանին

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի հրաման

891 17. 10. 2002թ.

ՀՀ պաշտպանության նախարար

Ս. Սարգսյան



«ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ» ՄԵԴԱԼ

№ 0076

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարությունը

Պարգևատրում է

Վլադիմիր Ասատուրի
Հայրապետյանին

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարի հրաման № 164
23. 02. 2004թ.

ՀՀ պաշտպանության նախարար
Ս.Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՊԱՀ

հուշամեդալ թիվ 0745

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՊԱՀ
հուշամեդալով

պարգևատրված է

Վլադիմիր
(անուն)

Ասատուրի
(հայրանուն)

Հայրապետյան
(ազգանուն)

«18» 10 2005թ. թիվ 02/40 հրամանով

ՀՀ ԵԿՄ Վարչության նախագահ
գեներալ լեյտենանտ
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«1941-1945 թթ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՀԱՂԹԱՆԱԿԻ 60 ՏԱՐԻՆ»



055214

[illegible]

[illegible]

[illegible]

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ Է

«1941-1945 թթ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՀԱՂԹԱՆԱԿԻ 60 ՏԱՐԻՆ»

ՅՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԵԴԱԼՈՎ

*Հայաստանի*
*Հանրապետության*
*Նախագահ*

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

« 09 » 05 2005 թ.

# ՊԱՏՎՈԳԻՐ

[illegible],

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ [illegible],

[illegible]

Նախագահության թիվ 8 « 25 » հունիսի 2002 թ. որոշմամբ

ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ Է

[illegible],

ՀԱՅ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] ՀԱՄԱՐ, ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ:

«Մարդ[illegible]»
հիմնադրամի նախագահ
[illegible]

/Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /

« 25 » 2002 թ.

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՄԵԴԱԼՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆՀ 135 Ա ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 12-րդ տարեդարձի առթիվ հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետ, գեներալ - մայոր Վլադիմիր Ասատուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ պարգևատրել «Վարդան Մամիկոնյան» շքանշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՐՔԱՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳԵՆԵՐԱԼ- ՄԱՅՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրետանու վարչության պետ, գնդապետ Վլադիմիր Ասատուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ շնորհել գեներալ-մայորի զինվորական կոչում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Լ.ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ



Երևան
28 մայիսի 1994թ.
ՆՀ- 296

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
2000 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի

ՆՀ - 671 ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակման 9-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրթիռահրետանային վարչության պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ պարգևատրել 2-րդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՇՆՈՐՀԱԳԻՐ

*Ռազմական գործողությունների ընթացքում*
*Կապան քաղաքի ինքնապաշտպանության*
*գործում ունեցած*
*ծառայությունների համար գեներալ*
*[illegible]*
*շնորհվում է*
*«Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի»*
*կոչում*

*Քաղաքապետ*
*Ա. Կարապետյան*

*«30» հունիսի 2003թ*

բամասերի անձնակազմի սոցիալ-կենցաղային պայմանները, կառուցվեցին նոր զորանոցներ, այդ ամենը հնարավորություն տվեց նոր որակով կազմակերպել բարոյահոգեբանական, ազգային-գաղափարախոսական ու հայրենասիրական դաստիարակչական աշխատանքները, որոնք նպաստեցին բանակի մարտունակության բարձրացմանը: Բավականին առաջընթաց եղավ ինչպես բանակի սպաների, այնպես էլ կենցաղային պայմանների բարելավման հարցերում, զոհված ազատամարտիկների ընտանիքները ապահովվեցին բնակարաններով:

Մեծ էր գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի դերը Լուսակերտի հրետանային ուսումնական զորամասում ազգային հերոս, զորավար Գարեգին Նժդեհի հուշարձանի բացման գործում: Շնորհիվ նրա և զորամասի հրամանատար Ալբերտ Մկրտչյանի ջանքերի՝ հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1997թ. մայիսի 25-ին: Հուշարձանի բացմանը մասնակցեց ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Միքայել Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Մկրտիչ Աբրահամյանը, Կոտայքի մարզի ղեկավարությունը, որոնք անգնահատելի մեծ աշխատանք կատարեցին իրենց մարզում տեղակայված հրետանու կրտսեր մասնագետների պատրաստման կենտրոնի նյութատեխնիկական բազայի բարելավման գործում, ներկա էին նաև մտավորականության և հասարակության ներկայացուցիչներ, հրետանային զորամասերի անձնակազմը: Հուշարձանի բացման առթիվ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը ելույթ ունեցավ, որի տեքստը բերում ենք ստորև. «Մեր ազգն իր հազարամյա գոյության ընթացքում ունեցել է բազում կորուստներ և տարել բազում հաղթանակներ: Հայոց պատմության բոլոր շրջադարձային պահերը բնութագրված են դեպքերով և դեմքերով՝ դրոշմված գալիք սերունդների գոյակցության մեջ: Ընտրյալներին է միայն նման ճակատագիր շնորհվում: Այդպիսի ընտրյալներից է նաև զորավար Գարեգին Նժդեհը՝ մարդ, որն արեց առավելագույնը իր ժողովրդի արժանապատիվ գոյությունն ապահովելու համար, մահմեդական կատաղի կռվում անառիկ պահեց Զանգեզուրը, ջանաց փրկել սփյուռքը աղետալի ձուլումից:

Այսօրվա մեր հավաքի առիթը մեծն զորավար, մտավորական, ազգային հասարակական գործիչ Գարեգին Նժդեհի արձանի բացումն է:

Թույլ տվեք հակիրճ անդրադառնալ զորավարի կյանքին և անցած մարտական ուղուն:

Զորավար Գարեգին Նժդեհը (Գարեգին Եղիշի Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում՝ հոգևորականի ընտանիքում: Միջնակարգն ավարտելուց հետո ստացել է իրավաբանական կրթություն: Դեռ ուսանող տարիներին զինվորագրվել է հայ ազատագրական պայքարին: Հեղափոխական-զինվորական մկրտությունը ստանում է պարսկական հեղափոխության ժամանակ՝ մասնակցելով

նրա կազմակերպչական աշխատանքներին: Հետագայում բուլղարական ռազմական ուսումնարաններում զինվորական կրթություն ստանալով՝ իր կյանքն ու սուրը լիովին նվիրաբերում է հայ ժողովրդին, մասնակցում Բալկանյան պատերազմին Անդրանիկի հետ մեկտեղ՝ որպես Հայկական լեգեոնի հրամանատար, Առաջին աշխարհամարտին, ուր նրա ղեկավարած զորախմբերը մարտնչում էին թուրք հրոսակների դեմ, Հայաստանի Հանրապետության մղած մահու և կենաց կռիվներին, երբ Գարեգին Նժդեհի գործուն աջակցությամբ կազմակերպվեց Ղարաքիլիսայի ճակատամարտը, որն ապահովեց Սարդարապատի թիկունքն ու փրկեց Արևելյան Հայաստանը բնաջնջումից: Նժդեհի ռազմական գործունեության գագաթնակետը Զանգեզուրի (Լեռնահայաստանի) հերոսական պաշտպանությունն էր, ինչը փրկեց Հայաստանը Ադրբեջանի անհիմն ոտնձգություններից:

«Ուզում ես փրկվել՝ եղի՛ր ուժեղ, քանի որ թույլերը բարեկամ չունեն աշխարհի վրա: Իսկ ուժիդ ապացույցը տալու համար ցո՛ւյց տուր երկու բան՝ առաջինը, որ գիտես մեռնել գիտակցորեն կռվում, գործով ու իմաստալի մահով, երկրորդը՝ որ գիտես մեռցնել»:

Այսօր, կարծես թե, Նժդեհի ասած խոսքերն ավելի արդիական են հնչում, երբ մեր ժողովուրդն իր փրկության համար դեռ ոչ վաղ անցյալում ևս մի արյունալի պատերազմ մղեց: «Ինքնապաշտպանություն՝ ահա մեր կրոնը», և մենք տվեցինք դրա վառ ապացույցը մեր սահմանները պաշտպանելիս:

Ստալինյան բռնակալության հետևանքով Զանգեզուրի արծիվը նետվեց Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտը, որտեղ և մահացավ 1955թ. նոյեմբերի 21-ին, որտեղ էլ և կատարվեց նրա հուղարկավորությունը:

Ինչպես ամեն մի իրական հերոս, Նժդեհը չմոռացվեց:

Նժդեհի աճյունը Վլադիմիրից 1983թ. տեղափոխվել է Երևան:

Աճյունի մի նշխար (աջը) ամփոփվել է Խուստուփ լեռան (Կապան) լանջին՝ Կոզնի կոչված աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը ցինկե արկղի մեջ մի քանի տարի պահելուց հետո՝ 1987թ., ամփոփվել է Գլաձորի Սպիտակավոր վանքի բակում:

Միայն 1992թ. Նժդեհը արդարացվեց, ինչի կարիքը երբևէ չուներ:

Զորավար Նժդեհը փառքի և հպարտության նոր էջ ավելացրեց հայ ազատագրության ժամանակակից պատմության մեջ, նրա ցուցաբերած ռազմական բացառիկ կարողություններն արժանացել են նույնիսկ օտարների բարձր գնահատմանը:

Նժդեհը, սակայն, օժտված էր ոչ միայն ռազմագետի ու քաղաքագետի տաղանդով: Նա հիրավի ազգանվեր մտավորական էր, նաև գաղափարախոս: Այժմ էլ հայոց պետականության կայացման շրջանում, ճշմարիտ ու արդիական հնչեղություն ունեն զորավար Նժդեհի գաղափարներն ու մտքերը:

Այսօր՝ մեր անկախության վերահաստատման օրվա նախօրեին, կարելի է

միայն խոնարհվել Ավարայրում, Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների, Խորհրդային Հայաստանի, մեր նորանկախ հանրապետության համար մղված կռիվներում և այլուր ընկած անթիվ հայ հերոսների առջև: Այդ մարտերում մեր հերոսների թափված արյունը հնարավորություն տվեց դնել պետության հիմքը և ապահովել երեքհազարամյա ազգի շարունակությունը:

Ելույթս ուզում եմ ավարտել Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերով.«Հայրենասիրություն... Մարդկային բարոյական հատկություններն իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը, նրանց ուժի և մեծության անսպառ աղբյուրը: Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասից:

Փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի, քան բոլորը»:

Հայոց պատմության մեջ Գարեգին Նժդեհն այն եզակի դեմքերից է մեր նվիրական հերոսների շարքում, որի մեջ ներդաշնակորեն միաձուլված են զինվորականն ու մտածողը:

Սիրելի՛ հայրենակիցներ, այսօր հարգանքի տուրք մատուցելով հայ ժողովրդի կողմից սիրված քաջ զորավար Գարեգին Նժդեհին և հավերժացնելով նրա սուրբ անունը ՀՀ ՊՆ հրետանային ուսումնական զորամասում՝ հույս եմ հայտնում և համոզված եմ, որ մեր բանակի զինվորները ընդմիշտ կպահեն իրենց սրտում այն հայրենասիրական գաղափարը, որով միշտ ղեկավարվում և մարտնչում էր քաջ Նժդեհը հայրենիքի թշնամիների դեմ, և ամեն ինչ կանեն մեր նորաստեղծ բանակի հզորացման համար:

Նժդեհի հայրենասեր գործունեությունը չի մոռացվի երբեք և կփոխանցվի սերնդից սերունդ, որը և անսասան կպահի մեր հայրենիքի անկախությունը և նրա պետականությունը:

Փա՜ռք զորավար Նժդեհին, փա՜ռք բոլոր հայորդիներին, որոնք իրենց զոհաբերեցին հանուն այսօրվա անկախ Հայաստանի պետականության»:

Եվ պատահական չէր, որ երբ հիմնադրվեց «Գարեգին Նժդեհ» մեդալը՝ Զանգեզուրի սահմանները աղրբեջանցի զավթիչներից պաշտպանելու մարտերում ցուցաբերած հերոսության և խիզախության համար, ՀՀ ԶՈւ առաջինների թվում այդ մեդալով 2002թ. հոկտեմբերի 17-ին պարգևատրվեց նաև գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը:

2003թ. հուլիսի 30-ին Գարեգին Նժդեհի հոյակապ ու բարեկարգ համալիրը բացվեց Կապանի՝ Խուստուփ սարից սկիզբ առնող Վաչագան գետի աջ ափին՝ քաղաքային հիվանդանոցից քիչ վերև: Ի թիվս շատ հյուրերի այդ հանդիսավոր արարողությանը մասնակցեցին նաև կապանցի գեներալ-մայորներ Վլադիմիր Հայրապետյանը, Մուրազ Սարկիսյանը, լոռեցի գեներալ-լեյտենանտ Միխայիլ Գրիգորյանը, որոնց ռազմական գործողությունների ընթացքում Կապան քաղաքի ինքնապաշտպանության գործում ունեցած ծառայությունների համար

շնորհվեց «Կապան քաղաքի պատվավոր քաղաքացու» կոչում:

Հետպատերազմյան տարիներին հրթիռահրետանային զորքերը, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի ղեկավարությամբ, հասան զգալի հաջողությունների՝ մարտական պատրաստականության ամրապնդման, կարգապահության բարձրացման և անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը բարելավելու ուղղությամբ: Նշանակալի տեղաշարժ արձանագրվեց հրետանային և համազորային զորամասերի և ստորաբաժանումների համագործակցության ասպարեզում, ինչն ամրապնդվեց ամենամյա զորախաղերի ու զորավարժությունների ժամանակ: Իրականացված միջոցառումների արդյունքում է՛լ ավելի կատարելագործվեցին հրետանու գործունեության մեթոդները, կրակային խոցման պլանները, բարելավվեց հրետանավորների հրամանատարական և մասնագիտական պատրաստվածությունը: Հետևելով ռուս մեծ զորավար Սուվորովի պատգամին՝ «Դժվար՝ ուսման մեջ, հեշտ՝ մարտում»՝ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանն անձամբ էր մասնակցում հրթիռահրետանային զորքերի ճամբարային հավաքներին, որոնց ընթացքում մեծ ուշադրություն էր հատկացնում զորամիավորումների և զորամասերի դաշտային պատրաստության, տակտիկական, մասնագիտական և տեխնիկական պատրաստվածության որակին, անձնակազմի, հատկապես սպաների հրետաձգության և կրակի կառավարման հմտություններին: Հրետանու ուսուցումը դաշտային պայմաններում առաջին նախաղեպն էր ՀՀ ԶՈւ-ում, որը կիրառեց գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը, և որին հետևեցին մյուս զորատեսակները՝ մոտոհրաձիգները, քիմիական զորքերը, կապավորները և այլք:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը հրետանին մարտական պատրաստության վիճակում պահելու համար առանձնացնում էր հետևյալ հիմնարար գործոնները՝ հրետանու նյութական մասի ապահովումը և պատրաստությունը (материальная часть артилерии) և պատրաստությունը մարտական կիրառման, անձնակազմի հատուկ հրետանային պատրաստության մակարդակը, որը հնարավորություն կտար լիարժեք տիրապետելու հրետանային սպառազինության, հրետանու կրակի վարման (հրթիռների արձակման) համար տվյալների պատրաստման բոլոր մեթոդներին ու եղանակներին, ինչպես նաև հրետանու կրակի կառավարման արվեստին:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը մեծ ուշադրություն էր դարձնում կադրային քաղաքականության վրա: Նա անձամբ էր մասնակցում սպաների ատեստավորման գործընթացին: Զորամիավորումների և զորամասերի հանգուցային պաշտոններին նշանակվում էին միայն բարձրագույն ակադեմիական կրթությամբ սպաներ: Նրանց բարդ մասնագիտական գիտելիքների շնորհիվ բարելավվեց հրետանու մարտական կիրառման պլանավորումը, նոր որակ արձանագրվեց սպաների հրամանատարական ուսուցման դասընթացներում: Վարչության պետը հրետանավոր սպաների պատրաստու-

թյան գործում մեծ դեր ու նշանակություն էր տալիս տարբեր կարգի մրցումների ու կոնֆերանսների կազմակերպմանը: Նրա անմիջական ջանքերով ավանդույթ դարձավ «Հայ Զինվոր» թերթի միջոցով հրետանավոր սպաների համար կազմակերպվող «Կրակային վահան» համաբանակային մրցույթը, որը հնարավորություն տվեց բոլոր սպաներին մասնակցելու և բացահայտելու իրենց մասնագիտական պատրաստության աստիճանը. հաղթողները պարգևատրվում էին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով: Նման կարևոր ավանդույթը պահպանվում է Հայկական բանակում մինչ օրս:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանի ուշադրության կենտրոնում էին գտնվում ամենամյա զորավարժությունները, որոնց ընթացքում ստուգվում էր հրետանային զորամասերի մարտական և կրակային պատրաստականությունը, հրետանային տեխնիկայի և կառավարման միջոցներին տիրապետելը՝ պայմանական թշնամու կրակակետերի հայտնաբերման և ոչնչացման առանձին զինատեսակների փորձարկման նպատակով: Զորավարժությունները, որպես կանոն, ընթանում էին մարտադաշտ հիշեցնող իսկա տարածքում, որտեղ յուրաքանչյուր զենք գտնվում է իր տեղում: Զորավարժությունների վճռական փուլը եզրափակիչ մասն է, երբ յուրաքանչյուր մարտական խումբ, հրետանային մարտական մեքենայի անձնակազմ, հրանոթի հաշվարկ ձգտում էին դրսևորել գերազանց մարտական պատրաստականություն, հնարամտություն և կամք, պայմանական թշնամու կրակակետերի ոչնչացման նախանձելի հմտություն: Հրթիռահրետանային զորքերի զորավարժանքները, շնորհիվ մասնագետ կադրերի ճիշտ ընտրության, նրանց բրտնաջան աշխատանքի, որպես կանոն, մշտապես ավարտվում էին լավ գնահատականներով: Վ.Հայրապետյանը մեծ կարևորություն էր տալիս հսկիչ խմբերի աշխատանքին, որի աշխատանքի արդյունքում բացառվում էին դժբախտ դեպքերը: Այդ աշխատանքում անփոխարինելի էր գնդապետ Երվանդ Շաքարի Հասրաթյանը, որի մասին մեծ հարգանքով է խոսում Վ.Ա.Հայրապետյանը, նմանապես գնդապետներ Բաբկեն Զալալի Աբրահամյանի և Ներսես Մերգելի Մուրադյանի մասին:

1999 թվականի օգոստոսի 28-ին Սանկտ Պետերբուրգում հանկարծամահ եղավ Արցախի հերոս, փորձառու հրետանավոր գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը: Դա մեծ կորուստ էր Հայկական բանակի համար:

ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային վարչության զորքերի պետ, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը խոր կսկիծով էր ընդունել մարտական ավագ ընկերոջ մահը: «–Ծառայության բերումով քանիցս հանդիպել եմ Իվանյանին,-վերհիշում է գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը,- և միշտ ինձ զարմացրել է նրա նպատակասլացությունը, եռանդը և առաջադրված խնդիրները կատարելու վճռականությունը: Նա խստապահանջ էր իր և ենթակա զինվորականների հանդեպ, միևնույն ժամանակ հոգ էր տանում նրանց կայաց-

մաճ մասին: Մարտական գործողությունները դեռ չէին ավարտվել, բայց թիկունքում նա ստեղծել էր հրաձգարան և հրացանահրետանային փորձարաններ՝ մոտոհրաձիգների, տանկիստների և հրետանավորների համար և ՀՀ ԶՈւ-ում օրինակելի ուսումնանյութական հիմքի ստեղծման նախաձեռնողն էր»: Քրիստափոր Իվանյանը մասնակցել է 1939-1940 թթ. Խորհրդաֆիննական, 1941-1945թթ. Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմներին, եղել հրետանային գնդի հրամանատար, դիվիզիայի հրետանու պետ, պարգևատրվել Լենինի, Կարմիր Դրոշի, Սուվորովի 3-րդ աստիճանի շքանշաններով և այլ բազմաթիվ կառավարական պարգևներով: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո Ք.Ի.Իվանյանը մինչև 1980թ. շարունակել էր զինվորական ծառայությունը Խորհրդային բանակում, հասել միավորման հրետանու պետի պաշտոնի: 1970թ. նրան շնորհվել էր հրետանու գեներալ-մայորի կոչում: Պահեստազորի գեներալը ապրում էր Սանկտ Պետերբուրգում, երբ սկսվեց Արցախյան պատերազմը: 1992թ. 72-ամյա գեներալը եկավ Հայաստան, գլխավորեց մոտոհրաձգային բրիգադ՝ Ղարաբաղյան ռազմաճակատի ամենավտանգավոր տեղամասում: 1994թ. Իվանյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում: 1996-1999թթ. նա գլխավորեց իր ղեկավարությամբ կազմավորված առաջին մոտոհրաձգային դիվիզիան: 1999թ. հիվանդության պատճառով նա կրկին վերադարձել էր Սանկտ Պետերբուրգ և այնտեղ էլ վախճանվել:

Զինվորների կողմից սիրված զորապետի թաղման կազմակերպումը ՀՀ պաշտպանության նախարարը հանձնարարեց ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի վարչության պետ, գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանին: Նրա հետ միասին Սանկտ Պետերբուրգ մեկնեցին ՊՆ հրետանու պետի տեղակալ գնդապետ Մարատ Ղարիբյանը և ԼՂՀ ՊԲ հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Լեոնիդ Ծատուրյանը: Հուղարկավորությունը տեղի ունեցավ Սանկտ Պետերբուրգի հայկական Սուրբ Հարություն եկեղեցուն կից պանթեոնում 1999թ. սեպտեմբերի 2-ին, որը կազմակերպված էր բարձր մակարդակով, և ներկա էին բազմաթիվ մասնակիցներ հայկական համայնքից, հրետանային ակադեմիայի ղեկավարությունը, ուսանող հայ սպաները և, իհարկե, Տեր հայր Եզրասը:

2000թ. լեգենդար գեներալին հետմահու շնորհվեց Արցախի հերոսի կոչում:

Տողերիս հեղինակը 2005թ. եղավ Սանկտ Պետերբուրգում, այցելեց Սուրբ Հարություն եկեղեցի և ծաղիկներ դրեց հերոս գեներալի շիրիմին: Ես նրան վաղուց էի ճանաչում: Դեռևս 1980թ. հունվարի 19-ին «Սովետական Հայաստան» թերթում տպագրել էի «Էլտիգենի հերոսները» հոդվածը, որտեղ պատմել էի Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած խիզախ հրետանավոր հրամանատարի մասին: Իսկ 1995թ. «Հայ Զինվոր» թերթի մայիսի 16-23-ի համարում տպագրել էի «Գեներալ Իվանյանի մարտական սխրանքները» հոդվածը:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանն այսօր էլ երախտագիտությամբ է հիշում իր մարտական ավագ ընկերոջը՝ գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանին, որը մեծ լումա է ներդրել հայկական զինուժի կազմավորման գործում և հավատում, որ մի օր երախտապարտ հայ ժողովուրդը Երևանում կկառուցի հերոսի հուշարձանը, իսկ նրա աճյունը կտեղափոխվի Սանկտ Պետերբուրգից Երևան (Եռաբլուր):

1999թ. հոկտեմբերի 27-ը «սև օր» էր հայոց նորագույն պատմության մեջ: Այդ օրը «ծախու մարդասպանների» զոհ դարձան յոթ բարձրաստիճան հայ պետական գործիչներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետ, պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանը: Նրա մահվան բոթը սրտի մեծ ցավով տարավ գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը, որը Հայկական բանակում իր մարտական մկրտությունը ստացել էր Վազգեն Սարգսյանի հրամանատարությամբ:

Իմ ձեռքին է «Հայ Զինվորի» 1999թ. հոկտեմբերի 30-նոյեմբերի 6-ի թիվ 43 համարը, որտեղ հաղորդագրություններ էին տպագրված ՀՀ պաշտպանության առաջին նախարարի սպանության մասին: Այդ թերթը գտնվում է գեներալի անձնական արխիվում: Սրտի կսկիծով նա մակագրել է թերթի առաջին էջի վերին աջ անկյունում. «1999թ հոկտեմբերի 27-ին սպանեցին Վազգեն Սարգսյանին՝ վարչապետին և սպարապետին, հայ ժողովրդի արժանի զավակին, ՀՀ պաշտպանության առաջին նախարարին, մարդու, որը զրոյից ստեղծեց Հայկական բանակը՝ Արցախի հերոսին»:

Նրա մահվան բոթը մեծ ցավով տարավ Հայաստանի Հանրապետության նորաստեղծ բանակի ողջ անձնակազմը: Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը սրտի խորը կսկիծով ու ափսոսանքով երկար ժամանակ չէր կարողանում թաքցնել իր վրդովմունքը և զայրույթը կատարված սոսկալի դավադրության համար:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանի բազմամյա զինվորական ծառայությունը, անցած մարտական ուղին և կատարված մեծածավալ աշխատանքը ՀՀ զինված ուժերում արժանի է հետագա՝ ավելի մանրամասն ուսումնասիրության:

Նա արժանի է եղել է՛լ ավելի բարձր պաշտոնների. դեռևս 1995 թվականին ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանցը առաջարկել էր նրան նոր պաշտոն՝ պաշտպանության նախարարի տեղակալ սպառազինության գծով, և տվել ժամանակ՝ մտածելու առաջարկի մասին ու տալու համաձայնություն, սակայն նա համառորեն չի ցանկացել կիսատ թողնել սկսած գործը. մեծ շնորհակալություն հայտնելով իր անձի նկատմամբ ուշադիր լինելու համար՝ շարունակել է բարձր պատասխանատվությամբ զարգացնել և հզորացնել Հայկական բանակի գլխավոր կրակային ուժը՝ հրթիռահրետանային զորքերը, որին նվիրված է մնացել մինչ այսօր:

Ինչպես արդեն նշեցինք, 2003թ. հոկտեմբերի 23-ին, համաձայն «Զինվորական ծառայության մասին» օրենքի, Վ.Ա.Հայրապետյանն անցավ թոշակի: Սակայն, հաշվի առնելով գեներալի 42-ամյա զինվորական անբասիր ծառայությունը, նրա գիտելիքներն ու հարուստ փորձը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի որոշման համաձայն՝ նա ընդգրկվեց պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի կազմում, որտեղ նա շարունակում է բարեխղճորեն կատարել այն առաջադրանքները և հանձնարարությունները, որը տրվում է պաշտպանության նախարարի կամ նշված հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանի կողմից:

Ներկայումս գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը մեծ ակտիվությամբ մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին, հաճախակի լինում է զորամասերում, ուսումնասիրում փաստացի իրադրությունը և նոր գործնական առաջարկություններ պատրաստում պաշտպանության նախարարին՝ կապված Հայկական բանակի մարտունակության բարձրացման, ամրապնդման և առաջիկա անհետաձգելի խնդիրների կարգավորման մասին:

Բացի նշված հանձնաժողովում կատարած աշխատանքից, գեներալ-մա-

յոր Վ.Ա.Հայրապետյանը, սկսած 1995թ., երբ հիմնադրվեց ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» հանդեսը, նրա խմբագրական խորհրդի անդամ էր: Հանդեսի մի շարք ռազմական և ուսումնամեթոդական համարներում գեներալը արժեքավոր հոդվածներ է տպագրել, որտեղ անգնահատելի օգնություն է ցույց տվել հրետանավոր սպաներին՝ խորը ուսումնասիրելու հրետանու մարտական կիրառման հիմունքները (այդ հոդվածների մի մասը տպագրվում է մեր գրքի հավելվածում): Վ.Ա.Հայրապետյանը ակտիվորեն թղթակցել է նաև ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ «Հայ զինվորին», նրա էջերում տպագրել հոդվածներ, տվել հարցազրույցներ անհրաժեշտ հիմնահարցերի շուրջ, որոնցից մի քանիսը նույնպես տալիս ենք գրքի հավելվածում:

Գեներալի հետ միասին զինվորական ծանր բեռն իր ուսերի վրա է տարել նրա կյանքի անբաժան ուղեկիցը՝ Խաթուն Գևորգի Հայրապետյանը (Գույումջյանը), որի հետ ամուսնացել էր 1965թ. հուլիսի 21-ին Երևանում: Վլադիմիրը Խաթունի հետ ծանոթացել էր դեռևս մայրաքաղաքի՝ Շահումյանի շրջանի թիվ 90 միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին: Նա հուզմունքով է հիշում այն օրը, երբ ինքը 10-րդ դասարանում առաջին անգամ հանդիպեց իր կյանքի ապագա մշտական ուղեկցուհուն: «—Դա հերթական դպրոցական շաբաթօրյակներից մի օր էր,-հիշում է գեներալը,—մենք՝ բարձր դասարանցիներս, աշխատում էինք դպրոցի մասնաշենքի շինարարության վրա: Ծարավել էինք: Մարզադաշտում այդ պահին ֆիզկուլտուրայի դաս էր: Մեր խնդրանքով դասատուն հանձնարարեց աղջիկներին՝ ջուր տանել տղաներին: Այնպես պատահեց, որ Խաթունը ջրով լի թասը տվեց ինձ: Եվ, ինչպես ասվում է ժողովրդական հայտնի երգում, նա ջրի հետ սրտումս սիրո կրակ վառեց»:

Ամուսնանալով սպայի հետ՝ Խաթունը գիտակցաբար գնաց այդ քայլին և սիրով նրա հետ կիսեց զինվորականի յուրահատուկ դժվարին ճանապարհը: Երբ նա ամուսնու ծառայության բերումով եղավ Ուկրաինայում, ապա տեղափոխվեց Գերմանիա, այնուհետև Լենինգրադ, որից հետո Բելառուս, ապա՝ Հեռավոր Արևելք՝ Պրիմորյեի երկրամաս, դրանից հետո՝ Կամչատկա: Այնուհետև Խաղաղ օվկիանոսի ափերից ընտանիքով տեղափոխվել են Հյուսիսային Կովկաս, այնտեղից՝ Չեխոսլովակիա, ապա՝ Սիբիր՝ Կեմերովոյի մարզ: Սիբիրից, ինչպես նշել ենք, ընտանիքով 1992թ. վերադարձել են Հայաստանի Հանրապետություն, որի վրա էին հարձակվել ադրբեջանական զավթիչները: Այդ բոլոր տեղափոխությունների ընթացքում մշտապես նրանց հետ էին երեխաները՝ Աստուրը և Գայանեն: Աստուրը, որը կրում է Հայրենական մեծ պատերազմում զոհված սպայի անունը, ծնվել է 1967թ. հունվարի 12-ին Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում, իսկ աղջիկը՝ Գայանեն, ծնվել է 1971թ. դեկտեմբերի 21-ին Ռուսաստանի Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ) քաղաքում: Աստուրը ստացել է բարձրագույն կրթություն՝ ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի

ֆակուլտետը: Ուսման տարիներին նա զորակոչվել է խորհրդային բանակ և երկու տարի ծառայել Չեչնիայում տեղակայված զորամասերից մեկում: Աղջիկը՝ Գայանեն, այժմ ռուսաց լեզվի ուսուցչուհի է Երևանի թիվ 190 միջնակարգ դպրոցում: Նրանք երկուսն էլ ամուսնացած են և գեներալ պապիկին պարգևել են չորս թոռ, որոնցից մեկն էլ կրում է զորավարի անունը՝ Վլադիմիր, մյուսները՝ Վահեն, Սամվելը և փոքր Արտյոմը:

Վ.Ա.Հայրապետյանը ոչ միայն սիրող ամուսին է, հոգատար հայր և երջանիկ պապիկ, այլև մեծ հարգանք է վայելում իր ազգականների և ընկերների շրջապատում: Նա հարկ եղած դեպքում նյութական և բարոյական օգնություն է ցույց տվել բարեկամներին, հատկապես հասել նրանց «նեղ օրերին»:

Տողերիս հեղինակը 2006 թ.՝ Նոր տարվա նախօրյակին, ծանր վիրահատվել էր գլխից Էրեբունի հիվանդանոցում: Գեներալը բազմիցս այցելեց ինձ և իր մարդկային ուշադրությամբ թեթևացրեց իմ ցավերը:

Ինչպես ՀՀ ՊՆ հրթիռային և հրետանային զորքերի վարչության պետի պաշտոնում, այնպես էլ բարձրագույն սպայակազմի հանձնաժողովում գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանը մշտապես հոգ էր տանում՝ լուծելու մարտերում զոհված կամ հաշմանդամ դարձած իր զինվորների ընտանիքների անդամների սոցիալական այս կամ այն խնդիրները: Եթե այդ խնդիրները իր իրավասությունից դուրս էին, ապա նա դիմում էր պաշտպանության նախարարին կամ նախարարի տեղակալներին:

Գեներալ-մայոր Վ.Ա.Հայրապետյանն իր անմիջական պարտականությունները կատարելու հետ մեկտեղ ակտիվ հասարակական աշխատանք է տանում ՀՀ պատերազմի, զինված ուժերի և աշխատանքի վետերանների խորհրդում, ուսումնական հաստատություններում՝ մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ. նրան հաճախակի կարելի է տեսնել այս կամ այն զինվորական ուսումնարաններում և դպրոցներում, որտեղ կենդանի զրույցներ է տանում ինչպես կուրսանտների, այնպես էլ բարձր դասարանների աշակերտների, բուհերի ուսանողների շրջանում: Արդեն նշեցինք, որ այդ նպատակով գեներալը հաճախակի հոդվածներ էր տպագրում մամուլում: Նա չի մոռանում Եռաբլուրի պանթեոնը, որտեղ հանգչում են Հայաստանի և Արցախի սահմանները պաշտպանելիս զոհված իր մարտական ընկերները և զինվորները: Տարվա մեջ մի քանի անգամ նա այցելում է հայրենիքի ազատության համար նահատակվածների սրբավայր՝ Եռաբլուր, և գլուխ խոնարհում նրանց շիրիմների առջև:

Չնայած այսօր անմարդաբնակ է նրա ծնողների ծննդավայր Ներքին Մազրա գյուղը, սակայն գեներալը ամեն տարի մեկնում է այնտեղ և ծաղիկներ դնում Հայրենական մեծ պատերազմում զոհված մազրեցիների հուշարձանին, լինում Շիշկերտում, այցելում մոր գերեզմանին և հարգում նրա հիշատակը:

Իր ծննդավայր Շիշկերտում գեներալը չի մոռանում ծաղիկներ դնել նաև

ճանապարհամերձ աղբյուրի մոտ կառուցված 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Նավասարդ Հարությունյանի հուշարձանին:

Վաղուց արդեն ո՛չ Ներքին Մազրայում և ո՛չ էլ Շիշկերտում չեն պահպանվել գեներալի հայրական և մայրական տները: Հոր ծուխը մշտապես պահելու համար որդին մշտական բնակություն է հաստատել Երևան քաղաքում, այնտեղ տուն կառուցել և տնամերձ այգում ծառեր տնկել:

Գեներալը, վերհիշելով Արցախյան պատերազմում զոհված իր մարտական ընկերների անմոռանալի սխրանքները, ինչպես նաև իր դառը մանկության պատճառ դարձած Հայրենական մեծ պատերազմը (1941-1945թթ.), որը որբացրեց բազմաթիվ մանուկների նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, հիշում է նաև դպրոցական տարիները, իր մանկության ընկերներին, որոնցից հատկապես ջերմությամբ է խոսում Աբրահամ Կարաբաջակյանի (Աբրահամ Անպարտ-բանաստեղծ), Ռազմիկ Թովմասյանի, Արամի, Կազբեկի, Ավետիքի և Դերենիկի մասին: Բացի Արամից, որը, ցավոք սրտի, մահացել է, բոլոր նշված ընկերները գեներալի հետ պահպանում են իրենց մարդկային, ընկերական հարաբերությունները:

2006թ. սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը մեծ շուքով նշեց Հայաստանի Հանրապետության 15-ամյակը: Երևանի Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ Հայկական զինված ուժերի տոնական զորահանդես: Մեկը մյուսի հետևից հրապարակով անցնում էին Արցախյան պատերազմում աղրբեջանական զավթիչների դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրած զորատեսակներից բաղկացած համահավաք ստորաբաժանումները: Հաղորդավարը ի լուր ամենքի նշում էր տվյալ զորատեսակի կազմավորման և մարտերում աչքի ընկած երախտավորների անունները: Երբ հրապարակով անցնում էին հրթիռահրետանային զորքերը, ապա հաղորդավարն առաջինը, որպես այդ զորատեսակի հիմնադիր, հանդիսավոր կերպով տվեց գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի անունը: Երեկոյան ես հեռախոսով շնորհավորեցի գեներալին Անկախության օրվա առթիվ և նշեցի զորահանդեսում հրթիռահրետանային զորքերի տրամադրության տակ եղած մարտական արդիական տեխնիկայի թողած ցնցող տպավորության մասին: Գեներալը շնորհակալություն հայտնելուց հետո խորիմաստ պատասխանեց. «Ես կուզենայի, որ մեր տարածաշրջանում հաստատվեր կայուն խաղաղություն, և այդ հզոր զենքն օգտագործվեր հրաձգարաններում ու զորավարժությունների ժամանակ: Իսկ եթե թշնամին փորձի կրկին խաթարել մեր՝ օրեցօր հզորացող պետության անդորրությունը, ապա «պատերազմի աստված» հրետանին, որն այսօր գտնվում է հայ հրետանավորների հուսալի ձեռքերում, կասի իր վճռական խոսքը և կջախջախի զավթիչներին իրենց իսկ որջում: Այսօր Հայկական բանակի հրետանավոր-

ների նշանաբանն է՝ «հակառակորդին խոցել առաջին իսկ կրակով, առաջին իսկ համազարկով, առաջին իսկ վայրկյաններին և հրետակոծման առավելագույն հնարավորությունների սահմաններում: Այսօր մեր հրետանին Հայկական բանակի հզոր կրակային վահանն է: Այն մարտունակ է, քան երբեք և մշտապես պատրաստ է հարկ եղած պահին հետ մղել թշնամու հարձակումն ու անառիկ պահել մեր Հայրենիքի սահմանները»,- այսպիսի խոսքերով ավարտեց հեռախոսազրույցը կյանքի 65 տարիներից 46-ը զինված ուժերի ամենահզոր զենքին՝ հրետանուն նվիրած արդեն ճերմակած մազերով, բայց երիտասարդական ավյունով կենսախինդ գեներալը:

Օգտվելով առիթից՝ ես շնորհավորում եմ գեներալ-մայոր Վլադիմիր Աստուրի Հայրապետյանին ծննդյան 65-ամյակի առթիվ, որը համընկավ Հայաստանի երրորդ Հանրապետության, Հայկական բանակի և Շուշիի ազատագրման 15-ամյակի հետ, և նրան ցանկանալ քաջառողջություն ու խաղաղ ծառայություն: Այսօր նրա և նրա նման հայրենասերների կողմից ստեղծած մեր պետականության ամենակարևոր կառույցներից մեկը՝ Հայկական բանակը, ավելի է հզորացել, դարձել մեր խաղաղության գլխավոր երաշխավորն ու տարածաշրջանի կայունության և անվտանգության կարևոր գործոնը: Փա՜ռք այդ բանակը ստեղծած ազգի նվիրյալներին, երիցս փա՜ռք հայ զինվորներին սպաներին և գեներալներին:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ, ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԳԵՆԵՐԱԼԻ ՄԱՍԻՆ



*ՀՀ նախագահի զինվորական խորհրդական,*
*ՀՀ ռազմական գլխավոր տեսուչ գեներալ–գնդապետ*
*Գուրգեն Հարությունի ԴԱԼԻԲԱԼԹԱՅԱՆ*

Լավ հրամանատարը նա է, ով հավատում, վստահում է զինվորի ընդունակություններին և զարգացնում է դրանք:

Այդպիսի հրամանատար է գեներալ–մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը: Ես նրան ճանաչում եմ դեռևս 1982 թ–ից, երբ ծառայում էի Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգում՝ որպես օկրուգի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով:

Այն ժամանակ գնդապետ Վ.Ա.Հայրապետյանը 25–րդ բանակային կորպուսի հրթիռահրետանային զորքերի շտաբի պետ էր և աչքի էր ընկնում հրամանատարական բարձր գիտելիքներով ու ունակություններով:

Այդ էր վկայում նրան վստահված պատասխանատու գեներալական պաշտոնը արդեն 28–րդ բանակային կորպուսում ստացած բազմաթիվ կառավարական պարգևները: Հաջորդ անգամ ես նրան հանդիպեցի 1992թ. փետրվար ամսին՝ Հայաստանում, երբ վարում էի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի՝ պաշտպանության նախա-

բար Վազգեն Սարգսյանի առաջին տեղակալի պաշտոնը: Գեներալ Վ.Ա.Հայրապետյանը կամավոր թողել էր իր բարձր պաշտոնը և սրտի կանչով եկել Հայաստան՝ արհեստավարժ զինվորականի իր բոլոր ուժերն ու կարողությունները հայրենիքի զինված պաշտպանության սուրբ գործին նվիրելու նպատակով: Լավ ճանաչելով՝ ես ուրախությամբ ընդունեցի նրան և անմիջապես ներկայացրի պաշտպանության նախարարին: Վերջինս, հաշվի առնելով իմ երաշխավորությունը և անձամբ ծանոթանալով գեներալ Վ.Ա.Հայրապետյանի հետ, նրան 1992թ. հուլիսի 1–ին նշանակեց Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի վարչության պետ: Ժամանակաշրջանը շատ բարդ էր ու լարված ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ Կովկասում: Ադրբեջանը չհայտարարված լայնածավալ պատերազմ էր սկսել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության դեմ: Թշնամին, օգտվելով Ադրբեջանում տեղակայված ռուսական 4–րդ բանակի հրամանատարության թույլտվությունից, անարգել օգտագործում էր նրա տեխնիկան, զենքը, զինամթերքը, նույնիսկ մարդկային ուժը: Այդ բանակը, համեմատած Հայաստանի տարածքում տեղակայված ռուսական 7–րդ գվարդիական բանակի հետ, ավելի մեծաքանակ էր. ուներ 4 մոտոմեքենայացված և 1 օդադեսանտային դիվիզիա, նրան էին ենթարկվում նաև Կասպիական նավատորմիղը, մի շարք առանձին զորամասեր ու ստորաբաժանումներ: Ամեն օր ռմբակոծվում և գնդակոծվում էին ոչ միայն Արցախի հայկական բնակավայրերը, այլև Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բոլոր շրջաններն ու քաղաքները: Հարկավոր էր թշնամու հարձակումները կասեցնել, լռեցնել նրա կրակակետերը, արժանի հակահարված հասցնել ագրեսորին: Իսկ առանց կազմակերպված հրետանային և հրթիռային զորքերի հնարավոր չէր անել այդ: Ահա այսպիսի պատերազմական բարդ իրադրության պայմաններում գեներալ Վ.Ա.Հայրապետյանը ձեռնամուխ եղավ հրետանային և հրթիռային զորքերի կազմակերպման դժվարին գործին: Նա, սկսելով համարյա զրոյից, կարողացավ չափազանց կարճ ժամանակամիջոցում գործը գլուխ բերել: Նախ և առաջ օպերատիվ կերպով կազմակերպվեց 7–րդ գվարդիական բանակից հրանոթների, ականանետների և հրթիռային զենքի ձեռքբերման գործը: Միաժամանակ կազմակերպվեցին վարչության կազմավորման աշխատանքները՝ համալրելով արհեստավարժ, մասնագիտական կրթություն ունեցող հրետանավոր կադրերով: Բարեբախտաբար հայերը Խորհրդային բանակում ունեին հիանալի հրետանավոր մասնագետներ, որոնք պատրաստվել էին Խորհրդային Միության զանազան զինվորական ուսումնարաններում և ակադեմիաներում: Գեներալ Վ.Ա.Հայրապետյանի առաջնահերթ խնդիրներից մեկը եղավ հավաքագրել այդ կադրերին, ստեղծել հրետանային առաջին ստորաբաժանումները, միաժամանակ դրանք ուղարկել թշնամու դեմ կռվելու:

Հրետանավոր կադրերի զգալի մասն արդեն տարիքն առած պահեստի սպաներ էին, բայց նրանք սիրով կպան գործին և առաջին իսկ մարտերում դրսևորեցին իրենց մարտական վարպետությունը և կարողությունները ադրբեջանական բանակի կրակակետերը ճնշելու և ոչնչացնելու գործում: Պետք է նշել, որ դեռևս վաղ անցյալում հայ հրետանավորները, ինչպես իրենց բարձր պատրաստվածությամբ և ունակություններով, այնպես էլ իրենց խիզախությամբ մշտապես աչքի են ընկել Խորհրդային բանակում: Հիշենք Խորհրդային Միության առաջին հայ հերոսներից հրետանու գեներալ–գնդապետ, Արցախի արժանի զավակ Միքայել Արտեմի Պարսեղովին: Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին գեներալ Մ.Ա.Պարսեղովը ղեկավարում էր Հարավարևմտյան ռազմաճակատի հրետանու գործողությունները:

Կարմիր բանակի հրետանու մարտական պատրաստության վարչության պետն էր հրետանու գեներալ–լեյտենանտ Իվան Դավթի Վերիլյանը:

Դոնի Ռոստովի մատույցներում 1941 թ. նոյեմբերի 17–18–ը գերմանաֆաշիստական 50 տանկերի դեմ մղված մենամարտում իր անմահ սխրանքով աչքի ընկավ հրետանային մարտկոցի հրամանատար, լեյտենանտ Սերգեյ Անդրեյի Օգանովը: Անհավասար դաժան մարտում մարտկոցի անձնակազմը իր կյանքի գնով ոչնչացրեց թշնամու 30 տանկ՝ մյուսներին ստիպելով նահանջել: Այդ սխրանքի համար Սերգեյ Օգանովին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հատուկ հրամանով նրա անունը հավերժ գրանցվեց Թբիլիսիի հրետանային ուսումնարանի անձնակազմի ցուցակում: Հենց այդ ուսումնարանն էին հետագայում ավարտել Հայաստանի Հանրապետության հրթիռահրետանային զորքերի առաջին պետ Վ.Ա.Հայրապետյանը և ուրիշները: Ինչպես ասում են՝ «Հրետանին պատերազմի աստվածն է, իսկ հետևակը՝ թագուհին»: Հրետանին ամեն մի մարտում առաջնակարգ դեր է կատարում և ճանապարհ հարթում հետևակի համար: Մենք, այդ ծանր օրերին ստիպված էինք և՛ կռվել, և՛ ստեղծել: Պետք է նշեմ, որ Վ.Ա.Հայրապետյանը պատվով կատարեց իր դժվարին առաջադրանքը: Նրա ղեկավարությամբ կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին հրետանային առաջին կանոնավոր մարտկոցները, դիվիզիոնները, ապա՝ զորամասերը: Իհարկե, այդ գործում նա մենակ չէր. նրան մեծ օգնություն էր ցույց տալիս գլխավոր շտաբը և անձամբ պաշտպանության նախարարը: Վ.Ա.Հայրապետյանը այնպես էր կազմակերպել հրետանային զորքերի ստեղծման աշխատանքը, որ հայկական հրետանին քիչ բանով էր տարբերվում ռուսական հրետանուց՝ վերցնելով նրա լավագույն մարտական ավանդույթները: Իսկ ռուսական հրետանին միշտ էլ առաջնակարգ տեղ է զբաղել աշխարհում: Հայկական հրետանային առաջին ստորաբաժանումները լեռնային պայմաններում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում իրենց դրսևորեցին գերազանց՝ հուսալի կրակային վահան ստեղծելով

ֆիդայական ջոկատների և մոտոհրաձիգների համար և մեծ դեր խաղացին Արցախյան ազատագրական պատերազմում տարած հաղթանակում:

Ընդհանրապես մարտական գործողությունների ժամանակ Վ.Ա.Հայրապետյանը գործում էր սառնասրտորեն և խիզախությամբ: Նա անձամբ մասնակցել է մի շարք վճռորոշ մարտերի (Լաչին, Քարավաճառ, Օմարի լեռնանցք, Կապանի շրջան և այլն) և իր օրինակով ոգևորել հայ քաջորդիներին: Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանության մարտերից մեկում, չնայած նա վիրավորվել էր ձեռքից, բայց չէր թողել հրամանատարական կետը և շարունակել էր ղեկավարել հրետանու կրակը մինչև մարտի ավարտը:

Վ.Ա.Հայրապետյանը պատերազմի յուրաքանչյուր դադարը կարողանում էր օգտագործել հրետանու ամրապնդման և կատարելագործման համար: Նա մեծ ուշադրություն էր դարձնում նորաստեղծ հրետանային ստորաբաժանումները հմուտ մասնագետ–կադրերով համալրելու գործին, ձգտում հրամանատարական կազմը համալրել հրետանային ուսումնարաններ և ակադեմիաներ ավարտած սպաներով: Ինքը հոգ էր տանում ուսումնական բազաներ, հրաձգարաններ ստեղծելուն, իսկ երբ բացվեց ՀՀ պաշտպանության նախարարության բազմաբնույթ ռազմահրամանատարական ուսումնարանը (այժմ՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ), նրա նախաձեռնությամբ այնտեղ բացվեց հրետանային ամբիոն: Որպես հրամանատար նա շատ հոգատար էր իր ենթակաների հանդեպ: Միշտ ձգտում էր խրախուսել մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարած հրամանատարներին ու զինվորականներին, ժամանակին նրանց ներկայացնում էր պարգևատրման, զինվորական կոչումների բարձրացման, արժանիներին երաշխավորում հրետանային ակադեմիաներում սովորելու:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բարձր է գնահատել Վ.Ա.Հայրապետյանի ծառայությունները և առաջինների թվում 1994թ. մայիսի 28–ին նրան շնորհել «գեներալ–մայոր» բարձր զինվորական կոչում:

Գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանն իրեն ըստ արժանվույն է դրսևորել նաև 1994թ. մայիսի 14–ին՝ Ադրբեջանի հետ զինադադար կնքելուց հետո: Նա Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի վարչության աշխատանքը ղեկավարել է մինչև 2003թ. հոկտեմբերի վերջը՝ շուրջ 11 տարի: Նրա օրոք հրթիռահրետանային զորքերը կայացել, ամրապնդվել ու կատարելագործվել են, պատրաստվել տակտիկապես և պատրաստ են մասնակցելու ցանկացած մարտական օպերացիաների, համալրվել արհեստավարժ, մասնագիտական կրթություն ստացած կադրերով: Այդ տարիներին զգալի չափով համալրվեց ուսումնատեխնիկական բազան, կատարելագործվեցին հրաձգարանները, ձեռք բերվեցին նոր տիպի հրանոթներ, հրթիռներ և այլն: Գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանի ջանքերով կազմակերպվեցին ու կատարելագործվեցին նմանապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հրթիռահրետանային զորքերը:



Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյան, 2000 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



Командир 378-го арт. полка подполковник В. Айрапетян за ним заместители слева -майоры Марченко, Дельчук, Алексеенко. ДВО, с. Пантелеймоновка - 1978 г.



Վաստակաշատ սպարապետ Վազգեն Սարգսյանը և նրա տեղակալները Ս. Մարտիրոսյանն ու Մկրտիչ Աբրահամյանը



Գարեգին Նժդեհի արձանի մոտ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, նրա տեղակալ Մկրտիչ Աբրահամյանը և գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը, Լուսակերտ, ուսումնական հրետանային գունդ, 1997 թ.



Генерал-лейтенант Норат Тер-Григорянц. посещение учебного артиллерийского полка (Лусакерт), у памятника Нжде, 1997 г., осень

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



Կապանցիների ամենասիրած լեռը, Խուստուփը



Գարեգին Նժդեհի հուշարձան–համալիրի բացման արարողությունը Կապանում. ներկա են գեներալներ Մ. Գրիգորյանը, Վ. Հայրապետյանը, Մուրազ Սարկիսյանը, մարզպետ էդիկ Բարսեղյանը



Գարեգին Նժդեհի հուշահամալիրը ք. Կապանում



Ձախից Լուսակերտի ուսումնական հրետանային գնդի հրամանատար գնդապետ Ալբերտ Մկրտչյանը, հրթիռա հրետանային զորքերի պետ գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը և նրա երկարամյա մարտական վարորդ Սեյրան Վարդանյանը, Լուսակերտ, 1998 թ.



Կապանի բրիգադի հրամկազմը. բրիգադի հրամանատար գեներալ – լեյտենանտ Մ. Գրիգորյանը և գեներալ–մայոր Վ. Հայրապետյանը այցելեցին Կապանի զոհվածների հուշահամալիր



Կապանի շրջան, գյուղ Շիշկերտ, Վլադիմիր Հայրապետյանի մոր Նուբարի շիրիմին այցի են եկել գեներալ-լեյտենանտ Միխայիլ Գրիգորյանը, համագյուղացի Գրիգոր Մեծը, Ֆրունզը, Լեոնիդ Գրիգորյանը և Մաեստրոն 2004 թ.



Հ Թումանյանի տուն-թանգարանը Դսեղում. Վ. Հայրապետյանը և Ս. Վանեսյանը թանգարանի տնօրենի հետ




Մարտական ընկերները նորաստեղծ հակատանկային գնդի մարտական դրոշի մոտ. գնդի առաջին հրամանատար գեներալ Է. Ապրիամովը և ԶՈւ առաջին հրթիռահրետանային զորքերի պետ գեներալ Վ. Հայրապետյանը



Մարտական ընկերները Գանձասարի վանքում, ձախից գեներալ-մայոր Ժորա Գասպարյանը, Տեր Հովհաննեսը և գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը



Գանձասարի հինավուրց հայկական վանքում

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



Գեներալ ընկերները ուսումնասիրում են. Գանձասարի հինավուրց հայկական խաչքարերը



Գեներալ-գնդապետ Սեյրան Մուշեղի Օհանյան, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ:



Հայոց հինավուրց Անի քաղաքի համայնապատկերը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի շենքում. մի խումբ գեներալներ և սպաներ եկել են շնորհավորելու Մուրադ Կարապետյանին պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան պաշտպանելու ժամանակ. Երևան, 2004 թ.



Գեներալները գրքի հեղինակ Կլիմենտ Հարությունյանի հետ



Հայ ժողովրդի կողմից շատ սիրված գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեսյանը, ձախից գեներալ–մայոր Ռ. Կարապետյանը, աջից գեներալ–մայոր Վ. Հայրապետյանը





Մարտական ընկերները. ձախից գեներալ–մայորներ Վ. Հայրապետյան, Լ. Կարապետյան, Լ. Մարտիրոսով, Ա. Սարգսյան, ք. Երևան, 1996 թ.



Слева на право генерал-майор Саркисян Мураз, генерал-майор Айррапетян Владимир, военком капанского района Григорян Леонид, г. Капан, март, 1998 г.



«Զվարթնոց» օդանավակայան. գեներալ Վ. Հայրապետյանը իր տիկնոջ և մարտական ընկերների հետ ճանապարհում է դեպի Սանկտ Պետերբուրգ վաստակաշատ գնդապետ Լ. Միքայելյանին



Խաթուն և Վլադիմիր Հայրապետյանները, 2000 թ.



Վլադիմիր և Խաթուն Հայրապետյանների որդին Ասատուրը. ք. Երևան, 2006 թ.



Վ. Հայրապետյանը իր որդի Ասատուրի և թոռնիկի Վոլոդյայի հետ. ք. Կրասնոդար, 2002 թ.



Գեներալի որդին Ասատուրը, դուստրը Գայանեն, և սիրելի թոռնիկը Վոլոդյան, ք. Երևան, 2006 թ.



Գեներալի որդին Ասատուրը և դուստրը Գայանեն, ք. Երևան, 2006 թ.



Գեներալի որդին Ասատուրը իր ընտանիքով. տիկինը Վիկտորիան, որդիները Վլադիմիրը և փոքրիկ Արտյոմը, 2007 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



Գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը իր քրոջ Մառլենայի հետ, ք. Երևան, 2001 թ.



Վ. Հայրապետյանի ընտանիքի հյուրերն են Լևոն Հարությունյանը, գեներալի մտերիմ բարեկամը և քեռու որդին, 2006 թ.



Ձախից Կլիմենտ Հարությունյանը, նրա հայրը Ամասիան, և գեներալ Վ. Հայրապետյանը, ք. Երևան, 2004 թ.



Ձախից աջ գեներալ–մայոր Վ. Հայրապետյանը, թոռնիկը Վահեն, տիկին Խաթունը, Գայանեն, թոռնիկ Սամվելը, փեսան Արթուրը, ամուսիններ Ալվարդը և Կիրակոսը, ք. Երևան, 2006 թ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



Справа нач. РВиА ВС РА генерал—майор Айрапетян Владимир Асатурович, Нач. РВиА Сев, Кавказ. ВО, генерал—майор Спесарев Юрий Андреевич, нач. ГБУ РФ генерал—майор Легкий Олег Иванович, май 2003 г., г. Ереван



Վ. Հայրապետյանի դասընկերները. աջից Խաչիկը, Ռազմիկ Թովմասյանը և Մարին. ք Երևան. 2006 թ.



ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի գեներալները հանգստյան ժամին. ձախից գեներալներ Ա. Սարգսյանը, Վ. Հայրապետյանը, Ս. Մարտիրոսյանը և Ռ. Կարապետյանը, 2005 թ.



Ճանաչված և սիրված գնդապետ Էդուարդ Գևորգյանի ծննդյան օրը

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Գիտաժողովի մասնակիցները Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, 27. 03. 2007թ.



Ձախից գրքի հեղինակ Կ. Հարությունյանը, գեներալ–մայոր Վ. Հայրապետյանը, «Տաթև» գիտակրթական համալիր և «Զանգակ-97» հրատարակչության գլխ. տնօրեն Ս. Մկրտչյանը (28.03.2007 թ.)




Ալեքսանդր Օզանով, Վլադիմիր Հայրապետյան, Աղվան Գրիգորյան:



Վլադիմիր Հայրապետյան, Հակոբ Հակոբյան, Աղվան Գրիգորյան

Ես անձամբ՝ որպես ՀՀ նախագահի զինվորական խորհրդական և ռազմական գլխավոր տեսուչ, մի քանի անգամ տեսչական ստուգումներ եմ անցկացրել գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանի գլխավորած հրթիռահրետանային զորքերում և միշտ բարձր գնահատականներ տվել այդ կարևոր զորատեսակի մարտական պատրաստականությանը և նրա հրամանատարներին:

Գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանն այսօր էլ պատասխանատու աշխատանք է կատարում ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովում և իր հարուստ գիտելիքները ու մարտական մեծ փորձը փոխանցում երիտասարդ զինվորականների նոր սերնդին, նրանց դաստիարակում զինվորական արվեստի հերոսական ավանդույթներով:

*10.02.2007թ.*

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ,
ՀՀ ՊՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ ՄԻԽԱՅԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՆԵՐԱԼ– ՄԱՅՈՐ Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

## ՄԵԾԱՐԳՈ՛ ՊԱՐՈՆ ԳԵՆԵՐԱԼ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի ողջ անձնակազմի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեզ ծննդյան օրվա առթիվ:

Մեծ է Ձեր ավանդը Հայաստանի զինված ուժերի կազմավորման ու նրա հետագա կայունացման գործընթացում: Հանրապետության անկախության շեմին Դուք անմիջապես արձագանքեցիք պաշտպանության նախարարության կոչին և, վերադառնալով Հայրենիք, սատար կանգնեցիք նրա սահմանների պաշտպանությանը ու ԼՂՀ ժողովրդի ազատագրական պայքարին:

Ձեր բազմավաստակ զինվորական ծառայությունը, անցած մարտական ուղին, որոնց արգասիքն են «գեներալ–մայոր» բարձրաստիճան կոչումը և ներկայիս հայրենանվեր ու անձնուրաց ծառայությունը, զինվորական պրո-

ֆեսիոնալիզմի բարձր մակարդակը, նվիրվածությունը սիրած գործին ու ժողովրդին, արժանի օրինակ է մեր նորաստեղծ բանակի հրամանատարական կազմի և երիտասարդ սպաների ու զինվորների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր ծննդյան 55–րդ տարեդարձի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, անձնական երջանկություն, կամք ու եռանդ և նորանոր հաջողություններ Ձեր հրամանատարության ներքո գտնվող զորամիավորումների մարտական պատրաստության, զինվորական կարգապահության բարձրացման, անձնակազմին հայրենասիրական ոգով դաստիարակման ու Հայրենիքի պաշտպանության ամրապնդման վեհ գործում:

*Լավագույն բարեմաղթանքներով՝*

*ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ,*
*պաշտպանության նախարարի առաջին տեղակալ*
*գեներալ–լեյտենանտ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*[1]
*25. 06. 2002 թ.*

---

[1] Գեներալ–գնդապետ Մ.Հ. Հարությունյանը ՀՀ նախագահի Ռոբերտ Քոչարյանի 2007 թ. ապրիլի 24-ի հրամանով նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար:



## ԳԵՆԵՐԱԼ – ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄԻԽԱՅԻԼ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայոց նորանկախ բանակի կազմավորման ճանապարհին յուրաքանչյուր զորատեսակի, ստորաբաժանման կազմավորման և նախկին Խորհրդային Միության հայազգի սպաների վերադարձը Հայրենիք ոչ միայն պատմական է եղել, այլև տպավորիչ:

Ինձ համար՝ որպես կադրային զինվորական–հրետանավորի, այդ ամենը ոչ միայն տպավորիչ է եղել, այլև պարտավորեցնող, քննախույզ հայացքով այդ ամենին տիրոջ ու երկրի զինվորի հայացքով նայելու պատեհ առիթ:

Հայոց պատմությունը ճակատագրի բերումով հաճախ այնպես է դասավորել, որ Խորհրդային Միության անծայրածիր տարածքներում տեղակայված զորամասերի հայազգի սպաները հաճախ չեն ճանաչել իրար: Բայց նաև ճակատագրի բերումով այդ նույն սպաները արդեն վաղուց ծանոթի ու հարազատի հայացքով են նայել իրար, կանգնել կողք կողքի՝ թշնամուն դեմ հանդիման:

Այսպես 1992 թվականի հունիսին հանդիպեցինք մենք՝ Խորհրդային բանակի հրետանավոր սպաներս՝ ես և Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը:

Հայը հային հեռվից է ճանաչում, զինվորականը զինվորականին՝ ավելի հեռվից, իսկ եթե հրետանավոր է՝ անծիր, բայց միաժամանակ մատչելի է ճանաչողության սահմանը:

Իզուր չի ասված. «Հրետանին պատերազմի աստվածն է»:

Չունենալ հրետանի և մարտադաշտում ապահով զգալ, նույնն է՝ դուրս գալ թշնամու դեմ՝ առանց զենքի: Ահա՝ ինչու Հայաստանի Հանրապետու-

թյան զինված ուժերի ինքնաիրետանային զորքերի նորաստեղծ վարչության պետ նշանակված Վ.Հայրապետյանը նաև պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումն իր մեջ ամբարած էր վերադարձել Հայրենիք:

Զևավորել ինքնաիրետանային զորքեր, հավաքագրել իրետանավորներ, մարտական տեսքի ու պատրաստականության բերել իրետանին՝ դժվար խնդիր էր, դժվարագույն՝ կազմակերպչական և ֆիզիկական իմաստով:

Հրքնաիրետանային նորաստեղծ վարչությունում կային խորհրդային բանակից զորացրված ընդամենը մի քանի սպաներ: Նրանք եկել էին Խորհրդային Միության տարբեր վայրերից, չէին ճանաչում միմյանց, բայց նրանց կապում էր Հայրենիքը պաշտպանելու գենետիկական շղթան:

Եվ գնդապետ Վ.Հայրապետյանը այդ մարդկանց կողքին էր՝ պատրաստ ուղղություն տալու, աջակցելու նրանց առաջարկներին, նկատառումներին:

Ամենադժվարին խնդիրներից մեկը իրետանային զորքերը մասնագետ-կադրերով համալրելու պահանջն էր: Հրետանավորի մասնագիտությունը յուրահատուկ (սպեցեֆիկ) մասնագիտություն է: Չէ՞ որ ոչ մի մոտոհրաձգային և այլ զորատեսակ չի կարող մարտի դաշտում հաջողություն ունենալ առանց իրետանու դիպուկ կրակի:

Խնդիր էր դրված իրետանային սպաներ և զինվորներ գտնել տարածքային զինկոմիսարիատների միջոցով: Լինում էին պահեր, երբ նշանառուն նշան էր բռնում հրանոթի փողի (ստվոլի) միջոցով:

Հանդիպում էին տարբեր տարիքի, անգամ տարեց մարդիկ, որ տասնամյակներ առաջ՝ խորհրդային տարիներին, ինչ-ինչ կապ էին ունեցել իրետանու հետ: Հանդիպում էին նաև պահեստազորի իրետանային սպաներ՝ մայորի, փոխգնդապետի կոչումով:Նրանցից շատերն արդեն 60–70 տարեկան մարդիկ էին: Բացի այդ՝ ամեն սպա չէ, որ կարող էր ղեկավարել իրետանային մարտկոց կամ դիվիզիոն: Բայց ստիպված նրանք երբեմն նշանակվում էին մարտկոցի կամ էլ դիվիզիոնի հրամանատար:

Գնդապետ Վ. Հայրապետյանն այդ մարդկանցից ընտրեց, սովորեցրեց նրանց: Հետագայում նրանցից շատերը դարձան իրետանային փորձված, հմուտ և բանիմաց սպաներ:

Մյուս դժվարագույն խնդիրը հրանոթի՝ որպես հզոր զենքի հավաքագրումն էր Հայաստանի տարբեր վայրերում: Այդ ժամանակ Հայաստանում տեղակայված նախկին Խորհրդային Միության իրետանային զորամասերը իրենց տեխնիկայով, սպառազինությամբ և գույքով հանձնվում էին նորաստեղծ հայկական զինված ուժերի ստորաբաժանումներին: Տեխնիկան հիմնականում թալանված էր և գտնվում էր ոչ բարվոք վիճակում: Եվ այդ դժվարին պայմաններում ստիպված էին վերանորոգելու այսինքն՝ մի քանի հրանոթներից կամ տեխնիկայից հավաքել մեկը և միանգամից ուղարկել մարտադաշտ: Այս պայմաններում էր, որ գնդապետ Վ.Հայրապետյա-

նը ղեկավարի հմուտ ջանքերով կարողացավ համախմբել և կազմավորել հրետանային զորքերը:

Մեծ դեր կատարեց գնդապետ Վ.Հայրապետյանը այդ հարցերի կոորդինացման գործում: Նա կարողացավ թիկունքում՝ հիմնականում Գյումրիում և Բալահովիտում, կազմակերպել հրետանային գործը, սովորեցնել մասնագետներին և նրանց ուղարկել մարտադաշտ:

Գնդապետ Վ.Հայրապետյանը երբեմն հրետանավոր սպաների բացակայության պատճառով միաժամանակ անձամբ էր ղեկավարում այդ մարտերը ամբողջ ճակատով՝ սկսած Նոյեմբերյանից մինչև Իջևան, Բերդ, Կրասնոսելսկ, Վարդենիս, Մարտակերտ, Ասկերան, Մարտունի, Հադրութ, Կապան, Մեղրի, Քաջարան, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր, Արարատ, Լաչին, որի մարտական գործողությունների ժամանակ էլ վիրավորվում է: Մենք կարողացանք նաև հրետանու շնորհիվ թշնամու նկատմամբ ձեռք բերել առավելություն և պատվով հաղթեցինք: Եվ երիցս փաստվեց, որ Հայոց նորօրյա հաղթանակի գործում իր ուրույն տեղն ունեցավ հրետանին:

Հրետանային զորքերի կազմավորման և ստեղծման գործում ներդրած մեծ ավանդի, մարտադաշտում ցուցաբերած խիզախության և հրամանատարի հմտության համար 1994 թվականի մայիսի 28-ին ճանաչված հրետանավոր, գնդապետ Վլադիմիր Հայրապետյանին շնորհվեց Հայոց բանակի գեներալ-մայորի բարձր կոչում:

Զինադադարից հետո գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը շարունակեց աշխատել որակի, հրետանավորների պատրաստման կատարելագործման վրա, և այսօր կարելի է վստահորեն ասել՝ մեր հրետանին լավագույն զորատեսակն է կովկասյան տարածաշրջանում:

Մենք այդ նաև գործնականում ապացուցեցինք, կարողացանք հրետանու շնորհիվ թշնամու նկատմամբ ձեռք բերել առավելություն և պատվով կռեցինք հաղթանակը:

Իր վաստակի համար գեներալ-մայոր Վ.Հայրապետյանը պարգևատրվել է մի շարք շքանշաններով և մեդալներով:

Մարդկային բարձր հատկանիշներով օժտված հայ ժողովրդի պանծալի զավակը նաև պարկեշտ, օրինակելի մարդ է, լավ ընտանիքի հայր, հոգատար, բարի, ուշադիր ընկեր:

*Երևան, 2007թ.*



Председателю Комитета ветеранов военной службы от генерала-майора **ВДОВИЧЕНКО КОНСТАНТИНА БОРИСОВИЧА**, проходил службу в должностях: командира артиллерийской-го полка, бригады, дивизии, начальника РВиА 5А ДВО, начальника командного ф-та МВАА (1993 г.), в настоящее время, ст. научный сотрудник, кандидат военных наук, доцент, Михайловской военной артиллерийской академии Санкт-Петербурга

Прежде всего, мне хочется выразить признательность комитету ветеранов военной службы за приглашение написать статью о В.А.Айрапетяне. Мне хорошо известна ваша большая, многообразная, целенаправленная и весьма полезная работа по военно—патриотическому воспитанию народа, по пропоганде славных боевых традиций наших ВС, по сплочению и мобилизации ветеранов на решение сложных задач по восстановлению величия и славы наших вооруженных Сил.

Обращаясь к Председателю Комитета ветеранов военной службы, я позволю себе коротко осветить те события, которые связаны с деятельностью В.А.Айрапетяна. Постараюсь найти и подчеркнуть то особенное и характерное, что было присуще его деятельности. Для меня это очень приятная миссия потому, что статья посвящена 65—летию со дня рождения этого замечатель-

ного человека, с которым мне как непосредственному его подчиненному пришлось делить и горечь неудач и радость побед в те неимоверно трудные и сложные годы.

Есть имена и даты в истории, которые не рискуют затерятся в созвездии юбилеев и имен XXI века. К таким именам относится имя человека, о котором я хочу написать.25 июня 2007 года исполняется 65 лет со дня рождения генерал—майора артиллерии Айрапетяна Владимира Асатуровича.

Генерал—майор Айрапетян В.А. не только выдающийся артиллерист — он ярчайший представитель железной когорты тех, кто умело руководил артиллерию в 70—е годы. В те годы он командовал артиллерийским полком ДВО, где мне посчастливилось служить под его командованием на разных должностях: начальника штаба, командира артиллерийского дивизиона и заместителя командира полка.

Служба молодого командира полка, выбравшего артиллерию своей профессиональной специальностью, всецело была посвящена боевой подготовке. Офицеры полка поражались упорству и настойчивости, с которым добывал знания, занимаясь днем и ночью, Владимир Асатурович.

Природная одаренность предопределила его судьбу — генеральские погоны не могли оказаться на плечах случайного человека. Сколько было таких, гордых прошлым опытом и заслугами "талантов", которые без упорной учебы и кропотливого труда не смогли состоятся.

По глубокому убеждению В.А.Айрапетяна именно командование полком сыграло совершенно незаменимую и важную роль в его становлении и формировании как генерала—артиллериста. Командование полком многое дает, но и очень могого требует; особенно, если это артиллерийский полк. Военная техника в любые годы требует грамотного офицера—артиллериста для ее освоения, а образовательный уровень призывников в те годы был невысок. Личный состав после напряженного дня, до предела насыщенного занятиями, тренировками, уходом за техникой в полном составе "садился" в учебные классы, постигая общеобразовательные, военные и специальные дисциплины. И везде, на артполигоне, на тренировках, в классах был вездесущий и требовательный командир полка.

Портрет командира артполка В. А. Айрапетяна той поры дополняют разнообразие и широта его интересов. Став профессиональным командиром—артиллеристом, Владимир Асатурович продолжал упорно совершенствовать не только свои профессиональные

знания. Он интересовался музыкой, живописью, уделял внимание спорту. В.А.Айрапетян понимал, что истинно образованный современный командир—артиллерист не может не быть культурным человеком. Эту мысль он постоянно внушал и своим подчиненным. Откуда же бралось на все время? В.А.Айрапетяна всегда отличало стремление энергично и насыщенно жить, уменеие беречь время и изыскивать его резерв. Чувстсво времени вообще было в характере этого человека. Он не прощал себе ни одной потерянной минуты, добиваясь от подчиненных понимания сути и значения фактора времени в современной войне. Это чрезвычайно пригодилось потом не одной сотне его воспитанников и подчиненных.

Надо сказать прямо, работать с В.А. Айрапетяном было непросто. Сам, обладая широкими познаниями, он не терпел общих докладов и формулировок. Ответы на все поставленные вопросы требовал конкретные, предельно короткие и ясные. Туманных и неясных ответов он не признавал и если такие ответы были, не стесняясь, указывал на незнание дела докладывающему офицеру. Мне ни разу не довелось видеть, чтобы для этого он подыскивал какие—либо мягкие формулировки; и в тоже время, быть свидетелем того, чтобы он кого—либо унизил или оскорбил. Он мог прямо, без всякого стеснения указать офицеру на допущенные ошибки, но никогда в его словах не было ничего унизительного — только констатация факта.

Способность говорить с людьми честно и прямо, но корректно — особая отличительная черта В. А. Айрапетяна.

Длительное время работали с Владимиром Асатуровичом только те, кто безупречно знал свое дело, умело это дело организовывал и эффективно руководил им. Способных и умных людей он уважал, подчас не обращая внимания на их недостатки. Однако прямо скажу, немедленно вмешивался в любой процесс, если что—либо было не так. Если же он убеждался в неспсобности офецера руководить — времени на разговоры с ним не тратил, освобождая его от непосильной должности.

Пройдя путь от курсанта—артиллериста до командира артиллерийского полка, имея за плечами фундаментальное образование, блестящую подготовку и обладая широчайшим кругозором, В. А. Айрапетян представлял собой, к моменту назначения на должность начальника артиллерии дивизии, корпуса, во всех отношениях зрелого командира и специалиста—артиллериста.

В. А. Айрапетян всегда был суров, но добр душой; был строг, но всегда уравновешенным и сдержанным. Был скромен, поэтому и не любил фотографироваться. Очень уважал добросовестных под-

чиненных. В отношениях его с людьми главными были — уважение и еще раз уважение, сдержанность и еще раз сдержанность..

Офицерами обычно становятся, а он наверное, был рожден офицером ... Во всяком случае, ни в каком другом качестве представить его невозможно.

Служебный рост, становление, возмужание генерал—майора артиллерии В. А. Айрапетяна уже на оперативно—тактическом уровне совпадает с бурными событиями распада СССР.

Физиономисты и графологи берутся прочитать по лицу, глазам, почерку человека его характер, возможности и даже будущее ...

Перед моими глазами, из глубины 70—х предстает фигура невысокого, стройного, ладно скроенного военного офицера. С тонким интеллигентным лицом, твердым рисунком губ, подбородка — свидетельство незаурядной воли; с проницательным взглядом.

Он мог быть необыкновенно добрым, мечтательным, доброжелательным в кругу семьи, друзей, близких и соратников. Но судьба предопределила ему распоряжаться самым грозным и беспощадным к врагам оружием.

Заканчивая свой рассказ о В.А.Айрапетяне, я бы дал ему такую характеристику: всесторонне образованный, хорошо подготовленный офицер высшего командного состава, любящий свое дело и являющийся крупным специалистом в области артиллерии. Всюду под его командованием артиллерия действовала четко, согласованно, в полном соответствии с оперативными планами, решая поставленные задачи. В общении с подчиненными тактичный и требовательный, строгий и справедливый. С живым умом, твердой волей.

Хочу процитировать строки неизвестного поэта, которые посвящены таким офецерам, как В. А. Айрапетян.

*Есть в русском офицере обаяние*
*Увидишь, и ты готов за ним*
*На самое большое испытание идти*
*Сквозь бурю, сквозь огонь и дым*
*Он как мать —*
*И нет для тебя дороже*
*Его на этом жизненном пути*
*Он потому нам дорог, что может*
*Ведя на смерть, от смерти увести ...*

*генерал-майор К. Б. Вдовиченко*
*20. 01. 2007 г, Санкт-Петербург*



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍՊԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՆԵՐԱԼ– ՄԱՅՈՐ **ՍԵՐԳԵՅ ՍԱՀԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԲԱՆԱԿԻ ՀՐԹԻՌԱՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԴԻՐ–ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԳԵՆԵՐԱԼ– ՄԱՅՈՐ **ՎԼԱԴԻՄԻՐ ԱՄԱՏՈՒՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ** ԱՆՑԱԾ ՄԱՐՏԱԿԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՈՒՂԻՆ.

Ավելի քան 30 տարի ծառայելով Խորհրդային բանակում՝ Վ.Ա.Հայրապետյանը մեծ գիտելիքներ և փորձ է ձեռք բերել հրթիռահրետանային զորամիավորումների ձևավորման և կայացման գործում: Նա ծառայության ընթացքում աճել է ըստ զբաղեցրած հրամանատարական պաշտոնների և դասակի հրամանատարից լեյտենանտի կոչմամբ հասել գնդապետի կոչման, ստանձնելով զինվորական կորպուսի հրթիռահրետանային զորամիավորման հրամանատարի պաշտոնը:

Զինվորական ծառայության նկատմամբ հանդես բերած բարեխղճության և օրինակելի ծառայության համար նա բազմիցս խրախուսվել է վերադաս հրամանատարության կողմից և արժանացել է կառավարական մի շարք պարգևների:

Ռուսական բանակի հրամանատարությունը, հարգելով գնդապետ Վ. Հայրապետյանի խնդրանքը, 1992 թվականի մայիս ամսին նրան գործուղել է Հայաստանի նորաստեղծ ազգային բանակում իր ծառայությունը շարունակելու, որտեղ նա, ստանձնելով հրթիռահրետանային զորքերի հրամանատարի պաշտոնը, իրեն դրսևորում է որպես հրամանատարական գիտելիքներով օժտված անհատականություն և կազմակերպչական մեծածավալ գործունեություն իրականացնում hանուն հայկական հրթիռահրետանային զորամիավորումների հիմնադրման: Ներկայումս նա ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի անդամ է:

Պատերազմի ծանր օրերին՝ 1992թ. հուլիսին, Վ.Հայրապետյանը հայտարարեց, որ միայն պաշտպանությամբ ադրբեջանական զինված զորամասերին հաղթելն անհնար է, և անհրաժեշտ է նախապատրաստել զորամիավորումները հակահարձակման անցնելու: Վ.Հայրապետյանը մեծ աշխատանք տարավ ենթակա անձնակազմի շրջանում՝ նախապատրաստելով նրանց հակառակորդի կրակային խոցման համար, տակտիկական որոշակի միջոցներ ձեռնարկեց և պաշտպանության դիրքերից ջախջախիչ կրակի կիրառմամբ ոչնչացրեց հակառակորդի ամրաշինական կարևոր կառույցները՝ հրետակրակային պատնեշ ստեղծելով հայկական կամավորականների և զորամիավորումների հաղթական առաջընթացի համար:

Հրթիռահրետանային զորամիավորումները խորապես գիտակցում էին, որ հայկական գրոհող կողմի խափանիչ կրակը, հակառակորդի ճակատի առջև ստեղծելով համատարած ծածկոց, ապահովում է կամավորականների և երկրապահների առաջխաղացումը, որը մեծ երաշխիք էր ադրբեջանցիների կողմից գրաված տարածքների ազատագրման առաջադրանքը իրականացնելու համար:

Պատերազմի այդ ժամանակահատվածում հակառակորդի ճշգրիտ զենքերի համակարգերի՝ հրետանու, տանկերի, հետևակի մարտական մեքենաների և այլ ռազմամիջոցների կասեցումը հայկական հրետանավորների կողմից ապահովեց թշնամու խուճապահար նահանջը և պարտությունը:

1994 թվականին գնդապետ Վ.Հայրապետյանին շնորհվեց գեներալ–մայորի կոչում:

Գեներալը, մեծ ոգևորությամբ տարիներ շարունակ ղեկավարելով հրթիռային և հրետանու զորամիավորումների գործունեությունը, իր ձեռք բերած փորձը, գիտելիքները, ունակությունները և հմտությունները ներդրեց հրթիռահրետանային զորամիավորումների անձնակազմի դաստիարակության գործում, ու կարճ ժամանակահատվածում հրթիռահրետանային զորամասերը պատնեշ դարձան թշնամու համար, ապահովեցին վերջնական հաղթանակը ադրբեջանահիսլամական ռազմական գրոհային զորամիավորումների վերջնական ջախջախման համար:

Գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը 1994–96թթ. ընթացքում բացառիկ ակտիվ մասնակցություն ունեցավ նորաստեղծ բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանում հրթիռահրետանային ամբիոնի հիմնադրման, կահավորման և ռազմատեխնիկական ապահովվածություն ստեղծելու գործում, որն ապահովեց երիտասարդ սպայական հրթիռահրետանային կադրերի պատրաստման առաջադրանքի իրականացումը տեղական ուժերով:

Գեներալ–մայոր Վ.Հայրապետյանին հարգում է Հայկական բանակի կամավորականների ու երկրապահների անձնակազմը: Նրա մոտ վառ կերպով են արտահայտված հայրենասիրությունը, պետականությունը, քաղաքացիությունը և հոգատարությունը անձնակազմի նկատմամբ: Վ.Հայրապետյանն իր օրինակելի ծառայության համար պարգևատրվել է խորհրդային և հայկական բանակի բազմաթիվ կառավարական պարգևներով:

Գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը իր կերպարով օրինակ է ծառայում ազգային բանակի ողջ անձնակազմի համար:

Փառք ու պատիվ հարգարժան գեներալ Հայրապետյանին:

*23. 02. 2007 թ., Երևան*

# ВОЕННЫЙ КОМИССАР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ГЕНЕРАЛ–МАЙОР АРТУР ТАДЕВОСОВИЧ АРУТЮНЯН

# ГЕНЕРАЛ–МАЙОР ВЛАДИМИР АСАТУРОВИЧ АЙРАПЕТЯН

(Из воспоминаний первого заместителя министра обороны Республики Армения генерал–майора Арутюняна Артура Тадевосовича)



Նկարում Գեներալ–մայորներ Արտյուշա Հարությունյան և Վլադիմիր Հայրապետյան, 28. 01. 2007 թ.

Являясь духовным потомком и достойным наследником легендарного Нжде, Владимир Асатурович может по праву гордиться своим зангезурским происхождением.

Он родился 25.06.1942г., в селе Шишкерт, Капанского района Армении. После окончния средней школы в г.Ереване, в 1961г. поступил и в 1964г. окончил с отличием Тбилисское артиллерийское училище и в 1972г. Военную артиллерийскую академию.

Широка и разнолика география его послужного списка. Это Тбилиси, Прикарпатье, Группа Советских войск в Германии, Ленинград, Дальный Восток, Камчатка, Чехословакия, Сибирь, Северный Кавказ, Армения. Занимая соответствующие офицерские

должности командира взвода, батареи, дивизиона, начальника штаба и командира артиллерийского полка, начальника ракетных войск и артиллерии армейского корпуса, прошел все ступени командирского становления от лейтенанта до полковника.

За простым перечислением должностей и мест, где пришлось служить Владимиру Асатуровичу, лежит сложный воинский путь по приобретению большого опыта, знаний и навыков специалиста—артиллериста, так оказавщихся незаменимым подспорьем при добровольном поступленни на службу в вооруженные силы Республики Армения с июня 1992г. в только что зарождавшуюся молодую национальную армию независимой Республики Армения.

По прибытии в Армению полковник Айрапетян В.А. был назначен на должность начальника управления ракетных войск и артиллерии министерства обороны Республики Армения и незамедлительно включился в работу по созданию структур артиллерийских частей и подразделений, их специальной подготовки по ведению и управлению артиллерийским огнем в ходе постоянно надвигающейся и ощущаемой опасности со стороны наших противников. Как артиллерист Владимир Асатурович подготовлен отлично и высоко профессионален, владея мастерски основными прицилами огневой подготовки, огневой поддержки и отражения атаки, боевыми навыками в управлении огнем большинства видов и типов артиллерийского вооружения явился ведущим специалистом по созданию целостной структуры артиллерии в наших вооруженных силах.

Владимиру Асатуровичу принадлежит особая роль в организации боевого применения ракетных войск и артиллерии в ходе Арцахской войны, в дальнейшем функционировании управления ракетных войск и артиллерии министерства обороны Республики Армения, у истоков которой стоял он лично и принимал непосредственное участие в совершенствовании структуры артиллерийских полков, отдельных артиллерийских дивизионов, подразделений и всей стройной системы боевой подготовки артиллерии наших вооруженных сил.

Полковник Айрапетян В.А. принимал активное участие в боевых действиях за Лачинский коридор, где и был ранен 08.10.1992г. Особо ярко были проявлены его заслуги в непосредственном участии во 2—ой Кельбаджарской операции с 01.01.1994г. по 18.02.1994г., после которой Омарский горный перевал уже стал контролироваться нашими войсками.

Учитывая личные заслуги полковника Айрапетяна В.А. в организации защиты границ Республики Армения и НКР по представлению министра обороны Республики Армения Указом Президента Республики Армения N 296 от 28.05.1994г. ему было присвоено воинское звание “генерал—майор”.

И после подписания Бишкекского соглашения о перемирии наши вооруженные силы, в том числе ракетные войска и артиллерия продолжали совершенствовать свое боевое мастерство, повышая свою боевую и мобилизационную готовность.

Управлением ракетных войск и артиллерии министерства обороны Республики Армения Владимир Асатурович руководил свыше 11—и лет. Наши артиллеристы ведомые генерал—майором Айрапетяном достигли значительных успехов в боевой и специальной подготовке, овладели принципами и способами наиболее эффективного использования огневой мощи артиллерии в бою, добились отличных результатов на практических боевых стрельбах, полевых выходах и лагерных сборах и все это благодаря организаторским способностям, истинному проффесионализму и глубоким знаниям своего любимого дела — генерал—майора Айрапетяна В.А.

Характеризуя Владимира Асатуровича, о нем можно говорить только тепло и уважительно как о настоящем офицере, наделенного чувством высокой ответственности за порученное дело. Мне, в те суровые и судьбоносные годы для Республики Армения и НКР, будучи первым заместителем министра обороны Республики Армения не раз приходилось наблюдать за Владимиром Асатуровичем и воочию видеть его богатые человеческие качества, высокий военный профессионализм в боевой обстановке, при подготовке и проведении ряда боевых операций, организации боевого взаимодействия артиллерии и мотострелков в условиях непосредственного соприкосновения с противником.

Владимир Асатурович, являет собой пример исключительно честного, добросовестного и интеллигентного офицера, обладающего поистине высокими душевными качествами, присущие лишь настоящим патриотам своего отечества. Будучи всегда отзывчивым, постоянно приходящим на помощь и сейчас являясь образцом доброты и заботы как о здравствующих, так и в отношении членов семей погибщих товарищей и сослуживцев.

Являясь сыном офицера, погибщего в 1941г. в Словакии при освобождении населенного пункта Куцаны, Владимир Асатурович че-

рез всю свою сознательную жизнь пронес незабвенную память о своем отце, героически павшем за победу над фашизмом. И долгие годы поисков увенчались успехом, когда в 1987 году он побывал на могиле отца — лейтенанта Айрапетяна Асатура Джангировича, на кладбище военного захоронения в г.Михаловце (Славакия) и установил там скромный памятник, исполнив свой сыновний долг.

Родина высоко оценила заслуги генерал—майора Айрапетяна В.А. Он награжден орденами "Боевого креста" 2—ой степени, "Вардана Мамиконяна", "За службу Родине" 3—ей степени, медалями "За безупречную службу в ВС" всех 3—х степеней, "За Храбрость", имени Баграмяна, Андраника Озаняна, Гарегина Нжде, Драстамата Канаяна, маршала Г. Жукова и многими юбилейными медалями.

*Ереван, 28. 01. 2007 г.*



ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ **ԷՆՐԻԿՈ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՊՐԻԱՄՈՎ**
ՀՐԵՏԱՆԱՎՈՐ, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Ծանոթացել եմ գեներալ-մայոր Վ.Հայրապետյանի հետ 1992 թվականի հուլիսի վերջին, երբ ես կամավոր տեղափոխվեցի ռուսական բանակից Հայկական բանակ, և նրա միջնորդությամբ շուտով ինձ նշանակեցին Գյումրիի հակատանկային հրետանային գնդի հրամանատար: Այդ ժամանակ նա արդեն զբաղեցնում էր նորաստեղծ Հայկական բանակի հրթիռահրետանային զորքերի վարչության պետի պաշտոնը:

Այդ դժվարին ժամանակահատվածում նա մեծ լումա է ներդրել Հայկական բանակի ստեղծման գործում, հատկապես նրա հրետանային զորամասերի և ստորաբաժանումների կազմավորման գործում:

Արցախյան պատերազմին ակտիվ մասնակցած գնդապետը 1992թ. հոկտեմբերին Լաչինի պաշտպանական մարտերում վիրավորվում է, Գորիսում ստանալով համապատասխան բուժօգնություն՝ նորից վերադառնում է կրակային դիրքեր:

1992 թ. դեկտեմբերին գնդապետ Վ.Հայրապետյանի կողմից ստացա հանձնարարական՝ մի քանի հակատանկային ստորաբաժանումների հետ մեկնել Կապան և մասնակցել տարածաշրջանի մարտական գործողություն-

ների ու կանխել թշնամու առաջխաղացումը: Մարտական առաջադրանքը կատարվեց նորաստեղծ զորամասի անձնակազմի ցուցաբերած սխրանքի շնորհիվ: Հակատանկայինները աչքի ընկան իրենց բարձր մարտունակությամբ և ոչնչացրին 35-ից ավելի թշնամու տանկեր և մարտական մեքենաներ: Դա արդյունք էր այն քրտնաջան աշխատանքի, որը կատարվեց մեր հակատանկային գնդում Վլադիմիր Հայրապետյանի մասնակցությամբ: Նա մեծ տեղ էր տալիս հակատանկային գնդի անձնակազմի և նրա հակատանկային միջոցների նախապատրաստական աշխատանքներին, ուսուցմանը, տակտիկական գործողություններին, մարտական կիրառմանը:

Չնայած գնդի սպառազինության բարդ կառուցվածքին, որն անհնարին էր դարձնում նրա անմիջական մարտական կիրառումը մարտի դաշտում՝ 1992 թվականին դեռևս չպատրաստված անձնակազմով, այնուամենայնիվ, գնդապետ Վ. Հայրապետյանին հաջողվեց գտնել համապատասխան մասնագետներ, նույն թվում՝ նաև գնդապետ Մարատ Ղարիբյանին, և իր ակտիվ մասնակցությամբ գնդում կարճ ժամանակամիջոցում պատրաստվեցին համապատասխան մասնագետներ, և մարտական վիճակի բերվեց գնդի բազմազան և հզոր հակատանկային սպառազինությունը՝ հրանոթները, «Ֆագոտ» և «Շտուրմ» հակատանկային կոմպլեքսները և այլ տեսակի զենքեր ու սարքավորումներ, կապի միջոցներ:

1993 թ. ապրիլին Կապանի շրջանի Շիկահող, Սրաշեն, Հանդ և Ծավ գյուղերի ճակատային մարտական դիրքերում հանդիպեցի գնդապետ Վ.Հայրապետյանի հետ, զեկուցեցի տարածաշրջանի պաշտպանության մասին և նրա անմիջական մասնակցությամբ ավելի ամրապնդվեցին մեր դիրքերը, և հրետանու ստորաբաժանումները, կարգավորվեցին հրետանու դիրքավորման և նրա մարտական կրակի ղեկավարման խնդիրները, հրետանու զինամթերքի համալրումը, կապի նոր միջոցների բավարարումը և այլ հարցեր: Վլադիմիր Հայրապետյանը ակտիվ մասնակցություն ունի մարտական գործողություններին նաև Արցախում, Քելբաջարում, Տավուշում և ռազմաճակատի այլ հատվածներում, մեծ աշխատանք է կատարել հրթիռահրետանային զորքերի համալրման գործում, հատկապես պատրաստված հրետանավոր սպաներով, անձամբ էր կատարում նրանց ընտրությունը՝ համապատասխան պաշտոնները համալրելու համար, մեծ եռանդով պատրաստում էր համապատասխան նյութատեխնիկական բազա՝ հրետանու կայացման համար, ներդնում իր բազմամյա փորձը և ակադեմիական գիտելիքները:

1994 թ. մայիսի 28-ին գնդապետ Վ.Հայրապետյանը Արցախյան պատերազմին իր անձնվիրաբար մասնակցության և կատարած մարտական սխրանքների համար արժանացավ «գեներալ-մայորի» բարձրաստիճան զինվորական կոչմանը: Նույն օրը ես ստացա հանրապետության նախագահից «Մարտական խաչ» շքանշանը, որին ես ներկայացված էի Վ.Հայրապետյա-

նի հոգատարությամբ: Նա միշտ էլ բարիդրացիական վերաբերմունք է ցուցաբերել սպաների և ամբողջ անձնակազմի նկատմամբ. արժանավորներին ներկայացնում էր հերթական կոչումների և պարգևատրման մարտական շքանշաններով ու մեդալներով: Նրան յուրահատուկ են բացարձակ ազնվությունը, բարձր մակարդակի զինվորական գիտելիքները, ուշադիր վերաբերմունքը ենթակաների նկատմամբ, վստահորեն է արտահայտում իր կարծիքը բոլոր պարագաներում:

Ամենուր ենթակա սպաները և պաշտպանության նախարարության ղեկավար կազմը նրա մասին խոսում են միայն լավ կողմից, որպես բարձր մակարդակի մարդու և զինվորական առումով պատրաստված կադրային գեներալի, ով իր ակտիվ մասնակցությամբ կայացրեց մեր բանակի հրթիռահրետանային զորքերը և իր ակտիվ մասնակցությամբ նպաստեց Հայոց բանակի կարևոր հաղթանակին:

*10. 01. 2007 թ.*



Մարտական ընկերներ. գեներալներ Լեոնիդ Մարտիրո-
սովը և Վլադիմիր Հայրապետյանը

# ЗАМЕСТИТЕЛЬ ГЛАВНОГО ВОЕННОГО ИНСПЕКТОРА — СОВЕТНИКА ПРЕЗИДЕНТА РА ГЕНЕРАЛ—МАЙОР Л. МАРТИРОСОВ

Владимир Асатурович Айрапетян — генерал—майор. Все, что можно сказать положительного о человеке, без колебания можно адресовать ему.

Прибыл Володя — так его зову как близкого мне товарища — с образованием министерства обороны Республики Армения, оставив службу в Советской Армии, в которой он прошел славный путь от командира взвода до начальника артиллерии армейского корпуса, окончив артиллерийское училище и Военно—артиллерийскую академию.

Формирование и становление артиллерии Вооруженных Сил Республики Армения заслуга Владимира Асатуровича. Он проделал очень большую работу, в ходе войны создал артиллерию, которая участвовала в боевых действиях и сам лично управлял артиллерией в самых сложных ситуациях боевых действий. Благодаря его настойчивости сохранилась БХВТ в г.Степанаване. После боевых

действий мне пришлось с ним работать по применению ракетных войск и артиллерии в различных операциях, где Володя показал себя как грамотный, высокоэрудированный генерал, знающий оперативное исскуство. Огромное значение придавал подготовке молодых офицеров артиллеристов. Сам лично подготовлен отлично, самый грамотный артиллерист в Вооруженных Силах Республики Армения.

Скромный, воспитанный генерал, почитающий старших и уважающий младших. Честь и хвала тебе, Володя!

*02. 03. 2007 г.*



## ՀՀ ՊՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍՊԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **ԱԼԻԿ ԳԵՂԱՄԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

### ՔԱՐԵՐԻ ԵՐԿԻՐ Է ԿՈՉՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մեր երկրում, որտեղ սարերի կատարները խոյանում են ամպերից վեր, Սյունյաց աշխարհն է, այդ աշխարհում է ծնվել ու ապրել Հայրենական մեծ պատերազմի մասնակից Ասատուր Հայրապետյանը՝ բազմավաստակ գեներալ Վլադիմիր Հայրապետյանի հայրը:

Ամառ էր, պայծառ ամառ … ավաղ դա 1941 թ–ի հունիսի 22–ն էր: Ինչպես ամբողջ հայությունը, այնպես էլ Սյունյաց հերոսները եղել են ու կան, ազնիվ են ու բարի, աշխարհ են եկել՝ մարդուն սիրելու, հայրենի օջախը շենացնելու, թշնամուց պաշտպանելու սրբազան մեր պապենական հողը:

Ապրում էին խաղաղ կյանքով, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Շատերը մեկնեցին ռազմաճակատ, որոնց մեջ էր նաև գեներալի հայրը՝ Ասատուրը՝ իր երկու եղբայրների՝ Շավարշի և Օնիկի հետ. նրանք կռվեցին հերոսաբար և անմահացան հայրենիքի համար, օտար հողում՝ չտեսնելով այլևս հայրենի օջախը:

Որդին՝ Վլադիմիրը, մեծացավ և գնաց հոր հետքերով՝ դարձավ զինվորա-

կան, ընտրեց հրետանավորի դժվարին և պատասխանատու մասնագիտությունը՝ գերազանց առաջադիմությամբ ավարտելով Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, այնուհետև Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիան՝ հասնելով կուրսանտից մինչև գեներալի արժանավոր և բարձր կոչմանը:

Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը, ունենալով բարձրագույն զինվորական կրթություն և լինելով հմուտ բազմակողմանի կարող զորահրամանատար, ծառայել է սովետական, այնուհետև ռուսական բանակում, ծառայել է շատ մարզերում, Հեռավոր Արևելքում, Գերմանիայում և Չեխոսլովակիայում:

Պատրաստել և դաստիարակել է բազմաթիվ զինվորներ և սպաներ՝ փոխանցելով նրանց իր փորձն ու գիտելիքները:

Վլադիմիր Հայրապետյանը եղել է ու կա որպես զինվորի հայր ու փայլուն, բազմակողմանի պատրաստված հրամանատար:

Հայրենիքը նորից վտանգի մեջ էր. Արցախն էր կանչում հայ զինվորին: Չքնաղ Զանգեզուրի բարի զավակը նույնպես վերադառնում է հայրենի Հայաստան, ծառայում ու կռվում է իր մարտական ընկերների հետ միասին, ղեկավարում նորաստեղծ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերի ստեղծման, նրանց կազմավորման, մարտական պատրաստման և կիրառման դժվարին ու պատասխանատու գործընթացները:

Սիրված ու հարգված հրետանավորը, մոռանալով իր անձը, պայքարում, կռվում և հաղթում է իր ազգի զինվորների հետ միասին՝ արժանանալով հայոց պետականության բարձրագույն պարգևների:

Վաստակաշատ հրամանատարը մինչև օրս էլ գործում և ապրում է Հայոց բանակի հոգսերով, մեր ազատ ու անկախ հայրենիքում:

Դե ի՛նչ, սիրելի՛ գեներալ, շնորհավորում եմ քո ծնունդը՝ 65–ամյակը, բարի մաղթանքներս քեզ, Աստված օրհնի քեզ և քո զավակներին, ապրի՛ր հույսով և հավատով, որ կգա մի օր, կտեսնենք մեր կորույսյալ Հայրենիքը միասնական, Արևմտահայաստանը՝ Վանն ու Բասենը, Սասունն ու Մուշը, Էրզրումն ու Սուրմալուն, Կարսն ու Անին ազատագրված:

Այսքանը. ջերմորեն բարի մաղթանքներով քո մարտական ընկեր, որը և անցել է նույն ճանապարհը քեզ հետ միասին:

*2007 թ., ք. Երևան*



## ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ **ՄԱՐՏԻՆ ՆԱԶԱՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հայկական բանակաշինության, ինչպես նաև հրթիռահրետանային զորքերի ստեղծման և կազմավորման գործում իր մեծ ներդրումն ունի ՀՀ պաշտպանության նախարարության հրթիռային զորքերի և հրետանու առաջին պետ գեներալ–մայոր Վլադիմիր Աստուրի Հայրապետյանը:

Գեներալ–մայոր Վ.Ա.Հայրապետյանի հետ ծանոթացել եմ 1992թ. աշնանը, (այն ժամանակ՝ գնդապետ) Գյումրի քաղաքում, երբ նա զբաղվում էր հրետանավորների հավաքագրմամբ: Ծանոթության հենց առաջին պահից Վ.Ա. Հայրապետյանը թողեց լուրջ մարդու, մեծ հայրենասերի և լավ մասնագետի տպավորություն, որն իր ապացույցները գտավ հետագա ծառայության ընթացքում: Շատ բանիմաց և աշխատասեր ղեկավար է գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը, սկսած գործը միշտ հասցնում է ավարտին, խստապահանջ է և արդարացի: Բոլորին սովորեցնում է իր անձնական օրինակով և արդյունքում այսօրվա Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանին է և հրետանավորները:

Այդ ժամանակ քիչ բան գիտեի նրա մասին, սակայն, տարիների ընթացքում շփվելով նրա հետ, ինձ պարզ դարձավ նրա էությունը՝ պրոֆեսիոնալ, արհեստավարժ հրետանավոր, անհրաժեշտ զինվորական գիտելիքների

տեր հրամանատար, Հայրենիքի պաշտպանության գործին նվիրյալ մի մարդ, որն ամեն ինչ անում էր՝ նոր կազմավորված հրետանու մարտական պատրաստությունը բարձր պահելու, մարտական առաջադրանքները պատվով կատարելու համար: Այս ամենի հետ միասին նա խիստ էր և պահանջկոտ իր ենթակաների նկատմամբ: Չէր հանդուրժում ոչ մի պատճառ առաջադրված խնդիրը չկատարելու և հետաձգելու նպատակով:

Որպես հրամանատար և ավագ պետ՝ նա հոգ էր տանում, որպեսզի իր ենթակաները ժամանակին պարգևատրվեն, ստանան հերթական և արտահերթ զինվորական կոչումները, խրախուսվեն, ստանան մասնագիտական կրթություն:

Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի առաջարկությամբ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի միջնորդությամբ 1992 թվականին բացվեցին հրետանավոր սպաների վերապատրաստման դասընթացները (Ջրվեժ), իսկ 1995 թվականին՝ առաջին ուսումնական հրետանային գունդը (Լուսակերտ): Նա առանձնահատուկ մոտեցում էր ցուցաբերում հրետանավոր մասնագետների պատրաստման գործին: Նրա օրոք հայ սպաները սկսեցին ուսանել Ռուսաստանի Դաշնության ռազմահրետանային ուսումնարաններում և ակադեմիաներում:

Ես առաջին հայ հրետանավորն եմ, որ նրա առաջարկությամբ ուսանել եմ Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիայում:

Մեծ է Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի ներդրումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հրետանու ստեղծման գործում: Արցախյան գոյամարտի առաջին իսկ օրերից նա ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Արցախի ազատագրման համար մղված մարտերում, ղեկավարել է հրետանու մարտական գործողությունները ու կրակը՝
(Լաչին 1992թ., Գորիս–Կուբաթլու, 1993թ. հունիս–օգոստոս, Քելբաջար, 1994թ. հունվար–մարտ և այլն): Նրա նախաձեռնությամբ ծանր հեռահար 2Ա36 «Գիացինտ» հրանոթները տեղաբաշխվեցին սահմանամերձ շրջաններում, և դրանց օգնությամբ պատասխան կրակ բացվեց հակառակորդի հրետանու կրակային դիրքերի, կենդանի ուժի և կրակային միջոցների կուտակումների վրա:

2003թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը զորացրվեց պահեստազոր: Այդ ժամանակ ես 4–րդ ԲԿ–ի հրամանատարն էի, և ինձ առաջարկվեց ընդունելու ՀՀ ՊՆ հրթիռային զորքերի և հրետանու պետի պաշտոնը: Ճանաչելով գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանին, տեսնելով նրա ներդրումները հրետանու կատարելագործման և զարգացման գործում՝ ինձ համար մեծ պատիվ էր նրա գործը շարունակելը: Այսպիսով՝ կարելի է ասել, որ ես ժառանգություն ստացա լավ պատրաստված և մարտունակ հրետանի:

*2007 թ., Երևան*



## ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՇՏԱԲԻ ՊԵՏ ԳՆԴԱՊԵՏ **ԱԼԲԵՐՏ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՐԴՈՅԱՆ**

Վլադիմիր Ասատուրի հետ իմ առաջին հանդիպումը կայացել է 1993 թվականի մայիսին Հրթիռային զորքերի և հրետանու վարչությունում: Դա այն ժամանակահատվածն էր, երբ նոր կազմավորված Հայկական բանակին հարկավոր էին գրագետ, բանիմաց, ռազմական գիտելիքներով հարուստ հրետանավոր սպաներ: Դժվարին տարիներ, պատերազմ, սահմանամերձ մարտեր, բարդ իրավիճակ, հրետանային սպառազինության և հրետանավոր մասնագետների մեծ պահանջարկ: Ինձ առաջարկվեց մայրաքաղաքային գնդում հրետանային դիվիզիոնի հրամանատարի պաշտոնը:

Այդ տարի՝ 1993 թ. օգոստոս ամսին, գունդը գործում էր Լաչինի միջանցքում: Ընթանում էին մարտեր. գլխավոր հարվածը սպասվում էր Կուբաթլուի ուղղությամբ: Ընդունելով պաշտոնը և անմիջապես մեկնելով մարտական դիրքեր՝ ինձ մոտ առաջացավ հետևյալ հարցը՝ նվազագույն քանակությամբ հրետանիով ինչպե՞ս կարող եմ կատարել հրետանու առջև դրված խնդիրը: Այդ օրերին ինձ տեղեկացրին, որ զանգահարել է հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետը: Հեռախոսային հարցազրույցն ընթանում էր ինչպես տետատետ խոսակցություն: Նա իր մտահոգությունն էր հայտնում ստեղծված իրավիճակի նկատմամբ, մասնագիտական խորհուրդներով

ոգեշնչում էր մեզ և դրանով իսկ ստիպում կայացնելու ճիշտ որոշում: Այդ մի զանգով ես հասկացա, որ ոչ մի դեպքում պետք չէ հիասթափվել, և հաղթանակը մերն է լինելու: Այդպես էլ եղավ:

Հաջորդ հանդիպումը կայացավ 1993թ.-վերջին 1994թ. սկզբին՝ Քելբաջարի մարտական գործողությունների ընթացքում: Սկզբունքային էր, յուրաքանչյուր հրանոթին մոտենում էր որպես մարդու, մասնագիտորեն, զրուցում էր յուրաքանչյուր զինվորի հետ, իմանում նրանց հուզող հարցերը, ոգեշնչում էր և միևնույն ժամանակ խստորեն պահանջում, որպեսզի նրանք ճիշտ ըմբռնեն իրենց մասնագիտությունը և ջանքեր չխնայեն ցանկացած բարդ իրավիճակից ելնելու միջոցներ գտնելու ողղությամբ: Բոլորը նրան հարգում և ընդունում էին:

Այդ ժամանակ ես տեսա մի մարդու, հրետանավորի, ով իր էությամբ, աշխատասիրությամբ և գիտելիքներով աննկարագրելի էներգիա էր հաղորդում, հավատ ներշնչում բանակաշինության և զինվորականի դժվարին ուղին ընտրած զինվորականներին:

Այդ ժամանակ քիչ բան գիտեի նրա մասին, սակայն տարիների ընթացքում շփվելով նրա հետ՝ ինձ պարզ դարձավ նրա էությունը՝ պրոֆեսիոնալ, արհեստավարժ հրետանավոր, անհրաժեշտ զինվորական գիտելիքների տեր հրամանատար, հայրենիքի պաշտպանության գործին նվիրյալ մի մարդ, ով ամեն ինչ անում էր նոր կազմավորված հրետանու մարտական պատրաստությունը բարձր պահելու, մարտական առաջադրանքները պատվով կատարելու համար: Այս ամենի հետ միասին նա խիստ էր և պահանջկոտ իր ենթակաների նկատմամբ: Չէր հանդուրժում առաջադրված խնդիրը չկատարելու կամ հետաձգելու ոչ մի պատճառաբանություն:

Նա առանձնահատուկ մոտեցում էր ցուցաբերում հրետանավոր մասնագետների պատրաստման գործին: Նրա առաջարկությամբ 1999 թ-ին բանակային կորպուսի հրետանու պետի պաշտոնից մեկնեցի Ռուսաստանի դաշնության ռազմահրետանային ակադեմիա, որն էլ ավարտելուց հետո՝ 2002 թ-ին, ինձ առաջարկվեց ընդունելու ՀՀ ՊՆ հրթիռային զորքերի և հրետանու շտաբի պետի պաշտոնը:

Ճանաչելով գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանին, տեսնելով նրա ներդրումները հրետանու կատարելագործման և զարգացման գործում՝ ինձ համար մեծ պատիվ էր ծառայել և աշխատել նրա հրամանատարության ներքո: Նա ինձ սովորեցրեց ղեկավար փաստաթղթերի հետ աշխատելու կարգը՝ ինչպես շունչ հաղորդել փաստաթղթի բովանդակությանը, որ դա ընթեռնելի և ընկալելի լինի բոլորին:

Չի կարելի չնշել, որ գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը Հայկական բանակին ժառանգություն է թողել լավ պատրաստված և մարտունակ հրետանի:

*06. 02. 2007 թ., Երևան*



## ՀՀ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ և ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, ՀՀ ՊՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍՊԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ **ՌԱՖԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Գեներալ–մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի այն բանիմաց զորահրամանատարներից է, որին ես ճանաչում եմ 1992 թվականից: Մինչ այդ նա փայլուն զինվորական ծառայություն էր կատարել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում, ավարտել Թբիլիսիի հրետանային բարձրագույն ուսումնարանը, ապա՝ Լենինգրադի հրետանային ակադեմիան: Խորհրդային բանակում ծառայելու տարիներին Վլադիմիր Ասատուրովիչը եղել է հրետանային դասակի, մարտկոցի, դիվիզիոնի, գնդի հրամանատար, լեյտենանտից հասել գնդապետի կոչման, Հայաստան գալուց առաջ վարել բանակային կորպուսի հրթիռահրետանային զորքերի պետի գեներալական պաշտոն: Նա այդ ընթացքում աչքի է ընկել հրետանային հրամանատարի մարտավարական բարձր ունակություններով ու գիտելիքներով, արժանացել կառավարական բազմաթիվ պարգևների: Լսելով Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի մասին՝ Վ.Ա. Հայրապետյանը առանց հապաղելու սրտի կանչով թողել է ռուսական բանակում վարած իր բարձր պաշտոնն ու

տար անկյունը, վերադարձել է Հայրենիք և զինվորագրվել նրա պաշտպանության սուրբ գործին: Նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար, երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանի հրամանով 1992թ. ամռան սկզբներին նշանակվեց Հայկական բանակի հրետանային–հրթիռային զորքերի առաջին պետ և հրետանավորի մասնագիտական երեսնամյա գիտելիքներն ու կարողությունները ի սպաս դրեց «պատերազմի աստված» հրետանու կազմավորմանը, հայկական առաջին հրետանային ստորաբաժանումների և զորամասերի կայացման գործընթացին:

Ադրբեջանական զավթիչների դեմ ռազմաճակատում տարած հաղթանակը զգալի չափով պայմանավորված էր հայ հրետանավորների խելացի և ճշգրիտ գործողություններով, որոնք գործում էին Վ.Ա.Հայրապետյանի ընդհանուր հրամանատարությամբ:

Ես՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանական և մարզատեխնիկական ընկերության խորհրդի, «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի, ՀՀ պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների միության նախագահ և բարձրագույն սպայական հանձնաժողովի նախագահի տեղակալ, բազմիցս եմ հանդիպել և աշխատել Վ.Ա.Հայրապետյանի հետ: Պատերազմում զինադադար կնքվելուց հետո Վ.Ա.Հայրապետյանը մինչև 2003 թվականի հոկտեմբերը խաղաղ պայմաններում գլխավորել է Հայկական բանակի հրթիռահրետանային զորքերը, դրանք դարձրել տարածաշրջանի ամենաահեղ զորատեսակներից մեկը: Հատկապես զինված ուժերի կազմավորման, թշնամու դեմ ռազմաճակատում տարած հաղթանակի և խաղաղ պայմաններում բանակաշինության ասպարեզում ունեցած ծառայությունների համար Վ.Ա.Հայրապետյանը պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, առաջինների թվում արժանացել է գեներալ–մայորի կոչման: Սկսած 2003 թվականի վերջերից մենք նրա հետ միասին ենք աշխատում Հայաստանի Հանրապետություն պաշտպանության նախարարության բարձրագույն սպայական հանձնաժողովում: Բացի այդ, գեներալ Վ.Ա.Հայրապետյանը Հայաստանի Հանրապետություն պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների միության նախագահության անդամ է: Նա ակտիվորեն մասնակցում է ինչպես պաշտպանության նախարարության, այնպես էլ վետերանների միության կողմից առաջադրված հանձնարարությունների կատարմանը, ինչպես նաև զորամասերում և ուսումնական տարբեր հաստատություններում զինծառայողների և ընդհանրապես մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության պետական և ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքներին:

Օգտվելով առիթից՝ ես շնորհավորում եմ իմ հայրենակից զորավարի ծննդյան 65–ամյակը, նրան մաղթում քաջառողջություն, երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք:

*Երևան, հունվար, 2007 թ.*



## ՀՀ ՊՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ **ՄՈՒՐԱԶ ՍԱՐՈՒԽԱՆԻ ՍԱՐԿԻՍՅԱՆ**

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՈՋՍ ՄԱՍԻՆ

Գեներալ–մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին ճանաչում եմ դեռևս 1962 թվականից: Մեր առաջին հանդիպումը Թբիլիսիի հրետանու ռազմական ուսումնարանում էր:

Ես առաջին կուրսի ուսանող էի: Դասամիջոցին ինձ է մոտենում երկրորդ կուրսի ուսանողներից մեկը և ասում, որ ինքն էլ է Ղափանից, ծնողները Շիշկերտ գյուղից են: Գեղեցիկ, ազնիվ դեմքով շիկահեր պատանի էր: Ուրախությանս չափ ու սահման չկար:

Հետո իմացա, որ Վոլոդյան ծնողներից շատ շուտ է զրկվել: Փոքր տարիքից նրա խնամքն իր ուսերին է առել Երևանում բնակվող հորաքույրը՝ Հայկանուշը: Նա էլ մեծացրել և կրթության էր տվել Վոլոդյային:

Թեև տարբեր կուրսերում էինք սովորում, բայց առաջին իսկ հանդիպումից ընդունեցինք ու սիրեցինք միմյանց: Մի ամուր ընկերության և բարեկամության սկիզբ դրվեց: Երևի որբ երեխաների ճակատագիրն է այդպիսին. նրանք միմյանց շուտ գտնում, լավ հասկանում ու ընկերանում են:

Վոլոդյայի հետ որոշեցինք հաջորդ տարի միասին արձակուրդ գալ Հայաստան: Այդպես էլ արեցինք: Երևանում ես ծանոթացա Վոլոդյայի հորաքրոջ և բարեկամների հետ: Նա հատուկ քնքշանք և հոգատարություն, որդիական սեր էր տածում իր հորաքրոջ հանդեպ:

Այնուհետև մեկնեցինք Կապան: Այցելեցինք և՛ իմ, և՛ իր հարազատներին: Անմոռանալի արձակուրդ անցկացրինք:

Համատեղ ուսանողական տարիներին ավելի մեծացավ մեր շփումը, և հանձին Վոլոդյայի ես համեստ ու նվիրված ընկեր գտա:

1964թ. Վոլոդյան՝ որպես հմուտ հրետանավոր, գերազանց ցուցանիշներով ավարտեց ռազմական ուսումնարանը, և մեր ճանապարհները ժամանակավորապես բաժանվեցին: Պարբերաբար հետաքրքրվում և տեղեկանում էինք իրարով, ուրախանում միմյանց հաջողություններով:

1992թ. ճակատագրի բերումով Վոլոդյային հանդիպեցի Երևանում: Չնայած պատերազմական տարիներին՝ երկուսս էլ անչափ ուրախ էինք իրար վերագտնելու համար: Որպես փաստակաշատ և հմուտ հրետանավոր՝ նա նշանակվեց նորաստեղծ բանակի հրետանու վարչության պետ:

Հայրենիքում նա ընդունվել էր որպես կայացած և փաստակաշատ մասնագետ: Իսկ Հայրենիքը այդ տարիներին ավելի քան զգում էր լավ մասնագետների կարիքը:

1992 թվականին, ելնելով Լաչինի միջանցքում առաջացած ծանր իրավիճակից, Վազգեն Սարգսյանը կանչեց ինձ իր մոտ և անհապաղ ուղարկեց Լաչին՝ այնտեղ կարգավորելու իրավիճակը: Ինձ հետ պետք է գար նաև Վլադիմիր Հայրապետյանը:

Սեպտեմբերի 18-ին Վոլոդյայի հետ դուրս եկանք Երևանից Լաչին: Ամբողջ գիշեր զրուցեցինք՝ հիշելով մեր համատեղ անցյալը և քննարկելով մեր առաջիկա խնդիրներն ու անելիքները:

Սկզբում Հայրապետյանը մնաց Գորիսում: Նա ստանձնեց ընդհանուր հրետանու ղեկավարությունը, որը շատ մեծ նշանակություն ուներ Լաչինի միջանցքի ազատագրման և պահպանման գործում:

Հրետանին տեղակայված էր Տեղ գյուղի մերձակայքում: Հոկտեմբերի 2-ին Վազգեն Սարգսյանը եկավ Լաչին: Ղեկավար կազմից նա միակն էր, որ այդ դաժան մարտերի ընթացքում այցելեց կռվի դաշտ: Լաչինը կիսաշրջապատված վիճակում էր: Հակառակորդը մեծաքանակ ուժեր էր հանել Լաչինի միջանցքը ետ գրավելու համար: Շրջվելով դեպի ինձ և գեներալ-լեյտենանտ Անդրեսյանը՝ Վազգեն Սարգսյանն ասաց. «Ի՞նչ է, Լաչինը պետք է հանձնե՞նք»: Մենք վճռականորեն ասացինք, որ ամեն ինչ կանենք Լաչինի միջանցքը մեր ձեռքին պահելու համար:

Ես ղեկավարում էի համազորային ուժերը: Ծանրաբեռնվածությունն այնքան մեծ էր, որ միայնակ չէի հասցնում կազմակերպել հակահարվածը. օգնություն էր անհրաժեշտ: Գոչազի և Կուբաթլուի ուղղություններով հրետանու կրակը կազմակերպելու համար ես խնդիր դրեցի, որ Հայրապետյանը իր դիտակետը Տեղ գյուղի մերձակայքից տեղափոխի Լաչին սար:

Վազգեն Սարգսյանի թույլտվությամբ Վլադիմիր Հայրապետյանն ուժեղացրեց հրետանու խմբավորումը Լաչինի ուղղությամբ: Հոկտեմբերի 8-ին սկսվեց վճռական մարտը:

Ցավոք, մարտի 2-րդ օրը Վ.Հայրապետյանը ձեռքից վիրավորվեց, բայց մնաց մարտի դաշտում:

Նվիրված ու պարտաճանաչ մարդ է Վլադիմիր Հայրապետյանը: Նա իր մեծ ավանդն ունի Հայկական բանակի հրթիռահրետանային զորքերի ու բանակաշինության, ուսումնական գնդի կայացման, ուսուցման, ռազմական

ինստիտուտի հրետանային ամբիոնի հրետանավորների պատրաստման գործում: Մարտական պատրաստության և հրետանու վարչությունների կազմակերպած համատեղ ստուգումների ժամանակ նա երբեք իրեն որպես ստուգող չէր պահում: Ելնելով իր բարի և ազնիվ խառնվածքից՝ նա մեծագույն սիրով սովորեցնում էր թե՛ սպաներին, թե՛ զինվորներին: Երբեք ժամանակը չէր խնայում իր գիտելիքները փոխանցելու համար:

Հերթական ստուգումներից մեկի ժամանակ հարավային զորամասերից մեկում ես տագնապով ոտքի հանեցի զորամասի հրետանային ստորաբաժանումները:

Առավոտյան հրետանավորները կազմ–պատրաստ էին: Այդ ամբողջ ընթացքում Վլադիմիր Հայրապետյանը ոչ թե ստուգողի, այլ ուսուցանողի դերում էր. ամբողջ գիշեր նա մասնակցել էր դիրքերի զբաղեցման, թիրախների տեղադրման և անձնակազմի պատրաստման աշխատանքներին:

Յուրաքանչյուր նորաստեղծ ստորաբաժանում և զորամաս ստեղծելիս Վ.Հայրապետյանն անմիջապես իր անմիջական մասնակցությունն ու օգնությունն էր ցուցաբերում:

Սպայական ուսումնական դասընթացներում նույնպես հրետանային ուսուցումը առանց Վ.Հայրապետյանի չէր ստացվում. նա ակտիվ մասնակցում էր այդ կարևոր գործընթացին:

Մենք երկուսս էլ հրետանավոր էինք: Քաջ գիտակցելով հրետանու և հրետանավորի արժեքը ամուր բանակի կայացման համար՝ հաճախ պատահում էր, որ միմյանց սխալներ և վրիպումներ էինք նկատում և շտկում:

Թեև ներկայումս Վլադիմիր Հայրապետյանը զորացրված է, սակայն նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բարձրագույն սպայական հանձնաժողովի կազմում զինվորականի խորը գիտելիքները օգտագործում է բանակաշինության գործի համար, նպաստում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության ամրապնդմանը:

Գեներալ Վլադիմիր Հայրապետյանը հրաշալի ընկերություն և բարեկամություն անել գիտի: Նա լավ ամուսին է և ընտանիքին նվիրված հայր:

Ուզում եմ անդրադառնալ նաև նրա մեծարգո կնոջը՝ տիկին Խաթունին: Նա Հայրապետյանի արժանի կեսն է և մարտական ընկերը: Խաթունի անսպառ բարության վառ վկայությունը այն չքնաղ ծաղիկներն են, որոնք նա աճեցնում է իր բնակարանում և այգում՝ իր տունը վերածելով դրախտային մի անկյանի:

Ամուր ընտանիք, հայրենանվեր գործունեություն և անշահախնդիր ընկերություն. սա է գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանի կյանքի բարոյական կոդեքսը (վարքականոնը):

*2007 թ., ք. Երևան*



## ПОЛКОВНИК **ЛЕВОН АРШАВИРОВИЧ МИКАЕЛЯН**

## ВОСПОМИНАНИЯ О МОЕМ ДРУГЕ, ГЕНЕРАЛ–МАЙОРЕ **АЙРАПЕТЯНЕ ВЛАДИМИРЕ АСАТУРОВИЧЕ**

Познакомился, я со своим другом Айрапетяном Владимиром Асатуровичем в 1961 году в середине сентября в Тбилийском артиллерийском училище. Почему в середине сентября месяца, так как уже шли занятия, когда я поступил в училище. Меня назначили в курсантский взвод, где учился Володя. Для меня это была большая поддержка, так как курсантский взвод был многонациональным, и тут один армянин, Володя Айрапетян.

Вначале я сомневался, что Володя армянин, так как был светловолосым парнем, больше похож на русского. Но когда он начал разговаривать, то акцент был чисто армянским. При этом он окончил армянскую школу и по русски разговаривал вначале плохо.

Я видел с каким усердием он учился. Вначале из—за слабого знания русского языка, ему было трудно, но в конце первого курса он в совершенстве стал владеть русским языком.

На втором и третьем курсе он был одним из лучших курсантов по успеваемости. Неоднократно Володю ставили в пример другим курсантам. По всем дисциплинам у него были отличные оценки. Окончил он училище с золотой медалью.

Мы с ним в ходе учебы с 1961 года по 1964 год были неразлучными друзьями. Когда в первый раз приехали в отпуск, я познакомил его с моими родителями. Он им тоже понравился.

В ходе учебы в училище было много курсантов из Армении, но с Володей у нас сложились братские отношения, которые продолжаются и до сегоднящего дня.

По окончании училища мы с ним разехались по разным военным округам. Но как Володя приезжал в Армению, всегда звонил моим родителям, интересовался о их здоровье и узнавал новости про меня. Через родителей мы с ним и поддерживали связь.

Встретились мы в 1970 году в Ленинграде, в артиллерийской академии. Теперь город называется Санкт—Петербург. Я поступил в 1970 году в академию. Случайно во время перерыва между занятиями мы встретились в коридоре. Какая эта была радость для нас обоих. Володя уже учился на четвертом курсе, я на первом. Он пригласил к себе домой, где и познакомил со своей супругой. Мне она понравилась, настоящая армянская девушка, жена.

В течении учебного года мы поддерживали хорошие, дружеские отношения. Окончив учебу Володя уехал служить в Белорусский Военный округ, г. Осиповичи командиром пушечного артиллерийского дивизиона. По окончании учебы в академии в 1974 году. я получаю назначение в Белорусский Военный округ, г. Осиповичи в пушечный артиллерийский полк. В дивизион который командовал Володя Айрапетян. Он в это время был направлен для прохождения дальнейшей службы в Дальневосточный Военный округ. Встретились мы случайно в 1986 году в Северно—Кавказком Военном округе на полигоне Молкино Краснодарского края.

Володя был уже полковником — начальником штаба артиллерии корпуса. Я в это время служил начальником цикла на военной кафедре в Северно—Осетинском Государственном унверситете в г. Владикавказе. Вместе с артиллерийским полком со студентами университета приехали на лагерные сборы в учебный центр Молкино Краснодарского края.

В течении нескольких часов мы рассказали каждый о своей жизни, службы и попращались. Володя, через моих родителей был всегда в курсе, где я нахажусь.

Когда развалилось такое мощное государство, как Советский Союз, то в Армении начали создавать свои Вооруженные Силы. Когда, я в 1992 году в августе приехал в отпуск к родителям в г. Ереван, то родители говорят, что звонил Володя, интересовался, где я и просил, как приеду, чтобы срочно ему позвонил.

Я ему позвонил, выяснил, что он назначен начальником артиллерии Вооруженных Сил Армении. Мы встретились, рассказали друг другу о службе. Я ждал приказа об увольнении из Вооруженных Сил Российской Федерации.

Володя встречался с офицерами—артиллеристами и приглашал на службу как в управлении артиллерии, так и в войска. Лично меня он попросил, как уволюсь, так сразу и приехать. Я ему пообещал. 4 января 1993 года согласно приказа я уволился. В течение месяца получил паспорт, оформил пенсию и 16 февраля приехал в г.Ереван. Встретился с Володией, он предложил мне должность начальника штаба управления артиллерии Минстерства Обороны. Бывший начальник штаба Татинцян попал в автомобильную катастрофу и погиб. 22 февраля 1993 года приказом Министра Обороны Армении, я был назначен начальником штаба управления артиллерии. Работа была очень ответственная, интересная, напряженная, на границах не все было спокойно.

Вместе с Владимиром Асатуровичом необхоидимо было создать в управлении несколько отделов, в войсковых частях нехватало офицеров—артиллеристов.

Владимир Асатурович обладал огромной энергией, работал в военкоматах, на военных кафедрах в поисках офицеров—артиллеристов.

Некоторые офицеры—артиллеристы служили не по своей специальности, то есть в мотостерлковых частях или в военкоматах. Ему приходилось убеждать военкомов, командиров частей, чтобы они соглашались о переводе офицеров на должность офицеров—артиллеристов.

В ходе боевых действий Владимир Асатурович проявил мужество, храбрость и своим примером, своим знанием дела вдохновлял личный состав артиллерии. Боевые задачи, которые ставились перед артиллерийским частями и подразделениями по защите нашей Родины личный состав выполнил успешно.

Личный состав артиллерийских частей и подразделений гордились своим начальником артиллерии вооруженных сил. Благодаря Владимиру Асатуровичу создавалиь новые артиллерийские части и

подразделения. Много внимания он уделял ремонту артиллерийского вооружения. Лично выяснял причину неисправностей и требовал от ремонтных органов об их устранении. Нехватало артиллерийских приборов, боеприпасов. Необходимо было эти вопросы решать в кратчайшие сроки. Обладая большой работоспсобностью, он это решал.

Владимиру Асатуровичу в 1994 году было присвоено очередное воинское звание генерал—майор.

Это было большой радостью для всего личного состава артиллерии, для его родных и друзей. Правительство оценило его заслуги перед Родиной.

Сколько мы вместе служули, то есть с 1993 года по 2001 год, я видел как он переживает за свое дело, за артиллерию, за его боеготовность. Когда на границах стало более спокойно, он убедил бывшего Министра обороны Вазгена Саргсяна выводить артиллерийские части и подразделения на полигон, то есть в лагеря, зимой и летом. Повысилась полевая выучка артиллерийских частей и подразделений.

На учениях с мотостерлковыми частями с боевой стрельбой артиллерия показывала отличные и хорошие результаты. При посещении лагерного сбора Министр Обороны был очень доволен и поставил задачу ежегодно зимой и летом, несмотря ни на какие трудности выводить артиллерию на полигон и заниматься практически боевой стрельбой. Так, благодаря генералу Айрапетяну эти мероприятия проводятся ежегодно до сегодняшего дня.

Когда создавался многопрофильный военный институт в Армении, Владимир Асатурович был руководителем по созданию артиллерийской военной кафедри. Под его руководством был создан штат кафедры, сколько, каких циклов должно быть на кафедре. Был назначен начальник кафедры, назначены преподаватели. Была создана материально—техническая база на кафедре.

Начальник артиллерии министерства обороны и офицеры управления артиллерии первоначально проводили занятия в институте.

Неоднократно под руководством Владимира Асатуровича, управление артиллерии, артиллерийские части и подразделения участвовали на совместных учениях с Российскими войсками, где офицеры—артиллеристы армянских Вооруженных Сил показывали хорошие знания.

В конце своих воспоминаний хочу передать, что у него хорошая, большая семья. Имеет хорошую супругу, сына, дочь и внуков,

которые гордятся Владимиром Асатуровичом. Он очень внимательный, чуткий товарищ, друг. Друзей он не забывает.Я прослужил с Владимиром Асатуровичом до апреля 2001 года и уехал в Россию в г. Санк—Петербург к семье, но до сих пор поддерживаю с ним хорошие отношения. Как бывает возможность приехать на Родину, так меня обязательно встречает Владимир Асатурович и уделяет мне много внимания, несмотря на свою занятость.

Я горжусь тем, что судьба свела меня с ним в 1961 году и до сегодняшего дня мы с ним дружим и поддерживаем связь.

*С уважением полковник в отставке Л. Микаелян*
*20. 01. 2007 г. Санкт—Петербург*



## ՊԱՀԵՍՏԻ ԳՆԴԱՊԵՏ **ՄԱՐԱՏ ՍԵՄՅՈՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ**

Ես Վլադիմիր Հայրապետյանի հետ ծանոթացել եմ 1992թ. հուլիս ամսին պաշտպանության նախարարի աշխատասենյակում: Այդ օրերին ես Ստեփանակերտում կազմակերպում էի հակատանկային դիվիզիոն «Ֆագոտ» տիպի կառավարվող համակարգերի կիրառմամբ: Նոր առաջադրանքներ տալու համար ինձ Ստեփանակերտից կանչեց պաշտպանության նախարարը և իր աշխատասենյակում ծանոթացրեց Վլադիմիր Հայրապետյանի հետ՝ ասելով.

—Մեր բանակի հրետանու պետն է, կաշխատես Հայրապետյանի հետ և բոլոր հարցերով կդիմես նրան: Այդ ժամանակ ես զինվորական ծառայության մեջ չէի, բանակում պաշտոն չէի զբաղեցնում, աշխատում էի «Աստղ» գիտաարտադրական միավորումում՝ որպես հատուկ տեխնիկայի գլխավոր կոնստրուկտոր, իսկ բանակում ինձ համարում էին հակատանկային կառավարվող համակարգերի, օպտիկական և օպտոէլեկտրոնիկական սարքերի գլխավոր մասնագետ:

1992թ. հուլիսից մինչև 2003 թվականը ես Վլադիմիր Հայրապետյանի հետ աշխատեցի կողք կողքի, իսկ 1999թ. նշանակվեցի նրա տեղակալը սպառազինության գծով:

Վլադիմիր Հայրապետյանը հայազգի բարձրաստիճան զինվորականներից առաջինն էր, ով, ծառայելով ռուսական բանակում, զբաղեցնելով բավականին բարձր պաշտոն, Հայրենիքի վտանգը զգալով, նրա ճակատագիրն իր

անձնական ճակատագիրը համարելով, զեկուցագիր գրեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին՝ խնդրելով իրեն տեղափոխել այդ ժամանակ նոր կազմավորվող Հայկական բանակ և Հայրենիքի համար այդ ծանր ու վճռական պահերին Հայկական բանակում ստեղծեց հրետանի, գլխավորեց այն և հասավ հաղթանակի:

Վլադիմիր Հայրապետյանի ծառայությունները շատ մեծ են Հայրենիքի առաջ: Հայաստանի Հանրապետության բանակաշինության մեջ Վլադիմիր Հայրապետյանի ներդրումն ակնհայտ է: Նրա բարձր պրոֆեսիոնալիզմի, գիտելիքների, կազմակերպչական բարձր ունակության շնորհիվ Հայկական բանակում ստեղծվեց հզոր հրետանի:

Աշխատանքի բերումով ես հաճախ եմ աշխատում տարբեր երկրների բանակներում՝ որպես տեխնիկայի մասնագետ: Մաքուր խղճով կարող եմ ասել, որ այնպիսի հրետանի, ինչպիսին Հայկական բանակի հրետանին է, ոչ մի պետություն չունի: Այդ ամենը Վլադիմիր Հայրապետյանի տքնաջան աշխատանքի արդյունքն է:

Սովետական Միության ժամանակ Հայաստանում կար հրթիռային բրիգադ: 1992 թվականին, երբ այդ բրիգադը հանձնեցին Հայկական բանակին, մեր շատ զինվորականներ չգիտեին այդ տեխնիկայի նշանակությունն ու կարևորությունը: Արդեն պատրաստել էին պաշտպանության նախարարի հրամանը բրիգադի տեխնիկան տարբեր զորամասեր բաժանելու համար, սակայն Վլադիմիր Հայրապետյանը, ով բազմիցս բացատրեց պաշտպանության նախարարին բրիգադի և տեխնիկայի կարևորության մասին, պայքարեց շատերի դեմ, մինչև հասավ այն բանին, որ բրիգադը և տեխնիկան չլուծարվեցին:

Բրիգադը վերածվեց հրթիռային գնդի և այսօր Հայաստանի Հանրապետության լավագույն զորամասերից մեկն է, որը դարձել է հակառակորդի համար զսպաշապիկ:

Վլադիմիր Հայրապետյանն իր ամբողջ էությամբ պրոֆեսիոնալ զինվորական է: Նա սկսել է ռազմական ուսումնարանի կուրսանտից, զբաղեցրել բոլոր զինվորական պաշտոնները՝ սկսած դասակի հրամանատարից մինչև հանրապետության հրթիռահրետանային զորքերի պետի պաշտոնը: Նրա հետ աշխատելը շատ հեշտ էր, շատ շուտ ըմբռնում էր դրված խնդիրը և կայացնում ճիշտ որոշումներ:

Վլադիմիր Հայրապետյանը շատ մեծ նշանակություն էր տալիս Հայկական բանակում նոր տեխնիկայի ներդրմանը, անձամբ ղեկավարում էր փորձարկումները և աջակցում նրանց կիրառմանը:

Վլադիմիր Հայրապետյանին՝ որպես բարձր մակարդակի հրետանավորի, շատ բարձր էր գնահատում գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը: Գեներալ Հայրապետյանը շատ մեծ հարգանք էր վայելում նաև գենե-

րալ լեյտենանտներ Նորատ Տեր–Գրիգորյանցի, Հրաչ Անդրեսյանի և Անատոլի Զինևիչի մոտ:

Ես միգուցե չկարողացա լիարժեք նկարագրել իմ ավագ ընկերոջ՝ մեծ հայրենասերի, լավ մարդու, բարձր մակարդակի հրետանավորի, ընտանիքի լավ ամուսնու, լավ հոր, լավ պապիկի արժանիքները ...

Անձամբ ես շատ բան սովորեցի գեներալ Հայրապետյանից և ուրախ եմ, որ 1992 թվականին ծանոթացա, աշխատեցի գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանի հետ:

Նա շատ լավ տեղեկացված էր այդ ժամանակվա ռազմական նորագույն տեխնիկայից և ցանկանում էր ամեն գնով ձեռք բերել և ներդնել մեր բանակում: Վլադիմիր Հայրապետյանի շնորհիվ այսօր մենք բանակում ունենք այնպիսի ռազմական տեխնիկական միջոցներ, որոնցից չունեն մեր հարևան պետությունները:

*2007 թ. Երևան*

# СТАРШИЙ ИНСПЕКТОР ГЛАВНОЙ ВОЕННОЙ ИНСПЕКЦИИ РА ПОЛКОВНИК **НЕРСЕС МУРАДЯН**



Մարտական ընկերների հանդիպումը. երկրորդ շարքի կենտրոնում գնդապետ Ներսես Սերգեյի Մուրադյանը, 2006 թ.

Наша встреча с Владимиром Асатуровичем состоялась в 1961 году. Мы поступили в Тбилисское артиллерийское училище. Он вступительные экзамены сдал отлично, началась наша учеба. С первых же дней учебы Володя показал себя грамотным, упорным, усидчивым курсантом, он много обращал внимание военным предметам, особенно артстрелковой подготовке и материальной части артиллерии. За хорошую и отличную учебу он неоднократно награждался грамотами и значком классного специалиста, а на 3—ем курсе Володя был назначен помощником преподавателя — инструктором по стрельбе артиллерии (назначались отличные курсанты). По окончании артиллерийского училища (Володя его окончил с отличием) он был назначен командиром взвода в войска. Наши пути на этом разошлись. Повторная наша встреча состоялась в августе 1992г. в министерстве обороны Республики Армения. Я тогда был в запасе и преподавал военное дело в одной из школ г. Еревана. Владимир Асатурович (тогда он был в звании полковника) по призыву Президента Республики Армения Левона Тер—Петросяна по собственному желанию был переведен на служ-

бу в управление артиллерии вооруженных сил Республики Армения. Я дал согласие и 25 августа был приглашен в министерство обороны и назначен на должность начальника оперативного отдела управления артиллерии — по представлению В.Айрапетяна.

Служба в управлении была очень напряженной и интересной. Владимир Асатурович постепенно укомплектовал управление. Ко дню моего прихода в управлении артиллерии служили — начальник штаба артиллерии полковник Татинцян Арно, офицер отдела майор Григорян Меналав. Владимир Асатурович к этому времени имел большой послужной список, опыт работы и службы, прошел должности от командира взвода до начальника артиллерии армейского корпуса, так что ему легко удавалось организовать боевую работу управления артиллерии.

Сложность заключалась в том, что не хватало кадров—артиллеристов, необходимо было с нуля создавать артиллерийские части и подразделения, укомплектовать управление артиллерии, одновременно необходимо было вести боевые действия (стрельбу) артиллерии в приграничных районах.

Одной из главных задач Владимир Асатурович считал прием артиллерийских частей от бывшей 7 гвардейской армии ЗакВо; он сам лично принимал участие в приеме вооружения и техники артиллерийских частей Российской Федерации.

В это время шло формирование артиллерийских частей и подразделений министерства обороны. Мы имели небольшое количество офицеров—артиллеристов, окончивших в советское время ВУЗ—ы артиллерии, но переведенные в систему военкоматов Армении. Владимир Асатурович изучал их, приглашал на беседу, и через министерства обороны добивался их перевода в управление артиллерии, артиллерийские части и подразделения (полковники Давтян А., Манукян Т., Аракелов Г., Багдасарян А., Гарегинян Размик, ныне генерал—майор Карапетян М., полковники Григорян С., Мхитарян В., Мхитарян Р., Магавузян Р., подполковник Арутюнян З.). По приглашению Президента Республики Армения из рядов Советской армии перевелись в вооруженные силы Республики Армения офицеры Э.Априамов, М.Григорян, К.Симонян и многие другие. Пополнили ряды артиллерии вооруженных сил офицеры запаса — военруки, преподаватели военных кафедр, офицеры—двухгодичники, специалисты градобойной артиллерии — все, кто мог воевать, управлять огнем взвода, батареи. Конечно, легко писать об этом сейчас, но эта титаническая работа проводилась под постоянным контролем начальника артиллерии вооруженных сил.

В конце 1992 года создавались краткие курсы по подготовке офицеров—корректировщиков артиллерийского огня, отбор проводилось из офицеров запаса.

По личному предложению и настаиваниию начальника артиллерии вооруженных сил Республики Армения создавались курсы переподготовки офицеров “Джрвеж”. Подготовка и переподготовка офицеров артиллеристов проводились и на базе артчастей. С 1992г. по май 1994г. на разных курсах артиллерии обучались около 400 офицеров артиллеристов. Необходимо отметить то, что с первого дня основания управления артиллерии по указанию Айрапертяна В.А. планировалась боевая подготовка артиллерии и организован контроль и оказание помощи в ее проведении. У меня был опыт планирования боевой подготовки артиллерии дивизии, полка, однако здесь требовалась гибкость плана, так как части и подразделения вели боевые действия (посменно), одновременно занимались боевой учебой.

Начальник артиллерии и его штаб организовали методические занятия по планированию боевой подготовки артиллерии, ничего не упускали из виду, особое внимание обращалось вопросам контроля над обучением, воспитанием личного состава.

Осенью 1992г. шли ожесточенные бои за Лачинский проход. Противник в октябре—ноябре большими силами старался закрыть проход к НКР, без точного огня артиллерии нельзя было удержать этот участок, связывающий НКР с Арменией. Фактически в этих боях основную роль выполняла артиллерия Республики Армения. По этой причине, по предложению начальника артиллерии и по решению министра обороны Республики Армения, 19 октября был ознаменован как день Артиллерии вооруженных сил Республики Армения. В этих боях был ранен начальник артиллерии, полковник В.Айрапетян, однако он не покинул поле боя, лично руководил огнем артиллерии.

Владимир Асатурович обращал неустанное внимание подготовке офицерских кадров вооруженных сил Республики Армения. От его внимания не упускались вопросы оснащения и укомплектования артиллерии средствами управления, орудиями, минаметами, приборами для стрельбы, средствами их ремонта. Он лично вникал в вопросы ремонта ракетно—артиллерийского вооружения и за короткое время наладил рабочую связь с предприятиями, которые должны были заниматься ремонтом и восстановлением МЧА (материальной части артилерии) — в Эчмиадзине — командир рембата Давид Абрамян, начальник арт.мастерской Микаэль Назаретян,

на заводе "АЙГ" — директор Овик Симонян, они с пониманием и ответственно отнеслись к выполнению этой важной задачи.

В.Айрапетян принимал активное участие в боях за Родину, лично руководил огнем и боевыми действиями артиллерии в Кельбаджаре в январе—феврале 1994г., Горис—Кубатли—летом 1993г., Лачин, Гочаз—1992г.

По его личной инициативе были размещены тяжелые дальнобойные орудия 2А36 "Гиацинт" в приграничных районах, эти орудия "возмездия" открывали огонь в ответ азеровской артиллерии и противник тут же прекращал стрельбу по нашим селам и городам.

Владимир Асатурович наряду с добротой об офицерах был очень строг и трбователен к нам. Он запрещал курить в управлении артиллерии, особо беспощаден был к пьяницам. В управлении служил офицер, подполковник М.Григорян. Как—то он пристрастился к спиртному. В.Айрапетян вышел ходатайством к министру обороны об увольнении офицера из рядов вооруженных сил.

В трудные дни осени 1993г.— весны 1994г. особо проявился талант В.Айрапетяна, его неустанная работа в поле брани — то он в Кельбаджаре, то в Горадизе и Арцахе, то в управлении, здесь он и солдат и командир — полководец. Настал мир, с июня 1994г. перед нами встали вопросы мирного строительства артиллерии вооруженных сил. За большие заслуги в развитии артиллерии вооруженных сил Владимиру Асатуровичу в мае 1994г. присвоено высокое воинское звание "генерал—майор".

В 1995г. весной наше управление впервые за историю вооруженных сил подвергалось инспекции Президента и получило хорошую оценку.

В 1995г. по личной настойчивости генерала Айрапетяна создается учебный артполк в Лусакерте. По сей день учебное заведение подготовило более 6000 человек сержантов—специалистов, более 200 командиров взводов.

По личной инициативе генерала Айрапетяна в журнале "Айкакан Банак" печатался ряд статей по развитию теории и практики артиллерии, а в газете "Ай Зинвор" вот уже 10—ый год печатаются конкурсные задачи "огненный щит" по стрельбе и управлению огнем артиллерии. Эта серия задач заметно повысила уровень офицеров по Стрельбе и Управлению Огнем артиллерии.

*25. 01. 2007 г.*

## ԿԱՊԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ **ԼԵՈՆԻԴ ԿՈԼՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ** 1993–1994թթ. – N 84029 զ/մ–ի 1–ին գումարտակի հրամանատար, այնուհետև – N 84029, N 54122 զ/մ–երի հրամանատարի տեղակալ



Վ. Հայրապետյանը և Կապանի զին-կոմ փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը ք. Կապանում

Գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանին ճանաչել եմ 1992թվականից, երբ նա, հայ–ադրբեջանական հակամարտության իրավիճակից ելնելով, ժամանեց Կապան, որտեղ ստեղծվում էր առանձին հրետանային դիվիզիոն: Ինքը, լինելով զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի վարչության առաջին պետը, ինչպես ամբողջ մարտական գործողությունների գոտում, այնպես էլ Կապանում անձամբ էր այցելում մարտական գործողությունների գոտի, անձամբ տեղազննում, ուսումնասիրում և տեղադրում հրետանային մարտկոցները: Առաջին անգամ հանդիպել եմ Ճակատեն գյուղի վերևի բլրի հետևում, երբ նա տեղադրում էր 152 մմ հրետանային մարտկոցը: Լսել էի նրա մասին, որ նա հմուտ, գրագետ հրետանավոր է, որ ԽՍՀՄ բանակում ծառայել և զբաղեցրել է բարձր պաշտոններ, որ նա կապանցի է՝ Շիշկերտ գյուղից: Բայց այդ տարիներին իրավիճակը այնքան ծանր էր, որ

չէի կարողանում ավելի մոտիկից ծանոթանալ, ճանաչել նրան: Որպես Կապանցի հպարտանում էի, որ ունեմ իմ հայրենակցի նման մեծապատիվ զինվորական, որը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ստեղծեց և ձևավորեց հրետանին, հրետանու վարչությունը և հրետանին, որպես պատերազմի աստված, գործի դրեց պատերազմի դաշտում: Ինձ բախտ վիճակվեց նրա հետ ավելի մոտիկից ծանոթանալու զինադադարից հետո, երբ ես Հորադիզում նշանակվել էի Կապանի բրիգադի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով: Այդ ժամանակ Վ.Հայրապետյանին շնորհվել էր գեներալ–մայորի կոչում: Բրիգադի հրամանատարն էր լեգենդար գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, որի գլխավորությամբ մենք մարտական գործողությունների գոտում կառուցեցինք ուսումնական զորավարժարան, և որտեղ պատրաստում էին մեր բրիգադի հրետանավորներին: Այդ ընթացքում գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը իր վարչության սպաների հետ հաճախակի էր այցելում Հորադիզ՝ մարտական գործողությունների գոտի՝ իր աջակցությունը ցուցաբերելու բրիգադի հրետանավորներին: 1994թ. ծանր վիրավորվելու և առողջության վատթարացման պատճառով 1996թ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով ինձ նշանակեցին Կապանի զինվորական կոմիսար: Մենք ավելի հաճախակի սկսեցինք հանդիպել, երբ նա աշխատանքային այցերով հաճախակի գալիս էր Կապան: Ես նրա մեջ տեսա իսկական զինվորականի կեցվածք՝ օժտված մեծ հայրենասիրությամբ. շատ էր սիրում իր ծննդավայրը: Տեսա նրա մեջ լավ մարտական ընկերոջ և լավ ընտանիքի հոր հատկանիշները: Հետագայում թե՛ ծառայողական և թե՛ անձնական հանդիպումներից ավելի մոտիկից ծանոթանալով նրա մարտական ուղուն՝ սիրով և հպարտությամբ եմ լցված նրա նկատմամբ և միշտ էլ հպարտ կլինեմ, քանի որ Վ.Հայրապետյանը եղել է ու կմնա անկախ Հայաստանի Հանրապետության բանակի առաջին հրետանու վարչության պետը: Թող հայրենի հողի վրա նրա գլխավերևում միշտ շողշողան արևի շողերը, և այնուհետև վայելի արժանապատիվ կյանք, քանզի նա իր թափած արյան և քրտինքի շնորհիվ վաստակել է այդ իրավունքը:

Բարձր գնահատելով մեծ հայրենասերի մատուցած ծառայությունները Հայրենիքի՝ Կապանի տարածաշրջանի սահմանների պաշտպանության գործում՝ 2003թ. հուլիսի 30–ին Կապանի քաղաքապետարանի ավագանու որոշմամբ Վլադիմիր Աստուրի Հայրապետյանին շնորհվել է Կապանի պատվավոր քաղաքացու կոչում:

Կապան, 2007թ.



# ՆԱԽԿԻՆ ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ԳՆԴԱՊԵՏ ՊՈՂՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԳՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ԱՅԺՄ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՐԵԼԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու պետ գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանին ես բախտ եմ ունեցել ճանաչելու 1992թ. հոկտեմբեր ամսին:

Մեր առաջին հանդիպումը կայացավ Գյումրի քաղաքում, ուր ես այնտեղ տեղակայված հակատանկային հրետանային զորամասի հրամանատարի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալն էի: Ես պատրաստել ու կահավորել էի զինվորների կուլտուրական ժամանցի և քարոզչության սենյակը (նախկինում դրանք կոչվում էին «Կարմիր անկյուն»), և երբ գեներալն այցելեց մեր զորամաս, այդ սենյակը նույնպես մտավ, տեսավ, գնահատեց կատարված աշխատանքը, գովեստի խոսքեր ասելուց հետո էլ ինձ պաշտոնական շնորհակալություն հայտնեց օրինակելի դասարան պատրաստելու համար:

Այդ օրվանից շարունակվեց մեր համատեղ ծառայությունը Հայոց նորաստեղծ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերում:

Պատերազմի ընթացքում՝ 1992–1994 թթ., գեներալ Վ.Հայրապետյանի հետ եղել եմ Գորիսի շրջանի, Խնձորեսկ գյուղի, Լաչինի միջանցքի, Քարավաճառի և Հորադիզի մարտական գործողությունների շրջանում, ամենուրեք նա հմտորեն կազմակերպել և ղեկավարել է հրետանու մարտական գործողությունները: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հիմնադրման առաջին իսկ օրվանից գեներալ Վ.Հայրապետյանը եղել է հրթիռահրետանային զորքերի պետը: Նրա շնորհիվ է հիմնադրվել, հզորացել ու կայացել այդ զորատեսակը, որը և վճռորոշ դեր է խաղացել դարավերջի Արցախյան գոյամարտի պատմական հաղթանակներում:

Վլադիմիր Հայրապետյանը մեր բանակի իմ տեսած ամենագրագետ զինվորականներից է, միաժամանակ շատ ուշադիր, բարեհամբույր, համեստ ու պարտաճանաչ անձնավորություն:

Նա անսահմանորեն նվիրված է Հայոց երկրին, նրա զինվորներին և բազմադարյա պատմությանն ու մշակույթին: Նրա հայրենասիրության խոսուն օրինակներից է նաև այն, որ երկար տարիներ ծառայելով Խորհրդային բանակում, զբաղեցնելով կարևոր հրամանատարական պաշտոններ՝ նա առանց երկմտելու կամավոր վերադարձավ Հայաստան, միացավ մեր բանակաշինության շատ նվիրյալներին, իր գիտելիքներն ու բազմամյա փորձը ծառայեցրեց Հայրենիքին ու ժողովրդին՝ միաժամանակ զ'արգացնելով ու կատարելագործելով խստաշունչ Ռուսաստանում հոգու ու սրտի ջերմությամբ պահպանած հայ լեզվի ու խոսքի իմացությունը:

*Երևան , 2007 թ.*



ՊԱՀԵՍՏԻ ԿԱՊԻՏԱՆ **ԳԱԳԻԿ ԲԵՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ**
1992 թ., Կապանի Երկրապահ ջոկատի շտաբի պետ, 1993–1994թթ.
N 84029 զ/մ ԽՀՀԴ–ի հրամանատարի տեղակալ թիկունքի գծով

Առաջին անգամ հանդիպել եմ այն ժամանակ գնդապետ, այժմ՝ գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանին 1992թ. հուլիսին պաշտպանության նախարարի ընդունարանում, որտեղ պատահական զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ծնունդով կապանցի է: Վ.Հայրապետյանը նոր էր ՝վերադարձել Ռուսաստանի Դաշնությունից և եկել էր իր պատրաստակամությունը հայտնելու, որ իր մասնագիտությամբ և փորձով պատրաստ է օգտակար լինելու հայ ժողովրդին: Ես շատ հպարտացա իմ հայրենակցով, որ նա իր գիտելիքներով և փորձով կարող է օգտակար լինել նորաստեղծ Հայոց բանակին:

Իմ հարցին, թե դժվար չի եղել թողնել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում վարած իր բարձր պաշտոնը և տեղափոխվել, Վ.Հայրապետյանը պատասխանեց, որ չէր կարողանում անգամ հանգիստ շունչ քաշել, քանի որ լսում էր, որ իր հայրենիքը վտանգի մեջ է: Վ.Հայրապետյանին այնուհետև հանդիպել եմ 1992թ. դեկտեմբերին Կապանի սահմանամերձ գյուղերում, երբ տեղադրվում էին հրանոթները և «Գրադ» կայանքները, անգամ գիշերը լուսացրել է մեզ հետ դիրքերում, որ առավոտյան համոզվի՝ ճիշտ է տեղադրված հրետանին, թե ոչ, որից հետո տվել է հրահանգներ և ցուցումներ:

1993թ. օգոստոսին Շիկահող գյուղի սահմանի մոտ գտնվող ալդբեջանական տարածքի Քյոլու գյուղում մարտական գործողությունների ժամանակ Ճակատեն գյուղում տեղակայված հրետանային մարտկոցները մի ամբողջ օր անմիջապես ղեկավարել է ինքը՝ Վ.Հայրապետյանը: Շատ էր մտահոգված Զանգեզուրի ճակատագրով, հատկապես Կապան քաղաքի համար, և պատահական չէ, որ միշտ, որտեղ էլ լիներ, որ ճակատում գտնվեր, միշտ զանգում և ճշտում էր, թե ինչ է կատարվում Կապանում, արդյո՞ք թշնամին շատ չի նեղում հրետանային ռմբակոծություններով:

Ես հպարտ եմ, որ ճանաչել և ծառայել եմ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի հրամանատարության ներքո:

*Կապան, 2007 թ.*



## ՊԱՀԵՍՏԻ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ **ՍԱՄՎԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊՈՂՈՍՅԱՆ**

1993թ. N 84029 զ/մ ԽՀՀԴ–ի հրամանատար,
1994թ. N 75764 զ/մ հրետանային զորամասի հրամանատար

Գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը մեծ ներդրում և ավանդ է ունեցել Կապանի շրջանի պաշտպանության և հրետանու կազմավորման գործում:

1992թ. դեկտեմբերին մասնակցել է շրջանի պաշտպանության մարտական գործողություններին՝ մոբիլիզացնելով հրետանու վարչության փորձառու հրետանավորներին, որոնք իրենց փորձով և գիտելիքներով մեծ օգնություն ցուցաբերեցին այդ մարտական առաջադրանքները կատարելու ժամանակ:

1993թ. հունվարին, երբ Կապանում կազմավորվել էր 97–րդ բրիգադը, որի կազմում էր նաև ԽՀՀԴ–ն և հակատանկային մարտկոցը, իր անմիջական մասնակցությունն է ունեցել գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը՝ ապահովելով մարտական տեխնիկայով, զինամթերքով և համապատասխան մասնագետ սպաներով:

Դեռ պատերազմի տարիներին և դրանից հետո դիրքերում թե զորամասերում, որը տեղակայված էր Հորադիզում, կազմակերպում և անց էր կացնում դասընթացներ հրամանատարական կազմի հետ: Մշտապես հետաքրքրվում է զինվորների և սպաների կենցաղով, հարկ եղած դեպքում, իր հնարավորության սահմաններում օգնում:

Ես երախտապարտ եմ, որ ճանաչել և ծառայել եմ շուրջ տասը տարի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի հրամանատարության ներքո:

*Կապան, 2007 թ.*

# СТРЕЛЯТЬ — ТАК СТРЕЛЯТЬ

Артиллерия вооруженных сил Армении формировалась в основном на основе вооружения 7—й гвардейской армии ЗАкВО, переданной республике по договору. И хотя практически не было подготовленных специалистов в этой области, уже с 1 июля 1992 года стали создаваться национальные артиллерийские батареи и дивизионы, которые затем были развернуты в полки и бригады.

Кадровые проблемы решались просто: дефицит офицерского и сержантского состава восполнялся за счет людей, призванных из запаса и прошедших краткосрочные сборы. Они и составили костяк первых батарей. Затем началось обычное комплектование частей солдатами срочной службы. Для этого был сформирован учебный артиллерийский полк, где до сих пор готовят младших специалистов.

Как отметил начальник артиллерии ВС РА генерал—майор Владимир Айрапетян, в своей повседневной деятельности армянские “боги войны” тесно взаимодействуют с россиянами. Давно уже не редкость совместные полевые сборы, состязания, практические учения. Генерал очень доволен теми результатами, которые показали его подчиненные в ходе последных таких учений. Готовность артиллерийских подразделений к участию в огневом поражении условного “противника” оказалось весьма высокой.

—Я думаю, такие состязания нужно проводить как можно чаще, — говорит генерал Айрапетян. — Зря забыли мы и о такой форме учебы, как научно—практические конференции артиллеристов, которые входили в традиционную практику Советской Армии.

Сам Владимир Айрапетян, с отличием окончивший Тбилисское артучилише, а затем артиллерийскую академию имени Калинина, прошел путь от командира взвода до начальника ракетных войск и артиллерии корпуса. Служил в ЦГВ, СибВО, а с началом строительства национальной армии изъявил желание помочь в этом сложном процессе. Здесь с самого первого дня он и возглавил формирование армянской артиллерии, приведя ее за короткий срок к классическому виду.

Хотя проблем еще хватает. В том числе и в подготовке офицерских кадров.Здесь в республике большие надежды возлагают на российские военные вузы и академии, где обучаются посланцы из Армении. Кстати, первые выпускники артучилищ Екатеринбурга и Казани уже год как служат в национальной армии.

*“Красная звезда” Владимир Мохов*

## СТАРШЕ ОТЦА СВОЕГО...

–Молодец, Володя! Святое дело сделал, — говорили родственники и знакомые.

–Эх, сынок ! Убил ты нашу последнюю надежду, — тяжело вздыхал дядя Арменак.

С обоими мнениями согласен полковник В.Айрапетян. Потому, что через 44 года отыскал—таки на братской земле Чехословакии место гибели и могилу отца — гвардии лейтенанта Асатура Джангировича Айрапетяна. И вместе с тем угас огонек надежды, что жив он, что придет долгожданный миг встречи ...

Сегодня Владимир Асатурович старше своего отца почти вдвое. 26—летний Айрапетян — старший погиб в ноябре 1944 года, так и не увидев сына, родившегося через восемь месяцев после его ухода на фронт. Так сложились обстоятельства,что полковник Айрапетян идет тем же путем, который предопределила офицеру—фронтовику Великая Отечественная. Стал вооруженным защитником Родины, служил в Прикарпатском военном округе, а сейчас — в Центральной группе войск. Именно в этих местах воевал Асатур Джангирович.

В одном из писем с передовой, которые бережно хранятся в семье, отец интересовался у своего брата: правда ли, что у него родился сын ? И просил перешить обмундирование, которое осталось дома, в костюм для Володи. Отец военный, пусть и сын, когда подрастет, ходит в военном ...

Прошли годы, и Володя, сын Асатура, стал офицером—артиллеристом. Знал, что приходила похоронка, которая пропала. Ничего не было известно о боевом пути отца. Началась длительная переписка с Центральным архивом Министерства обороны СССР, с военкоматами. Наконец стало известно: командир роты гвардии лейтенант Айрапетян Артюша Джангирович погиб 30 ноября 1944 года. И место гибели. Но почему Артюша, а не Асатур ?

–Видимо, так его звали в 650—м стрелковом полку 138—й стрелковой дивизии, — считает полковник Айрапетян.

–Вот и записали в документах ... Все остальное, в том числе и место рождения, названо правильно.

А точное мести гибели отца Владимир Асатурович узнал здесь, в Центральной группе войск. Оказалось: фронтовик пал в бою и похоронен на территории Чехословакии в селе Куцаны.

Когда появилась возможность, офицер приехал в село. День был воскресный. С помощью местных жителей отыскали пожило-

го словака, который помнил бой за Куцаны. Он еще помогал советским солдатам хоронить павших однополчан.

—Но потом их перезахоронили в районном центре Михаловце,— уточнил старик. — Там ищи отца ...

Уазик, оставив позади села Оборни, Мальчице, Дроговиште, въехал в Михаловце. Быстро отыскал Владимир Асатурович кладбище, где были захоронены советские воины. Но ... ни на одном из надгробий не увидел имени отца. Обратился за помощью к чехословацким товарищам.

А вскоре пришло сообщение из исполнительного комитета ордена Ленина Союза обществ Красного Креста и Красного Полумесяца, что согласно данным Красного Креста Чехословакии фамилия гвардии лейтенанта Айрапетяна внесена в списки советских воинов, захороненных на советском воинском кладбище в городе Михаловце под N 846. Списки находятся в городском национальним кимитете.

Заместитль председателя национального комитета товарищ Ян Югас, другие чехословацкие друзья помогли полковнику В. Айрапетяну установить обелиск на могиле отца. Это было 18 австуста 1988 года.

Совсем недавно один из земляков передал офицеру драгоценную реликвию — фронтовую фотографию отца. Оказывается, встретились они в санитарном поезде, когда гвардии лейтенант Айрапетян возвращался на передовую после излечения в госпитале. На фото — Асатур Джангирович с фронтовым другом. На кителе — медаль, на погонах лейтенантские звездочки. Шел 1944 год. На обратной стороне снимка указан боевой путь кимандира стрелковой роты: Касторное — Сталинград — Славянск — Сталино — Днепропетровск — Запорожье— Луцк — Буг — Замостье — Висла — Сандомир — ... Ростов—Дон. Почему вдруг Ростов—Дон ?

— Мы знали, что отец был ранен семь раз. Видно, именно в Ростове—на— Дону и был сделан этот снимок. Последний в жизни ...

Ушел в бессмертие фронтовик. Его дело продолжают Владимир Асатурович и его сын — Асатур, названный в честь деда ... До конца выполнил гвардии лейтенант свой интернациональный долг, передав эстафету полковнику В.Айрапетяну, который почти вдвое старше отца своего ...

*"Советский солдат" 12 февраля 1989 года*
*(ЦГВ в Чехословакии)*
*майор В.ПОДДЕЛКОВ*



* * *

*Տասնապետ ես, հազարապետ, քո զինվորին խոնարհվիր*
*Աշխարհակալ, սպարապետ, քո զինվորին խոնարհվիր,*
*Առաջ զինվոր, առանց զոհ ի՞նչ երկիր,*
*Որ չկորչի ազգդ անհետ, քո զինվորին խոնարհվիր:*

ՍԱՄՈՒԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՆՎԱՆԻ ԳՐՈՂ-ԲԱՆԱՍՏԵՂԾ

## ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գրասեղանիս գրչակից բարեկամիս՝ Արտեմ Վարդանյանի «Գիրք անմահից» ժողովածուն է, որ հրատարակել է «Առերեսում Անի» հրատարակչությունը: Ժողովածուից իմանում ենք, որ 1990-ից ի վեր Կապանից մոտ 170 հայորդի է զոհվել հայրենի հողն ու յուրայիններին պաշտպանելիս: Իսկ թե քանի՞-քանի կապանցի քաջեր, կյանքն ու մահը արհամարհած, այսօր էլ մարտական դիրքերում են, այդ մասին քչերը գիտեն: Նման վաստակաշատ երախտավորներից են կապանցի մերօրյա գեներալներ Մ.Սարգսյանն ու Վ.Հայրապետյանը:

Վլադիմիր Հայրապետյանը ծնվել է Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում 1942թ. հունիսի 25-ին: Միջնակարգն ավարտելուց հետո Վոլոդյան (այդպես են մտերիմները կոչում նրան) զորակոչվեց Խորհրդային բանակ: 1961թ. գործուղվեց՝ սովորելու Թբիլիսիի ռազմահրետանային ուսումնարանում: 1964թ. լեյտենանտ շրջանավարտը նշանակում ստացավ ծառայելու խորհրդային զինուժի հրետանային ստորաբաժանումներից մեկում՝ սկզբում որպես դասակի, այնուհետև՝ մարտկոցի և դիվիզիոնի հրամանատար: Ուշիմ էր, զգոն, կիրթ և իր մասնագիտությանը սիրահարված, գերազանց նշանառու էր, համառ իր ընթերցասիրությամբ և նվիրվածությամբ: Մեծի հետ մեծ էր բանակում, փոքրի հետ՝ փոքր: Բոլորը սիրում էին նրան:

1972թ. Վ.Հայրապետյանը չորս տարի ուսանելուց հետո ավարտեց Սանկտ Պետերբուրգի Կալինինի անվան հրետանային ակադեմիան և նշանակվեց հեռավոր արևելյան օկրուգի զինբաժանմունքներից մեկում դիվիզիոնի հրամանատար (1972–1974թթ.)։ 1975թ. առաջ քաշվեց որպես հակատանկային–հրետանային գնդի շտաբի պետ, հրամանատարի տեղակալ։ 1975–1980թթ. նա գնդի հրամանատար էր ԽՍՀՄ զինված ուժերի հրետանային N զորամասում։ Այնուհետև փորձված սպային բանակի գլխավոր շտաբը նշանակեց 25–րդ բանակային կորպուսի հրետանու շտաբի պետ։ 1982–1986թթ. նա նույն պաշտոնը վարեց 12–րդ բանակային կորպուսում, հետո տեղափոխվեց 28–րդ բանակային կորպուս։

Որպես հրետանավոր Վ.Հայրապետյանն արագաշարժ էր, շուտ կողմնորոշվող, անվրեպ նշանառու՝ զինված ռազմական գիտելիքների մեծ պաշարով և հարուստ կենսափորձով։ Թերևս դա էր նրան բանակային կորպուսից մեկ այլ կորպուս արագ տեղափոխելու պատճառը։ 1990թ. գնդապետ Հայրապետյանը նշանակում ստացավ ծառայելու նույն բանակային կորպուսում՝ որպես հրթիռահրետանային զորքերի պետ։ Որոշ ժամանակ խորհրդային զորքերի խմբավորման հետ նա ծառայեց Չեխոսլովակիայում, այնտեղից տեղափոխվեց Սիբիր։ Աշխարհի որ մասում էլ ծառայեց հրետանավոր հայորդին, նրա մտապատկերում անաղարտ մնացին Լեռնահայաստանի և Նժդեհի պատկերները։ 1992 թվականին, երբ սև ամպեր կուտակվեցին Արցախյան և Սյունյաց լեռնաշխարհում, նժդեհական ցեղակրոն ինքնայրումը հեռավոր Սիբիրից հայրենի օջախ վերադարձրեց և Վլադիմիր Հայրապետյանին։ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նորաստեղծ նախարարությունում նա նշանակվեց հրթիռահրետանային զորքերի վարչության պետ։

«Հրետանին ռազմի աստվածն է», – այսպես է բնութագրել հրետանու դերը իր հարցազրույցներից մեկում սյունյաց քաջազունը։ 1993–1994թթ. Հայաստանի և Արցախի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանության ժամանակ սխրանքներով դրսևորեցին իրենց Հայոց բանակի հրետանավորները և հրթիռային զորքերը։ Նրանց պրակտիկ գործողությունների նպատակային իրագործումն, անշուշտ, ղեկավար հրամկազմի ներդրումների արդյունքն էր։ Քանի՜–քանիսը հրետանավոր հայկազուններից պարգևատրվեցին Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ Մարտական խաչի շքանշաններով և մեդալներով։ Հայոց բանակին անմնացորդ նվիրվելու և ռազմապաշտպանական անձնվեր սխրանքի ու վաստակի համար գնդապետ Վլադիմիր Աստուրի Հայրապետյանը ՀՀ նախագահի 1994թ. մայիսի 28–ի թիվ 296 հրամանագրով արժանացել է գեներալ–մայորի զինվորական բարձր կոչմանը։

Քաջարի հայորդին այսօր էլ (և երբ պահանջվի) մարտական դիրքերում է։ Նա պարգևատրվել է Խորհրդային բանակում անբասիր ծառայության համար ԽՍՀՄ շքանշաններով և մեդալներով։ Այսօր, երբ նոր–նոր են լռել ազերիների արձակած ալազանների և գրադների պայթյունները, սյունեցի հայորդին հաճախ է մտքով տեղափոխվում Արցախ։ Հիշում է 1992թ. հոկտեմբերի 9–ը, երբ Լաչինի շրջանը ազերիներից մաքրելիս վիրավորվեց, հիշում

է իր մասնակցությունը Քարվաճառի (Քելբաջար) ազատագրմանը, հիշում է և երբեմն զարմանում, թե մարտակերտյան կռիվներում թշնամու գնդակն ինչպես իրեն չգտավ:

Հիշում է, հիշում գեներալ-մայոր Հայրապետյանն այսօր քաջարի հրետանավորներ կապիտան Վահագն Հակոբյանին, Գուրգեն Արշակյանին, Առնո Տատինցյանին, մայոր Ռաֆիկ Պետրոսյանին, «մինամյոտչիկ» (այդպես էին բոլորը նրան կոչում) Արկադիին և այլ հրետանավորների, որոնք զոհվել են Քարվաճառում, Լաչինում և այլուր, և մեր զրույցին մասնակից դարձնում հրետանային 4-րդ գնդի նախկին քաջարի կապիտան Գարուն Աբգարյանին: Նա ծանր վիրավորվել է ռազմաճակատում, դեռ լրիվ չի ապաքինվել, բայց հավատարիմ իր սխական արյան՝ խնդրում է գեներալին իրեն նորից ծառայության ընդունել:

«Ինչպե՞ս կներկայացնեք Ձեր ընտանիքը, Ձեր մանկությունը» հարցիս այսպես պատասխանեց հրետանավոր հայորդին.

—Հայրս՝ Աստուրը (Արտյուշա), զոհվել է Հայրենական մեծ պատերազմում՝ Չեխոսլովակիայի Միխալովցեի շրջանում: Հայրս գվարդիայի լեյտենանտ է եղել: Մասնակցել է նաև խորհրդա-ֆիննական (1939թ.) պատերազմին: Ես ծնվել եմ, երբ նա արդեն ութ ամիս կռվում էր հիտլերյան ֆաշիզմի դեմ: 2-րդ աշխարհամարտում են զոհվել նաև երկու հորեղբայրներս՝ Օնիկ և Շավարշ Հայրապետյանները, – պատմում է գեներալ-մայոր հայորդին՝ հայացքը հառած Գարեգին Նժդեհի մեծադիր նկարին և ավելացնում, – մորս՝ Նուբար Հայրապետյանին էլ եմ շուտ կորցրել, 1949թ-ին յոթ տարեկան էի, երբ նա մահացավ: Ինձ և քրոջս՝ Մառլենային տիրություն անելու համար մենք երախտապարտ ենք հորաքրոջս՝ Հայկանուշ Հայրապետյանին և իր որդիներին՝ Սոսին և Հրանտին: Նրանք են մեզ պահել, տվել ուսման, հոգացել մեր ապագան...

Թեև մասնագիտությամբ զինվորական է Վ.Հայրապետյանը, բայց բնավորությամբ նա շատ ավելի բանաստեղծ է հիշեցնում. նուրբ է ու բարի, տաքարյուն և ռոմանտիկ: Սիրում է հայ ժողովրդի պատմությունը, մանկուց երազել է զինվորական դառնալ, մասնակցել մարտավարություններին, սպանել իր հորն ու հորեղբայրներին սպանողներին, հայոց տունն ու տեղը ավերողներին, Հայաստանի քարտեզը վերաձևող զավթիչներին:

Գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանը Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի ջատագովներից է: Ունի մեկ որդի (Աստուրը ինժեներ-կիբեռնետիկ է) և մեկ դուստր (Գայանեն մանկավարժ է): Ու թեև այսօր ինքն ու տիկին Խաթունը երեք թոռնիկների պապիկ և տատիկ են, բայց գեներալ-մայոր զանգեզուրցին լի է մարտական կրակներով, քանզի բաջ գիտի՝ «Ուժն է ծնում իրավունքը» (Նժդեհ):

*«Հայաստանի Հանրապետություն», 26 հունիսի, 1997թ. Ս.Գ.*



Բռնո քաղաքի պատվավոր քաղաքացի, գեներալի մտերիմ բարեկամը

## ՎԱԶԳԵՆ ՊԵՏՐՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Չեխոսլովակիայի ազատագրման մարտերի մասնակից, Չեխոսլովակիայի կառավարության յոթ շքանշանների ու մեդալների ասպետ, Հայրենական մեծ պատերազմի առաջին խմբի հաշմանդամ, կուսակցության և աշխատանքի վետերան

### «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»

### ԳՆԴԱՊԵՏ ՈՐԴԻՆ ԳՏԱՎ ՀՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Ղափանի շրջանի Ներքին Մազրա գյուղում 1918թ. ծնված Արտյուշա (Ասատուր) Ջհանգիրի Հայրապետյանը 1938թ. զորակոչվեց Կարմիր բանակի շարքերը՝ կադրային ծառայությունը կատարելու: Որպես կրտսեր հրամանատար՝ նա մասնակցեց սպիտակ ֆինների դեմ մղված մարտերին: 1940-ի վերջերին զորացրվեց բանակից և աշխատանքի ընդունվեց Ղափանի հացամթերումների գրասենյակում՝ որպես պահեստապետ: Սակայն կարճ տևեց նրա խաղաղ աշխատանքը. սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: 1941թ. մեկնեց ռազմաճակատ՝ շատերի նման պաշտպանելու Հայրենիքը, կռվելու ֆաշիստական գազազած թշնամու դեմ: Նրանք սպա-

 սում էին երեխա ծնվելուն: Ռազմաճակատ մեկնելուց առաջ ծնողներին և կնոջը՝ Նուբարին, պարտավորեցրեց՝ եթե արու զավակ ունենա, կոչեն Վլադիմիր: Ծնվեց արու զավակ 1942թ., նրան կոչեցին Վլադիմիր (այդ ժամանակ ընտանիքը բնակվում էր հարևան Շիշկերտ գյուղում): Նամակով հայտնեցին գործող բանակում գտնվող Ասատուրին, որ ծնվել է արու զավակ, կատարել են նրա պատվիրանը և անունը կոչել ու ձևակերպել են Վլադիմիր: Ռազմաճակատից ուղարկված նամակներից մեկում նա գրել էր կնոջը. «Գուցե ես չտեսնեմ սիրասուն որդուս, նրան կմեծացնեք ու կզինվորագրեք հայրենիքին»: Դառը ճակատագրի բերումով հայր ու որդի կյանքում չտեսան իրար: Վլադիմիրը երեք տարեկան էր, երբ եկավ 1945թ–ի. հաղթանակած գարունը: Թոթովախոս լեզվով հարցնում էր մորը՝ Նուբարին. «Բոլորի պապաները վերադարձան տուն, բա մեր պապան ե՞րբ է վերադառնալու»,— նայելով իոր ընկերներին: Մայրը խեղդում էր արցունքները և ասում. «շուտով–շուտով, սիրասուն բալիկս»:

Ասատուրը վերջին նամակը գրեց 1944թ. նոյեմբերի սկզբներին: Այնուհետև ծնողներն ու կինը ստացան (ինչպես ասում էր ժողովուրդը) «սև թուղթը», որում գրված էր ծնողներին. «Ձեր որդին՝ գվարդիայի լեյտենանտ, վաշտի հրամանատար Արտյուշա (Ասատուր) Ջհանգիրի Հայրապետյանը, հերոսաբար զոհվեց ռազմաճակատում 1944թ. նոյեմբերի 30–ին», սակայն զոհվելու վայրը չէր նշված: Նա կռվել էր տարբեր ռազմաճակատներում, նրա մարտական ուղին եղել էր Կաստորնայա, Ստալինգրադ, Կուպյանսկ, Սլավյանսկ, Ստալինո, Դնեպրոպետրովսկ, Զապարոժե, Լուցկ, Գորոխովայա, Բուգ, Զամեստյե, Վիսլա, Սանդոմիր, վերջինը՝ Չեխոսլովակիա, որը հայտնի դարձավ նրա զոհվելուց 43 տարի անց: 138–րդ դիվիզիան (4–րդ Ուկրաինական ռազմաճակատ) ահեղ մարտեր էր մղում Արևելյան Սլովակիայում:

Սեպտեմբերի 28–ին՝ 1944թ. դաժան մարտերից հետո, դիվիզիայի զորամասերը գրավեցին հակառակորդի դիմադրության ուժեղ հանգույցը՝ Կերեմշեզենը: Այդ մարտերում քաջաբար էին կռվում նաև դիվիզիայի 650–րդ հրաձգային գնդի մարտիկները, որոնց թվում՝ Հայրապետյանի վաշտի մարտիկները, որոնք արժանացան կառավարական շքանշանների (հիմք՝ ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվի տվյալները): Խիզախ հրամանատարը դաժան մարտերում վիրավորվել էր չորս անգամ, այդ մասին նա գրել էր ծնողներին և կնոջը: Ասատուրի երկու կրտսեր եղբայրները՝ Օնիկն ու Շավարշը, նույնպես կռվում էին տարբեր ռազմաճակատներում: Օնիկը կռվում էր Կովկասյան ռազմաճակատում, հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի կազմում, նա զոհվեց 1943թ. սկզբին՝ Թերեքը գետանցելու ժամանակ: Պարգևատրվել էր Փառքի 3–րդ աստիճանի շքանշանով: Շավարշը կռվում էր 2–րդ Բելառուսական ռազմաճակատում՝ 238–րդ հրաձգային դիվիզիայի (հրամանատար, գեներալ–մայոր Կրաշնաշտանով) 830–րդ գնդում, ավագ սերժանտի կոչումով, նա դասակի հրամանա-

տարի տեղակալ էր: Սովետական զորքերը կրնկակոխ հետապնդում էին ֆաշիստական բանակին գերմանական հողում: Ծավարշը տուն ուղարկած նամակներից մեկում գրել էր ծնողներին (նա գիտեր, որ երկու եղբայրները զոհվել են). «Կռվում եմ իմ Հայրենիքի ազատության համար զոհված երկու եղբայրներիս՝ Ասատուրի, Օնիկի փոխարեն ...»

Եվ իրոք, նա կռվում էր քաջաբար Բեռլինի մատույցներում: 1945թ. մայիսի 2–ին՝ Բեռլինի գրավման ժամանակ, ծանր վիրավորվում հիվանդանում է սննդամթերքի թունավորումից և 1–ին խմբի հաշմանդամ դարձած՝ վերադառնում տուն, իսկ 1948–ին մահանում Շիշկերտ գյուղում: Երեք եղբայրները զոհ գնացին հայրենիքի պաշտպանության համար: Նրանք պարգևատրվել էին մարտական մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Դառը ճակատագիր ունեցավ նաև փոքրիկ Վլադիմիրը: Չորս տարեկան հասակում մահացան նրա պապն ու տատը, իսկ վեց տարեկան հասակում մայրը. նա որբացավ բազմակողմանի: Նրա խնամակալը դարձավ իր հորաքույր Հայկանուշը, որի ամուսինը՝ Արգար Դանիելյանը (Շիշկերտ գյուղի կոլտնտեսության նախկին նախագահը), նույնպես հերոսաբար զոհվել էր ռազմաճակատում՝ կնոջ խնամքին թողնելով երեք անչափահաս երեխաների: Վլադիմիրը դարձավ նրանց չորրորդ երեխան, մեծացավ, հասակ առավ հորաքրոջ ընտանիքում: Նրանց ընտանիքը Շիշկերտ գյուղից 1956թ. տեղափոխվեց և վերաբնակվեց Երևանի Մալաթիա թաղամասում: Վլադիմիրը 1960թ. գերազանց գնահատականներով ավարտեց Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոցի 10–րդ դասարանը և զինվորագրվեց հայրենիքին՝ կատարելով հոր պատվիրանը: 1964թ. ավարտեց Թբիլիսիի զինվորական հրետանային ուսումնարանը, իսկ 1972թ. սովորեց և ավարտեց Լենինգրադի Մ. Ի. Կալինինի անվան հրետանային ակադեմիան:

Զինվորական բարձր պատրաստականություն և ունակություններ ունենալու շնորհիվ կարճ ժամանակամիջոցում լեյտենանտից հասավ գնդապետի կոչման: Եղավ մարտկոցի, դիվիզիոնի և գնդի հրամանատար: Այժմ նա ծառայում է Չեխոսլովակիայում գտնվող սովետական զորքերի կորպուսներից մեկում՝ հրետանու շտաբի պետ: Պարգևատրվել է «Հայրենիքի ծառայության համար» և այլ տեսակի տասը մեդալներով: Արժանացել է հրամանատարության պատվոգրերի և շնորհակալագրերի: Վլադիմիրը տասնյակ տարիներ առաջ է սկսել փնտրել հոր զոհվելու վայրը: Սովետական Միության «Կարմիր խաչի» որոնումներից հայտնի դարձավ, որ հայրը զոհվել է 1944թ. նոյեմբերի 30–ին Արևելյան Սլովակիայի Կուցանի գյուղի ազատագրման համար մղված դաժան մարտերում, և նրա շիրիմը ամփոփված է շրջկենտրոն Միխալովցե քաղաքի զոհված սովետական 20 հազար մարտիկների եղբայրական գերեզմանոցում: Վլադիմիրը ՉՍՍՀ–ի Օլոմուց քաղաքից, որտեղ ինքն էր ծառայում, 1987թ. հասավ Կուցանի գյուղը, այնուհետև, Միխալովցե քաղաքը: Նա գնում էր իր հոր՝ 43 տարի առաջ անցած ճանապարհով, որի երկու կողմերում

հաճախ էր տեսնում սովետական մարտիկների եղբայրական գերեզմաններ: Միխալովցեի քաղսովետի և քաղկոմի ղեկավարների ուղեկցությամբ ծաղկեպսակներով մոտենում են սովետական զոհված մարտիկների գերեզմանատանը և նրանց հիշատակին կառուցված հուշարձաններին: Ասատուրի և շատ սպաների համար տեղադրված են առանձին հուշաքարեր, որոնց վրա փորագրված են ազգանուն, անուն, հայրանունը, ծննդյան և զոհվելու տարեթվերն ու զինվորական կոչումները: Վլադիմիրն ապրեց իոր վիշտը, բայց և ամոքվեց՝ տեսնելով թարմ ծաղիկներով պատված հոր շիրմաքարը և նրա հիշատակը վառ պահողների ջերմ ընդունելությունը: Հայաստանից բերված արևահամ գինի հեղվեց սովետական քսան հազար զոհված մարտիկների, այդ թվում՝ գվարդիայի լեյտենանտ 26–ամյա Արտյուշա (Ասատուր) Հայրապետյանի անմահության հուշարձաններին:

Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944թ. սեպտեմբեր – 1945թ. մայիս) զոհվեցին 140 հազար ռազմիկներ, իսկ 365 հազարը վիրավորվեցին կամ խեղանդամ դարձան: Եղբայրական Չեխոսլովակիայի ժողովուրդը հուշարձան–կոթողներ է կառուցել իրենց հողում զոհված սովետական ռազմիկների հիշատակին և նրանց շիրիմները պատել ծաղկեպսակներով: Նրանց սխրանքը, անունն ու գործը անմոռաց են:

*25.01.1998թ.*



Վ. Յայրապետյանի հորաքույրը Յայկանուշը իր որդի Սոս Իսաջանյանի հետ, ք. Երևան, 1988 թ.

## ԳԵՆԵՐԱԼԻ ՀՈՐԱՔՐՈՋ ՈՐԴԻ՝ ՍՈՍ ԻՍԱՋԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

1941–1945թթ. Հայրենական մեծ պատերազմը մեծ դժբախտություն բերեց նաև մեր ընտանիքին. պատերազմից չվերադարձան հայրս և երեք քեռիներս: Մորս ավագ եղբայրը գեներալի հայրն էր՝ Ասատուր Հայրապետյանը:

Մեծ քեռիս՝ Ասատուրը, 1938թ. մեկնեց բանակ և մասնակցեց խորհրդա–ֆինական պատերազմին, 1941թ.՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը, զորացրվեց բանակից և ամուսնացավ Նուբար Աղասյանի հետ: Մի քանի ամիս անց նա կամավոր զորակոչվեց բանակ և 1942թ. մեկնեց ռազմաճակատ:

Քեռիս գիտեր, որ ինքը հայր է դառնալու. պատերազմից նամակ գրեց կնոջը. «Նուբա՛ր ջան, ես երազ եմ տեսել, որ մենք տղա ենք ունենալու, անունը կդնեք Վլադիմիր, և կխնդրեմ քեզ, որ երբ որդիս մեծանա՝ կասեք թող զինվորական դառնա, պատերազմը շատ դաժան է, կարող է ես չվերադառնամ . . .»

1942թ. հունիսի 25–ին ծնվեց ապագա գեներալը, ես շատ ուրախացա, և քեռուս պատվերը կատարեցին. նրա անունը դրեցին Վլադիմիր: Մայրս՝ Հայկանուշը, շատ էր սիրում փոքրիկ Վոլոդյային: Նա արդեն 7 տարեկան էր, երբ մահացավ մայրը, և մինչև մահանալը Նուբարը խնդրեց մորս, որ նա դառնա Վոլոդյայի հետագա խնամակալը: Այդ օրվանից մենք ընդունեցինք Վոլոդյային որպես մեր փոքր եղբայր: Անցան տարիներ, ես վերա-

դարձա սովետական բանակից, և մեր ամբողջ ընտանիքով Շիշկերտից տեղափոխվեցինք ք. Երևան՝ մեզ հետ բերելով և Վոլոդյային: Կինս՝ Ծաղիկը, մեր գյուղից էր և լավ գիտեր Վոլոդյայի մասին, սիրում և հարգում էր նրան որպես ամուսնու եղբոր: Անցան տարիներ, որոնց ընթացքում մենք չթողեցինք, որ Վոլոդյան իրեն որբ զգա, այդ բոլորի վկաներն են մեր հարազատները, բարեկամները և հարևանները:

Երբ Վոլոդյան 10-րդ դասարանը պիտի ավարտեր և լավ էլ սովորում էր, մայրս նրան ցույց տվեց հոր նամակը և խնդրեց, որ նա կատարի հոր պատվերը՝ դառնա զինվորական: Հավաքվեցինք ընտանիքով և հարցրինք Վոլոդյային.«Կցանկանաս զինվորական դառնալ»,— և նա առանց հապաղելու ասաց. «Ես թեև չտեսա հորս, բայց նրա պատվերը անպայման կկատարեմ»:

Վոլոդյան գնաց զինկոմիսարիատ և իմացավ, որ Թբիլիսիի հրետանային ուսումնարանը հայտարարություն է տվել, և ցանկացողները կարող են ներկայանալ, և հաջող քննություն տվողները կընդունվեն սովորելու:

Եղբայրս 1961թ. Թբիլիսի գնաց մի խումբ տղաների հետ և հաջող հանձնեց ընդունելության քննությունները: Ուսումնարանը գերազանց ավարտելուց հետո «լեյտենանտի» կոչումով նա եկավ արձակուրդ:

Կնոջս՝ Ծաղիկին շատ մտերիմ լինելով՝ Վոլոդյան խոստովանել էր, որ սիրում է մի աղջկա, անունը՝ Խաթունան, և ուզում է նրա հետ ճշանվել: Մենք բոլորս շատ ուրախացանք, որ նա սիրում է մի հայուհու, որի ծնողները բնակվում են մեր նույն թաղամասում: Համաձայնության գալով Խաթունի ծնողների հետ՝ կատարեցինք նշանդրեքի արարողությունը, և Վլադիմիրը բարձր տրամադրությամբ մեկնեց իր ծառայության վայրը՝ ք. Ուժգորոդ:

Անցավ ևս մեկ տարի, Վլադիմիրը 1965թ. եկավ արձակուրդ, Խաթունը արդեն ավարտել էր Երևանի N 90 միջնակարգ դպրոցը, որտեղ և սովորել էր իր ապագա ամուսինը: Հավաքվեցինք մեր բոլոր բարեկամներով և շատ գեղեցիկ կատարեցինք Վլադիմիրի և Խաթունի հարսանյաց հանդեսը, որից հետո նրանք միասին մեկնեցին Ուժգորոդ:

1968 թվականին Վլադիմիրը ընդունվեց Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիան. ուրախությանս չափ չկար, և ես մեկնեցի Սանկտ-Պետերբուրգ՝ շնորհավորելու եղբորս այդ լավ առիթով: Վլադիմիրը ծառայեց տարբեր զինվորական օկրուգներում, նույն թվում և Հեռավոր Արևելքում, Կամչատկայում և այլ քաղաքներում, բայց նա միշտ կապված էր մեզ հետ, նամակներ էր գրում բոլոր բարեկամներին, հարազատներին, եղբայրական կապերով էր կապված ինձ և եղբորս՝ Հրանտի, քրոջս՝ Նորայի ընտանիքների հետ: Երեսուն տարուց ավելի մեր եղբայրը ծառայեց խորհրդային բանակում, և մեծ էր մեր ուրախությունը, երբ նա 1992թ. կամավոր վերադարձավ և

մեծ եռանդով մասնակցեց անկախ Հայաստանի բանակաշինությանը, երկար տարիներ ղեկավարեց զինված ուժերի հրթիռահրետանային զորքերը, ակտիվ մասնակցություն ունեցավ Արցախյան պատերազմին, արժանացավ բարձր զինվորական «գեներալի» կոչմանը: Սակայն, անկախ ամեն ինչից, Վլադիմիրը պահպանեց իր բարձր և եղբայրական զգացմունքները մեր ընտանիքի և բոլոր հարազատների հետ, միշտ պատրաստ՝ օգնելու նրանց ցանկացած հարցով: Ջերմ է նրա վերաբերմունքը իմ որդի Միերի և նրա ընտանիքի անդամների հետ, հատկապես իմ սիրելի թոռնիկի՝ Դավթի հետ: Յուրահատուկ են Վլադիմիրի բարձր մարդկային հատկությունները, նրա հայրենասիրությունը՝ բարձր գնահատելով ազգի խնդիրները անձնականից:

Ժամանակը արագ փոխվեց. երիտասարդներից քչերն են ցանկանում լսել մեծերի խորհուրդները: Ես՝ որպես մեծահասակ մարդ, ցանկանում եմ, որ որոշ հուշեր գրի առնվեն հետագա սերունդների համար: Ես այս հուշերը գրելուց գիտեի, որ եղբայր Վլադիմիրը գեներալ է, բայց չեմ զարմանում, քանի որ մեծերի խոսքը ճիշտ է՝ «Մեծերին լսողի ոտքը քարին չի առնի»: Նա միշտ լսել է մեծերին ու հարգել նրանց, և այժմ էլ մեծ հարգանք է վայելում բոլոր իրեն ճանաչողներից:

*20. 02. 2007 թ.*

Համազյուղացի **ՍԱՐԳԱՐՅԱՆ** ամուսինների նամակը՝
**ԱՐԱՄԱՅԻՍ**՝ ճանաչված բժիշկ,
**ԱՍՏՂԻԿ**՝ գեներալի առաջին ու սիրված ուսուցչուհի

## ՀԱՐԳԱՐԺԱՆ ՎՈԼՈԴՅԱ ԱՍԱՏՈՒՐԻ

Նախ ընդունի՛ր մեր հեռավոր ջերմ բարևները քեզ, տիկնոջդ, տղայիդ՝ Ասատուրիկին, աղջկադ՝ Գայանեին, համագյուղացիներ – արյունակիցներ՝ Արտաշին, Վազգենին, Գրիշային, Անահիտին, Հայկանուշին, Սոսին, Հրանտին, Երվանդին և մնացած հարազատներին, որոնք մոտ ու հարազատ են Ձեր մեծ սրտին ու բարի հոգուն:

Վոլոդյա՛ ջան, այսօր ես ռադիոյով լսել եմ Ձեզ գեներալի կոչում շնորհելու լուրը, որի համար մեր սրտանց շնորհավորանքներն ենք հաղորդում՝ ցանկանալով Ձեզ երկար տարիների առողջ կյանք՝ ընտանիքով, հարազատներով ու բարեկամներով հանդերձ: Թող աստված միշտ ծափն ու ծիծաղը, երգն ու պարը Ձեզ ուղեկից անի, արևը՝ քո գլխավերև, սեղանդ՝ լիքը, հոգեկանդ՝ հանգիստ, սիրտդ՝ մեծ, ու միշտ այդպես բարի ու ամենքին նվիրված լինես:

Վոլոդյա՛ ջան, ռադիոյով Ձեզ գեներալի կոչում շնորհելու լուրը լսելուց հետո, տե՛ս թե մտքովս ինչ անցավ. Աստվա՛ծ, ի՞նչ կլիներ, եթե հայրդ՝ Աստուրը, և մայրդ՝ Նուբարը, կենդանի լինեին և գոնե լսեին, որ իրենց տղան այդպիսի բարձր զինվորական կոչման է արժանացել: Դա հորդ երազանքն էր, որ իր որդին զինվորական դառնար, դա նրա սրտի ուզածն էր: Սակայն ճակատագիրը դաժան եղավ, և նա զոհվեց Հայրենական մեծ պատերազմում 26 տարեկան հասակում՝ առանց Ձեր դեմքը տեսնելու: Բայց Դուք արդարացրիք այն բոլոր սպասելիքները, ինչ Աստուրն էր ցանկանում: Դուք ոչ միայն դարձաք զինվորական, այլև հասաք գեներալի բարձր կոչման: Աստված թող Ձեզ այդ կոչմանը արժանի համարի: Վոլոդյա՛ ջան, ամեն մարդ հին հուշեր ունի գրված կամ չգրված, առիթի դեպքում բացում ես, կարդում ու վերապրում հին հուշերով:

1943թ. նոյեմբերի 10-ին Շիշկերտ գյուղի բնակիչների մեծ մասը հավաքվել էր կոլտնտեսության գրասենյակի բակում և հանդիսավոր կերպով ռազմաճակատ էին ճանապարհում երիտասարդ զինակոչիկներին: Ելույթ ունեցողները նրանց հաղթանակով վերադարձ էին մաղթում: Մայրդ՝ Նուբարը, որն այն ժամանակ հազիվ 22 տարեկան էր, իսկ դու՝ հազիվ մեկուկես տարեկան երեխա, քո ձեռքից բռնած՝ ռազմաճակատ մեկնողներին իր մաղթանքը մարտիկի երգով ասաց, իսկ դու մյուս ձեռքդ թափահարելով հրաժեշտ էիր տալիս բանակ մեկնողներին:

Վոլոդյա՛ ջան, ծնողներիդ հիշատակը հավերժացնելու համար ամեն ինչ արել ես հեռավոր Չեխոսլովակիայում, դու հորդ նկարն ես դաջել հուշաքարին, մորդ շիրիմին գյուղում հուշաքար ես կանգնեցրել: Շա՛տ ապրես, դու հավերժացրել ես ծնողներիդ հիշատակը և նրանց արժանի զավակն ես դու: Ընտանիքով և համագյուղացիներով ջերմ բարևում ենք ձեզ բոլորիդ, սրտանց ցանկանում առողջ կյանք, բախտավորություն, երեխաներին բարի ապագա:

*Ջերմ բարևներով քո բարեկամներ՝*
*ԱՐԱՄԱՅԻՍ ԵՎ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐ*
*28 մայիսի, 1994թ. գյուղ Շիշկերտ, Ղափանի շրջան*



## ԺԱՍՄԵՆ ԱՂԱՍՅԱՆ
## ԵՊՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

### ՀԱՅՐԵՐԻ ԵՎ ՈՐԴԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

45 տարի առաջ, երբ տասնութամյա Վլադիմիր Հայրապետյանը որոշեց մեկընդմիշտ զինվորագրվել բանակին, հարազատները և ընկերները իրարամերժ վերաբերմունք դրսևորեցին: Ովքեր տեղյակ էին Վոլոդյայի կրթական-իմացական մակարդակին և հանրագիտարանային գիտելիքներին, ափսոսում էին, որ գիտությունը կորցրեց իր նվիրյալին: Իսկ մյուսների կարծիքով՝ տղան, անտեսելով ուսուցիչների և ընկերների հորդորները, գնացել էր Հայրենական մեծ պատերազմում զոհված հոր հետքերով, և անիմաստ էր հետ պահել նրան: Եվ միայն տարիներ անց, երբ Վոլոդյան փայլուն կերպով ավարտեց ռազմական հրետանային ուսումնարանը, այնուհետև ակադեմիան և սկսեց հաղթահարել խորհրդային ռազմական բանակի սանդուղքները, հարազատներն ու ընկերները միավորվեցին՝ համոզվելով, որ խոր գիտելիքներն ու վերլուծական կարողությունը ոչ պակաս կարևոր են հենց զինվորականի համար:

Խորհրդային բանակում իր երեսնամյա ծառայության ընթացքում Վլադիմիր Հայրապետյանը անցավ զինվորականի փառավոր ուղի: Նա կտրեց անցավ ԽՍՀՄ Հեռավոր Արևելքից մինչև եվրոպական մաս՝ Սանկտ Պետերբուրգ, իսկ հետո ոտք դրեց նաև Եվրոպա և ... Չեխոսլովակիայում գտավ հոր գերեզմանը: Վոլոդյայի մի նվիրական իղձն իրականություն

դարձավ. որդին հուշաքար դրեց հոր գերեզմանին և կնոջ, դստեր ու որդու հետ խունկ ծխացրեց նրա հիշատակին:

Մենք հարազատներով և՛ հայրենի Կապանում, և՛ Երևանում հեռվից հեռու հետևում էինք Վոլոդյայի քայլերին, հպարտանում նրանով, իսկ ծննդավայրում գտնվողների համար նա մի անհասանելի աստղ էր, որ փայլում էր անմատչելի ձորերով շրջապատված Շիշկերտի բարձր երկնքում: Իսկ ինձ համար, որ մասնագիտությամբ բանասեր եմ, ամենազնահատելին նրա հայերենի իմացությունն էր, որ նույն բարձր մակարդակով պահպանվեց մեր նամակագրության ամբողջ ընթացքում, և ընդօրինակելի հայրենասիրությունը, որ դրսևորվում էր ոչ միայն գործնականորեն, այլև յուրաքանչյուր բացիկի ու նամակի ծալքերում: Այդ հայրենասիրությունը մեզ համար գնահատելի էր, քանզի առավել նրբորեն դրսևորվում էր հենց հայրենիքի ու հատկապես ծննդավայրի նկատմամբ: Երբ ամռանը Վոլոդյան գալիս էր Հայաստան, նա անպայման լինում էր նաև Կապանում՝ ոչ միայն այցելելու մոր ու հարազատների շիրիմներին, այլև շփվելու համագյուղացիների հետ, տեղեկանալու գյուղի հոգսերին, բարձրանալու Խուստուփի կատարը... Ուստի զարմանալի չէ, որ մեծից փոքր ճանաչում ու սիրում էին նրան: Հայրս ու մայրս, որ Վոլոդյայի քեռին ու քեռակինն էին, ծնողի պես ողղակի պաշտում էին նրան:

Եվ ահա եկավ 1988 թվականը: Հայրենիքը փոթորկված էր, պատերազմը բախում էր մեր դուռը, մեզնից մի մասը շտապում էր ապահով հանգրվան գտնել Հայաստանից դուրս: Իսկ հայրենիքում մեկընդմիշտ հանգրվանածներս Արցախի ազատագրման և Հայաստանի պաշտպանության ելքեր էինք որոնում: Եվ այդ ամենատագնապալի օրերին ստանում ենք Վոլոդյայի նամակը. «Դիմացե՛ք, ես շուտով այդտեղ կլինեմ»:

Խորհրդային բանակի բարձրաստիճան սպա Վլադիմիր Հայրապետյանը կարող էր արդեն վաստակած հանգստի գնալ. դեռևս դիմակայող խորհրդային պետությունը իր լավագույն սպաներից մեկին և՛ բնակարան էր առաջարկում, և՛ բարձր թոշակ: Բայց Վոլոդյայի տեղն այստեղ էր՝ հայրենիքում, ուր բոլորս սրտատրոփ սպասում էինք իրեն:

Թողնելով բոլոր ապահով հանգրվանները՝ 1992 թ. Վոլոդյան ընտանիքով բնակություն հաստատեց փոթորկված Հայաստանում: Եվ ընտանիքը, վստահելով հարազատներին, անմիջապես ձեռնամուխ եղավ Հայոց բանակի կայացման գործին: Վազգեն Սարգսյանի կողմից նրան վստահվեց մասնագիտական բարձր որակավորում պահանջող աշխատանք՝ հրթիռահրետանային զորքերի կազմակերպումը: Ժամանակը շատ քիչ էր. բանակը և՛ ստեղծվում էր, և՛ միաժամանակ կռվում: Միայն մեծագույն փորձառություն անցած հրամանատարը կարող էր լուծել այդ դժվարին խնդիրը՝ ի սպաս դնելով և՛ զինվորականի իր տաղանդը, և՛ գիտելիքները, և՛, իհարկե, Խորհրդային բանակում ծառայելու տարիներին ձեռք բերած հմտություններն ու ծանոթությունները:

Պատերազմական ծանր տարիներին Վոլոդյան ոտքով բազմիցս անցավ Հայաստան–Արցախ աշխարհի բոլոր արահետներով, մասնակցեց կարևորագույն մարտերի, նաև վիրավորվեց՝ արյամբ սրբագործելով հայրենիքի համար զոհված իր մարտիկների հետ հաստատած եղբայրակցությունը: Այդ տարիներին Վոլոդյան ամիսներով բացակայում էր տնից. հյուր գնալիս նրա տանը գտնում էինք միայն կնոջը՝ Խաթունին, որն ամեն անգամ համբերությամբ սպասում էր ամուսնու վերադարձին և նույնիսկ թաքցնում էր այն բոլոր լուրերը, որոնք կարող էին մեզ վշտացնել:

Վոլոդյան Արցախում էր, երբ թշնամին մոտեցավ նրա ծննդավայրին՝ Կապանի Շիշկերտ և հարևան Ծավ գյուղերին: Համագյուղացիները ծանր մարտի բռնվեցին. նրանցից շատերը զոհվեցին: Ականատեսները հետո պատմում էին, թե ինչ անձնազոհությամբ էին երիտասարդները կռվում ադրբեջանցիների դեմ. թիկունքում ոչ միայն հայրենի գյուղն էր, այլև սիրելի գեներալի ծննդավայրը: Ի՞նչ պատասխան պիտի տային նրան, ով իրենց սովորեցրել էր պատերազմելու գաղտնիքները: Տղաները պիտի ապացուցեին, որ իր քաջերով հայտնի այդ երկրամասը պատահականորեն ծնունդ չի տվել գեներալ Վլադիմիր Հայրապետյանին:

Պատահում էր, որ Վոլոդյան մեկ օրում արցախյան ռազմաճակատից հասնում էր ծննդավայրում ծավալված մարտերին: Եվ ճանապարհին զինվորականի նրա խոհերին խառնվում էր նաև վերհուշը: Մոր պապը՝ Աղասին, որը տարածաշրջանում հայտնի էր ոչ միայն քաջությամբ, մեկ դար առաջ Գանձակում զգետնել էր թուրք ըմբիշին և հպարտությամբ տոգորել գանձակցի հայերի սրտերը: Իր պապը՝ Առուստամը, յոթանասուն տարի առաջ Գարեգին Նժդեհի հետ պաշտպանում էր Լեռնահայաստանը: Իսկ հայրը՝ Ասատուրը, հերոսաբար կռվել էր ֆաշիստների դեմ: Հայրենիքը պաշտպանելու հերթը իրենցն էր: Քաջ նախնիների ոգիները այստեղ էին՝ ծննդավայրում, և Վոլոդյան հաճախ է զգացել նրանց աջակցությունը: Այստեղ՝ Արցախյան հերոսամարտում, նա համոզվեց, որ Խորհրդային բանակում ծառայելու երեսուն տարիների ընթացքում ինքն ընդամենը նախապատրաստվում էր ի՛ր կռվին, ի՛ր հաղթանակին:

Թեև Վ.Հայրապետյանը չի սիրում խոսել իր մարտական կենսագրության մասին, բայց հայրենիքի պարգևները, մարտիկների սերը և իրեն ճանաչողների հարգանքը հավաստում են այն ներդրումը, որ ունեցել է նա Արցախյան գոյամարտում:

Հաղթանակից տարիներ անց միայն Վոլոդյան որոշեց ձեռնամուխ լինել իր հաջորդ պարտավորությանը՝ հայրենիքում կառուցել իր տունը, իսկ շրջակա այգում տնկել խաղաղության ծառեր: Հրաղադար է, և զինվորականը ժամանակ չի կորցնում: Պետք է արարել, շենացնել հայրենի երկիրը: Պետք է դաստիարակել և պատրաստել հայրենիքը պաշտպանողների նոր սերունդ:

Բոլորս գիտենք, որ Հայրապետյանը սիրում է հյուր գնալ հատկապես այն հարազատներին, ում տանը արու զավակներ են մեծանում (ինքն էլ չորս տղա թոռնիկ ունի): Նա սիրում է զրուցել տղաների հետ, նրանց քաջության և հայրենասիրության դասեր տալ:

Նույնիսկ Խորհրդային բանակում հայ սպա Վլադիմիր Հայրապետյանն աչքի էր ընկնում ակնհայտ առավելություններով: Նա ընդամենը 30 տարեկան էր, երբ ավարտեց Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիան և երեք տարի անց նշանակվեց հրետանային գնդի հրամանատար: Լավ ճանաչելով Վոլոդյային՝ ես նրա՝ իբրև զինվորականի կերպարը համարում եմ Հայոց բանակի համար ոչ թե և ոչ այնքան անցյալ (չնայած արդեն 65 տարեկան է), որքան ապագա: Հայոց բանակի սպան ինձ պատկերանում է հենց նրա՝ Վլադիմիր Հայրապետյանի կերպարով: Հայրենասիրություն, ռազմական տաղանդ, բարոյակամային բարձր որակներ, մտավորական զինվոր: Այս հատկանիշները պետք է բնութագրեն հայ սպային: Իսկ գեներալ Հայրապետյանն այս գծերը ժառանգել է Սյունյաց քաջատոհմիկ հրամանատարներից ու իր ապուպապերից և փոխանցելով գիտելիքները Հայոց բանակի մարտիկներին՝ նա նաև իր կերպարով կամրջում է հայոց պետականությունները: Հարազատներիս համար նա Վոլոդյա է, իսկ Հայոց բանակի նորագույն պատմության մեջ՝ իր մեծ երախտիքն ունեցող զորավար, գեներալ Վլադիմիր Աստուրի Հայրապետյան, Հայոց բանակի ծանր հրետանի...

*9 փետրվարի, 2007 թ.*



## ԵՐԵՎԱՆԻ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 148 ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Երբեք, առանց Սյունիքի և Արցախի, առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի մեր ամբողջական Հայրենիքը գոյություն ունենալ չէ կարող:*

*Գ.Նժդեհ*

Սյունյաց լուսեղեն բարձունքների հարազատ զավակն է Վլադիմիր Հայրապետյանը: Նրա վեհ հոգին արծվի ճախր ունի բնօրրանի սիգապանծ լեռնագագաթների պես:

Վաղ հասակից զրկվեց ծնողներից ու ծանր մանկություն ապրեց: Դժվարությունները նրան չկարողացան ընկճել, այլ թրծեցին ու ամրացրին: Նրա մեջ արմատացավ այն համոզումը, որ Հայրենիքն ու ժողովուրդն են իր անփոխարինելի ծնողները: Եվ նրանց պաշտպան լինելու համար ընտրեց զինվորականի դժվարին ուղին: Զինվորական կողմնորոշման հարցում նրան սատարեց սիրելի մորեղբայրը՝ ՀՀ վաստակավոր ուսուցիչ, նախկին հրետանավոր Մամիկոն Հարությունյանը:

Վլադիմիրը իր ռազմական կրթությունը ստացավ Թբիլիսիում և Սանկտ Պետերբուրգում, ծառայեց ԽՍՀՄ–ի տարբեր զորամիավորումներում, նաև արտասահմանում:

Կյանքն ասես հունի մեջ էր ընկել, երբ պայթեց Արցախյան ազատամարտը: Հայրենի հողը բյուրավոր ձայներով կանչում էր նրան, և նա, Ռուսաստանում թողնելով զինվորական բարձր պաշտոնն ու ապահով կյանքը, շտապեց Հայրենիք:

Նա լծվեց Հայոց բանակի կազմավորման սուրբ գործին: Նշանակվեց Հայկական բանակի հրթիռահրետանային զորքերի վարչության պետ՝ գն-

դապետի կոչմամբ: Հանգիստ չուներ. լինում էր բոլոր զորամասերում, անձամբ ստուգում և ընդունում հրետանային տեխնիկան:

Շուտով նա զինվորագրվեց Արցախյան պատերազմին: Թեժ մարտերից մեկի ժամանակ վիրավորվեց, բայց դա չխանգարեց, որ նա մնա Արցախի անմնացորդ նվիրյալը:

1994թ. մայիսի 28-ին նորաստեղծ անկախ Հայաստանի 1-ին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից նրան շնորհվեց գեներալ-մայորի բարձր կոչում: Ստացած մեծարանքը պարտավորեցնող էր, իսկ նա պարտքի տակ մնալ չէր կարող. դարձավ Հայրենիքի վերելքին նվիրված հերոսանց հերոսներից մեկը:

Այժմ հանգստի է անցել, բայց տարիքն անգամ ի զորու չէ նրան ընկճել: Շարունակում է աշխատել պաշտպանության նախարարությունում՝ իր նպաստը բերելով Հայրենիքի պաշտպանության վեհ գործին:

Վլադիմիր Հայրապետյանին ճանաչողները նրան գիտեն իբրև վսեմ նկարագրի տեր մարդու. նա անփոխարինելի ընկեր է, նվիրված, հոգատար բարեկամ և, որ ամենակարևորն է, չափազանց համեստ անձնավորություն:

*28. 01. 2007 թ.*

## 2. ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՉԱՓԱԾՈ ԽՈՍՔԸ ԳԵՆԵՐԱԼԻՆ

*ԱԲՐԱՀԱՄ ԱՆԴԱՐՏ (ԱԲՐԱՀԱՄ ՄԻՆԱՍԻ ԿԱՐԱԲԱՋԱԿՅԱՆ) բանաստեղծ, գեներալ-մայոր Վ.Հայրապետյանի դպրոցական ընկերը*

* * *

*Վլադիմիր Հայրապետյանին*

Իմ թանկագին ընկե՛ր Վալոդ,
Գալստյանդ եմ միշտ կարոտ,
Հոգիդ պայծառ միշտ արևոտ,
Քեզ գովերգելն է ավելորդ:

Ազնի՛վ ընկեր, դու շիտակ Մարդ,
Կուրծքդ լինի միշտ գեղազարդ,
Կյանքդ լինի ճիշտ գոտեմարտ,
Հոգով մնաս չխամրող վարդ:

Օրհնում եմ քեզ, անկե՛ղծ ընկեր,
Բարգավաճես, դու միշտ ծաղկես,
Բազուկներով դու աներեր
Ժողովրդին խաղաղ պահես:

Նոր սխրանքներ դու միշտ գործես,
Երկիրը մեր դու պաշտպանես,
Հերոսաբար մարտի ելնես,
Մեդալներով գեղազարդվես:

Դու միշտ շիտակ, միշտ պարզերես,
Կյանքում մաղթեմ, որ երկար ապրես,
Թոռնիկներով դու ծերանաս,
Զավակներով անմահանաս:

*Երևան, մայիս, 1976*

* * *

*Գեներալ Վլադիմիր Հայրապետյանին*

Հայ ես ծնվել իմ ընկե՛ր,
Անշեղ աճել իմ ընկե՛ր,
Հավատամքով մարդկային
Հեզություն ես իմ ընկե՛ր:

Սեր ես լրիվ իմ ընկե՛ր,
Խնկաբույր ես իմ ընկե՛ր
Օրինակով հմայիչ
Վեհություն ես իմ ընկե՛ր:

Մաքրաժպիտ իմ ընկեր,
Ընկեր-եղբա՛յր իմ ընկեր,
Ընկերության զուլալում
Հավերժաքով իմ խնկընկեր:

*25.06.2006թ.*

* * *

Գնաց:
Մեր կյանքը գնաց:
Մեր ընկերության անսասանելի
Հավերժը մնաց:

Գնաց, իմ ընկե՛ր
Մեր փոխ–վայելքի օրերը գնաց,
Մեր իրար հանդեպ հոգեկան կապի
Հավերժը մնաց:

Այն էլ տանում ենք դեպի լուսաբաց՝
Ճշտով ճիշտ կյանքի բուն նախաշեմին,
Ուր ընկեր–եղբայր վայելքը կապրենք
Անբաժան, անլաց . . .

Ընկե՛ր իմ զորեղ, ընկե՛ր իմ բանաց . . .
Մինչ... նոր լուսաբաց:

*25.06.2006թ.*

## ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱԲԱՋԱԿՅԱՆ

### ԳԵՆԵՐԱԼԻՆ

*գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանին*

Դու գտել ես անցյալի
Մարտերի մեջ ամեհի
Մասունքները հոր փառքի:
Քո վերքերի մեջ է դեռ
Ծխում բարձունքը վերջին,
Քո զենքերի մեջ է դեռ
Չասված խոսքերը սրտի:
Հրանոթների զարկերը պատվի
Քեզ Զանգեզուրի լեռները տվին:
Ե՛վ օրհնություն կա՝ կյանք է պահպանում,
Ե՛վ զորապետի կոչում ու անուն,
Որ Զանգեզուրի լեռները տվին ...

*Երևան, 2007*

**ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** *(գնդապետ Գագիկ Կարապետյանի հայրը, գեներալ Վ.Հայրապետյանի կողմից հարգված եզակի անձնավորություն )*

*Նվիրում եմ գեներալ Վ.Հայրապետյանին*

Ծանոթությունս Ձեզ հետ Դիլիջանում եղավ,
Ափսոս, ուրախ առիթով չեղավ,
Ալբերտ Աշոտիչի հուղարկավորությունն էր,
Այնժամ Վ.Հայրապետյանը գնդապետ էր:

Զգացվեց, որ Դուք անվախ մարդ եք,
Իսկական Դուք էիք անկախ,
Մահախոսականը առաջինը Դուք ասացիք,
Ինչ ուզում էին ասել, արհամարհեցիք:

Այդ օրը խոստացաք չմոռանալ Դավթյանին,
Հայաստանի և Արցախի համար կռվեցիք,
Արդարացի եղավ. գնդապետը գեներալ դարձավ,
Բայց արդեն երեք տարի եղավ, նա մեր գյուղ չեկավ:

Ոչինչ, ծանր է գործդ, ժամանակ չունեք,
Արձակուրդ գնաք, մի օր գյուղ կգաք,
Դուք խելոք մարդ եք ու հայրենասեր
Զգացվում է՛ նաև լավ ընկեր ու բարեկամասեր:

Հաճախ տեսնում եմ հեռուստացույցով,
Հանդես ես գալիս հայրենասիրական խոսքերով,
Կրակել սովորեցնում հրանոթներով,
Ուրախացնում եք Ձեր զինվորներով:

Լյովա Հարությունյանի հոբաքրոջ որդին ես,
Նրանից էլ համեստ ու ազնիվ մարդ ես,
Ինչ պաշտոն էլ տան, արժանի ես,
Ձեզանով անչափ ուրախանում եմ ես:

*Երևան, 1995*

*ՎԱՀԱԳՆ ՄՈԽՂՆԵՑՅԱՆ 60–ամյա հոբելյարին՝*
*գեներալ Վլադիմիր Հայրապետյանին*

* * *

Ամեն մարդու բան չէ, Եղբա՛յր,
Լինել Ընկեր և Զորական,
Եվ, մանավանդ, լինել շիտակ,
Արդար լինել և Պատվական:

Զինվորների համար լինել
Մեծախորհուրդ ու խոհական,
Ավագների հանդեպ՝ խոնարհ,
Թույլի համար լինել վահան:

Հայրենիքը չքննարկել,
Լինել Որդին Հայրենիքի,
Թագը լինել և պսակը
Աղաքասեր ընտանիքի:

Ահա … Դու ես, իմ բարեկա՛մ,
60–ամյա իմ լա՛վ Ընկեր,
Քեզ դեռ պատիվ պիտի բերեն
Զորանալու շատ տարիներ:

Ուր էլ լինես՝ Արյունը Քո
Պիտի ցնծա Հայկյան լույսով,
Եվ դեռ այդպես պիտի երկար
Ազգանվեր Քո հավեսով …

Եվ զոչությունից Քո զորընդեղ
Ոսոխները թող դողդողան՝
Թող շրխկան արկերը բյուր,
Հրանոթները դղրդան:

*20. 07. 2002 թ., Երևան*

*Բանաստեղծ* ***ՄԵԼԻՔ ՇԱՀԻՆՅԱՆԻ*** *բանաստեղծությունները*
*նվիրված գեներալ Վ.Հայրապետյանին*

* * *

Մեր սյունեցի մեծ զորավա՛ր,
Բարի ընկեր Հայրապետյա՛ն,
Ձեր գրածը ես կարդացի,
Ամբողջ հոգով ես հուզվեցի,
Ու զգացի, որ կարող եմ մի բան անել
Ու իմ գրչով, հոգուս կանչով, հերոսներին գովաբանել
Ու իմ հոգու ողջ էությամբ հայրենիքիս նվիրվել.
Եվ Ձեզ՝ մեծիդ, զորավարիդ, իմ գրածները նվիրել,
Ու ցանկանալ հերոսներիդ խաղաղ կյանքում զորավարել,
Եվ բանակով մեր հայկական խաղաղության պաշտպան լինել,
Իսկ Ձեզ՝ Հայոց գեներալիդ,
Հրետանային մեր զորքերի հրամանատարիդ,
Առողջություն, երջանկություն, ուժ ու եռանդ,
Զորավարի Ձեր տաղանդով ծառայել մեր բանակին՝
Համայն հայության պարծանքին:
Ահա այսպես եմ հասկանում, իմ գրքույկը Ձեզ նվիրում,
Մեր մեծարգո գեներալ՝
Հայոց ուժը լավ իմացող, հայոց ոգին լավ հասկացող,
Հայրենիքի նվիրյալ, Սյունյաց բազե,
Մեծ զորավար ...

*01. 12. 2001 թ.*

## ԳԵՆԵՐԱԼԻՆ

Դու անհաս ես, վեհություն ես,
Մասիսի պես անառիկ ես
Մեր հայրենի լեռների պես անկոտրում ես,
Անհաղթելի՝ մեր սիրելի Դավիթի պես,
Պարզ ու զուլալ՝ մեր Սևանի ջրերի պես,
Զորավարն ես մեր Նաիրյան Հայրենիքի,
Զորքերդ՝ միշտ մարտի պատրաստ՝
Ոսոխի դեմ մարտնչելու,
Տիգրան Մեծի, քաջ Վարդանի
Կիսատ գործը շարունակելու.
Ուղեցույցն ես, արենտիրն ես
Հրետանային–հրթիռային մեր զորքերի,
Մեր գեներա՛լ, մեր սիրելի՛:
Հուշարձաններ կառուցելով բարձրացնում ենք հայոց ոգին,
Բայց չենք կարող դիմակայել հզորացող մեր ոսոխին:
Անհրաժեշտ է, հարկավոր է հզորացնել հրթիռային մեր զորքերին...
Երբ նայում ենք զորահանդեսը մեր բանակի,
Մեր սրտերում արթնանում է տենչ ու եռանդ ու նոր ոգի.
Վրեժի ցասում ոսոխի դեմ ու նոր կորով աշխատանքի:
Միշտ ուժեղն է թելադրողը
Իր իսկ օգտին խաղաղություն պարտադրողը.
Հազարամյա պատմությունից՝ «Գայլն ու գառի» փորձից գիտենք
Մեր գեներա՛լ, մեր սիրելի՛,
Հպարտություն Հայոց ազգի:

# ԳԵՆԵՐԱԼԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԵԼԻՔԻՆ

Մեծարգո՛ Մելիք

Մեծ ուշադրությամբ կարդացի Ձեր ջերմ սրտից բխած գեղեցիկ և բովանդակալից բանաստեղծությունները, որոնք հուզեցին իմ՝ կադրային զինվորականի ողջ էությունը և միտքերը:

Դուք գրում եք ի սրտե, գովաբանում և մեծարում բարիդրացիականը, գեղեցկությունը, հայ զինվորականի քաջությունն ու սխրանքը, որը նա կատարել է և շարունակում է կատարել հանուն մեր հայոց պետականության և հայ ժողովրդի գոյատևման:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, երջանիկ լինեք Ձեր լավ զավակներով, կյանքում միշտ լինեք այդպես հպարտ, ինչպիսին ես Ձեզ գիտեմ, իսկ Ձեր գրչին՝ նորանոր ստեղծագործություններ հանուն ազատ և անկախ Հայրենիքի և ապագա երջանիկ սերնդի:

*Լավագույն մաղթանքներով՝*
*ՀՀ ՊՆ Հրթիռահրետանային զորքերի պետ*
*գեներալ-մայոր Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, 19.11.2001թ.,*

## *ՄԵՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ (ՔԵՌԻ)*

*Դու մեծ ես, քանզի կյանքում*
*Ապրել ես պարզ ու համարձակ ...*

Սուրբ Ծննդյան առթիվ՝ սիրելի զինակցիս՝ գեներալ Վլադիմիր Հայրապետյանին

Որպես ի խորոց հոգուս ամենաբարի ցանկության, լավագույն մաղթանքների, անկեղծ սիրո ու անաչառ մտերմության առհավատչյա: Ինչպես մինչև այսօր, այսուհետ նաև Չի՛գ կեցիր, Հա՛յ զինվոր: Ամեն մոր կաթ չէ, որ անմնացորդ նվիրյալ Հայ զինվոր է սնում, ամեն մայր չէ, որ իր ծոցում ազգի զոհասեղանին անվարան գլուխը դնող զավակ է ջերմացնում: Մորդ տված արդար կաթի ու աստվածաշնորհ ծոցի ջերմության շնորհիվ դու զորապետ ես դարձել:

Ուրեմն մինչև վերջ, պատվախնդիր, անմռունչ կրի՛ր աստվածաշնորհ դժվար խաչը, որ ճակատագիրն է Ազգիդ:

Չի՛գ կեցիր, Հա՛յ զինվոր.

Թեև չափազանց դժվար, սակայն փառահեղ հաղթանակներն առջևում են ...

*15. 10. 1997 թ.*

# 3. ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» – 15–22 հոկտեմբեր, 1994թ., թիվ 28, էջ 3

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ը ՀՐԵՏԱՆՈՒ ՕՐՆ Է
## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

Ծնվել է 1942թ. հունիսի 25-ին. Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում: Տեղի յոթնամյա դպրոցից հետո տեղափոխվել է Երևան և ուսումը շարունակել թիվ 90 միջնակարգ դպրոցում: 1961թ–ին ընդունվել է Թբիլիսիի ռազմական հրետանային ուսումնարանը, որից հետո զինվորական ծառայությունը շարունակել է Ուկրաինայում և Գերմանիայում:

1968–1972թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգի) հրետանային ակադեմիայում: Ավարտելուց հետո խորհրդային բանակում զբաղեցրել է հրամանատարական բարձր պաշտոններ, եղել է կորպուսի հրթիռահրետանային զորքերի պետ: 1992թ. հունիսին վերադարձել է Հայրենիք և նշանակվել ՀՀ Զինված ուժերի հրետանու վարչության պետ:

Ամուսնացած է, ունի տղա և աղջիկ: Մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական կռիվներին և վիրավորվել: 1994թ. մայիսի 28–ին Հանրապետության նախագահի հրամանով Վ. Հայրապետյանին շնորհվեց գեներալ–մայորի կոչում:

*—Պարո՛ն գեներալ, ի՞նչ դեր է վերապահված հրետանուն ժամանակակից պատերազմում:*

Իր ստեղծման առաջին օրվանից հրետանին վճռորոշ դեր է կատարել բոլոր տեսակի մեծ ու փոքր պատերազմներում: Եվ պատահական չէ, որ այն ստացել է «պատերազմի աստված» անվանումը: Մեծ է հրետանու դերը ինչպես Առաջին, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում և հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ տեղային հակամարտություններում: Այդպես է և այսօր: Հրետանին շատ կարևոր զենք է հատկապես մեր տարածաշրջանում՝ լեռնային պայմաններում:

—Հայ–ադրբեջանական հակամարտության առաջին շրջանում հակառակորդ կողմը կիրառվող զենքերի թե՛ քանակի, թե՛ որակի տեսակետից առավելություն ուներ, իսկ ինչպիսի՞ն է իրավիճակն այսօր, հատկապես հրթիռահրետանային զենքերի ասպարեզում:

—Հայտնի է, որ դեռևս Խորհրդային Միության գոյության ժամանակ Ադրբեջանին հանձնվեց այնտեղ տեղակայված 4–րդ բանակի զրեթե ողջ տեխնիկան ու զինամթերքը: Այդ նրանք առաջինը Արցախի խաղաղ բնակչության դեմ օգտագործեցին ծանր տեխնիկա, նաև «Ալազան» տիպի հրթիռներ, «գրադ» կայանքներ և այլն: Հայաստանի Հանրապետությունը 7–րդ բանակի զենքն ստացավ 1992–ի հունիս–օգոստոս ամիսներին, ԼՂՀ–ն նույնպես շատ ավելի ուշ ստացավ Ստեփանակերտում տեղակայված զենքը: Ինչպես Հայաստանի, այնպես էլ ԼՂՀ զինված ուժերը, այդ թվում հրետանային կազմավորումները ձևավորվեցին ընթացող պատերազմի պայմաններում: Այդ ամբողջ ժամանակաշրջանում թշնամին անընդհատ հրթիռահրետակոծության էր ենթարկում Արցախի բնակավայրերը, Հայաստանի սահմանամերձ շրջանները: Այնուամենայնիվ, ստանալով հրանոթներ, «գրադ» հակատանկային և հրթիռահրետանային կայանքներ, մենք ի վիճակի եղանք ռազմաճակատում բեկում մտցնել ուժերի հարաբերակցությունում: Այդ գործում իսկայական ավանդ ունեն մեր հրետանավոր սպաներ Էնրիկո Ապրիամովը, Կամո Սիմոնյանը, Միքայել Գրիգորյանը, Ներսես Մուրադյանը, Սերգեյ Գրիգորյանը, Վլադիմիր Մխիթարյանը, Ռայմոնդ Մազաուզյանը, Ալբերտ Դավթյանը, Զավեն Հարությունյանը: Ցավոք, այս ընթացքում մենք տվեցինք նաև ցավալի կորուստներ, զոհվեցին մեր լավագույն հրետանավորներ Վահագն Հակոբյանը, հրետանային վարչության շտաբի առաջին պետ, զնդապետ Առնո Տատինցյանը, մայոր Ժ.Պետրոսյանը, ականանետ Արկադին և ուրիշներ, որոնց մենք երբեք չենք մոռանում:

Այսօր կարելի է ասել, որ մեր և հակառակորդ կողմի՝ Ադրբեջանի հրետանային կարողությունները մոտավորապես հավասար են: Կարևորը եղածի նպատակային և արդյունավետ օգտագործումն է:

*—Պարո՛ն Հայրապետյան, եղել են ճակատամարտեր, որտեղ հիմնական դերը կատարել է հրետանին, ե՞րբ և ի՞նչպես է որոշվել հրետանու օրը:*

—1992թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին թշնամին, մեծ ուժերով անցնելով հարձակման, ձգտում էր փակել Լաչինի մարդասիրական միջանցքը: Առանց հայկական հրետանու նպատակային հարվածների անհնարին էր պահել ԼՂՀ–ն Հայաստանին կապող այդ տարածքը: Փաստորեն, այդ ճակատամարտերի հիմնական դերակատարը մեր հրետանին էր: Այդ պատճառով էլ որոշվեց հոկտեմբերի 19–ը անվանել հրետանու ծննդյան օր:

—Հրետանավորների տոնական օրվա առթիվ կարելի է հիշել լավագույն զորամասերին, հրետանավորներին:

—Իհարկե, այսօր մեր հրետանին իրենից մեծ ուժ է ներկայացնում, ունի հակահարվածի մեծ հնարավորություններ: Հայաստանի սահմանա-

մերձ շրջանները պաշտպանելիս իրենց գերազանց դրսևորեցին Է.Ավրիամովի հրամանատարությամբ գործող զորամասի հրետանավորները: Զորամասի սպաների, ենթասպաների, սերժանտների անմիջական մասնակցությամբ ոչնչացվել է թշնամու 35-ից ավելի զրահատեխնիկա: Հատկապես աչքի է ընկել ենթասպա Արտակ Բաղդասարյանը: Նա հակատանկային կառավարվող հրթիռի (ПТУР) հրամանատար է: Նրա ակտիվում գրանցված է խփված 9 տանկ, 1 հետևակի մարտական մեքենա: Լեյտենանտ Մելիքսեթ Բաղդասարյանը խփել է 3 տանկ, ավագ լեյտենանտ Գարուն Զամբազյանը՝ 4 տանկ: Նա կամավոր մեկնել էր Ղարաբաղ և մարտնչում էր ԼՂՀ բանակի կազմում: Գարունն այնտեղից վերադարձավ՝ լավ հրետանավորի անուն վաստակած: Կան շատ տղաներ, որոնք նույնպես բարձրակարգ մասնագետներ են: Հրետանային զորամասերի ձևավորման և մարտական պատրաստության բարձրացման գործում մեծ աշխատանք են կատարում մեր վարչության անդամները՝ Լևոն Միքայելյանը, Ներսես Մուրադյանը, Բաբկեն Աբրահամյանը, Կամո Մանուկյանը և ուրիշներ:

*—Ինչպիսի՞ն է հայկական հրետանու ապագան, ես նկատի ունեմ հրետանավոր կադրերի պատրաստումն ու հրետանային կայանքների կատարելագործումը:*

Մասնագետների պատրաստումը լուրջ խնդիր է և գտնվում է մեր ուշադրության կենտրոնում: Սերտ կապեր են հաստատված ռուսական բանակի, ռազմական ուսումնարանների հետ: Ինչպես անցած, այնպես էլ այս տարի մենք ուսանողներ ենք ուղարկել այնտեղ սովորելու: Բացի դա, մեծ հույսեր ենք կապում նորաստեղծ ռազմական բարձրագույն ուսումնարանի հետ: Սպասելիքներ ունենք սպայական դասընթացների կուրսանտներից, պահեստի զորակոչված սպաներից, զինվորական ամբիոններ ունեցող բուհերից:

Հրետանին շատ կարևոր, միաժամանակ թանկարժեք զենք է, այն պահանջում է մշտական խնամք, բանիմաց շահագործում: Ես չեմ կարող դրվատանքի խոսքեր չասել մեր նորոգման գումարտակի տղաների հասցեին: Նրանք ժամանակին, նաև առաջին գծում, նորոգում և շարք էին վերադարձնում խափանված տեխնիկան, կայանքները, մարտական մեքենաների կրակային հզորությունները: Մեր գիտական միտքը և արդյունաբերությունը պետք է ջանք ու եռանդ չխնայեն հրետանային կայանքների կատարելագործման, առանձին սարքավորումների արտադրության և նորոգման գործում: Արդյունաբերությունը պետք է ստանձնի հրետանու հոգսերը: Այն մեզ շատ է անհրաժեշտ:

*—Պարո՛ն գեներալ, թո՛ւյլ տվեք մեր խմբագրության կողմից կանխավ շնորհավորել Ձեզ և բոլոր հրետանավորներին՝ հայկական հրետանու հիմ-*

*նաղրման երկրորդ տարեկիցի առթիվ, և հետաքրքիր է իմանալ, թե հրետանավորները ինչպես են նշելու իրենց օրը:*

—Շնորհակալություն: Հոկտեմբերի 19-ին հրետանային զինմասերում կլինեն տարբեր տեսակի տոնական, հանդիսավոր միջոցառումներ, կտրվի տոնական ճաշ, կկազմակերպվեն զանազան հանդիսություններ, մարզական միջոցառումներ, կինոդիտումներ և այլն: Իսկ մարտական դիրքերում գտնվողները կլինեն հրետանու կողքին:

*Հարցազրույցը վարեց Արամ Ներսիսյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 12–19 հոկտեմբեր, 1996 թ., թիվ 40, էջ 5

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի ուղերձը հակատանկային–հրետանային գնդի անձնակազմին՝ զորամասի ստեղծման 4–րդ տարելիցի առթիվ

Հակատանկային Ձեր գունդը ստեղծվեց 1992թվի հոկտեմբեր ամսին պաշտպանության նախարարի հրամանով, այն ժամանակ, երբ թշնամին մեծ ուժերով ձգտում էր փակել Լաչինի հումանիտար միջանցքը դեպի ԼՂՀ և արդեն հրետակոծում էր Գորիսը, Կապանը և մեր մյուս սահմանամերձ քաղաքներն ու բնակավայրերը:

Գնդի կազմավորումը նպատակ էր հետապնդում կարճ ժամկետում ստեղծել հակատանկային դասակներ, մարտկոցներ և դիվիզիոններ, որոնք պետք է պաշտպանեին վտանգավոր ճանապարհները և ուղղությունները ՀՀ արևելյան սահմաններում:

Նորաստեղծ գնդի անձնակազմը ստացավ անհրաժեշտ հակատանկային միջոցներ և համալիրներ: Գնդի ամբողջ անձնակազմը, որը ղեկավարում էր նրա առաջին հրամանատարը՝ գնդապետ Է.Ա.Այրիամովը, կարճ ժամանակում տիրապետեց ժամանակակից հակատանկային միջոցներին և կարողացավ հակատանկային որոշիչ հարվածներ հասցնել հակառակորդին, որի ընթացքում թշնամին կորցրեց մեծ քանակությամբ տանկեր և զրահատեխնիկա, հատկապես Զանգեզուրի հարավ արևելյան սահմանամերձ հատվածում:

ՀՀ նախագահ և զինված ուժերի գլխավոր հրամանատար Լևոն Տեր Պետրոսյանը բարձր գնահատեց Ձեր հակատանկային–հրետանային գնդի անձնակազմի մարտական սխրանքները:

Նախագահի 1996թ. սեպտեմբերի 20–ի որոշումով պարգևատրված են մի շարք զինվորականներ:

Գնդի առաջին հրամանատար, գնդապետ Էնրիկո Այրիամովը՝ Մարտական խաչի 2–րդ աստիճանի շքանշանով, մայոր Պողոս Գառնուշի Աբրահամյանը՝ «Արիության համար» մեդալով, լեյտենանտ Արտակ Հովհաննեսի Բաղդասարյանը՝ Մարտական խաչի 1–ին աստիճանի շքանշանով, դասակի հրամանատարի տեղակալ լեյտենանտ Արտակ Ժորայի Ավետիսյանը՝ Մարտական խաչի 2–րդ աստիճանի շքանշանով (հետմահու), լեյտենանտ Մելիքսեթ Աղվանի Բաղդասարյանը՝ Մարտական խաչի 2–րդ աստիճանի շքանշանով:

Ձեր հակատանկային գունդը այսօր հանդիսանում է Զինված ուժերի հրետանային զորքերի առաջավոր գնդերից մեկը, հուսով եմ, որ անձնակազմը միշտ էլ կձգտի տեխնիկան պահելու մարտական վիճակում և պատրաստ կլինի պաշտպանելու Հայրենիքի սահմանները:

Սրտանց շնորհավորում եմ ողջ անձնակազմին՝ ցանկանալով բոլորին քաջառողջություն և նորանոր հաջողություններ՝ մարտական պատրաստության և մարտունակության բարձրացման գործում:

# «ՀՐԵՏԱՆԻՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՍՏՎԱԾՆ Է ՆԱԵՎ ԱՅՍՕՐ»
## ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի անկախ Հանրապետության զինված ուժերի կրակային հզորության զգալի մասն են կազմում հրետանային զորքերը, որոնց կազմավորումը սկսվեց 1992թ. հոկտեմբեր ամսից, երբ թշնամու հարվածային ուժերն ամեն կերպ ձգտում էին փակել Լեռնային Ղարաբաղ տանող միակ ճանապարհը, մշտական վտանգի տակ էին մեր արևելյան սահմանները և ԼՂՀ անկախությունը: Կարճ ժամանակահատվածում կազմավորվեցին հրետանային զորամասերը և ստորաբաժանումները, որոնք դարձան թշնամուն զսպող հզոր ուժ: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում հրետանու հուժկու կրակային հարվածները շատ բանով նպաստեցին մեր զորքերի ընդհանուր մարտական հաջողություններին:

Հայ հրետանավորները մարտի դաշտերում ցուցաբերեցին արիություն, խիզախություն և տոկունություն, նրանց դիպուկ կրակից թշնամին կրեց մարդկային ուժի և զրահատեխնիկայի մեծ կորուստներ: Հրետանավորների շարքերում իրենց սխրանքով աչքի ընկան շնորհալի հրետանավորներ մայորներ Ռաֆիկ Պետրոսյանը և Արկադի Սեմերջյանը, կապիտաններ Գուրգեն Արշակյանը, Վահագն Հակոբյանը, Անատոլի Ղավալյանը, որոնք զոհվեցին մարտի դաշտում հանուն այսօրվա Ազատ և Անկախ Հայաստանի: Նրանք իրենց արյունով գրեցին մեր հրետանու պատմության առաջին էջերը:

Այսօր էլ Հայրենիքին մեծ նվիրվածությամբ են ծառայում և իրենց հարուստ փորձն ու գիտելիքները երիտասարդ սերնդին հաղորդում հրետանավորներ՝գնդապետներ Ներսես Մուրադյանը, Կամո Մանուկյանը, Ռայմոնդ Մազաուզյանը, Ռազմիկ Գարեգինյանը, Ալբերտ Մկրտչյանը, Բաբկեն Աբրահամյանը, Էնրիկո Ապրիամովը, Ալիկ Հովսեփյանը, Ռաֆիկ Ներսեսյանը, փոխգնդապետներ Երվանդ Հասրաթյանը, Զավեն Հարությունյանը, գեներալներ Ժորա Գասպարյանը, Յուրի Խաչատուրովը և Միքայել Գրիգորյանը:

Հատկապես ուզում եմ նշել անուններն այն հրետանավոր սպաների, որոնք դարձան հրետանու հմուտ մասնագետներ արդեն մեր երիտասարդ բանակում և վերջին 4 տարիների ընթացքում մեծ եռանդով ու նվիրվածությամբ են ծառայում Հայրենիքին, հայոց պետականությանը: Նրանք են՝ մայորներ Սանասար Գյուրջյանը, Արտակ Գալստյանը, կապիտաններ Սևադա Հովհաննիսյանը, Արմեն Հարությունյանը, Կամո Զաքյանը, Սեդրակ Սեդրակյանը, Արմեն Արշակյանը, Արտավազդ Յաղմուրյանը, Մկրտիչ Մարտիրոսյանը, Գարուն Աբգարյանը և շատ ուրիշներ:

Հայոց բանակի Գերագույն հրամանատարը՝ հանրապետության նախագահը և ՀՀ պաշտպանության նախարարը բարձր գնահատեցին հրետանա-

վորների ծառայությունը հայոց պետականության կայացման գործում: Մի շարք հրետանավորներ արժանացել են բարձր պարգևների և զինվորական կոչումների: Ուզում եմ նշել նրանցից ամենաերիտասարդին՝ N55035 զորամասի մարտկոցի հրամանատար լեյտենանտ Արտակ Բաղդասարյանին, որը դիպուկ հակատանկային համալիրից ոչնչացրել է թշնամու 8 տանկ և 1 զրահամեքենա: Հայաստանի Հանրապետության նախագահի 1996թ. սեպտեմբերի 20–ի N 640 հրամանագրով նա պարգևատրվել է Մարտական խաչի 1–ին աստիճանի շքանշանով:

Պետք է ասեմ, որ հայ հրետանավորները մեծ լումա ունեն Հայոց բանակի կազմավորման և նրա զարգացման գործում: Նրանց մի մասը հաջողությամբ ծառայությունը շարունակում է, մի քանիսն էլ ղեկավարում են մեծ զորամիավորումներ: Այդպիսիք են գեներալ–մայորներ Յուրի Խաչատուրովը և Միքայել Գրիգորյանը, գնդապետներ Էնրիկո Ապրիամովը և Հայկազ Բաղմանյանը:

Հոկտեմբերի 19–ին ՀՀ զինված ուժերում տոնում են հրետանու զորքերի 4–րդ տարեդարձը: Դա դեռևս մի կարճ ժամանակահատված է բանակի կառուցման և զարգացման համար: Սակայն մեզ հաջողվեց ստեղծել այս հրաշալի զորատեսակն ի շնորհիվ, առաջին հերթին, մեր հանրապետության նախագահի՝ Լևոն Տեր–Պետրոսյանի վարած հեռատես քաղաքականության և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի քրտնաջան աշխատանքի, նրանց շուրջը հավաքված մի խումբ հայրենասեր–զինվորականների աջակցության ու մասնակցության:

Ուզում եմ հատկապես նշել հրետանավոր ազատամարտիկներին՝ Գառնուն, Էդիկ, Հրաչ և շատ ու շատ նվիրյալներ: Թող ինձ ներեն, որ բոլորի անունները չեմ նշում: Առաջին հրետանային հրանոթների և դասակների հրամանատարներ նշանակվեցին այդ համարձակ ու խիզախ տղաները: Նրանք այսօր արդեն ոչ միայն դասակի, այլև մարտկոցների և հրետանային դիվիզիոնների հրամանատարներ են, իսկ ամենատաղանդավորները՝ զորամասերի հրետանու պետեր, զորամասի հրամանատարներ:

Կանցնի ևս մի փոքր ժամանակահատված, և մեր բանակը կունենա բարձր մակարդակով պատրաստված պրոֆեսիոնալ սպայական կազմ, և հրետանին ավելի կհզորանա. այդ խնդրին են ծառայում ՀՀ զինված ուժերի բազմաքնույթ հրամանատարական ուսումնարանը, ԲԱԿ–ը, սպայական վերապատրաստման դասընթացները:

Զինված ուժերի հրետանու սպառազինության վերանորոգման, պահպանման և սպասարկման գործում մեծ ծառայություն կատարեց Հրետանու վարչության սպա՝ ավագ լեյտենանտ Մ.Նազարեթյանը, որը կարճ ժամկետում կարողացավ կատարել մեր բոլոր հրամաններն ու հանձնարարությունները:

Հակատանկային միջոցների սպասարկման գործում մեծ աշխատանք է կատարում գնդապետ Մ.Ղարիբյանը: Մեր շնորհակալությունն ենք հայտ-

նում գործարանի տնօրեն պարոն Սիմոնյանին, զինված ուժերի ՁՏ ծառայության պետ, մայոր Մուրադ Իսախանյանին, հրետանու որակով վերանորոգման համար՝ արտադրության պետ Ռուստամ Սիմոնյանին:

Ինչպես բոլոր զորատեսակները, այնպես էլ հրետանային զորքերը ունեցան քանակական և որակական առաջընթաց, հատկապես 1995թ. երկրորդ կեսից մինչև այսօր:

Օրեցօր բոլոր հրամանատարների ջանքերով բարձրացվում է հրետանու մարտական պատրաստականությունը: Այդ գործում ուզում եմ հատկապես նշել գեներալ-մայոր Մ.Գրիգորյանին, գնդապետներ Ֆ.Գզողյանին, Ղ.Հովհաննիսյանին, Մ.Հարությունյանին, փոխգնդապետներ Կ.Սիմոնյանին, Ա. Անթանեսյանին, Հ.Մուրադյանին: Դրան նպաստեցին նաև համատեղ զորավարժությունները Ռուսաստանի Դաշնության զորքերի հետ, որի ժամանակ մեծ պատասխանատվությամբ կատարվեցին հրետանու կրակային խնդիրները:

Պետք է հիշեցնեմ բոլոր զորամասերի հրամանատարներին, որ հրետանու մարտական պատրաստությունը միշտ պետք է լինի նրանց հսկողության և հոգատարության տակ, զորամասը հզոր է, երբ հզոր է նրա հրետանին:

«Հայ Զինվոր» թերթի միջոցով ցանկանում եմ շնորհավորել ՀՀ զինված ուժերի զորամասերին հրետանու օրվա առթիվ և զինված ուժերի բոլոր հրետանավորներին՝ սպաներին, ենթասպաներին, սերժանտներին և զինվորներին, գործարանի կոլեկտիվին, բոլոր նրանց, ովքեր մասնակցում են հրետանու հետագա զարգացմանը: Ցանկանում եմ բոլորին քաջառողջություն ծառայության մեջ և անձնական կյանքում:

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 21–28 հունիս , 1997թ.՝ թիվ 24, էջ 3

## ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 55–ԱՄՅԱԿԸ

Վլադիմիր Հայրապետյանը ծնվել է 1942թ. Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում: Տեղի յոթնամյան ավարտելուց հետո տեղափոխվում է Երևան և ուսումը շարունակում թիվ 90 միջնակարգ դպրոցում: 1961–ին ընդունվում է Թբիլիսիի ռազմական հրետանային ուսումնարան, որն ավարտելուց հետո ծառայությունը շարունակել է Ուկրաինայում և Գերմանիայում:

1968–1972թթ. Վ.Հայրապետյանը սովորել է Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիայում: Ավարտելուց հետո խորհրդային բանակում զբաղեցրել է հրամանատարական բարձր պաշտոններ, եղել է կորպուսի հրթիռահրետանային զորքերի պետ: 1992–ի հուլիսին վերադարձել է Հայրենիք և նշանակվել ՀՀ զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի վարչության պետ: Մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական կռիվներին: 1994թ. մայիսի 28–ին հանրապետության նախագահի հրամանագրով Վլադիմիր Հայրապետյանին շնորհվեց գեներալ–մայորի կոչում:

Գեներալ Վ. Հայրապետյանն իր կյանքի 55 տարիներից ավելի քան 35–ը նվիրել է սիրած մասնագիտությանը՝ «պատերազմի աստծուն», իր արհեստավարժությամբ մեծ ավանդ է ներդրել հայկական հրետանու ստեղծման ու զարգացման, ազատագրական պայքարում ձեռք բերած հաղթանակների գործում:

Սրտանց շնորհավորում ենք վաստակաշատ գեներալին՝ ծննդյան 55–ամյակի առթիվ, մաղթում նրան քաջառողջություն, նորանոր խիզախումներ՝ ի փառս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի:

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 16–23 հոկտեմբեր , 1999թ., թիվ 41, էջ 4

# ԲԱՆԱԿԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՅԻՆ ՎԱՀԱՆԸ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

*—Ազգային բանակում հրետանու կազմավորման 7-րդ տարեդարձի առիթով շնորհավորելով բոլոր հայ հրետանավորներին՝ պարո՛ն գեներալ, կուզեի, որ մի քանի խոսքով ներկայացնեիք նրա կազմավորման ընթացքը և նշեիք զինված ուժերում նրա դերն ու նշանակությունը:*

—Ըստ էության, հրետանու վարչությունը կազմավորվել է ազգային բանակի ձևավորմանը զուգընթաց, և ընդամենը մեկ տարի անց այն արդեն ինքնուրույն և կարևոր օղակներից մեկն էր:

1992թ. հոկտեմբերին, երբ թշնամու հարվածային ուժերը փակել էին Լեռնային Ղարաբաղ տանող միակ ճանապարհը և մշտական վտանգի տակ առել հանրապետության արևելյան սահմանները, հրետանային մեր ստորաբաժանումներն իրենց դիպուկ և հուժկու հարվածներով շատ բանով նպաստեցին կամավորական ջոկատների և բանակի առաջին ստորաբաժանումների ընդհանուր մարտական հաջողությանը: Այդ ծանր ու օրհասական ժամանակներում Վ.Սարգսյանը առաջիններից մեկը կարևորեց հրետանու անհրաժեշտությունը: Ազգային բանակի հրետանում ընդգրկվեցին, Հայրենիքին ծառայելու և օգնելու իրենց պատրաստակամությունը հայտնեցին փլուզված խորհրդային բանակի հայ հրետանավոր սպաներ, ռազմական ուսումնարաններ և բուհեր ավարտած արհեստավարժներ, որոնք ծառայական փորձն ու հմտությունը զուգորդեցին մեր բանակին նեցուկ կանգնելու և հաղթանակի հասնելու վճռականությանը:

Ընդամենը 7-ամյա կենսագրությամբ մեր հրետանին, ձևավորվելով որպես զինված ուժերի զորատեսակ, զարգացման երեք փուլ է անցել: Նախ՝ կազմավորումը և մասնակցությունը պատերազմական գործողություններին, այնուհետև՝ վերջնական ձևավորումը ստորաբաժանումներով, հաստիքներով և վերջապես՝ անցումը որակական նոր փուլի: Հպարտությամբ կարող եմ նշել, որ այսօր մեր հրետանու սպայական անձնակազմի ավելի քան 80 տոկոսը համալրված է մարտական մկրտություն ստացած արհեստավարժ սպաներով: Այսօր մենք ինչպե՞ս կարող ենք չհիշել կապիտան Վահագն Հակոբյանին, որը հայ այն առաջին հրետանավորներից մեկն էր, որ պատերազմական ծանր օրերին հոժարակամ ընդգրկվեց մեր բանակի կազմում, դարձավ մի շարք ծանր մարտերի մասնակից՝ զոհվելով հերոսաբար:

Իրենց մահով Հայրենիքին անմնացորդ ծառայելու հերոսական պատմություն կերտեցին մայոր հրետանավորներ Ռաֆիկ Պետրոսյանը և Արկադի Սեմերջյանը, կապիտաններ Գուրգեն Արշակյանը և Անատոլի Ղավալյանը: Երախտագիտությամբ ենք հիշում նաև հրետանային զորամասի հրամանատար, գնդապետ Ալբերտ Դավթյանին, որի մասնակցությունը Լաչինի միջանցքի կռիվներին առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում, և հրետանու վարչություն շտաբի առաջին պետ, գնդապետ Առնո Տատինցյանին:

Տարածաշրջանի ուժեղ բանակի համար հպարտություն կլինի ունենալ այնպիսի համբավավոր հրետանավորներ, ինչպիսիք են մեր բանակի և վարչության ներուժը կազմող գեներալ–մայորներ Լ.Մարտիրոսովը, Յու. Խաչատուրովը, Է.Ապրիամովը, Մ.Գրիգորյանը, Ժ.Գասպարյանը, գնդապետներ Ն.Մուրադյանը, Ս.Անքանեսյանը, Կ.Մանուկյանը, Ռ.Մազաուզյանը, Ռ.Գաբեզինյանը, Բ.Աբրահամյանը, Ա.Մկրտչյանը և էլի տասնյակ բարձրաստիճան զինվորականներ, նաև որոնց ջանքերով է ամրապնդվել մեր բանակը:

Զորամիավորումների և զորամասերի այս հրամանատարները մեծ հաջողության են հասել մարտական պատրաստության, հայ զինվորի մարտունակության բարձրացման գործում...

*—Ձեր ասածի հավաստումն են մեր անկախության 8–րդ տարեդարձի առիթով կազմակերպված զորահանդեսը, «Կրակային վահան–99» և ՀՀ զինված ուժերի հրետանու 7–րդ տարելիցին անցկացված դիվիզիոնների և մարտկոցների հրամանատարների համաբանակային մրցույթի արդյունքները:*

Միայն այն փաստը, որ անկախության օրվա առիթով մեր մի շարք հրետանավորներ արժանացել են կառավարական պարգևների և մեդալների, հավաստում է, որ մենք ձեռքներս ծալած չենք նստել: Ինչ վերաբերում է «Կրակային վահան–99» միջոցառմանը, որն անցկացվում էր չորս փուլով և արդեն դարձել է ավանդական, մեր վարչության և «Հայ Զինվոր» պաշտոնաթերթի համատեղ ձեռնարկումն է, ինչի համար ուզում եմ շնորհակալություն հայտնել հրետանու մարտական պատրաստության բաժնի պետ, փոխգնդապետ Ա.Փիլոյանին և թերթի աշխատակազմին:

Տառացիորեն օրերս ավարտվեցին հրամանատարական–շտաբային մարտավարական զորավարժությունները, որոնք անցկացվում էին գնդապետ Ս.Անքանեսյանի զորամասի համագործակցությամբ: Արդյունքները ոչ միայն գոհացուցիչ են, այլև հույս են ներշնչում, որ հրետանու ստորաբաժանումները համալրվել են խոստումնալից և երիտասարդ սպաներով:

Համաբանակային հրամանատարական այս մրցույթում, որին երկրորդ տարին է, ինչ մասնակցում են նաև հրետանու դիվիզիոնների և մարտկոցների հրամանատարներ, հաղթողներ են ճանաչվել փոխգնդապետ Արմեն Աբ-

րահամյանը (1–ին տեղ), ավագ լեյտենանտ Վախթանգ Զաքարյանը (2–րդ տեղ), կապիտան Հովհաննես Հոխիկյանը (3–րդ տեղ):

Մարտկոցների հրամանատարների մրցույթում առաջինը կապիտան Ֆրանսիկ Խուդանյանն էր, երկրորդ տեղում՝ լեյտենանտ Սուրեն Կարապետյանը, իսկ երրորդում՝ լեյտենանտ Արգար Պետիկյանը: Մարտական զենքի անխափան վիճակն է վճռում հաղթանակի հաջողությունը: Այս առումով գնահատելի է ՀՀ ՊՆ սպառազինության վարչության դերը:

Հենց վերջինս էլ ապահովել է հրետանային զենքի նորոգման և տեխնիկական սպասարկման և այլ հիմնախնդիրների իրականացումը:

*—Այսօր միանգամայն նոր ու բարդագույն տեխնիկան շահագործման նոր մոտեցում և արհեստավարժություն է պահանջում: Հրետանու սպայական անձնակազմն ի զորու՞ է լուծելու այդ խնդիրը:*

Ինչ խոսք, մենք մասնագետ–կադրերի պակաս ունենք, սակայն չի նշանակում, թե մենք չենք մտածում մեր կադրերի մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ: Արդեն ստացվել և ընթացքի մեջ է մասնագիտական գրականության թարգմանության և հրատարակման գործը:

ԱՊՀ երկրների միջպետական համագործակցության շրջանակներում Ռուսաստանի Դաշնության ռազմական ակադեմիաներում այսօր հիմնավոր կրթություն են ստանում մեր հրետանավոր սպաները, որոնցից արժե հիշատակել ուսման առաջամարտիկներ, սպայական ազգային խմբի ավագ մայոր Խաչատուր Խաչատրյանի, մայոր Սևադա Հովհաննիսյանի, կապիտան Հարություն Խաչատրյանի, ավագ լեյտենանտ Արա Առաքելյանի, զորամիավորումների հրետանու պետեր, փոխգնդապետներ Տիգրան Մանուկյանի և Ալբերտ Մարդոյանի անունները:

Հաճելիորեն ուրախացնում են ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտի շրջանավարտները, որոնք ծառայության ընդամենը մեկ–մեկուկես տարվա ընթացքում արհեստավարժ հրետանավորի անուն են վաստակել և շարունակում են մեր վետերան հրետանավորների ավանդույթները:

Մենք չենք մոռացել արդեն պատմություն դարձած այն զորահրամանատարներին, որոնց գործած սխրանքն ու ապրած կյանքն ընդօրինակման ապացույցներ են երիտասարդ սերնդի համար:

Այս տարի մեծ շուքով նշեցինք հայ լեգենդար հրետանավոր, Խորհրդային Միության հերոս, գեներալ–գնդապետ Միքայել Պարսեղովի ծննդյան 100–ամյակը: Իսկ վերջերս որպես Հայկական բանակի պատվիրակության ղեկավար պատիվ ունեցա Սանկտ Պետերբուրգում մասնակցելու ազգային բանակի նվիրյալներից մեկի՝ գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի հուղարկավորությանը, հրետանավոր–զինվորական–քաղաքացի, որը, չնա-

յած պատկառելի տարիքին, անմնացորդ նվիրվել էր ազգային բանակաշինության վեհ գործին, և որի ապրած կյանքը մեր երիտասարդության համար հայրենասիրության խորհրդանիշ է:

Օգտվելով ընձեռած հնարավորությունից՝ թո՛ւյլ տվեք «Հայ Զինվորի» միջոցով հայ տարեց և նորաթուխ հրետանավորներին, կուրսանտներին շնորհավորել մասնագիտական տոնի և հրետանու 7–րդ տարեդարձի առթիվ, նրանց ցանկանալ խաղաղ ծառայություն, նորանոր հաղթանակներ ուսման և ծառայության մեջ:

*Հարցազրույցը վարեց Սանդրո Զուլհակյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 14–21 հոկտեմբեր, 2000թ., թիվ 41, էջ 4

## ՀՐԵՏԱՆԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿՐԱԿԱՅԻՆ ՈՒԺՆ Է

### ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ և ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Հայաստանի Հանրապետության անկախության տարելիցի առթիվ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով Մարտական խաչի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի վարչության պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը:

*—Պարոն գեներալ–մայոր, շնորհավորում ենք պարգևի առթիվ. հրետանու օրվա կապակցությամբ եկեք վերհիշենք անցյալը:*

—1992թ. շատ դժվար ժամանակաշրջան էր անկախություն ստացած մեր հանրապետության համար: Հակառակորդը Արցախում և սահմանամերձ շրջաններում ավելի ժամանակակից տեխնիկա էր օգտագործում: 1992թ. ամռանը հրետանային ստորաբաժանումներ ստեղծելու խնդիր դրվեց: Ամեն ինչ պետք է զրոյից ստեղծվեր: Շատ քիչ էր Խորհրդային բանակից ստացված տեխնիկան, չկային մասնագետ–կադրեր: Բարեբախտաբար պահեստազորից և խորհրդային այլ զորամասերից եկան հրետանավոր սպաներ, և սկսվեց զորատեսակի կազմավորման գործընթացը: Այդ սպաների մեջ էին այժմ փոխնախարարներ, գեներալ–մայոր Միքայել Գրիգորյանը, գեներալ–լեյտենանտ Յուրի Խաչատուրովը, գեներալ–մայոր Էնրիկո Ապրիամովը, գնդապետներ Լևոն Միքայելյանը, Ներսես Մուրադյանը, Ալբերտ Մկրտչյանը, Կամո Մանուկյանը, Ռայմոնդ Մազմանյանը, Մարտին Կարապետյանը, Ռազմիկ Գարեգինյանը, ավագ լեյտենանտ Վահագն Հակոբյանը, կապիտաններ Մարդանյանը, Տիգրան Մանուկյանը և ուրիշներ:

Ցավոք, մարտական առաջադրանքը կատարելիս զոհվեցին հրետանավորներ Վահագն Հակոբյանը, որը հետմահու պարգևատրվեց «Արիության համար» մեդալով, մայոր Պետրոսյանը, «Հատուկ գնդի» Արկադիկը, որին ընկերները «մինամյոտչիկ» էին անվանում, կապիտան Գուրգեն Արշակյանը, որը նույնպես հետմահու պարգևատրվեց «Արիության համար» մեդալով:

Արդեն 1992թ. ձևավորվեց հակատանկային առաջին ստորաբաժանումը Էնրիկո Ապրիամովի հրամանատարությամբ, որը հարավարևելյան սահմանագծում ոչնչացրեց հակառակորդի 32 միավոր տանկ և զրահատեխնիկա: Ասենք, որ գնալով ռազմաճակատներում մեր հրետանին դառնում էր գերիշխող, որի շնորհիվ նվազագույնի էին հասնում մեր կորուստները: Այդ ժամա-

նակ համագործակցությունն ավելի արդյունավետ էր Գագիկ Մելքոնյանի և Վալերի Գրիգորյանի հրամանատարությամբ գործող զորամասերի հետ: Հրետանավորները իրենց փայլուն դրսևորեցին հանրապետության արևելյան սահմանագոտում՝ 1994թ. լռեցնելով Քելբաջարում տեղակայված հակառակորդի կրակակետերը: Այստեղ առանձնապես աչքի ընկան այժմ փոխգնդապետներ, «Արիության համար» մեդալի արժանացած Սամվել Ավետիսյանը և մայոր Արմեն Արշակյանը: Նշենք, որ այդ ընթացքում ձևավորվում և առնականանում էր Արցախի պաշտպանության բանակի հրետանին՝ գնդապետ, այժմ գեներալ–մայոր Ժորա Գասպարյանի հրամանատարությամբ:

Հաջողությունների մենք հասանք՝ օրդեգրելով խորհրդային բանակի հրետանավորների լավ ավանդույթները, որոնց գումարվեցին նաև մեր հայկական հրետանու լավագույն կողմերը, մասնագետների ճիշտ աշխատանքը: Այսօր մեր հրետանին հզոր կառույց է, որն օրեցօր կատարելագործվում է:

*—Պարո՛ն Հայրապետյան, ինչպե՞ս է ընթանում հրթիռահրետանային զորամասերում և ստորաբաժանումներում մարտական պատրաստականության գործընթացը:*

—Բոլոր զորամասերն ու ստորաբաժանումներն ունեն վարչության կողմից հաստատված մարտական պատրաստականության պլան, որով էլ առաջնորդվում են: Դրա բարձրացմանը մեծապես նպաստում են առանձին և միջտոհրաձգային զորամասերի մասնակցությամբ անցկացվող զորավարժությունները: Ես կարող եմ առանձնացնել մայոր Արմեն Արշակյանի, փոխգնդապետ Սամվել Պողոսյանի, մայոր Արմեն Հարությունյանի ղեկավարությամբ գործող ստորաբաժանումները, որոնք ունեն շատ բարձր մարտական պատրաստականություն: Այսօր մեր բոլոր զորամասերի հրամանատարները բարձր որակավորում ունեն: Մենք մեծ տեղ ենք հատկացնում կադրերի մասնագիտական պատրաստվածության հարցին և ամեն տարի որոշակի թվով սպաների սովորելու ենք գործուղում Ռուսաստանի Դաշնության զինվորական ակադեմիաներ: Վերջերս զորամասի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Խաչիկ Խաչատրյանը, որն ակադեմիան ավարտել էր ոսկե մեդալով:

Առանց անհրաժեշտ ուսումնական բազայի հնարավոր չէ մարտական պատրաստականության գործում լուրջ հաջողությունների հասնել: Եվ այսօր գրեթե բոլոր զորամասերում ունենք հրետանային հրաձգարաններ, կահավորված դասասենյակներ, ամրապնդում ենք մատակարարումը ...

Բանակը հզոր է, եթե ունի ամուր և ուժեղ հրետանի, հրետանին մեր բանակի գլխավոր կրակային ուժն է, այս ճշմարտությունը շատ լավ են գիտակցում վարչության սպաները, որոնք իրենց նվիրված ծառայությամբ օգնում են բոլոր զորամասերին և ստորաբաժանումներին մարտական պատրաստա-

կանության գործընթացը հաջողությամբ կազմակերպելու համար: Ուզում եմ նշել գնդապետներ Հրանտ Մանվելյանի, Ազատ Փիլոյանի, Մարատ Ղարիբյանի, Լևոն Միքայելյանի, Ներսես Մուրադյանի, փոխգնդապետներ Հենրիկ Ալիխանովի նվիրված ծառայությունը: Նրանք ամեն ինչ անում են, որ հայ հրետանավորը սիրի իր զենքը և այն պահի մարտունակ վիճակում:

Նշեմ, որ հրետանու մարտական պատրաստականության խնդիրները մշտապես գտնվում են պաշտպանության նախարարության, անձամբ նախարար Սերժ Սարգսյանի ուշադրության կենտրոնում:

Զորամասերի մարտունակությունը բարձր պահելու համար հաջողությամբ ենք համագործակցում կապի, ինժեներասակրավորային, սպառազինության, քիմիական, դաստիարակչական աշխատանքների և մյուս վարչությունների հետ:

Համոզված եմ՝ այս ուսումնական տարին կավարտենք բարձր արդյունքներով:

Պատրաստ ենք ամբողջությամբ իրականացնել մեզ տրվող բոլոր առաջադրանքները:

—Շնորհավորում եմ բոլոր հրետանավորներին հրթիռահրետանային զորքերի օրվա առթիվ, նրանց ցանկանում եմ հաջողություններ ծառայության մեջ և անձնական կյանքում:

*Հարցազրույցը վարեց Արամ Ներսիսյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 6–13 հուլիս, 2002թ., թիվ 26, էջ 6

# ԲԱՆԱԿՆ Է ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉԸ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ. ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ

Արցախյան ազատամարտի օրհասական օրերին նախնիների արյան կանչով Հայաստան վերադարձան նաև խորհրդային բանակում 20 և ավելի տարիներ ծառայություն անցած զինվորականներ՝ մոտոհրաձիգներ, հրետանավորներ, ռազմական օդաչուներ, հրամանատարական պաշտոններ զբաղեցրած հայորդիներ, ովքեր Հայրենիքի պաշտպանության գործին զինվորագրվեցին անմնացորդ: Նրանցից մեկն էլ 1990-ից խորհրդային 28-րդ բանակային զորամիավորման հրթիռահրետանային զորքերի գլխավոր հրամանատար գնդապետ Վլադիմիր Հայրապետյանն էր:

—Չեխոսլովակիայից խորհրդային զորքերի դուրսբերումից հետո մեր զորամիավորումը տեղակայվել էր Սիբիրի Կեմերովո քաղաքում,–հիշում է գեներալը: —Որքան էլ Հայաստանից հեռու էինք, այդուհանդերձ, լրատվական միջոցներով գալիս մեզ էին հասնում մեծ վիշտ ու անհանգստություն պատճառող լուրեր: Խորհրդային զորքերը տխրահռչակ «Կոլցո» գործողությունն էին իրականացնում Արցախում՝ իրենց պապենական հողից ու հայրական օջախներից տեղահան էին արվում հազարավոր հայեր, Հայաստանի արևելյան ու հարավային սահմանների ամբողջ երկարությամբ հրետակոծվում էին հայկական բնակավայրեր, այդ թվում՝ Կապանի շրջանը՝ իմ հարազատ Շիշկերտ գյուղը: Սիրտս ճմլվում էր անզորությունից, այն զգացումից, որ ես իմ հայրենակիցների կողքին չէի: Մի կերպ համաձայնեցնելով գլխավոր հրամանատարության հետ՝ արձակուրդ ձևակերպեցի և եկա Հայաստան՝ ընտանիքս թողնելով Կեմերովոյում: Հիշում եմ առաջին հանդիպումս նորանշանակ պաշտպանության նախարարի՝ Վազգեն Սարգսյանի հետ: Ծանոթանալով զինվորական կենսագրությանս՝ առանց վարանելու նա ինձ առաջարկեց գլխավորել նորաստեղծ բանակի հրետանային ծառայությունը: 1992թ. փետրվարին էր: Վճիռը կայացրել էի և զեկուցագրով ներկայացել:

Չեք կարող պատկերացնել, թե ինչ մղձավանջային էին սպասման այն մի քանի ամիսները, մինչև որ հունիսի սկզբին վերջապես ստացա մարշալ Շապոշնիկովի ստորագրությամբ զորացրման հրամանը: Հուլիսի մեկն իմ կյանքում նշանավորվեց մի քանի առումներով. կատարվեց իմ վաղեմի երազանքը, և ես դարձա անկախ Հայաստանի բանակի սպա, գլխավորեցի հրետանին՝ հարվածային այն գլխավոր ուժը, առանց որի անհնար էր հաղթանակներ ակնկալել պատերազմում:

Նշանակման առաջին իսկ օրից Վ.Հայրապետյանը ձեռնամուխ է եղել ՀՀ զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի ստեղծմանն ու կազմավորմանը: Նրա ջանքերով, աջակցությամբ ու պատասխանատվությամբ ստեղծված առաջին հրետանային մարտկոցները, իսկ հետագայում նաև հրետանային դիվիզիոնները, սկսած 1992թ. հուլիսի կեսերից, իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան սահմանամերձ մարտական գործողությունների ընթացքին: Հրետանու նպատակային մարտական կիրառումը մեծ նշանակություն ունեցավ հանրապետության հարավարևելյան սահմանների պաշտպանության գործում:

Գեներալը մտաբերում է 1992թ. հոկտեմբերի 8-ին սահմաններում մղվող մարտերը: Թշնամին, ունենալով կենդանի ուժի, տեխնիկայի և զենքի գերակշռություն, անընդմեջ կրակով փորձում էր ջլատել հայկական ուժերը և հարվածային ուժը տեղափոխել Գորիսի ուղղություն: Ճիշտ է, այս մարտերից մեկի ժամանակ Վ.Հայրապետյանը վիրավորվեց, սակայն, շնորհիվ նրա ղեկավարած հրետանու, կամավորական ջոկատների շրջահայաց համագործակցության, ազերին ոչ մի քայլ առաջ շարժվելու հնարավորություն չունեցավ:

1994թ. մայիսի 18-ին ազերիները ստիպված էին ընդունել զինադադարը, իսկ 10 օր անց հայ ժողովուրդն ազգովի տոնում էր առաջին հանրապետության տարեդարձը: Հենց այս տոնի առթիվ էլ Հայաստանի Հանրապետությանը մատուցած ծառայությունների ու ցուցաբերած արիության համար հրթիռահրետանային զորքերի պետ Վլադիմիր Հայրապետյանին ՀՀ նախագահի հրամանագրով շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Ես հպարտ եմ, որ Հայաստանի Հանրապետության առաջին հայ գեներալներից եմ, որ իրականացել է իմ վաղեմի երազանքը՝ դառնալ ազգի զինվոր, պայքարել նրա ազատության ու անկախության համար: Ես պիտի շարունակեի Զանգեզուրում հռչակված Զահանգիր պապիս,Աստուր հորս կիսատ թողած գործը:

Զահանգիրը մասնակցել է 1915-1917թթ. ռուս-ավստրիական պատերազմին, ճիշտ է, եղել է ցարական բանակի զինվոր ու մի քանի անգամ ծանր վիրավորվել, սակայն ամենաոխերիմ թշնամին համարել է թուրքին: Իսկ հայրս սկզբում մասնակցել է խորհրդա-ֆիննական պատերազմին, ծառայությունն ավարտել, տուն է վերադարձել, Մեծ հայրենականի սկսվելուն պես կրկին կամավոր զինվորագրվել ու մեկնել է ռազմաճակատ: Ես ծնվել եմ, երբ նա արդեն կես տարուց ավել մարտնչում էր ճակատում: Շուտով նա մի նամակ է գրում և խնդրում, որ ֆիննական պատերազմից բերած զինվորական համազգեստից իր արդեն 1,5 տարեկան՝ որդու համար շորեր կարեն: Այսպիսով՝ «զինվորական մկրտությունս» ստացել եմ 1,5 տարեկանում, այդպես էլ չտեսնելով հորս: Նա զոհվել է 1944 թ. հոկտեմբերի 30-ին Անդրկարպատի Կուցան գյուղի մատույցներում և թաղվել Միխայլովցե քաղաքի եղբայրական գերեզմանոցում:

Այս ամենի մասին Վ.Հայրապետյանն իմացել է ավելի քան 40 տարի անց: Չորս տասնամյակ շարունակ նա փնտրել է ու վերջապես գտել իր գերեզմանը և հուշաքար կանգնեցրել:

Մորս էլ վաղ եմ կորցրել՝ 1949 թվականին: Յոթ տարեկանից ինձ մեծացրել, կրթության է տվել հորաքույրս՝ Հայկանուշը՝ պատերազմում ամուսին կորցրած, երեք որբ իր խնամքին, զարմանալի մի հայուհի, որ անասելի զրկանքներ կրելով՝ այնուամենայնիվ չկորցրեց հավատը և մեր մեջ վառ պահեց հայրենասիրության կրակը:

Հետագայում հորաքրոջ պահած որբուկը գերազանցությամբ ավարտեց Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, իսկ 30 տարեկանում՝ Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիան: 33 տարեկանում նա խորհրդային բանակի զորամասի հրամանատար էր: Եզակի հայ զինվորականներից մեկն է, որ արժանացել է նաև «Հայրենիքին ծառայելու համար» երկրորդ աստիճանի շքանշանին:

Աննկատ չի մնացել նաև գեներալ–մայորի ծառայությունն ազգային բանակում. 1999–ին արժանացել է «Արիության համար» մեդալի, մեկ տարի անց՝ Մարտական խաչի 2-րդ աստիճանի շքանշանով, «Հովհաննես Բաղրամյան» մեդալի, իսկ ծննդյան 60–ամյակի կապակցությամբ պաշտպանության նախարարը նրան պարգևատրեց «Դրաստամատ Կանայան» մեդալով:

—Ես ցավով եմ հիշում մեր զոհված հրետանավոր տղաներին: Իսկական արծիվներ էին, որ իրենց հերոսացմամբ ապահովեցին մեր հաղթանակը,– ասաց գեներալը:–Ինչպես կարելի է մոռանալ դիվիզիոնի հրամանատար, կապիտան Գուրգեն Արշակյանին, գնդի հրետանու պետի օգնական, կապիտան Վահագն Հակոբյանին, մայոր Պետրոսյանին, գնդապետ, հրետանու վարչության շտաբի պետ Առնո Տատինցյանին: Առանձնակի ցավ եմ ապրում՝ հիշելով Վազգեն Սարգսյանին՝ բացառիկ պետական մտածողությամբ ու բանակի անհրաժեշտությունը կարևորող հայորդուն ... Եռաբլուր բարձրանալիս ես հպարտության զգացումով եմ գլուխ խոնարհում նրանց շիրիմների առջև: Նրանք ապրեցին իրենց ժողովրդի ճակատագրով, մարտնչեցին հաղթանակի համար և հերոսացան ...

*—Պարո՛ն գեներալ, զինվորական ղեկավարի խառնվածքում ի՞նչն եք կարևորում:*

—Պրոֆեսիոնալիզմը, հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, մարդկանց, առավել ևս զինվորական մարդկանց հետ աշխատելու կարողությունը:

*—Որտե՞ղ է բանակի ուժը՝ զենքի՞, թե՞ ոգու մեջ:*

—Անկասկած՝ ոգու: Նաև մարտական զենքի նպատակապահ կիրառության, երբ ուժն ու ոգին այլևս անքակտելի են և հանդես են գալիս որպես մեկ ամբողջականություն...

*—Ձեր կածիքով, ո՞վ է որոշում կռվի ելքը՝ զինվո՞րը, թե՞ հրամանատարը:*

Հրամանատարը ընդամենը որոշում է ընդունում, զինվորն է լուծում գլխավոր խնդիրը: Չեմ հիշում, թե մեր որ գրողն է ասել. «Հայ զինվորի նահանջը նահանջն է ազգային հպարտ բարձունքներից, ամբողջի, որի անունն է Հայաստան»:

*—Ո՞վքեր են Ձեր ուսուցիչները ազգային բանակում:*

Ամենից առաջ՝ գեներալ–լեյտենանտ Ք.Իվանյանը, գեներալ–գնդապետ Գ.Դալիբալթայանը, գեներալ–լեյտենանտ Հր.Անդրեսյանն ու Ն.Տեր–Գրիգորյանցը: Շատ բան եմ սովորել նաև Վազգեն Սարգսյանից, նրանցից, ովքեր այսօր ղեկավարում են պաշտպանական համակարգը: Վերջապես, իմ ամենամեծ ուսուցիչը մեր բանակն է՝ իր մարտունակ զինվորով, որը ցանկացած պահի պատրաստ է լուծել մարտական խնդիրներ:

*—Ձեր կարծիքով, որո՞նք են պետության հիմքերը:*

—Անմիջապես պատասխանեմ Մաքիավելիի հայտնի ասույթով. «Պետության հիմքերն են՝ լավ օրենքները և լավ բանակը: Լավ օրենքներն անուժ են առանց լավ բանակի, իսկ որտեղ ուժեղ բանակ կա՝ անհրաժեշտ են լավ օրենքներ»:

*—Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել մեր բանակը:*

—Կազմակերպված, ուժեղ, շարժուն, կառավարելի մարտունակ և, իհարկե, լավ զինված ու պատրաստված անձնակազմով: Որպես հրետանավոր, կցանկանայի, որ հայ հրետանավորի հրանոթը երբեք չժանգոտի: Թող երբեք պատերազմ չլինի, սակայն մենք միշտ պետք է պատարաստ լինենք պատերազմին: Սա է խաղաղության պահպանման միակ երաշխիքը:

*Հարցազրույցը վարեց Սանդրո Ջուլհակյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 19–26 հոկտեմբեր, 2002թ., թիվ 41, էջ 4

# ՏԱՄՆԱՄՅԱ ՓԱՌԱՎՈՐ ՈՒՂԻ

## ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ և ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Անկախացած հանրապետության զինված ուժերի կրակային հզորության նշանակալի մասն են կազմում հրետանային զորքերը, որոնց կազմավորումն սկսվեց ծանր ու օրհասական 92–ի հոկտեմբերին, երբ թշնամու հարվածային ուժերն ամեն կերպ ձգտում էին փակել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի մարդասիրական միջանցքը: Մշտապես հրետակոծվում էին մեր արևելյան սահմանները, ԼՂՀ բնակչությանը ֆիզիկական ոչնչացման վտանգ էր սպառնում:

Կարճ ժամանակահատվածում կազմավորվեցին հրետանային զորամասերն ու ստորաբաժանումները, որոնք հետագայում հանդիսացան թշնամուն զսպող հզոր ուժ: Թե՛, Ղարաբաղում, թե՛, Հայաստանի սահմանամերձ շրջաններում հրետանու կրակային հարվածները շատ բանով նպաստեցին երկրապահ կամավորական ջոկատների և մեր կանոնավոր զորքերի մարտական հաջողություններին: Այն դեպքում, երբ նույն տարվա աշնանը ՀՀ զինված ուժերում դեռևս չկային կազմավորված հրետանային հաշվարկներ, իրավիճակի թելադրանքով գնդապետի աստիճանով սպան երբեմն ճարահատյալ ստանձնում էր հրանոթի հրամանատարի պարտականությունները, միաժամանակ տվյալներ պատրաստում և դիտակետից կառավարում այս կամ այն հրանոթի կրակը: Դրան հակառակ՝ հակառակորդն ստացել էր խորհրդային զինված ուժերի 4–րդ բանակի ամբողջ զինտեխնիկան ու զինամթերքը և Արցախում ու սահմանամերձ շրջաններում ժամանակակից տեխնիկա էր կիրառում:

Հայ հրետանավորները մարտի դաշտում ցուցաբերեցին արիություն, խիզախություն և տոկունություն, նրանց դիպուկ կրակից թշնամին կրեց մարդկային ուժի և զրահատեխնիկայի զգալի կորուստ: Հրետանավորների շարքերում իրենց սխրանքով աչքի ընկան շնորհալի հրետանավորներ, մայորներ Ռաֆայել Պետրոսյանը և Արկադի Սեմերջյանը, կապիտաններ Գուրգեն Արշակյանը, Վահագն Հակոբյանը, Անատոլի Ղավալյանը, ովքեր հերոսաբար զոհվեցին մարտի դաշտում՝ հանուն այսօրվա ազատ և անկախ Հայաստանի: Նրանք իրենց արյունով գրեցին մեր հրետանու պատմության առաջին փառավոր էջերը:

—Արցախյան ազատամարտի կանչով պահեստազորից և փլուզված խորհրդային բանակի մի շարք զորամասերից նոր կազմավորվող ազգային զինված ուժերում ծառայելու ցանկություն հայտնեցին շուրջ երկու տասնյակ հրետանավոր սպաներ, – ասում է ՀՀ ՊՆ հրթիռահրետանային զորքերի

պետ գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը: – Հայրենիք վերադարձան և իրենց ծառայությունը մեր զինված ուժերում շարունակեցին հմուտ և բազմափորձ հրետանավորներ, գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գեներալ–լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, գեներալ–մայոր Ժորա Գասպարյանը, գնդապետ Վազգեն Ղավալյանը, ովքեր, զբաղեցնելով տարբեր հրամանատարական պաշտոններ, առավելագույնն արեցին հայկական բանակի հրետանու զարգացման ասպարեզում:

Պետք է նշել, որ պատերազմի նախնական փուլում ադրբեջանական հրոսակներն ունեցան որոշակի հաջողություններ. ԽՍՀՄ–ից «ժառանգած»–զավթած զենքով նրանց հաջողվեց հրետակոծել և այնուհետև ներխուժել հայկական մի շարք բնակավայրեր՝ Արծվաշեն, Մարտակերտ, հրետակոծության տակ պահել Ստեփանակերտը, Գորիսը, Կապանը, Վարդենիսը, Կրասնոսելսկը, Երասխավանը և մի շարք այլ բնակավայրեր:

1992–ի աշնանը, – շարունակում է գեներալ–մայոր Վ.Հայրապետյանը, – բանակային կառույցում ստեղծվեցին հրետանային զորամասեր, որոնց հրամանատարներ նշանակվեցին պաշտպանության ներկայիս փոխնախարար, գեներալ–լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ–մայոր Էնրիկո Ապրիամովը, գնդապետ Վլադիմիր Մխիթարյանը: Հրետանու շարքերը համալրեցին գնդապետներ Ներսես Մուրադյանը, Ալբերտ Դավթյանը, փոխգնդապետ Սամվել Սաֆարյանը, գնդապետ Լևոն Միքայելյանը: Այլ խոսքով, հրետանային զորամասերը համալրվեցին արհեստավարժ հայ զինվորականներով, որոնց թվում են այսօր արդեն ԲԿ հրամանատար, գեներալ–մայոր Մարտին Կարապետյանը, գնդապետներ Ալբերտ Մկրտչյանը, Վասիլի Չեռնյակովը, փոխգնդապետ Ֆյոդոր Կումպյակը և ուրիշներ:

Աստիճանաբար կազմավորվում էր նաև հրետանային վարչությունը, որն այն վճռական օրերին ծանր կորուստներ կրեց. ծառայական պարտականությունները կատարելիս ավտովթարից զոհվեց հրետանու վարչության շտաբի պետ, գնդապետ Առնո Տատինցյանը:

Բախտորոշ այդ ժամանակահատվածում Վազգեն Սարգսյանն առաջիններից մեկը կարևորեց հրետանու դերն ու անհրաժեշտությունը:

Ռազմաճակատում մեր հրետանին աստիճանաբար դառնում էր գերիշխող, ինչի շնորհիվ նվազագույնի էին հասնում մեր կորուստները: Անկասկած, մեր զորքերին հաջողություն բերեցին խորհրդային բանակի հրետանավորների փորձն ու լավագույն ավանդույթները:

Հրետանային ստորաբաժանումների կազմավորումն օրախնդիր էր դառնում նաև Արցախում: Մինչև ատամները խորհրդային զենքով զինված թշնամու դիմաց Ղարաբաղի բնակչությունը նույնիսկ մեկ ինքնաձիգ էլ չէր կարող հանել: Այսուհանդերձ, Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատները կարողացան նախ հակակարկտային հրանոթներով, այնուհետև ականանետներով, առանձին «Գրադ» կայանքներով և հրանոթներով պատասխա-

նել հակառակորդի հրետանային կանոնավոր հարվածներին: Այն օրերին Ղարաբաղի պաշտպանական ջոկատների առաջին հրետանավորներից էին Դավիթ Սաֆարյանը, Վալերի Կարապետյանը, Էմերջան Ասլանյանը, Լևոն Մնացականյանը և ուրիշներ, ովքեր հետագայում հասան գնդապետի աստիճանի և այժմ հրամանատարական պաշտոններ են վարում:

Լեռնային Ղարաբաղի հրետանու կայացման գործում մեծ ներդրում ունեն գեներալ-մայորներ Լեոնիդ Մարտիրոսովը, Ժորա Գասպարյանը, գնդապետներ Ռայմոնդ Մազմանյանը, Բաբկեն Աբրահամյանը, Երվանդ Հարությունը, փոխգնդապետ Դնեպրիկ Բաղդասարյանը և ուրիշներ:

Կարճ ժամանակահատվածում գեներալ-լեյտենանտ Քր.Իվանյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ Արցախում սկսեցին պատրաստվել հրետանավոր սպաներ: Թե՛, Արցախում, թե՛, Հայաստանում աստիճանաբար նոր կազմավորվող հրետանային ստորաբաժանումները համալրվում էին կադրերով, դրա հետ մեկտեղ ստեղծվում էր հայկական հրետանին, ուժ էր առնում, նրա կրակը դառնում էր ավելի դիպուկ և անվրեպ:

—Այսօր մեր հրետանին ազգային բանակի հզոր կրակային վահանն է, – ասում է գեներալ-մայոր Վ.Հայրապետյանը: – Հրետանային զորքերը համալրված են և շարունակվում են համալրվել բարձրագույն և ակադեմիական կրթություն ստացած սպաներով, ինչպես նաև Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի շրջանավարտներով: Նրանք, պահպանելով հայազգի փառապանծ զորավարներ գեներալ-գնդապետ Մ.Պարսեղովի և գեներալ-լեյտենանտ Քր.Իվանյանի ավանդը, շարունակում են կատարելագործել իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

Ազգային բանակի հրթիռահրետանային զորքերը գտնվում են հանրապետության գլխավոր հրամանատարի և պաշտպանության նախարարի ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Հրթիռահրետանային զորքերի պետ գեներալ-մայոր Վ. Հայրապետյանն իր շնորհավորանքի խոսքն է ուղղում ազգային բանակի բոլոր հրետանավորներին. «Հրթիռահրետանային զորքերի կազմավորման 10-րդ տարեկիցի և մասնագիտական տոնի առթիվ շնորհավորում եմ մեր բանակի հրետանու պանծալի վետերաններին, հրետանավոր սպաներին, սերժանտներին, զինվորներին, հրետանու սպառազինությունն սպասարկող մասնագետներին ու բոլոր մեր հայրենակիցներին: Հավաստիացնում եմ բոլորին, որ մեր բանակի հրթիռահրետանային զորքերը մարտունակ են և մշտապես պատրաստ են՝ դիմակայելու հակառակորդի ցանկացած ոտնձգությանը և անառիկ պահելու մեր Հայրենիքի սահմանները:

*Հարցազրույցը վարեց Սանդրո Զուլալյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 19–26 հոկտեմբեր, 2002թ., թիվ 41, էջ 4

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

## ՀՐԵՏԱՆՈՒՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԿՅԱՆՔ

Ծնված լինելով Սյունիքի մարգարիտ համարվող Գորիս քաղաքում՝ Առնո Տատինցյանը ժառանգել էր հանուն Հայրենիքի մեռնելու կամքը, որի մասին խոսում է Մեծն Նժդեհը:

1958թ–ին Ա.Տատինցյանը զորակոչվում է խորհրդային բանակ և մեկ տարի հրետանային գնդում ծառայելուց հետո գործուղվում է Թբիլիսի՝ ուսանելու հրետանային ուսումնարանում: 1963–ին լեյտենանտի կոչում ստացած՝ ծառայության է մեկնում Գերմանիա: Հետո ծառայում է խորհրդաաֆղանական սահմանի վրա գտնվող Կուշկա քաղաքում՝ որպես հրետանային դիվիզիոնի շտաբի պետ, ապա հրամանատար: Նրա դիվիզիոնը հաջողությամբ մասնակցում է հանրահայտ «Թայֆուն» գործողությանը, որի համար Ա.Տատինցյանը արժանանում է «Մարտական ծառայության համար» մեդալի: 1974–ին նշանակվում է Ալեքսանդր Նևսկու և Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր, գվարդիական գնդի հրամանատար. դա այն զորամասն էր, որը ժամանակին մասնակցել էր Բեռլինի գրավմանը:

Երբ 1979–ին ԽՍՀՄ–ը զորք է մտցնում Աֆղանստան, Աշխաբադից նրան տեղափոխում են Տաշքենդ: Այստեղ նա տանկիստ կուրսանտներին վերապատրաստում է հրետանավոր դառնալու համար: 1981–ից մինչև 1987թթ. դիվիզիայի հրետանու պետ էր, այնուհետև տեղափոխվում է Հայաստան, նշանակվում խորհրդային 7–րդ բանակի շտաբի պետի տեղակալ: Երեք տարի անց զորացրվում է, սակայն ակտիվ մասնակցություն է ունենում մայրաքաղաքի Արաբկիրի շրջանի ինքնապաշտպանական ջոկատների տղաներին մարտական գործողությունների նախապատրաստելուն:

Պաշտպանության կոմիտեի կազմավորումից հետո Տատինցյանը նշանակվում է օպերատիվ ուղղության պետ՝ միաժամանակ համարվելով հրետանու գլխավոր մասնագետ:

1992–ին ծառայության է անցնում նորաստեղծ ազգային բանակում և արդեն մարտ ամսին պաշտպանության նախարարի հրամանով նշանակվում է հրթիռահրետանային զորքերի վարչության շտաբի պետ:

Սկսվում է դժվարին ու պատասխանատու մի շրջան, երբ ստեղծվում էին ազգային բանակի հրետանային զորքերը, իսկ դրան զուգահեռ տեղի էին ունենում մարտական գործողություններ: Ա.Տատինցյանի անմիջական ջանքերով կազմավորված հրետանային առաջին մարտկոցները մեկնում են ռազ-

մաճակատ: Դրանց աջակցությամբ կամավորական ջոկատները կասեցնում են թշնամու առաջխաղացումը՝ վերջինիս մեծ կորուստներ պատճառելով:

Գնդապետ Տատինցյանը երազում էր ապագա հզոր հրետանային խմբավորումների, դրանք մարտում կիրառելու հնարավորության մասին:

Այն չարաբաստիկ օրը Առնո Տատինցյանը շտապում էր Լաչին: Ցավո՛ք նրա ճանապարհը կիսատ է մնում. Ա.Տատինցյանը զոհվում է ավտովթարից:

Նրա գործը շարունակում և հաղթական ավարտին են հասցնում զինակիցները, ովքեր ցայսօր վառ են պահում նրա հիշատակը:

Առնո Արշակի Տատինցյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:



Գնդապետ Առնո Արշակի Տատինցյան. ՀՀ ՊՆ Հրթիռա-հրետանային զորքերի առաջին շտաբի պետը, զոհվել է 1992 թ.

# ՀՈՒՇԱԳԻՐ ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ

## ԳՆԴԱՊԵՏ ԱՌՆՈ ԱՐՇԱԿԻ ՏԱՏԻՆՑՅԱՆԻ ՏԻԿՆՈՋԸ, ՈՐԴԻՆԵՐԻՆ՝ ԱՐՄԱՆԻՆ ԵՎ ՎԻԳԵՆԻՆ

Գնդապետ Առնո Արշակի Տատինցյանը, ծնունդ առնելով հայրենի Սյունիքի Գորիս քաղաքում, ժառանգել էր քաջ սպարապետ Գարեգին Նժդեհի ցեղակրոն ուխտերը՝ «ապրել, գործել և մեռնել որպես ցեղամարդ», և մասնակցեց հայոց զինական փառքի նոր էջերի գրմանը:

Քաջ գիտակցելով, որ վաղ թե ուշ Հայաստանը պետք է լինի անկախ պետություն, իսկ անկախության գրավականը հանդիսանում է նրա զինված ուժերը, որի ամենահզոր ուժը պետք է հանդիսանա նրա հրթիռահրետանային ուժերը. նա ընտրեց հրետանավոր սպայի դժվարին և պատվավոր մասնագիտությունը:

Ավարտելով Թբիլիսիի հրետանային հրամանատարական ռազմական ուսումնարանը՝ այնուհետև՝ Ս.Պետերբուրգի հրետանային ակադեմիան և ստանալով բարձր որակավորում՝ հրամանատարա շտաբային մասնագիտությամբ, նա ծառայեց ԽՍՀՄ–ի զինված ուժերում, անցավ փառապանծ մարտական ուղի՝ հասնելով հրետանային գնդի հրամանատարի պաշտոնին, այնուհետև՝ 7–րդ բանակի (ք. Երևան) հրետանային շտաբի պետի տեղակալ, այնուհետև 1990թ. նա զորացրվեց պահեստազոր:

Սակայն նա չանցավ ակտիվ հանգստի, այլ լծվեց ազգային բանակի ստեղծման գաղափարին, սկզբից՝ Պաշտպանության կոմիտեում՝ որպես զինվորական մասնագետ, այնուհետև 1992թ. անցավ նորաստեղծ ազգային բանակի շարքերը: Գնդապետ Առնո Արշակի Տատինցյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ որպես հրթիռահրետանային զորքերի վարչության շտաբի պետ (մարտ, 1992թ.):

Նշանակման օրից սկսվեց նրա դժվարին, անհանգիստ և պատասխանատու աշխատանքը, որը նվիրված էր ազգային բանակի հրետանային զորքերի ստեղծմանը և դրան զուգահեռ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում սահմանամերձ մարտերին: Նրա մասնակցությամբ ստեղծված առաջին հրետանային մարտկոցները մեկնեցին ռազմաճակատ և իրենց հուժկու կրակով, ֆիդայի ջոկատների մասնակցությամբ կանգնեցրին թշնամու՝ ազերիների հրոսակախմբերի առաջընթացը, որը հրետանային կրակից ունեցավ մեծ կորուստներ:

Գնդապետ Տատինցյանը մեծ խանդավառությամբ էր խոսում ապագա հզոր հրետանային խմբավորումների մասին, նրանց մարտական կլասիկ կիրառման մասին: Նա հատկապես մեծ եռանդով էր մեկնում հարազատ

Գորիսը, որը ճակատային գծից գտնվում էր մի փոքր հեռավորության վրա, թեժ մարտեր էին ընթանում հատկապես Լաչինի, Կոռնիձորի և Խնձորեսկի մոտակայքում:

Զոհվելու չարաբաստիկ օրը Առնո Արշակիչը սրընթաց սլանում էր դեպի Լաչին, քանի որ քաջ գիտակցում էր իր՝ այնտեղ գտնվելու անհրաժեշտությունը, և կատարվեց անսպասելի վթարը, որը մեր շարքից խլեց մեր մարտական ընկերոջը:

Ավաղ, կիսատ մնաց նրա սկսած գործը, որը շարունակեցին և հասցրին հաղթական ավարտին նրա զինակիցները, նրանք, ովքեր չմոռացան Առնոյին և հզոր հրետանային խմբավորումներով, նորաստեղծ բանակի քաջարի զինվորներով և մասնակից ֆիդայիներով ու մահապարտներով ավարտին հասցրին Արցախյան ճակատամարտը և ազատագրվեցին մեր պապական և պատմական բնակավայրերը:

Այսօր Առնոն մեզ հետ չէ, նա զոհվեց հանուն ազգային պետականության ամրապնդման, հանուն մեր հայ ազգի գոյատևման և բարգավաճման:

Առնոն իր տիկնոջ՝ Ժերմինի հետ միասին մեր ազգին է նվիրել երկու հայրենասեր որդիներ՝ Արման և Վիգեն, որոնք, հավատարիմ մնալով իրենց հոր՝ Առնոյի մարտական և հայրենանվեր գործին, փառք ու պատվով են կատարում իրենց հայրենասիրական պարտականությունները՝ որպես ազատ և անկախ Հայաստանի հպարտ քաղաքացիներ:

Առնո Արշակի Տատինցյանի սխրանքը և հայրենանվեր ծառայությունը գնահատվել է ՀՀ նախագահի կողմից. նա հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով՝ 2001թ. սեպտեմբերի 20-ի ՆՀ N 946 հրամանագրով:

Հավերժ փա՜ռք մեր զոհված մարտական ընկերներին, հավերժ փա՜ռք քաջ հրետանավոր գնդապետ Ա.Տատինցյանին:

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 21–28 դեկտեմբեր, 2002թ., թիվ 150, էջ 7

## ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԻՎԱՆՅԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՀՀ ՊՆ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՎԱՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Քրիստափոր Իվանյանը՝ խորհրդային բանակի հրետանու գեներալ–մայորը, ապա Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գեներալ–լեյտենանտը, լեգենդար մարդը, ծնվել է 1920թ. դեկտեմբերի 21–ին Թիֆլիսում:

Իվանյանը 1938թ. ընդունվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարան և 1940թ. ավարտել այն: Ժամկետից շուտ ավարտելը կապված էր խորհրդա-ֆիննական պատերազմի հետ:

1940թ. փետրվարի 3–ին գործուղվել է Բալթա քաղաքում տեղաբաշխված 30–րդ հրաձգային դիվիզիայի 59–րդ թեթև հրետանային գունդ, իսկ ապրիլին, որպես արդեն պատրաստված և ընդունակ սպա, նշանակվել է մարտկոցի հրամանատարի պաշտոնում:

1941թ. հունիսի 22–ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Իվանյանի մարտկոցը գնդի կազմում հայտնվեց Հարավային ռազմաճակատում, որտեղ էլ նա առաջին համազարկերը տվեց թշնամու դեմ: Իվանյանի անվեհերությունը ոգեշնչում էր ենթականերին: Նույնիսկ վիրավոր վիճակում նա չլքեց մարտադաշտը: Մարտկոցի հրամանատարը կատարած սխրագործությունների համար շուտով պարգևատրվեց Լենինի շքանշանով:

1942թ. ապրիլին Իվանյանը նշանակվում է Հարավային ռազմաճակատի 56–րդ բանակի հրետանու հրամանատարի վարչության շտաբային մարտկոցի հրամանատար: Նույն թվականին նա արդեն գլխավորում էր Անդրկովկասի ռազմաճակատի Սևծովյան զորախմբի 76–րդ ծովային բրիգադի առանձին կործանիչ հակատանկային դիվիզիոնը: Երեք ամիս շարունակ նրա դիվիզիոնը Նովոռոսիյսկի մատույցներում ետ էր մղում հիտլերականների հետևակի ու տանկերի գրոհները՝ կենդանի ուժի ու մարտական տեխնիկայի զգալի կորուստներ պատճառելով թշնամուն:

1942թ. հոկտեմբերի վերջերին Կրասնոդարի երկրամասի Լազարևսկի շրջանի Վիշնևկա գյուղի մոտ սկսեց կազմավորվել գլխավոր հրամանատարության ռեզերվի 195–րդ լեռնաականանետային գունդը: Սոչիի հոսպիտալներում ապաքինվելուց հետո շատ զինվորներ ձգտում էին շարք վերադառնալ և համալրել գնդի անձնակազմը:

1942թ. հոկտեմբերի 20–ին գնդի կազմավորումը հիմնականում ավարտվեց: Գնդի հրամանատար նշանակվեց փորձառու հրետանավոր Քրիստափոր Իվանյանը:

1943թ. սեպտեմբերի 16–ին Նովոռոսիյսկի ազատագրման ժամանակ աչքի ընկած զորամասերի մեջ գերագույն գլխավոր հրամանատարի հրամանում նշվեց նաև փոխգնդապետ Իվանյանի 195–րդ լեռնաականանետային գունդը, որին շնորհվեց «Նովոռոսիյսկյան» պատվավոր կոչումը:

Գնդի հրամանատարն, այդ մարտերում աչքի ընկնելով, պարգևատրվեց Կարմիր դրոշի և Սուվորովի երրորդ աստիճանի շքանշաններով:

Շուտով Իվանյանը նշանակվեց 318–րդ հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար:

Պատերազմի վերջին ամիսներին նա գլխավորեց 128–րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրետանին: Այդ դիվիզիայի կազմում մասնակցեց Կարպատյան լեռներում ու Չեխոսլովակիայի տարածքում մղված մարտերին: Իվանյանի համարձակ, վճռական գործողություններն անուշադրության չմատնվեցին. նա պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով և Չեխոսլովակյան խաչով:

1946թ. հուլիսից մինչև 1949թ. նոյեմբերը Իվանյանը հաջողությամբ ավարտեց Մ.Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիան, իսկ 1956–ին՝ բարձրագույն ակադեմիական դասընթացները: Տեսական խոր գիտելիքների և մեծ փորձի շնորհիվ Իվանյանը համալրեց խորհրդային ամենաընդունակ հրամանատարների շարքերը: 1970թ. նրան շնորհվեց հրետանու գեներալ–մայորի կոչում:

1980–92թթ. Իվանյանը պահեստազորում էր, ապրում էր Սանկտ Պետերբուրգում, ուշադիր հետևում էր ԽՍՀՄ–ում, հատկապես Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների զարգացմանը:

1992թ. 72–ամյա Իվանյանը եկավ Հայաստան, ծանոթացավ իրավիճակին, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հետ զրույցներից հետո որոշվեց, որ նա պետք է զբաղվի ԼՂՀ բանակաշինությամբ:

Շուտով գեներալ–մայոր Իվանյանը գլխավորեց մոտոհրաձգային բրիգադը Ղարաբաղյան ռազմաճակատի ամենավտանգավոր տեղամասում, և այդ հատվածում պաշտպանության գիծը կայունացավ արցախցիների համար շահեկան դիրքով:

1994թ. հունվարի 28–ին ՀՀ նախագահի հրամանագրով Քրիստափոր Իվանյանին շնորհվեց գեներալ–լեյտենանտի կոչում:

1996–99թթ. նա գլխավորեց իր ղեկավարությամբ կազմավորված առաջին մոտոհրաձգային դիվիզիան:

Ծառայության բերումով բանիցս հանդիպել եմ Իվանյանին, և միշտ ինձ զարմացրել է նրա նպատակասլացությունը, եռանդը և առաջադրված խնդիրները կատարելու վճռականությունը: Նա խստապահանջ էր իր և ենթակա զինվորականների հանդեպ, հոգ էր տանում նրանց կայացման մասին:

Մարտական գործողությունները դեռ չէին ավարտվել, բայց թիկունքում նա ստեղծել էր հրաձգարան և հրացանահրետանային փորձարաններ՝ մո-

տոհրաձիգների, տանկիստների ու հրետանավորների ուսուցման համար, և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում միավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների օրինակելի ուսումնանյութական հիմքի ստեղծման նախաձեռնողն էր:

Գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը վախճանվեց 1999թ. օգոստոսի 28-ին Սանկտ Պետերբուրգում և թաղվեց Սուրբ Հարություն եկեղեցուն հարող հայկական գերեզմանատանը:

Հայտնի զորապետի ու Արցախյան պատերազմի ակտիվ մասնակցի թաղման կազմակերպումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը հանձնարարեց ինձ: Մեր պատվիրակության կազմում էին նաև Հայաստանի Հանրապետության հրթիռային զորքերի և հրետանու պետի տեղակալ Մարատ Ղարիբյանը, ԼՂՀ պաշտպանության փոխնախարար, փոխգնդապետ Լեոնիդ Ծատուրյանը:

Իվանյանի մահվան լուրը հայտնի դարձավ Սանկտ Պետերբուրգի ամբողջ հայ համայնքին. շատերը մասնակցեցին թաղմանը:

Փառաբանված գեներալի ու մեծ մարդու թաղմանը մասնակցեցին նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ Ֆելիքս Ղուշչյանը, Սանկտ Պետերբուրգի հրետանային ակադեմիայի պետ, գեներալ-լեյտենանտ Վ. Սուխորուչենկոն, հրամանատարական ֆակուլտետի պետ, գեներալ-մայոր Կ.Վդովիչենկոն, ակադեմիայում սովորող Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բոլոր տղաները:

Գեներալ-լեյտենանտ Իվանյանը մեծ հեղինակություն ուներ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սպայակազմի, ղեկավարության շրջանում, նրան անձամբ ճանաչում և աշխատանքի հարցերով ընդունում էին Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահները:

ԼՂՀ զինված ուժերի կայացման գործում անձնական ավանդի համար գեներալ-լեյտենանտ Իվանյանն արժանացել է ԼՂՀ բարձրագույն պարգևներին, 1994թ. պարգևատրվել է Մարտական խաչի 1-ին աստիճանի և 2000 թվականին՝ «Արցախի հերոս» շքանշաններով:

Հայ ժողովրդի փառապանծ զավակի անունն ու սխրանքները հավերժ կմնան սերունդների հիշողության մեջ. նրա անունը ոսկե տառերով է գրված Արցախյան ազատագրական շարժման տարեգրությունում:

# БОЕВАЯ БИОГРАФИЯ ГЕНЕРАЛ—ЛЕЙТЕНАНТА
# **ХРИСТОФОРА ИВАНЯНА**

Христофор Иванович Иванян — генерал—майор артиллерии Советской Армии, а затем генерал—лейтенант Вооруженных Сил Республики Армения, человек — легенда, прославившийся на фронтах Великой Отечественной и на Карабахском фронте — родился 21 декабря 1920г. в г.Тифлисе (ныне Тбилиси).

Христофор Иванович в 1938 году поступил в Тбилисское артиллерийское училище и закончил в 1940 году. Это был досрочный выпуск, связанный с потребностями советско—финской войны.

3 февраля 1940г. он был отправлен в город Балта в 59—й легко—артиллерийский полк 30—й стрелковой дивизии, а в апреле, как уже подготовленного и способного офицера его назначают на должность командира батареи. Всего 2 месяца пришлось молодому комбату командовать в мирное время, начавшаяся Великая Отечественная война круто все изменила, вскоре в составе полка он оказался на южном фронте.

Первые залпы по врагу в июне 1941—го года он сделал как командир батареи. Его бесстрашие воодушевляло подчиненных. Даже ранение не заставило его покинуть поле боя. Вскоре Х. Иванян был награжден Орденом Ленина.

В апреле 1942—го года его переводят на должность командира штабной батареи управления командующего артиллерией 56—й Армии Южного Фронта.

В 1942—ом году Иванян был назначен командиром отдельного истребительного противотанкового дивизиона 76—й Морской бригады Черноморской Группы войск Закавказского Фронта. В течении трех месяцев его дивизион отражал атаки пехоты и танков гитлеровцев на подступах к Новороссийску. Бойцы его дивизиона подбили и сожгли немало фашистских танков.

“В конце октября 1942—го года около с.Вишневка (Лазаревский район Краснодарского края) на лесной поляне началось формирование 195—го Горно—вьючного минометного полка, резерва ГК (главного командования). Подлечившись в госпиталях г.Сочи, многие солдаты стремились вновь на передовую, в строй защитников Родины, среди которых было много жителей Краснодарского края, в т.ч. Адлерского района (Карапетян А.К., Варваштян М. А., Банклиян А.А., Огаджанян Г. А., Папазян А. А., Багарян Л. И. и другие).

К 20—му октября 1942—го года формирование полка в основном было завершено. Шла усиленная ежедневная боевая учеба — изучение материальной части, артстрелковая подготовка и т.д.

К этому времени прибыл на должность командира полка капитан Иванян Христофор Иванович — опытный командир — артиллерист" — (История боевого пути 195—го Новороссийского Краснознаменного Ордена Богдана Хмельницкого II степени Горно—минометного полка 1942—1945гг. стр. 23).

16 сентября 1943 года в приказе Верховного Главнокомандующего маршала Советского Союза И.Сталина, где отмечаются особо отличившиеся войсковые формирования — числится и 195—й Горно—вьючний минометный полк подполковника Иваняна и ему была обьявлена благодарность — за отличные боевые действия по освобождению г.Новороссийска, а полк Х.Иваняна переименован в 195—й Новороссийский Горно—вьючный минометный полк.

Командир полка подполковник Иванян отличился в этих боях и был награжден Орденом Красного Знамени и Суворова третьей степени.

Вскоре, командир полка подполковник Иванян Х.И. был назначен командующим артиллерией 318—й стрелковой дивизии.

Последние восемь—девять месяцев Великой Отечественной Войны Христофор Иванович возглавлял артиллерию 128—й горно—стрелковой дивизии. С ней он воевал в Карпатах, бил фашистов в Чехословакии, с ней же закончил боевой путь. На горном театре военных действий полковник Иванян не раз отличался в боях. Он смело прибегал к творческому боевому применению артиллерийских частей и всей артиллерии дивизии и поэтому добивался больших успехов.

Командир дивизии в декабре 1944 года дал следующую краткую характеристику. "В боях за Карпаты артиллерия, руководимая тов. Иваняном, свою задачу выполнила успешно. Уничтожено много техники и живой силы противника".

Смелые, решительные действия полковника Иваняна были отмечены не только советским командованием, но и Чехословацким Правительством. За большой вклад в освобождение народов Чехословакии от фашистских захватчиков он был награжден Орденом Красной Звезды и Чехословацким Крестом.

В последний период Христофор Иванович много и добросовестно работал, честно служил Родине. В любом деле сказывалась его инициатива, непреклонная воля, способность организатора и гибкий ум военноначальника.

С июля 1946 года по ноябрь 1949 года успешно проходил курс обучения в Военной Академии имени Фрунзе, а в 1956 году при этой же академии окончил Высшие академические курсы. Глубокие теоретические знания и большой опыт выдвинули его в ряды незаурядных военноначальников. В 1970 году ему было присвоено воинское звание генерал—майора артиллерии.

С 1980 по 1992гг. Христофор Иванович находился в запасе, жил в городе Санкт—Петербурге, но зорко следил за развитием событий в СССР и был очевидцем его развала и формирования новых — самостоятельных государств, особенно за развитием событий в Нагорном Карабахе.

Летом 1992 года Христофор Иванович Иванян, в возрасте 72 года, сказал своей жене — Лидии Иосифовне, что на несколько дней полетит в Ереван, посмотреть землю своих предков, но даже по прошествии нескольких недель он не возвратился.

За это время генерал—майор Иванян уже успел ознакомиться с обстановкой в НКР и в Республике Армения, которая была очень сложной, противоречивой и взрывоопасной. После посещения НКР и беседы с Министром Обороны Республики Армения Вазгеном Саргсяном, Христофор Иванович решил заниматься военным строительством в НКР. Оставила г.Санкт—Петербург и жена генерала — Лидия Иосифовна, переехав к мужу в г. Степанакерт, и на долго.

За короткое время имя Христофора Ивановича можно было услышать везде, оно было на устах каждого армянина, проживающего в НКР и Республики Армения. Вскоре генерал—майор Иванян стал командиром одной из мотострелковых бригад на самом опасном участке Карабахского фронта. Под командой опытного генерала — фронтовика бригада вскоре стабилизировала линию обороны с противником и заняла выгодные для обороны позиции.

28—го января 1994 года указом Президента Республики Армения Христофору Ивановичу Иваняну присваивается очередное воинское звание "генерал—лейтенант". С 1996 по 1999 год генерал—лейтенант Иванян командовал первой мотострелковой дивизией Армии Обороны, которая была сформирована под его командованием.

По долгу службы мне приходилось неоднократно встречаться с Христофором Ивановичем и всегда меня поражала его постоянная целеустремленность, энергичность и решимость выполнять поставленные задачи. Он всегда был требователен к себе и подчинен-

ным офицерам, заботился об их становлении в военном отношении, изучении военной науки и овладении практики боевого применения техники и вооружения. Еще шли боевые действия, но в тылу он оборудовал стрельбище и винтовочные артиллерийские полигоны для обучения мотострелков, танкистов и артиллеристов и был инициатором в ВС Республики Армения по созданию образцовой учебно—материальной базы соединений частей и подразделений.

Генерал—лейтенант Христофор Иванович Иванян умер 28—го августа 1999г. в городе Санкт—Петербурге и похоронен на Смоленском армянском кладбище при церкви Святой Арутюн.

Организация и проведение похорон известного полководца и активного участника Арцахской войны в г.Санкт Петербурге министром обороны Республики Армения было поручено мне. В нашу делегацию вошли полковник Марат Гарибян (заместитель начальника РВиА), заместитель министра обороны НКР подполковник Леонид Цатурян.

Смерть Христофора Ивановича молненосно стало известно армянской общине г.Санкт—Петербурга, многие из них прибыли на похороны. От начала организации похорон и до его завершения нашей делегации большую поддержку оказал и лично участвовал предводитель армянской церкви Св.Арутюн— Св. Отец Езрас (Нерсисян), который на нас оставил большое впечатление — глубиной своих знаний, патриотизмом, его бурной и энергичной деятельностью по сплачиванию армянской общины.

На похороны славного генерала и большого человека прибыли представитель национального собрания Республики Армения господин Феликс Гушчян, начальник артиллерийской академии С.Петербурга генерал—лейтенант В.С.Сухорученко, начальник командного факультета академии генерал—майор К.В.Вдовиченко. Пришли прощаться с Христофором Ивановичем Иваняном все офицеры ВС РА — слушатели академии в г. С.Петебурге.

Генерал—лейтенант Иванян пользовался большим авторитетом среди офицерского состава, руководства министерства обороны Республики Армения, его лично знали и неоднократно принимали по работе Президенты Республики Армения и НКР.

Личный вклад генерал—лейтенанта Иваняна в развитии и в становлении Вооруженных Сил НКР отмечены высокими наградами Правительством НКР: “Боевым Крестом” I степени — в 1994 году и Орденом “Герой Арцаха” — посмертно в 2000 году.

Имя и подвиги славного сына армянского народа всегда останутся в памяти многих поколений, его имя золотыми буквами написано в истории Арцахской освободительной войны.

Эту краткую боевую биографию Христофора Ивановича я хочу закончить словами известного писателя Зорий Балаяна — “Генерала Иваняна мы в Арцахе ласково называем “старцем”. В слове этом не только возраст, но и мудрость. Правда, чем ближе я узнаю его, тем чаще вижу его среди фронтовиков, тем явственнее ловлю себя на мысли, что этот человек прекрасно владеет исскуством “побороть старость”. Наверное это о нем давно еще сказали древние: “Старость начинается в тот день, когда умирает отвага”. Ведь не случайно в нем одновременно уживаются солдат и генерал, отвага и мудрость”.



Генерал—лейтенант
Христофор Иванян

## ՀՀ ՊՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ
## ԳԵՆԵՐԱԼ- ՄԱՅՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

## ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 30.08.1999թ. N 479 հրամանի և Ձեր կողմից տրված ցուցմունքների՝ իմ գլխավորությամբ կազմակերպվեց և ի կատար ածվեց մեր հայրենակցի՝ Արցախյան և Մեծ Հայրենական պատերազմների մասնակից՝ լեգենդար հայորդի, գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանի Իվանյանի աճյունի հուղարկավորությունը:

Հուղարկավորությունը կատարվեց Սանկտ Պետերբուրգի հայկական Սուրբ Հարություն եկեղեցուն (կառուցված 1771–74թթ.) կից պանթեոնում ս.թ. սեպտեմբերի 2–ին:

Հուղարկավորությանը մասնակցեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից նշանակված պատվիրակությունը՝ ՊՆ հրետանու պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանը, ՊԲ հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Լեոնիդ Ծատուրյանը և հրետանու պետի տեղակալ, գնդապետ Մարատ Ղարիբյանը:

Շեշտում եմ, որ գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի մահը շատ մեծ արձագանք ստացավ Սանկտ Պետերբուրգի ամբողջ հայ համայնքում, անգնահատելի բարոյական օգնություն ցույց տվեց հայ եկեղեցու առաջնորդ սուրբ հայր Եզրաս Ներսիսյանը, որն, օժտված լինելով մեծ հայրենասիրությամբ և հայ ազգին նվիրվածությամբ, մասնակցեց հուղարկավորության սուրբ արարողությանը, որը կատարվեց պատշաճ մակարդակով Սուրբ Հարություն եկեղեցու պանթեոնում, որտեղ հանգչում են հայազգի մի շարք պատմական անհատների աճյունները:

Հուղարկավորությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ Ֆելիքս Երվանդի Ղուշչյանը, Սանկտ Պետերբուրգի հրետանային համալսարանի պետ, գեներալ—լեյտենանտ Վ.Սուխորուչենկոն, առաջատար ֆակուլտետի հրամանատար, գեներալ–մայոր Կ.Վղովիչենկոն, նշված համալսարանի, ինչպես նաև կապի և թիկունքի ակադեմիաների հայ ունկնդիրները, որոնցից շատերը բաջածանոթ էին գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանին:

Генерал—лейтенант
Христофор Иванян

Մասնակցեցին նաև հայ համայնքի ղեկավարներ, Սանկտ Պետերբուրգում ապրող հայեր:

Խորը կսկիծով վերջին հրաժեշտը տվեցին հանգուցյալի կինը՝ Լիդիա Ի–

սիֆովնան, երկու դուստրերն՝ իրենց ընտանիքներով:

Ցավոք սրտի փառապանծ գեներալը արու զավակ հետնորդ չի թողել, բայց մեծ բավականությամբ նշում եմ, որ նրա դուստրերը և թոռները կրում են Իվանյան ազգանունը, իսկ թոռներից մեկը կրում է տաղանդավոր զորավարի անունը՝ Քրիստափոր:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի վշտին ու կորստին մեծ հոգատարությամբ մոտեցան Սանկտ Պետերբուրգի պարետատան ղեկավարները՝ հանձինս պարետի տեղակալ, գնդապետ Նիկոլայ Պոտեխինի, Պրիմորսկի շրջանի զինվորական կոմիսարի տեղակալ, փոխգնդապետ Սերգեյ Կիշենինի, որոնք իմ դիմումին արձագանքեցին և տրամադրեցին զինվորական նվագախումբ, պատվո ուղեկցորդ դասակ, և թաղումը կատարվեց մեծ զորավարին արժանավայել:

Զեկուցում եմ, որ գեներալ–լեյտենանտ Ք.Իվանյանի կնոջ՝ Լիդիա Իոսիֆովնայի հասցեով մահվան առաջին իսկ օրերին ցավակցական հեռագրեր ստացվեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանից, վարչապետ Վազգեն Սարգսյանից, պաշտպանության նախարար, գեներալ–լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանից, ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանից, ԼՂՀ բարձրաստիճան ղեկավարությունից և շատ–շատերից, որոնք սրտի խորը կսկիծով հայտնում էին իրենց ցավակցությունը և նշում հայ ազգի մեծագույն կորստի մասին:

Պաշտպանության նախարարի կողմից տրված գումարը՝ 2000 ԱՄՆ դոլար, պատվիրակության ներկայությամբ հանձնվեց հանգուցյալի կնոջը՝ Լիդիա Իոսիֆովնային:

Հարկավոր է նշել Լիդիա Իոսիֆովնայի մեծությունը: Նա, իմանալով, որ ամուսինը 1992թ–ին մեկնել է Արցախ, շտապ մեկնում է Ստեփանակերտ և այդ ծանր տարիներին միշտ եղել է իր ամուսնու կողքին՝ արհամարհելով վտանգը և դժվարությունները:

Նա իսկապես հերոսական կին է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մեծ հարգանքով մատուցեց և գնահատեց մեծ հայորդու մարտական սխրանքները:

2. Գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի մեծ անունը հավերժացնելու համար պաշտպանության նախարարությունում մշակել և ընդունել հատուկ որոշում:

3. Պաշտպանության նախարարությունում պլանավորել և միջոցներ գտ-

նել փառապանծ զորավարի գերեզմանին հուշարձան կառուցելու Սանկտ Պետերբուրգի Սբ. Հարություն եկեղեցու պանթեոնում (միգուցե արժե նրա աճյունը տեղափոխել Եռաբլուրի պանթեոն):

4. Ցուցաբերած մեծ օժանդակության և հայրենանվեր գործունեության համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվոգրով պարգևատրել Սանկտ Պետերբուրգի Սբ. Կատերինա եկեղեցու առաջնորդ Եզրաս Ներսիսյանին:

5. Շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանին և Ձեզ՝ պարոն գեներալ–մայոր, որ նման պատասխանատու և սուրբ գործի կատարումը հանձնարարվեց ինձ:

*ՀՀ ԶՈՒ ՀՐԹԻՌԱ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԵՏ*

*Գեներալ–մայոր Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ» , 8–15 մարտ, 2003թ., թիվ 9, էջ 5

## ԶՈՐԱԴԱՇՏԸ ԶԻՆՎՈՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ Է
## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

Ծնվել է Կապանի Շիշկերտ գյուղում: Երևանի թիվ 90 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Թբիլիսիի հրետանային ռազմական ուսումնարան, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: Ավարտել է նաև Լենինգրադի հրետանային ակադեմիան: Սկսելով դասակի հրամանատարից և անցնելով հրամանատարական բոլոր աստիճանները՝ խորհրդային բանակում հասել է կորպուսի հրթիռահրետանային զորքերի հրամանատարի պաշտոնին: Այնուհետև կամավոր տեղափոխվել է ազգային բանակ և 1992–ին ստանձնել նորակազմ հրթիռահրետանային զորքերի վարչության պետի պարտականությունները: Վարչությունը ղեկավարում է մինչ օրս: Մասնակցել է Արցախյան պատերազմին: 94–ին ստացել է գեներալ–մայորի զինվորական կոչում: Պարգևատրվել է Մարտական խաչի 2–րդ աստիճանի շքանշանով, «Արիության համար» և «Գարեգին Նժդեհ» մեդալներով:

*—Պարո՛ն Հայրապետյան, Դուք շուրջ 11 տարի ղեկավարում եք հրթիռահրետանային զորքերի վարչությունը, չե՞ք ձանձրանում տարիներ շարունակ նույն աշխատանքը կատարելուց:*

—Շատ անկեղծ հարց էր: Ես հրետանավոր եմ կրթությամբ, ողջ ծառայական կենսագրությամբ ու անչափ սիրում եմ իմ մասնագիտությունը, աշխատանքս սիրով, խանդավառությամբ ու ներշնչանքով եմ կատարում, և ձանձրանալու մասին խոսք անգամ լինել չի կարող: Ազգային բանակի հրետանին կատարելագործվում է հաստատուն ու հուսադրող տեմպերով, սակայն միշտ էլ առաջընթացի ու նոր նվաճումների հնարավորություն կա, քանի որ նույն արագությամբ փոխվում, բարձրանում են չափանիշները, մեծանում են պահանջները: Եվ ես դեռ անելիքներ ու չիրագործված ծրագրեր ունեմ, կարծում եմ՝ դեռ հարկավոր եմ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերին:

*—Ի՞նչ առանձնահատկություններ ունի հրետանին, որով տարբերվում է մյուս զորատեսակներից և ըստ այդմ՝ ինչո՞վ է առանձնանում հրթիռահրետանային զորքերի վարչությունը:*

—Հրթիռահրետանային զորքերի վարչությունը կարևոր դեր ունի հրթիռահրետանային զորքերի ուսուցման գործում և ղեկավարում է շատ կարևոր զորատեսակ: Զորքի մարտունակության, մարտական պատրաստության

բարձրացման, որակական զարգացման հարցերը օրախնդիր են, քանի որ զորքը պետք է մշտապես պատրաստ լինի մարտական կիրառման: Պակաս կարևոր չեն նաև ուսումնական գործընթացները, հրամանատարական պատրաստության հարցերը, զորավարժությունները և այլն:

—Հրետանավորի մասնագիտությունը սերտորեն կապված է մաթեմատիկական հաշվարկների, ֆիզիկայի իմացության հետ, ինչպե՞ս են զինվորները հաղթահարում դժվարությունները, ինչպե՞ս են տիրապետում մասնագիտական գիտելիքներին, հրթիռահրետանային զորքերում ծառայող զինվորները հատուկ ընտրվու՞մ են:

—Հրետանին գիտություն է, այդ զինատեսակից արդյունավետ օգտվելու համար, իրոք, անհրաժեշտ են առարկայական գիտելիքներ ֆիզիկայից և մաթեմատիկայից բացի, նաև երկրաչափությունից, տեղագրությունից և այլն: Տեղանքի ընտրության հաշվարկների և շատ այլ բաղադրիչների անճշտությունը կրակոցը կդարձնի անհասցե, թիրախը՝ անխոցելի, մինչդեռ առաջնային է մարտական առաջադրանքը առանց մեծ կորուստների իրագործելու խնդիրը: Խոսքը վերաբերում է զինամթերքի չարդարացված ծախսին: Ինչ խոսք, ցանկալի կլիներ, որ ապագա հրետանավորները բանակ զորակոչվելիս նախապես ընտրվեին: Սակայն նման հնարավորություն չունենք և ընտրում ենք միայն ուսումնական զորամասի զինվորներին, ովքեր ուսումնառությունից հետո ստանում են սերժանտի կոչում և համալրում են կրտսեր հրամկազմը: Իսկ այն գիտելիքներն ու հատկանիշները, որոնք անհրաժեշտ են հրետանավորներին, զինվորները ձեռք են բերում զինծառայության ընթացքում:

*—Եվ որո՞նք են այդ հատկանիշները, Դուք առայժմ խոսել եք միայն գիտելիքների մասին:*

Հրետանավորը պետք է լինի ֆիզիկապես ամուր, կոփված, օպերատիվ գործելու ունակ: Պետք է կարողանա արագ կողմնորոշվել: Շատ կարևոր են բարոյակամային որակները, պատասխանատվության բարձր զգացումը և հոգեբանական պատրաստվածությունը: Ցավոք, բանակ եկող զինվորները այդ առումով բարձր գնահատականի չեն հավակնում: Այդ առումով բնեռացումն ակներև է: Դպրոցներում զինղեկների աշխատանքը որակական նոր փուլ է թևակոխել, և մենք հույս ունենք, որ այդ հանգամանքը առաջիկա տարիներին իր ուղղակի ազդեցությունը կունենա զինակոչիկների ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության վրա:

*—Ինչպե՞ս է ընթանում ուսումնական փուլը հրթիռահրետանային զորքերում, ի՞նչ արդյունքներ կան: Ի՞նչ խնդիրներ են առկա թույլ օղակներում, և որո՞նք են դրանց հաղթահարման ուղիներն ու մեթոդները:*

—Ամփոփումները հավաստում են, որ արդյունքները բարվոք են, և կան հաստատուն առաջընթացի միտումներ վերջին երկու տարում: Կատարելագործման գործընթացը անընդհատ է: Սակայն, այդուհանդերձ, թույլ օղակներ կան, ինչը բացառապես պայմանավորում եմ հրամանատարների աշխատանքով: Հրետանու վարչության սպաները, ըստ ծրագրի իրականացրած գործուղումներից բացի՝ մեծ հաճախականությամբ լինում են թույլ օղակներում, կատարում են անակնկալ ստուգումներ, որպեսզի տեսնեն տիրող իրավիճակի ռեալ պատկերը, բացահայտեն քողարկված թերությունները: Հիմնական բացթողումներից մեկն այն է, որ լիովին չեն կատարվում հրետանու պետի կազմակերպչամեթոդական դրույթները հրետանային զորքերի պատրաստության վերաբերյալ: Հրթիռահրետանային զորքերի վարչության սպաները մեթոդական և գործնական օգնություն են ցույց տալիս տեղերում, անցկացնում են պարապմունքներ: «Հայ Զինվոր» թերթի միջոցով այս տարի նույնպես կազմակերպվել է «Կրակային վահան–2003» հրետանավոր սպաների մրցույթը, որի նպատակը նրանց մասնագիտական պատրաստվածությունը և գործնական ունակությունները բարձրացնելն է: Սկսվում է զորքի դաշտային ելքի ժամանակը, որտեղ շարունակվելու են պարապմունքները արդեն դաշտային պայմաններում, իրականանալու են զորավարժություններ մարտկոցի, դիվիզիոնի և գնդի հրետանու մակարդակով: Ընդունված է ասել, որ զորադաշտը զինվորի ակադեմիան է, քանի որ կատարելագործում է, զարգացնում է գործնական հմտությունները, և որ ամենակարևորն է՝ լուծվում է ստորաբաժանումների վերջնական ներդաշնակման խնդիրը: Այն ունի բացառիկ նշանակություն, քանի որ հրետանին կոլեկտիվ զենք է: Դաշտային ելքը կավարտվի հրետանու մարտական կրակի ղեկավարմամբ: Յուրաքանչյուր սպա կկատարի մարտական խնդիր, ձեռք կբերի մարտական կրակ վարելու փորձ: Պետք է նշեմ, որ նախարարությունը, համապատասխան վարչությունները մեծապես աջակցում են, որ հրետանավորների դաշտային հավաքները անցնեն բարձր մակարդակով և արդյունավետ:

*—Զորքերում կրտսեր հրամկազմի պատրաստության մակարդակը կատարելագործելու և նրանց ծառայությունը ավելի որակյալ դարձնելու խնդիր ունենք, ու այդ առումով կարևորվու՞մ է ուսումնական զորամասերի դերը, որոնք կադրեր են պատրաստում հենց այդ օղակի համար:*

—Մեր ուսումնական զորամասերը պատրաստում են կրտսեր մասնագետներ, օրինակ՝ հրանոթի, ականանետի, հակատանկային զենքի հրամանատարներ: Արդյունքները գոհացուցիչ են: Ունենք տնտեսական–կենցաղային խնդիրներ, չի բավարարում զորանոցների վիճակը, հարկավոր է ստեղծել

ավելի լավ պայմաններ, ուսումնամեթոդական բազան կատարելագործելու կարիք ունի, հարկավոր է ստեղծել զորանոցային ֆոնդ և այլն:

*—Ի՞նչ որակ են ապահովում Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն ավարտած հրետանավորները:*

—Ռազմական ինստիտուտի ուսումնամեթոդական բազան բավարար է, լսարանները լավ կահավորված են, նույնը վերաբերում է հրետանային հրաձգարաններին: Վերջին երկու տարում ուսումնական գործընթացը մեծ առաջընթաց է արձանագրել. ինստիտուտը տալիս է բարձրորակ կադրեր: Ավելացնեմ, որ մոտոհրաձգային և հրետանային զորամասերն ունեն լավ ուսումնական բազա, որը հիմք է ծառայում հրետանային զորքերի ուսուցման համար: Եվ մենք ունենք այնպիսի հրետանային ուժ, որը կարող է ուժեղացնել ցանկացած զորամիավորման հրետանի, ցանկացած ուղղությամբ: Մեր բանակի հրետանին համալրված է հրետանու բարձրորակ տեսականիով՝ ժամանակակից, մարտունակ: Հրետանու սպառազինությունը արդիական է: Զորավարժությունները ամեն անգամ հավաստում են, որ Հայկական բանակի զինվորներն ու սպաները ոչնչով չեն զիջում ռուսական բանակի գործընկերներին: Այդուհանդերձ, երբեք չենք բավարարվում ձեռք բերվածով, կատարելագործում ենք տեսական և գործնական հմտությունները, որպեսզի ավելի մեծանա հրետանու մարտական կիրառման արդյունավետությունը, հզորանա կրակային ուժը, և մեր տարածաշրջանի բարդ բնակլիմայական և լեռնային պայմաններում իրագործվի ճիշտ հաշվարկված հրետանու մարտական կիրառում:

*—Պարո՛ն գեներալ, շատ կարևոր է, որ հրետանավոր զինվորը սիրի իր զենքը, կապվի զենքի հետ, որպեսզի ավելի լավ հասկանա նրա լեզուն, ավելի մեծ սիրով ու բարեխղճությամբ խնամի իր մարտական «ընկերոջը»:*

—Այդ բարոյահոգեբանական գործոնը, իրոք, շատ կարևոր է: Զենքին տիրապետելու պարտականությունը պետք է որոշակի փուլում վերաճի զենքը սիրելու մղումի ու պատրաստակամության: Այդ հանգամանքը կբարձրացնի զինվորի ոգին, տրամադրվածությունը, ծառայական ակտիվությունը, կներշնչի ինքնավստահություն մարտական խնդիր կատարելու գործում: Զենքն ու զինվորը կդառնան միասնական միավոր և իրարով ավելի ուժեղ կլինեն: Այս առումով դեռ զգալի աշխատանք ունենք անելու: Խնդիրն ունի ոչ միայն բարոյահոգեբանական հնչերանգ, այլ նաև գործնական նպատակներ. մենք չենք կարող ամեն օր հրանոթ փոխել և պետք է հնարավորինս երկարաձգենք զենքի օգտագործման ժամկետը:

*—Պարո՛ն գեներալ, մեր հրետանու կենսագրությունը կապվում է բացառապես ազգա՞յին բանակի կազմավորման հետ, թե՞ կան այլ պատմական դրվագներ ու դեմքեր, ու՞մ կերպարներով է դաստիարակվում հայ հրետանավորը, ի՞նչ ակունքից է սնվում նրա մասնագիտական հպարտությունը:*

—Դեռևս 1918 թվականին պետականությունը վերագտած երկրի զորքը ուներ իր հրետանին, և այն մեծ դերակատարում ունեցավ այնպիսի պատմական փառապանծ ճակատամարտերում, ինչպիսիք են Սարդարապատի, Բաշ Ապարանի կռիվները: Գեներալ–գնդապետ Պարսեղովի հերոս–հրետանավորի անունն ու կյանքը, ծառայությունն ու սխրանքը օրինակ են հայ հրետանավորի համար: Հայոց զորքի հրետանին իր անուրանալի ավանդն ունեցավ Արցախյան պատերազմում և հաղթանակած դուրս եկավ փորձությունից: Պատմությունը, գալիք սերունդները դեռ կխոսեն այդ բախտորոշ օրերի մասին, տարիների հեռվից ավելի լավ կերևա յուրաքանչյուրի վաստակը, և շատ հրետանավորների անուններ՝ որպես հերոսության ու փառքի խորհրդանիշ, կմնան մեր ժողովրդի տարեգրության մեջ: Սակայն այսօր ես ցանկանում եմ առանձնացնել գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անունը: Նա ազգային բանակ եկավ 72 տարեկանում՝ գեներալի կոչումով, և նվիրաբերեց իր ամբողջ եռանդը, փորձը՛ ուժերը: Հայ հրետանավորի մասնագիտական և ազգային հպարտության ակունքը շատ զորեղ է ու առատ, պարզապես անհրաժեշտ է ավելի հետևողականորեն տոգորել զինվորներին այդ ակունքին կապվելու ցանկությամբ:

*Հարցազրույցը վարեց Գայանե Պողոսյանը*

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 21–26 հունիս, 1997թ., թիվ 24, էջ 3

## ԲԱԶՄԱՓՈՐՁ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ՀՐԵՏԱՆԱՎՈՐԸ ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **ՎԱՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Գնդապետ Ներսես Մերգելի Մուրադյան:

Ծնվել է 1942թ. հունիսի 22-ին Ծալկայի շրջանի հայաբնակ Դարկով գյուղում:

1961թ. ընդունվել է Թբիլիսիի հրետանային ուսումնարան, գերազանց գնահատականներով ավարտել է 1964թ.:

Այնուհետև ծառայել է խորհրդային բանակում, զորացրվել է փոխգնդապետի կոչումով և մշտական բնակություն հաստատել Երևան քաղաքում:

1987–1991թթ. դպրոցում դասավանդել է ռազմագիտություն՝ հայ երիտասարդներին պատրաստել Հայրենիքի պաշտպանությանը:

Այնուհետև մասնակցել է Երասխի պաշտպանական գործողություններին:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանու վարչության և զորքերի կազմավորման օրերին պարոն Մուրադյանը դիմել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին, ցանկություն հայտնել մասնակցել հզոր հրետանային ուժեր ստեղծելու ազգանվեր գործին:

1992 թվականից մինչև այսօր նա ծառայում է Հայաստանի նորաստեղծ բանակում, սիրում է իր մասնագիտությունը, բազմափորձ սպա է, համբերատար, երիտասարդ հրետանավորներին սիրով փոխանցում է իր հարուստ փորձն ու գիտելիքները:

Հայկական բանակը, ինչպես նաև հրետանային զորքերը գտնվում են կայունացման և զարգացման հերթական փուլում, առաջին պլան են մղվում որակական ցուցանիշները: Գնդապետ Ն.Մուրադյանի ամենօրյա մտահոգությունը հաստատված խաղաղությունը նպատակամղված օգտագործելն է:

Հրամանատարության առաջադրանքները բարեխղճորեն կատարելու, Հայրենիքին մատուցած ծառայությունների համար զինված ուժերի հրետանային զորքերի կազմավորման առաջին տարեդարձին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով փոխգնդապետ Ն.Մուրադյանին շնորհվել է գնդապետի զինվորական կոչում:

Շնորհավորելով մեր մարտական ընկերոջ՝ գնդապետ Ներսես Մուրադյանի հոբելյանը՝ բոլոր հրետանավորների և ընկերների կողմից ցանկանում ենք քաջառողջություն և նորանոր հաջողություններ զինված ուժերի հրետանային զորքերի հզորացման գործում:

«ՀԱՅ ԶԻՆՎՈՐ», 15–22 օգոստոս, 1998թ., թիվ 32, էջ 3

## ԶԵՆՔ ՍԻՐԵՑԻՐ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ԿՊԱՇՏՊԱՆԵՍ

ՀՀ ԶՈւ հրետանու վարչության պետ գեներալ–մայոր
Վ.Ա.Հայրապետյան

Ազգային բանակի նվիրյալներից է ՀՀ ՊՆ հրետանային վարչության կենտրոնական ենթակայության հրետանու բաժնի պետ, գնդապետ Բաբկեն Աբրահամյանը, ով ծննդյան 60–ամյակի կապակցությամբ արժանացել է պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի շնորհակալագրին և թանկարժեք նվերին, ինչպես նաև վարչության պետ, գեներալ–մայոր Վլադիմիր Հայրապետյանի պատվոգրին՝ Հայրենիքի պաշտպանության գործին անմնացորդ նվիրումի, ազատագրական մարտերին ակտիվ մասնակցության, հարուստ փորձն ու ռազմական գիտելիքները հայ մարտիկներին փոխանցելու համար:

Գեներալ–մայոր Վ.Հայրապետյանի հետ առանձնազրույցի ընթացքում իմ առջև գծագրվեց զինվորական գործին ամբողջ էությամբ նվիրված հայ սպայի կերպարը, որը, որքան համեստ ու ինքնամփոփ է ծառայակից ընկերների շրջանում, տասնապատիկ անգամ անողոք ու դաժան է թշնամու նկատմամբ:

Հենց այդպես էլ գրեք, – հորդորում է գեներալը, – ծնունդով ղարաբաղցի գնդապետ Աբրահամյանը մի կողմ թողեց ավելի քան քառորդդարյա ծառայությամբ վաստակած հանգիստը և նախ՝ կամավորական, ապա՝ որպես կազմավորվող բանակի սպա, բարձրակարգ հրետանավոր, իր անմիջական մասնակցությունն ու ներդրումը բերեց բանակաշինության գործում, և այսօր էլ նախանձելի եռանդով ու նվիրվածությամբ շարունակում է ապրել երդվյալ զինվորականի կյանքով:

60–ամյա հրետանավորը զինվորական դառնալու վճիռը կայացրել է դեռևս 8–րդ դասարանում, երբ հայրենի Չայլու գյուղում տեսավ այն ժամանակվա ԴՕՍԱԱՖ–ի նախագահ, հայրենակից Նապոլեոն Հակոբյանին:

—Սպայի հագուստն այնքան ներդաշնակ էր նրան, որ ես էլ ակամա ուզեցի կրել այն ժամանակ ինձ համար անհասանելի ու կախարդական ուժ ունեցող այդ համազգեստը, – ասում է Բաբկեն Աբրահամյանը:

Հետո տարիքից անհամեմատ մեծ երևացող գնդապետը մտաբերում է հորը՝ Ջալալ Հակոբի Աբրահամյանին՝ Անդրանիկի ճանաչված զինվորներից մեկին, որը մասնակցել է Վանի, Սարիղամիշի, Էրզրումի կենաց–մահու ճակատամարտերին, հաստատվել Շուշիում, դիմակայել 1918–ին ազերի–թուրքերի կողմից հրկիզված քաղաքի կռիվներին, սեփական ձեռքերով փրկել բոցավառված տներում ու վանքերում կալանված հարյուրավոր հայ ընտանիքների:

Բանակային ծառայությունն անցկացրեց հրետանային բրիգադում: 10 ամիս սերժանտական դպրոցում սովորելուց հետո կրտսեր սերժանտի կոչումով շարունակեց ծառայությունը և սիրով ընդունեց հրամանատարության առաջարկը՝ ուսումը շարունակել Թբիլիսիի հրետանային ուսումնարանում: Ի դեպ, այդ ուսումնարանի կուրսանտ էր նաև հետագայում նրա մտերիմ ընկերը դարձած Վլ. Հայրապետյանը, որի հետ մարտական, ծառայական և անձնական մտերմությունը շարունակվում է առ այսօր:

1962–ին նորընծա հրետանավոր–լեյտենանտը ծառայության նշանակվեց Հունգարիայում, հինգ տարի անց նրան տեղափոխեցին Բելառուս, ուր և 1986–ին ավարտեց ծառայությունը: Սակայն, տեղափոխվելով Երևան, նա չմոռացավ զինվորականի իր մասնագիտությունը և զինղեկություն էր անում ուսումնական մի շարք հաստատություններում՝ գտնելով, որ յուրաքանչյուր հայ պատանի պետք է կատարելապես տիրապետի զենքին, որովհետև ինչպես իր հայրն էր ասում՝ «Զենք սիրեցիր՝ Հայրենիք կպաշտպանես»:

88–ի Շարժումը տակնուվրա արեց անհանգիստ արցախցու հոգին: Ու նա հաստատ որոշեց միանալ երկիր ու սահման պահող տղաներին: Թշնամու արցանում էին հայտնվել Արցախի մի շարք բնակավայրեր, աչքի առաջ էին գալիս հոր պատմածները՝ 18 թվականի հրեշավոր նախճիրը անմեղ հայերի նկատմամբ: Պատմությունը կրկնվում էր, կրկնվում էր առավել դաժան ու անողոք ձևերով: Մարաղա գյուղը մխում էր, հերթը Թալիշինն ու Չայլուինն էր: Եվ նա վճռեց երևանաբնակ ղարաբաղցիներից կազմավորել կամավորների ջոկատ: Շուտով 32 հոգով, Բաբկեն Աբրահամյանի գլխավորությամբ, հայտնվեցին Ղարաբաղում: Չայլուի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Գարեգին Անտոնյանը սիրով համագործակցեց տղաների հետ:

92–ի մայիսի 3–ին կռիվը թեժացավ շրջանում, ուր ազերի–թուրքերի թիկունքին խորհրդային դեսանտագրոհայիններն էին կանգնած՝ մեծ թվով զինտեխնիկայով և զինամթերքով: Ավելի քան երկու ամիս հայկական տասնյակ բնակավայրեր ձեռքից ձեռք էին անցնում: Աբրահամյանի ծննդավայր Չայլուի ճակատագիրը անորոշ էր: Գյուղի վրա կրակ էր թափվում, և պարտադրված քայլ էր բնակավայրը դատարկել բնակչությունից:

Հրամանատարի 90–ամյա մայրը հրաժարվեց հեռանալ գյուղից. «Ես ոչ մի տեղ չեմ գա, սա իմ հողն է, այստեղ էլ կմեռնեմ»: 19–ի առավոտյան, երբ կարճ ժամանակով ջոկատը հնարավորություն ստացավ մտնել գյուղ, Բաբկեն Աբրահամյանը մորը գտավ դաժանաբար սպանված. զառամյալ հայուհին ձեռքով կառչել էր բակում տեղադրված թախտից: Նրան թաղեցին հենց իրենց տան բակում: Այս ամենը նա պատմում է դողացող ձայնով ու արցունքոտ աչքերով և վճռական կրճտացնում է ատամները. մեկ է՝ մորս գերված շիրիմը փրկելու եմ, դեռ ետ ենք բերելու մեր գյուղը՝ հրկիզված Շահումյանը: Գնդապետ Աբրահամյանը մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շր-

ջանների և Ղարաբաղի ամենաճակատագրական մարտերին, երեք անգամ ցնցակաքված ստացել և, սակայն, շարունակել կռիվը, շարունակել հրետանավորի իր մարտական փորձը հաղորդել երիտասարդներին:

Տղաները սկզբնական շրջանում սարսափում էին տանկային հարձակումներից, – հիշում է գնդապետը, – սակայն ես նրանց բացատրում էի, որ շրջահայաց հրետանավորը դիպուկ մի հարվածով կարող է շարքից հանել և այն վերածել 30 տոննանոց մետաղաջարդոնի: Գիտե՞ք, 30 տարի շարունակ ես կրակել եմ միայն մեկ ուղղությամբ, այն էլ զորավարժությունների, ուսումնական հավաքների և ամփոփիչ քննությունների ժամանակ՝ երբեք չսպասելով պատասխան կրակոցի: Այս պատերազմում պատասխան հարվածի չսպասող, այն անտեսող մարտիկը դատապարտված է:

1994 թվականի զինադադարից հետո լծվեց բանակաշինության բարդ ու դժվարին գործին: Որքա՞ն պատվաբեր էր նրա համար, երբ Քրիստափոր Իվանյանի նման բազմափորձ գեներալը իր հրետանավորների ստուգողական քննությունները գնահատեց «լավ» և «գերազանց»: Խոսքը հրետանու ուսումնական զորամասի կուրսանտների արդյունքներին է վերաբերում, զորամաս, որի առաջին հրետանային ուսումնական ստորաբաժանման հրամանատարն էր Բաբկեն Աբրահամյանը: 97–ի մայիսից ՀՀ հրետանու վարչության բաժնի պետն է և նույն երիտասարդական եռանդով շարունակում է իր պատվավոր ծառայությունը:

*Հարցազրույցը վարեց Սանդրո Զուլհակյանը*

## ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.
## ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ



(գեներալ–լեյտենանտ **ՀՐԱՉ ՀԱՄԱՅԱԿԻ ԱՆԴՐԵՍՅԱՆԻ** հիշատակին)

## ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԳԵՆԵՐԱԼԸ

1999 թվականի նոյեմբերի 9–ին հանկարծամահ եղավ պանծալի հայորդի, նախկին Սովետական բանակում որպես նշանավոր զորավար մեծ ճանաչում ստացած, Հայաստանի Հանրապետության անկախ պետականության նորաստեղծ բանակի բանակաշինարարության ակտիվ մասնակից գեներալ–լեյտենանտ Հրաչ Համայակի Անդրեսյանը, որին ես անձամբ ճանաչում էի դեռևս 1982 թվականից:

Իմ առաջին հանդիպումը եղել է Հյուսիս կովկասյան զինվորական օկրուգի շտաբում (Դոնի Ռոստով), նա արդեն նշանակված էր որպես նշված զինվորական օկրուգի շտաբի պետ, այնուհետև՝ Կրասնոդար քաղաքում տեղակայված բանակային կորպուսում, որտեղ ես ծառայում էի, իսկ մի քանի տարի անց՝ 1989 թվականին՝ Չեխոսլովակիայում, որտեղ նա արդեն աշխատում էր որպես Չեխոսլովակիայի գլխավոր շտաբի պետի ռազմական խորհրդատու:

Ամենուր սպաները նրա մասին խոսում էին միայն լավ կողմից՝ որպես բարձր մակարդակի և զինվորական առումով պատրաստված գեներալի:

Գեներալին յուրահատուկ էր բացարձակ ազնվությունը, բարձր շտաբային կուլտուրան, զինվորական գիտելիքները և մարդկային վերաբերմունքը

ենքակաների ՛նկատմամբ, վստահորեն էր արտահայտում իր կարծիքը բոլոր պարագաներում:

Իմ հաջորդ հանդիպումը եղավ արդեն Հայաստանում, որտեղ ճակատագրի բերումով և վճռականապես պատրաստ լինելով զինվորական և հայրենասիրական ծառայությունը մատուցել հայոց պետականությանը, Հայրենիքի վճռական և օրհասօրերին՝ 1992թ. ամռանը, երբ որոշվում էր՝ լինե՞լ Հայոց պետականությանը, թե՞ ոչ:

Եվ անչափ մեծ էր իմ ուրախությունը, երբ տեսա փորձառու զինվորականին՝ գեներալ–լեյտենանտ Հ.Անդրեասյանին, որը մեծ վճռականությամբ ցանկանում էր օգտակար լինել յուր ազգին, և նա անմիջապես նշանակվեց պաշտպանության նախարարի տեղակալ:

Նրան կարելի էր տեսնել հանրապետության արևելյան սահմանների ամենավտանգավոր հատվածներում, որտեղ յուրաքանչյուրը գիտակցում էր, որ չի բացառվում զոհվելը հանուն Հայրենիքի, քանզի դաժան մարտեր էին գնում Լաչինի մատույցներում, նմանապես Կապանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Կրասնոսելսկի, ղարաբաղյան հատվածներում:

Գեներալ–լեյտենանտ Անդրեասյանը անձամբ ղեկավարեց մի շարք կարևոր զինվորական օպերացիաներում, բայց ամենից ցայտունը համարում եմ Քարվաճառի 2–րդ օպերացիան, որը սկսվեց 1993թ. դեկտեմբերի 30–ից և վերջացավ 1994թ. փետրվարի 17-ի ուշ գիշերը:

Թշնամին, օգտվելով այն հանգամանքից, որ Օմարի լեռնանցքի ուղղությամբ մեր ստորաբաժանումները չունեին մեծ քանակ, աստիճանաբար ճնշում գործելով Յանշակի ուղղությամբ, այնուհետև՝ Չափուրլուի, մեծաքանակ զորախմբեր կուտակեց և 1994թ. հունվար ամսվա առաջին 10 օրվա ընթացքում ունեցավ որոշակի հաջողություն:

1994թ. հունվարի 1–ին ես ստացա հրաման՝ շտապ կերպով մեկնել Վարդենիս, իսկ վաղ առավոտյան այնտեղ էր մեկնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 1–ին տեղակալը՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ–լեյտենանտ Հ.Անդրեասյանը, որը և անմիջապես ձեռնամուխ եղավ պաշտպանական օպերացիայի միջոցառումների իրականացմանը, իսկ այնուհետև՝ հակահարձակման խմբավորումների ստեղծմանը և թշնամու զորախմբերի ջախջախման իրականացմանը:

Անձամբ ուսումնասիրելով և տեղեկանալով տեղանքի լեռնային առանձնահատկություններին՝ նրա որոշմամբ ստեղծվեց երկու զորախումբ՝ գնդապետներ Յու.Խաչատուրովի և Ֆ.Գ-զողյանի գլխավորությամբ:

Հրետանային խմբավորումների ստեղծման խնդիրների հրամանատարությունը դրվեց իմ պատասխանատվությանը: Գեներալը շատ լավ էր գիտակցում, որ առանց հզոր հրետանային խմբավորման դժվար կլինի մեծածավալ մարտական խնդիրների կատարումը, հատկապես ցուրտ ձմռանը և լեռնային պայմաններում: Կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին երկու հրետանային խմբեր, որոնք մեծ դեր խաղացին ամբողջ օպերացիայի

ընթացքում, մեր հրետանին եղավ գերիշխող, նրա ուղեկցող կրակի հետևից առաջ էին նետվում հայ զինվորները:

Գեներալ–լեյտենանտ Հ.Անդրեսյանի անքուն գիշերները, մտահղացված և հստակ կազմակերպված մարտական գործողությունները, անմիջական խելամիտ մասնակցությունը և ղեկավարությունը տվեցին իրենց արդյունքները՝ թշնամին կրեց մեծ կորուստներ ու շպրտվեց Օմարի լեռնանցքից:

Վերը նշված օպերացիայի նախապատրաստման, միջոցառումների պատրաստման և վերջնական կատարման ընթացքում փայլուն դրսևորվեցին մեծ զորավարի ռազմական ունակությունները, գիտելիքները և, ամենակարևորը, Հայրենիքին մեծ նվիրվածությունը:

Ամբողջ օպերացիայի ժամանակ ոչ մի անգամ չբացակայեց մարտական տարածքից, կատարում էր հարաբերական ուժերի հաշվարկներ, անձամբ զննում էր տեղանքը, ցուցմունքներ տալիս հրամանատարական կազմին, չէր ձգտում ունենալ մեծ զորախմբեր, բայց համոզված էր, որ մեր առկա ուժերով կհասնենք հաղթանակի, անում էր միայն մեծ զորավարին յուրահատուկ կանխագուշակումներ:

Մյուս կողմից՝ նրան հաջողվեց հավաքել նախկին մարտերում արդեն փորձված ու ճանաչված հրամանատարների, հարավ արևելյան խմբավորման հրամանատար նշանակվեց գնդապետ Յու.Խաչատուրովը, այժմ գեներալ–լեյտենանտ, պաշտպանության նախարարության փոխնախարար, իսկ արևմուտքից հարձակվող զորախմբի հրամանատար՝ գնդապետ Ֆ.Գզողյանը, պետք է ասեմ, որ գեներալ–լեյտենանտ Անդրեսյանը չսխալվեց, երկու զորախմբերի հրամանատարները փայլուն կատարեցին իրենց վրա դրված առաջադրանքները:

Վճռական հարձակման օրը՝ փետրվարի 17–ին, մեր զորքերը ունեին մեծ հաջողություն. երկու զորախմբերը միացան իրար, արդեն թշնամին ետ էր շպրտված Յանշակից, և օրը մթնում էր, ոմանք կարծում էին, թե հարձակումը կշարունակվի փետրվարի 18–ի առավոտյան: Սակայն հստակ էր ճակատի գլխավոր հրամանատար, գեներալ–լեյտենանտ Անդրեսյանի որոշումը՝ պետք է անցնել գիշերային հարձակման գործողություններին: Շատ կարճ տևեց խնդիրների ճշտումը գնդապետ Յու. Խաչատուրովի կողմից, հարձակվող ստորաբաժանումների հրամանատարները ստացան մարտական խնդիր՝ շարունակել հարձակողական գործողությունները գիշերային պայմաններում, հետապնդել արդեն փախչող թշնամուն և մինչև կեսգիշեր գրավել Օմարի լեռնանցքը:

Պահանջկոտ գեներալը անընդհատ զեկույցներ էր պահանջում և շտապեցնում՝ ջախջախել թշնամուն մինչև վերջ և գրավել լեռնանցքը:

Մեծ էր բոլորիս ուրախությունը և հպարտությունը, երբ մեր քաջարի հայորդիները, ահ ու սարսափ մատուցելով թշնամուն, փետրվարի 17–ի լույս 18–ի գիշերը ժամը $2^{40}$–ին վերջնական գրավեցին Օմարի լեռնանցքը:

Առավոտյան լուսաբացին քաջարի գեներալ–լեյտենանտ Անդրեսյանը

անձամբ բարձրացավ Օմարի լեռնանցքը և երկար նայում էր դեպի նախնիների կողմից կառուցված գյուղերը և քաղաքները՝ Գանձակի ուղղությամբ, արցունքներով լցվեցին աչքերը, բայց ուրախ էր, բարձր էր տրամադրությունը, գրկում և համբուրում էր զինվորներին ու հրամանատարներին:

Ցավոք սրտի, այս գործողությունը քաջ գեներալի վերջին օպերացիան էր, բայց, հուրախություն բոլորի, դրանից հետո Ադրբեջանի հետ կնքվեց զինադադար:

Այո՛, Հայոց բանակի զինվորները այսօր իրենց մարտական ծառայությունն են կատարում հանուն Հայրենիքի այն դիրքերում, որտեղ նրանց անձամբ ուղեկցեց քաջարի գեներալը, բազմաչարչար մարտի և պատերազմի ճանապարհներով:

Հայոց պետականության կողմից բարձր են գնահատվել գեներալ–լեյտենանտ Անդրեսյանի մարտական սխրագործությունները, հանրապետության նախագահի հրամանով նա հետմահու արժանացել է Մարտական խաչի 1–ին աստիճանի շքանշանի:

Մարտական գեներալը միշտ կմնա բոլորիս սրտերում և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի փառավոր տարեգրության էջերում՝ որպես հայ խոշորագույն ռազմական և պետական գործիչ:

# ՀՀ ԶՈՒ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ–ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ 10–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Պարո՛ն նախարար,

Պարոնա՛յք գեներալներ, սպաներ

Թո՛ւյլ տվեք Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի 10–րդ տարեդարձի հոբելյանական այս օրը դիմել և շնորհավորել հրետանային զորամասերի և ստորաբաժանումների ողջ անձնակազմին «Հրթիռահրետանային զորքերի օրվա» առթիվ:

Բոլոր ժամանակներում, բոլոր գլոբալ և լոկալ պատերազմների ժամանակ հրետանին եղել է, կա և կմնա «Պատերազմի աստվածը»: Հրետանին է որոշել և կորոշի բոլոր պատերազմների ելքը: Արցախյան պատերազմի ժամանակ այն ունեցել է իր ուրույն դերը, քանի որ ավիացիայի և մյուս թռչող ապարատների բացակայության դեպքում եղել է մեր ջոկատների և ապագա նորաստեղծ բանակի հիմնական կրակային ուժը, թշնամու խոցման հիմնական միջոցը: Արցախյան պատերազմի սկզբում հատկապես կարևոր էր հրետանու դերը, քանի որ այն ժամանակ չկային զինված զորամասեր և ստորաբաժանումներ, և հակառակորդի արդեն կանոնավոր բանակի դեմ կանգնած էին մեր ազատամարտիկների ջոկատները: Հրետանու դիպուկ կրակն էր ոգևորում և նրանց անձնական սխրագործություն գործելու պատրաստակամության հետ միասին լրացնում գիտելիքների ու փորձի պակասը, ոգևորում և մղում հայրենի Արցախի ազատագրության վեհ գործին:

Մինչև 1992թ. ամառը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում չկային կազմավորված հրետանային ստորաբաժանումներ, կային առանձին հրետանային հաշվարկներ և առանձին հրետանավորներ: Երբեմն գնդապետի աստիճանով սպան ստիպված կատարում էր հրանոթի հրամանատարի պարտականությունները, միաժամանակ տվյալներ պատրաստում և դիտակետից կառավարում մեկ հրանոթի կրակը: Դրան հակառակ՝ Ադրբեջանը ստացել էր խորհրդային զինված ուժերի 4–րդ բանակի ողջ տեխնիկան և զինամթերքը և օրօրի վրա Արցախում ու սահմանամերձ մյուս շրջաններում ավելի ժամանակակից տեխնիկա էր կիրառում: Այդ պայմաններում դրվեց հրետանային ստորաբաժանումներ ստեղծելու կենսական խնդիրը: Ադրբեջանի համեմատությամբ շատ քիչ էր խորհրդային բանակից մեր ստացած տեխնիկան, չկային մասնագետ՝ կադրեր: Արցախյան պատերազմի կանչով պահեստազորից և խորհրդային բանակի այլ զորամասերից նոր ստեղծվող հայկական զինված ուժերում ծառայելու եկան հրետանավոր սպաներ: Հայրենիք վերադարձն և իրենց ծառայությունը զինված ուժերում շարունակեցին հմուտ հրետանավորներ գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը,

գեներալ–լեյտենանտ Յուրի Խաչատուրովը, գնդապետ Վազգեն Ղավալյանը, որոնք, ծառայելով տարբեր հրամանատարական պաշտոններում, միշտ մնացին հրետանավոր և հնարավոր ամենը արեցին Հայկական բանակի հրետանու զարգացման համար:

1992թ. աշնանը ձեռնամուխ եղանք հրետանային զորամասերի ստեղծման գործին: Ստեղծվեցին 6–րդ հրետանային բրիգադը, 11–րդ հակատանկային գունդը, ռեակտիվ հրետանային գունդը, 8–րդ ինքնագնաց հրետանային գունդը, 62–րդ հրետանային բրիգադը, որոնց հրամանատարներ նշանակվեցին այսօր արդեն պաշտպանության փոխնախարար գեներալ–լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, գլխավոր շտաբի պետի 1–ին տեղակալ գեներալ–մայոր Էնրիկո Ապրիամովը, գնդապետ Վլադիմիր Մխիթարյանը, գնդապետ Ալբերտ Դավթյանը, փոխգնդապետ Սամվել Սաֆարյանը: Կադրային հրետանավոր սպաներով հնարավորին չափ կոմպլեկտավորվեցին հրետանային զորամասերի շտաբները, շտաբի պետի և հրամանատարների տեղակալների պաշտոններում նշանակվեցին այսօր արդեն 4–րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ–մայոր Մարտին Կարապետյանը, գնդապետ Վասիլի Չեռնյակովը, գնդապետ Ալբերտ Մկրտչյանը, փոխգնդապետ Ֆյոդոր Կումպյակը և ուրիշներ: Ստեղծվում էր նաև հրետանային վարչությունը, որն այդ օրերին ծանր կորուստ կրեց: Ծառայողական պարտականությունները կատարելիս ավտովթարից զոհվեց հրետանու վարչության շտաբի պետ, գնդապետ Առնո Տատինցյանը: Շտաբի նոր պետ նշանակվեց գնդապետ Լևոն Միքայելյանը, օպերատիվ բաժնի պետ՝ գնդապետ Ներսես Մուրադյանը, բաժնի պետեր՝ գնդապետ Բաբկեն Աբրահամյանը, գնդապետ Երվանդ Հասրաթյանը, գնդապետ Կամո Մանուկյանը: Այդ ժամանակից հետո զորամասերի հրետանային ստորաբաժանումները գտնվում էին 1–ին գծում՝ կատարելով մարտական խնդիրներ, մեծ ավանդ ներդնելով հակառակորդի վերջնական ջախջախման, Հայրենիքի սահմանների պահպանման, Արցախի ազատագրման գործում: Հատկապես նշանակալի է հրետանու դերը 1992թ. հոկտեմբերին, երբ թշնամու հարվածային ուժերը փակել էին Լեռնային Ղարաբաղ տանող միակ ճանապարհը և մշտական վտանգի տակ առել հանրապետության արևելյան սահմանները: Հրետանային մեր ստորաբաժանումները իրենց դիպուկ հարվածներով շատ բանով նպաստեցին կամավորական ջոկատների և բանակի առաջին ստորաբաժանումների ընդհանուր մարտական հաջողությանը: Այդ ծանր օրերին Վազգեն Սարգսյանը առաջիններից մեկը կարևորեց հրետանու անհրաժեշտությունը:

Ռազմաճակատում մեր հրետանին աստիճանաբար դառնում է գերիշխող, որի շնորհիվ նվազագույնի են հասնում մեր կորուստները: Հաջողությունների մենք հասանք՝ օրդեգրելով խորհրդային բանակի հրետանավորների լավ ավանդույթները: Եթե Հայաստանի Հանրապետությունում ռազմա-

ճակատը բավականին հեռու էր մայրաքաղաք Երևանից և հանրապետության մյուս քաղաքներից, ապա այլ էր վիճակը Լեռնային Ղարաբաղում, որի բնակավայրերն ու մայրաքաղաք Ստեփանակերտը անընդհատ գտնվում էին հրետակոծության և ավիացիայի հարվածների տակ: Այդ տարիներին ամբողջ Ղարաբաղում պատերազմ էր, և նման պայմաններում ստեղծվեցին հրետանային ստորաբաժանումները: Եթե Խորհրդային Միությունը Ադրբեջանին տվել էր զենք ու զինամթերք, խորհրդային բանակի սպաները բացահայտ և անբացահայտ կերպով օգնում էին Ադրբեջանին, ապա Ղարաբաղի բնակչությունը զրկված էր ամեն ինչից, նույնիսկ մեկ ավտոմատ ձեռք բերելը նրանց համար մեծ իրադարձություն էր: Այնուամենայնիվ, Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատները կարողացան սկզբում հակակարկտային հրանոթներով, այնուհետև ականանետերով, առանձին զրահ կայանքներով և հրանոթներով պատասխանել հակառակորդի հրետանային կանոնավոր հարվածներին: Այդ օրերին Ղարաբաղի պաշտպանական ջոկատների առաջին հրետանավորներից էին Դավիթ Սաֆարյանը, Վալերի Կարապետյանը, Էմերջան Ասլանյանը, Լևոն Մնացականյանը և ուրիշներ, որոնք հետագայում հասան գնդապետի աստիճանի և այժմ վարում են բարձր հրամանատարական պաշտոններ: Չունենալով կանոնավոր հրետանի, պատրաստված հրետանավոր սպաներ և անձնակազմ՝ հնարավոր չէ հաղթանակել ոչ մի պատերազմում, այդ իսկ պատճառով հարկավոր էր պատրաստել պրոֆեսիոնալ կադրեր:

Այդ գործին ձեռնամուխ եղավ և մեծ աշխատանք կատարեց գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, որը, Հայրենական մեծ պատերազմի ժամանակներից լինելով հրետանային գնդի հրամանատար, մեծ տեղ էր տալիս պատրաստված կադրերին: Նրա հետ միասին Լեռնային Ղարաբաղի հրետանու կայացման գործում մեծ լումա են ներդրել գեներալ-մայոր Լեոնիդ Մարտիրոսովը, գեներալ-մայոր Ժորա Գասպարյանը, գնդապետներ Ռայմոնդ Մազալյանը, Բաքկեն Աբրահամյանը, Երվանդ Հասրաթյանը, փոխգնդապետ Դնեպրիկ Բաղդասարյանը և ուրիշներ: Կարճ ժամանակամիջոցում պատերազմի դաշտում և ուսումնական կենտրոններում գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ Արցախում սկսեցին պատրաստվել հրետանավոր սպաներ: Հրետանավոր սպաներ պատրաստում էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատում, այլ նաև Երևանում, բացվեցին Ջրվեժի դասընթացները, որտեղ տարբեր կատեգորիայի հրետանավոր սպաների հետ անց էին կացվում հավաքներ և դասընթացներ: Նրանց հետ պարապում էին հմուտ հրետանավորներ՝ գնդապետներ Բախշո Պետրոսյանը և Բուլիկյանը, փոխգնդապետ Զավեն Հարությունյանը և ուրիշներ:

Աստիճանաբար նոր ստեղծվող հրետանային ստորաբաժանումները համալրվում էին կադրերով, դրա հետ մեկտեղ ստեղծվում էր հայկական հրետանին, ուժ էր առնում, նրա կրակը դառնում էր ավելի դիպուկ և անվրեպ:

1991 և 1992 թթ. Արցախում գործող ջոկատները իրենց սպառազինության մեջ արդեն ունեին հակատանկային կառավարվող կոմպլեքսներ, որոնց մարտական կիրառմամբ անձնակազմի ուսուցման գործում նշանակալի աշխատանք է կատարել գնդապետ Մարատ Ղարիբյանը: Նրա անմիջական ղեկավարությամբ Արցախում կռվող կամավորական ջոկատները «Ֆագոտ» հակատանկային կոմպլեքսների միջոցով Մարտակերտի շրջանում կարողացան կանգնեցնել և ոչնչացնել դեպի Ստեփանակերտ սողացող հակառակորդի տասնյակ տանկեր:

Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում հատկապես աչքի ընկավ և արժանացավ Մարտական խաչի առաջին աստիճանի շքանշանի Նաիրի Բեգլարյանը՝ խփելով հակառակորդի 13 տանկ: Նա հետագայում դարձավ փոխգնդապետ՝ հակատանկային դիվիզիոնի հրամանատար:

1993թ. սկսվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և գրավված մյուս տարածքների ազատագրումը: Հրետանին հուժկու հարվածներով ոչնչացնում էր հակառակորդի հրետանային և ականանետային մարտկոցները, պաշտպանական մատույցներում նրա կենդանի ուժը, աջակցում հրաձգային ստորաբաժանումներին հարձակման ժամանակ: 1993թ. ազատագրվեցին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանը, Կուբաթլին, Զանգելանը, Քելբաջարը և մյուս շրջանները, որտեղ հրետանին ուներ իր ավանդը: Հաշվի առնելով հրետանու դերը, նրա նշանակությունը ընդհանուր հաղթանակի և Հայրենիքի ազատագրման գործում, նրա ունեցած նշանակալի հաջողությունները 1993թ. մարտական գործողությունների ժամանակ՝ պաշտպանության նախարարի 471 առ 30.09.1993թ. հրամանով սահմանվում է հրետանու օր և յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 19–ը զինված ուժերում նշվում է որպես տոն: Հրամանում ասված է՝ «Հրետանին կազմավորվել է որպես զորատեսակ, հզորացել է Հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում, հանդիսանում է զինված ուժերում հպարտություն և կրակային ուժ: Հրետանավորները արիաբար են մարտնչել Շուշիի և Մարտակերտի ազատագրման, ինչպես նաև Հայրենիքի արևելյան սահմանների պահպանման մարտերում: Հատկապես հրետանին իրեն վառ կերպով է դրսևորել 1992թ. հոկտեմբերի 1–ից 19–ը՝ Լաչինի հումանիտար միջանցքի պահպանման գործում»: Հայկական տարածքների ազատագրման գործում հիմնական դերակատարը արդեն կազմավորված հրետանային զորամասերն ու ստորաբաժանումներն են: Արցախյան պատերազմի այդ տարիներին բոլոր հրետանային զորամասերի և ստորաբաժանումների մեջ հատկապես աչքի ընկավ 11–րդ հակատանկային գունդը, որի հրամանատարն էր այն ժամանակ գն-

դապետ Էնրիկո Ապրիամովը: Ուսումնասիրելով և յուրացնելով խորհրդային բանակից ստացված հակատանկային կառավարվող ինքնագնաց կոմպլեքսները՝ գունդը այդ մարտերի ժամանակ կարողացավ ոչնչացնել 32 միավոր տանկ և զրահամեքենա: Մարտական գործողությունների արդյունքում գնդապետ Էնրիկո Ապրիամովը արժանացավ «Մարտական Խաչ» շքանշանի, նույնպիսի պարգևի արժանացան շարքային Արտակ Բաղդասարյանը, կապիտան Մելիքսեթ Բաղդասարյանը, կապիտան Գագիկ Ջամբազյանը, սերժանտ Արտակ Ավետիսյանը (հետմահու):

Արցախի անկախությունը նվաճվեց հայ ազատամարտիկի, հայ զինվորի արյան գնով: Հայրենիքի համար մղված մարտերում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս հերոսի մահով ընկան մայոր Արկադի Սեմերջյանը, մայոր Ռաֆիկ Պետրոսյանը, կապիտան Վահագն Հակոբյանը, փոխգնդապետ Սամվել Սաֆարյանը, մայոր Սուրեն Անտոնյանը, ավագ լեյտենանտ Նվեր Ավանեսյանը, ավագ լեյտենանտ Գուրգեն Արշակյանը և շատ ու շատ ուրիշները, որոնց թվարկել հնարավոր չէ: Նրանցից շատերը հետմահու արժանացան կառավարական պարգևների:

Հավերժ փա՜ռք հայրենիքի ազատության համար զոհված հայ հրետանավորներին:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանին միշտ գտնվել է զինված ուժերի ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Հրետանու կրակի ավելացման նպատակով ստեղծվում են նոր զորամասեր և ստորաբաժանումներ:

Այսօր հրետանավորները զբաղված են իրենց գիտելիքների և հմտությունների կատարելագործմամբ, մշտական տեղակայման վայրերում, պոլիգոններում, ուսումնական կենտրոններում ամենօրյա քրտնաջան աշխատանքով և պարապմունքներով բարձրացնում են իրենց մակարդակը:

Պարո՛ն նախարար,

Պարոնա՛յք գեներալներ և սպաներ

Հավատացնում եմ ձեզ, որ հրթիռահրետանային զորքերը ի վիճակի են կատարելու իրենց առջև դրված խնդիրները ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ:

ԿԵՑՑԵ՛ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ, ԿԵՑՑԵ՛ ՆՐԱ ՀՐԵՏԱՆԻՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», 2(20). 1999թ., էջ 35–45

# ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես դարի վերջին տասնամյակում միջպետական հարաբերություններում էապես աճել է տարբեր տարածաշրջաններում բռնկվող զինված հակամարտությունների (բախումների) թիվը, որոնց մեծ մասը կարելի է որակել որպես տեղային պատերազմ, որը որոշակի պայմաններում կարող է վերաճել համաշխարհային պատերազմի:

Ինչպես հայտնի է, տեղային պատերազմները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների, որոնցից են դրանցում կիրառվող ռազմական միջոցներն ու զինատեսակները: Սույն հոդվածում մենք կքննարկենք սովորական սպառազինության կիրառությամբ տեղային պատերազմներում հրետանու դերն ու խնդիրները, պատրաստման ու կիրառման հարցերը՝ հենվելով տեղային պատերազմների ու ռազմական բախումների ամենաարդիական փորձի վերլուծության վրա:

Հրետանին, որն ստեղծվել է ավելի քան 600 տարի առաջ, եղել և մնում է հակառակորդի խոցման (ոչնչացման) հիմնական կրակային միջոցը և գործնականում կիրառվել է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած բոլոր մեծ և փոքր, այդ թվում նաև տեղային պատերազմներում: Հակամարտ կողմերը միշտ էլ ձգտել են կիրառելու հրետանին, և առավել մեծ հաջողության է հասել այն կողմը, որը կարողացել է այդ անել առավել արդյունավետ կերպով և զանգվածայնորեն, ինչը մեծապես նպաստել է, որ այդ կողմը կրի կենդանի ուժի ու մարտական տեխնիկայի համեմատաբար նվազ կորուստներ:

Վերջին ժամանակների պատերազմներում հրետանու մարտական կիրառության առավել ցայտուն ու դասական օրինակներ են Աֆղանստանում խորհրդային զորքերի ու ընդդիմության ուժերի միջև 1979–1989թթ. մղված պատերազմը, «Փոթորիկ Անապատում» օպերացիան՝ 1991թ. Պարսից ծոցում ԱՄՆ–ի (բազմազգ ուժերի) և Իրաքի միջև ռազմական բախման ժամանակ, Չեչնիայում 1996–1997թթ. պատերազմը, ինչպես նաև 1989–1994թթ. Ղարաբաղյան զինված հակամարտությունը, որում Ադրբեջանի զինված կազմավորումներին դիմակայում էին նախ Արցախի հերոս ազատամարտիկները, այնուհետև ԼՂՀ զինված կազմավորումները:

Հրետանու հմուտ և հաջող կիրառության առավել վառ օրինակներից է «Փոթորիկ Անապատում» օպերացիան, որը ցույց տվեց, որ համազորային զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարները, անկախ ընդհանուր աջակցության միջոցներից, պետք է իրենց տրամադրության տակ ունենան բավարար քանակությամբ հրետանի: Այսպես՝ Պարսից ծոցի գոտում սանձազերծված պատերազմի ընթացքում օպերացիայի 100–ժամյա վերջնական փուլում բազմազգ ուժերի (ԲԱՈւ) հրետանու կրակից իրաքյան զորքերի կրած կորուստներն զգալիորեն ավելի մեծ էին, քան 38 օր տևած օդային հարվածներից: Օրինակ՝ իրաքյան դիվիզիաներից մեկում կենդանի ուժի և սպառազինության կորուստները հրետանու, առաջին հերթին՝ համազարկային կրակի ռեակտիվ համակարգի (ՀԿՌՀ) ՄԼՌՍ–ների կրակից կազմել են ընդհանուր կորուստների 87 տոկոսը, մինչդեռ ավիացիայի հարվածներից կրած կորուստները չէին գերազանցում 13 տոկոսը:

## 1. ՀՐԵՏԱՆՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմային վերաբերող պրոբլեմները վերլուծելիս անհրաժեշտ է շեշտը դնել մեր զինված ուժերի համար առավել մեծ արժեք ներկայացնող փորձի ուսումնասիրության վրա, այսինքն՝ հաշվի առնել հնարավոր տեղային պատերազմում հրետանու կիրառության յուրահատկությունները՝ կապված ՌԳԹ առանձնահատկությունների հետ: Այս առումով վերը թվարկված օրինակներից մեզ համար առավել կարևոր են Աֆղանստանի պատերազմը և Արցախի հերոսական ազատամարտը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի պաշտպանության մարտական փորձը դեռ ուսումնասիրվում է, և վաղ է անել վերջնական եզրակացություններ, ավելի հանգամանորեն վերլուծենք աֆղանական պատերազմի փորձը:

Աֆղանական պատերազմում խորհրդային 40–րդ բանակի հրետանու խնդիրներն էին.

—հակառակորդի կրակային խոցումը ժողովրդատնտեսական և ռազմական բեռները ավտոշարասյուներով երկրի տարբեր շրջաններ տեղափոխելիս, հաղորդակցության ուղիների, օբյեկտների, վարչակարգին ենթակա գոտիների պահպանության ժամանակ հակառակորդի առավել մեծ վտանգ ներկայացնող ջոկատների և խմբերի ջախջախման նպատակով վարվող մարտական գործողությունների ընթացքում,

—հակառակորդի պաշտպանական օբյեկտների, կրակակետերի, պահեստների ու ճամբարների ավերումը և ոչնչացումը,

—հակառակորդի նահանջի և նրա ռեզերվների մոտենալու հնարավոր երթուղիների հեռահար ականապատումը,

—կրակային աջակցությունը համազորային ստորաբաժանումների պահակային ուղեկալներին և պահակակետերին, որը կատարվում էր մշտական տեղաբաշխման կետերից,

—հակառակորդի կրակային միջոցների տեղաբաշխման ենթադրվող

կամ հնարավոր շրջանների հրետակոծումը՝ դրանց կողմից վարչական կենտրոնների և խորհրդային զորքերի կայազորների հրետակոծումը կանխելու նպատակով,

—գիշերային գործողությունների ժամանակ տեղանքի պարբերական լուսավորումը և լուսային գծանշումը,

—դեսանտների թռիչքանցման, իջեցման և գործողությունների ապահովումը,

—ընդդիմության կողմից վերահսկվող շրջաններում թռուցիկների և այլ ագիտացիոն միջոցների տարածումը:

Համազորային ստորաբաժանումների պակասության պատճառով ի հաշիվ հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների ստեղծվում էին ինքնուրույն հրետանային պահակային ուղեկալներ և պահակակետեր, որոնց վրա դրվում էր վարչակարգին ենթակա գոտիների, հաղորդակցության ուղիների և կարևոր օբյեկտների պաշտպանության խնդիրը: Դրանք առանձին հաշվարկների (կրակային դասակների) ձևով մտնում էին նաև համազորային պահակակետերի (պահակային ուղեկալների) կազմի մեջ:

Որոշ հետախուզական տվյալների իրացման ժամանակ հրետանային ստորաբաժանումները հաճախ գործում էին ինքնուրույնաբար՝ նշանակետերի (օբյեկտների) լրիվ ու ճշգրիտ կոորդինատներն ստանալու դեպքում զինված ընդդիմության ջոկատներն ու խմբերը խոցիչ կրակի տակ էին առնում անմիջականորեն տեղաբաշխման կետերից կամ ժամանակավոր կրակային դիրքերից:

Հրետանու կրակային դիրքերի ընտրությունը Աֆղանստանի լեռնանապատային և ԼՂՀ լեռնանտառային տեղանքներում դժվար էր լինում, քանի որ պետք էր լինում ընտրել այնպիսի դիրքեր, որոնք ապահովեին բոլոր կրակային խնդիրների կատարումը համազորային զորամասերի և ստորաբաժանումների գործողությունների գոտում: Ելնելով դրանից՝ կրակային դիրքերի ընտրության ժամանակ, բացի ընդհանուր պահանջներից, հաշվի էին առնվում նաև հետևյալ հանգամանքներն ու պահանջները.

—այնպիսի «մեռյալ» տարածքների առկայությունը, որտեղ կարող էին կուտակված լինել հակառակորդի կենդանի ուժն ու կրակային միջոցները, ինչի կապակցությամբ պահանջվում էր ճիշտ օգտագործել հրետանային միջոցների տարբեր տեսակների հնարավորությունները այդ տարածքները համատարած հրետակոծման ենթարկելու համար (օրինակ՝ նման կրակային դիրքերում տեղաբաշխել հաուբիցային մարտկոցներ և ականանետների (120 մմ Դ-Ա և 82 մմ Ա) ստորաբաժանումներ),

—տարբեր լիցքերի համար գնահատել համազորային ստորաբաժանումների մարտական գործողություններին կրակային աջակցության ընթացքում լեռնակատարների հետևում գտնվող գոտիների հրետակոծման հնարավորությունը,

—հարմար կրակային դիրքեր չլինելու պատճառով մեկ դիրքում հրանոթների միջև ընդմիջակայքի (հեռավորության) կրճատման միջոցով երկու և ավելի մարտկոցների կամ երկու տարբեր դիրքերում մեկ մարտկոցի՝ առանձին դասակներով տեղաբաշխման անհրաժեշտությունը: Այդ դժվարությունը հաղթահարվում էր ինքնագնաց հրետանու կիրառությամբ, որը կարող էր արդյունավետ կրակ վարել՝ անգամ գտնվելով շարասյան մեջ կամ տեղաբաշխված լինելով սահմանափակ–փոքր հարթակում:

Սահմանափակ շրջաններում իրագործվող մասնավոր օպերացիաների ժամանակ, որպես կանոն, ստեղծվում էին փողային կամ ռեակտիվ հրետանու 2–3 մարտկոցներից կամ դիվիզիոններից կազմված հրետանային խմբեր, որոնց հրամանատարներն անմիջականորեն ենթարկվում էին մարտական օպերացիաների ղեկավարներին, ընդսմին խմբերի կազմը որոշվում էր ըստ օպերացիայի մասշտաբի, գործողությունների մտահղացման և ներգրավվող միջոցների: Նման դեպքերում գումարտակներում և վաշտերում էին գտնվում հրետանային ճշտորդները: Այդ նպատակով, որպես կանոն, համալրվում էին մարտկոցների կառավարման դասակների հրամանատարներ (դիվիզիոնների հետախուզության պետեր)՝ հրետանային հետախուզության և կապի անհրաժեշտ ուժերով ու միջոցներով հանդերձ:

Միմյանցից բավականաչափ հեռու գտնվող առանձին ուղղություններում կամ առանձին շրջաններում գործելու դեպքում հրետանային խմբեր չէին ստեղծվում: Այս դեպքերում հրետանային ստորաբաժանումները բաշխվում էին գումարտակներով ու վաշտերով:

Այս հրետանին իր կրակային հնարավորությունների սահմաններում կրակով ու շարժով ուղեկցում էր համազորային (հրաձգային) ստորաբաժանումներին, իսկ գումարտակների ու վաշտերի հետ տեղաշարժեր կատարելու անհնարինության դեպքում՝ միայն կրակով այնպիսի դիրքերից, որոնք հնարավորություն տային արդյունավետ կերպով աջակցելու հետևակին առավելագույն հեռավորությունների վրա:

Հրետանային հետախուզության հիմնական միջոցներն էին օպտիկական սարքերը՝ քվանտային ու լազերային հեռաչափերը, հրետանային կողմնացույց–անկյունաչափերը (ՊԱԲ–2), հրետանային հեռադիտակները: Հրետանային հետախուզության հիմքն էին առաջավոր դիտակետերը, որոնց դերում էին հանդես գալիս հրետանային կրակի խմբերը՝ հրետանավոր սպաների (ճշտորդների) գլխավորությամբ:

Հետախուզության արդյունավետությունն էապես մեծանում էր հրետանու և համազորային ստորաբաժանումների (զորամասերի) դիտակետերը մեկ միասնական համակարգում միավորելու դեպքում:

Հրետանային հարվածներ հասցնելու ժամանակ հետախուզական տվյալների իրացման համար կիրառվում էին նախապես ծավալված հրամանա-

տարածքային (դիտային) կետերը, իսկ այնտեղ, որտեղ դրանք չէին ապահովում նշանակետի դիտարկումը կամ հակառակորդի կրակային կետերի լրիվ բացահայտումը, կազմակերպվում էին լրացուցիչ կողմնային կամ առաջավոր դիտակետեր:

Հակամարտ կողմերը հազվադեպ էին սարքավորում հենակետեր, պաշտպանությունն ուներ օջախային բնույթ: Պաշտպանության համար մեծ մասամբ օգտագործվում էին լեռնային ռելիեֆը և բնական թաքստոցները: Պայքարը կրակակետերի դեմ բարդ էր լինում նաև այն պատճառով, որ դժվար, իսկ երբեմն անգամ անհնար էր լինում նախքան մարտը (օպերացիան) բացահայտել դրանք: Դրա հետևանքով կրակային խոցումը պլանավորվում և կատարվում էր ըստ ենթադրվող փոքրաչափ նշանակետերի, իսկ մակերեսավոր նշանակետերի վրա կրակ գործնականում չէր վարվում:

Հարձակման կրակային նախապատրաստման տևողությունը որոշվում էր ըստ խնդիրների ծավալի՝ հրետանու համար ռազմամթերքի պաշարի առկայության հաշվառումով: Կրակային նախապատրաստումն սկսվում էր այն ժամանակ, երբ առաջավոր ստորաբաժանումները մուտք էին գործում հակառակորդի ԴԾԽ–ների (ԺՄՆ) համար հասանելիության գոտի և կատարվում էր 2–4 կրակային հարձակումների ձևով: Առաջին կրակային հարձակման ժամանակ խոցվում էին առաջին գծում և խորքում՝ տիրապետող բարձունքներին գտնվող այն նշանակետերը, որոնք պետք է գրավեին մեր ստորաբաժանումները: Երկրորդ կրակային հարձակման ժամանակ խոցվում էին հարձակման ուղղության վրա եղած այն նշանակետերը, որոնք գտնվում էին ձորերից ու կիրճերից դուրս բերող ճանապարհների և արահետների վրա, ինչպես նաև հարձակումն սկսելու բնագծից 1,5–2 կմ հեռավորություններին վրա եղած բարձունքներին գտնվող նշանակետերը:

Հրետանային աջակցությունը կազմակերպվում էր այն դեպքում, երբ առկա էր թշնամու կողմից նախապատրաստված պաշտպանությունը: Այն իրագործվում էր միակի ՇԽԿ եղանակով՝ առանձին նշանակետերի հրետակոծման համակցությամբ: Հակառակորդի համառ դիմադրության դեպքում հրետանին ձեռնամուխ չէր լինում հրետանային ուղեկցման, այլ զորքերի առաջխաղացմանը համընթաց շարունակ վարում էր հրետանային նախապատրաստություն և աջակցություն:

Կարևոր և պատասխանատու խնդիր էր դրվում հրետանու վրա մարտից ստորաբաժանումների դուրսբերման ժամանակ, հատկապես լեռնաբարձ տեղանքում: Մարտից համազորային ստորաբաժանումների դուրս գալու հենց սկզբից հրետանին կրակ էր բացում բարձունքների հակադիր և թևային լանջերի վրա՝ հաջորդաբար հիմքից մինչև գագաթ, կրակը վարվում էր, մինչև ստորաբաժանումները բարձունքից հեռանային մոտ 2 կմ, այնուհետև տեղափոխվում էր նոր բնագծի վրա:

## 2. ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հրետանու մարտական գործողությունների պլանավորումը կատարվում է զորամիավորումների ու զորամասերի իրքիռային զորքերի և հրետանու շտաբի կողմից՝ խնդիրների ամբողջ խորությամբ և դրանց հետագա ճշտմամբ: Առանձին դեպքերում, հատկապես դժվարամատչելի տեղանքում (լեռներում), կրակային խոցման պլանավորում կարող է կատարվել օրվա խնդիրների խորությամբ:

Հրետանու մարտական գործողությունների պլանավորումը կատարվում է համազորային հրամանատարի որոշման հիման վրա և կախված է հրետանու ու զինամթերքի առկայությունից, հրետանու որակական կազմից և ներառում է.

—կրակի պլանավորումը,

—զորաշարժի պլանավորումը,

—մարտական գործողությունների համակողմանի ապահովման պլանավորումը:

Հակառակորդի հրետանու կրակից կորուստները բացառելու համար նպատակահարմար է պլանավորել հակահրանոթային (հակամարտկոցային, իսկ երբեմն նաև՝ հակակրակային) պայքար: Դրա համար պետք է ստեղծել հակահրանոթային (հակամարտկոցային, հակակրակային) պայքարի խմբեր: Դրանց գործողություններն արդյունավետ կլինեն միայն այն պայմանով, որ հետախուզված նշանակետի (հրանոթի, Ա, ՌՀ–ՄՄ) ոչնչացմամբ «հակազդումը» դրա նշարարումից հետո չգերազանցի 3 րոպե ժամանակամիջոցը, ինչը պահանջում է հրետանային ստորաբաժանումների հատուկ պատրաստության բարձր մակարդակ:

Բացի այդ, հաշվի առնելով մարտական գործողությունների, խոցման օբյեկտների բնույթն ու հրետանու կրակի հզորությունը, կարող է պլանավորվել նաև ավելի վճռական խնդիրների կատարում, ինչպիսիք են.

—հակառակորդի մեծ ջոկատների ոչնչացումը,

—կտրիչ կրակը հակառակորդի մեծ զանգվածներ հիմնական ուժերից կտրելու, ինչպես նաև քաղաքում ու մեծ բնակավայրերում մարտերի վարման ժամանակ հակառակորդի կենդանի ուժը հրապարակներից ու փողոցներից դուրս մղելու նպատակով:

Որոշ դեպքերում հակառակորդի ջոկատների (ստորաբաժանումների) դիմադրությունը շուտափույթ դադարեցնելու և դրանց զինաթափելու համար կարող է կիրառվել հրետանու կրակ ուժի ցուցադրման նպատակով: Բացի այդ, հրետանու կրակը կարող է պլանավորվել նաև կարևոր օբյեկտների և երթուղիների ծածկապաշտպանության համար:

Կրակային խոցման գլխավոր խնդիրներն են հակառակորդի առաջավոր

ջոկատների կենդանի ուժին, տանկերին, ՀՄՄ–ին, հակատանկային և մերձամարտի այլ կրակային միջոցներին հնարավոր առավելագույն կորուստների պատճառումը և դրանով իսկ այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց դեպքում ապահովվում է համազորային ստորաբաժանումների և զորամասերի կողմից իրենց առջև դրված խնդիրների կատարումը նվազագույն կորուստներով:

Քաղաքի գրավման համար մղվող մարտում հրետանու մի մասը, գերազանցապես ինքնագնաց, ընդգրկվում է գրոհային ջոկատների ու խմբերի կազմում: Մնացած հրետանին (այն գլխավորապես կիրառվում է ընդհանուր կրակային խնդիրների լուծման համար) կիրառում է կենտրոնացված կարգով: Հնարավոր առավելագույն թվով օբյեկտներ պլանավորվում է խոցել կրակով՝ կիրառելով ուղիղ նշանառություն և բարձր ճշգրտության զինամթերք: Գրոհի չենթարկվող հատվածներում ու թևերում նշանակվում են հակառակորդի ծխապատման ու կուրացման հատվածներ:

Գրոհն սկսվելուն պես հրետանին ձեռնամուխ է լինում գրոհային խմբերի հարձակման աջակցությանը՝ կրակի տակ առնելով գրոհի օբյեկտները, և այդ խմբերի առաջխաղացման համեմատ կրակը տեղափոխում է դեպի խորքերը՝ գերազանցապես պատուհանների, հրակնատների վրա:

Արդյունավետ է պաշտպանության համար հարմարեցված շենքերում պատսպարվող կենդանի ուժի ու կրակային միջոցների հրակոծումը ՀԿՌՀ ՄՄ–ներից ուղիղ նշանառությամբ:

Եթե տարբեր խմբավորումներ քաղաքում օջախային մարտական գործողություններ են վարում միմյանց անմիջական մերձակայությամբ, ապա նպատակահարմար է հրետանու կրակ բացել համազորային հրամանատարների կոչնազրով և միայն անմիջականորեն այդ խմբերի հրամանատարների հետ այն ըստ ժամանակի ու տեղի համաձայնեցնելով, ինչի համար պետք է նախատեսվի նրանց միջև առանձին կապուղու ստեղծում:

Հրետանային ստորաբաժանումների կրակային դիրքերը պետք է լինեն քաղաքի ծայրամասում (շինություններից 2–3 կմ և ավելի հեռավորությունների վրա): Պահպանությունն ու պաշտպանությունը պետք է կատարվեն համազորային ստորաբաժանումների (մինչև դասակ–վաշտ) ներգրավմամբ, ինչպես նաև սեփական ուժերով՝ այդ նպատակով հատկացնելով անհրաժեշտ քանակով (հատկապես գիշերը) անձնակազմ՝ զինված հրազենով ու նռնականետերով (ՌՊԳ–7):

Նշանակետի շրջանում շենքերի առկայության դեպքում այդ նշանակետի խոցման համար պետք է կիրառել հրասանդղային հրետաձգություն, իսկ նշանափորձումն սկսել ծխասփյուռ արկերով: Առաջին արկի նշարարման խնդիրը նպատակահարմար է հանձնարարել միանգամից երկու–երեք ճշտորդների:

Քաղաքում մարտեր մղելու դեպքում ռեակտիվ հրետանին նպատակահարմար է կիրառել հակառակորդի կենդանի ուժի մեծ զանգվածները քաղա-

քի ծայրամասերում կամ մատույցներում խոցելու նպատակով: ՀԿՌՀ համար կասետային զինամթերք կիրառելու դեպքում նպատակահարմար է յուրաքանչյուր մարտական մեքենային նշանակել կրակի վարման գոտի, ընդմին այդ գոտիները պետք է գտնվեն դիրքերից տարբեր հեռավորությունների վրա:

Հրետանու կրակի հիմնական տեսակներն են կրակը առանձին նշանակետերի վրա և կենտրոնացված կրակը: Որոշ դեպքերում կարող է կիրառվել նաև կրակապատնեշումը, ավելի հազվադեպ՝ կրակի մյուս տեսակները: Օբյեկտների (նշանակետերի) խոցումը կարող է կատարվել պլանավորված կարճատև կրակային հարձակման շրջանակներում:

Միևնույն խմբավորման հրետանու տեղաբաշխումը մեկ կրակային դիրքում հնարավորություն է տալիս որակապես ավելի լավ կատարելու հրետանու մարտական, թիկունքային և տեխնիկական ապահովումը, այդ թվում՝ կրակային ստորաբաժանումների մարտակարգի պահպանությունը և պաշտպանությունը:

Այն կրակային խնդիրների կատարման համար, որոնք դրվում են լի շահ մեկ օպերատիվ ուղղության վրա, բայց տարբեր շրջաններում գործող մոտոհրաձգային (հրաձգային) զորամասերի ու ստորաբաժանումների, նպատակահարմար է հրետանու մեկ խմբավորման հրանոթները (ՄՄ–ները)՝ թվով մի քանիսից (դասակներից) մինչև դիվիզիոնը և ավելին (կախված կրակային խնդիրների ենթադրվող ծավալից), կողմնորոշել հրետաձգության տարբեր ուղղություններով: Դա հրետանուն հնարավորություն է տալիս արագ արձագանքելու իրադրության փոփոխմանը, չուշացնելու կրակի բացումը հրանոթները մի այլ հիմնական ուղղությամբ կողմնորոշելու հետևանքով՝ անհրաժեշտության դեպքում արագ կատարելով կրակի տարաշարժ:

Ականանետային ստորաբաժանումների գործողությունները նպատակահարմար է պլանավորել վաշտերի (դասակների) մարտակարգերի կազմում՝ դրանք համազորային ստորաբաժանումներին կցելով առանձին դասակներով (առանձին ականանետերով):

Հրետանին կարող է մարտակարգ կազմել կրճատ ընդմիջակայքերի ու հեռավորությունների վրա: Մեկ կրակային դիրքից այլ կրակային դիրք տեղափոխումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ զբաղեցրած կրակային դիրքերից հնարավոր չէ (հիմնականում՝ հրետակոծման հեռավորության հետևանքով) կատարել կրակային խնդիրները:

Գերադասելի է, որ հետախույզ ճշտորդները հրետանային դիտակետեր զբաղեցնեն առաջին շարանակարգի վաշտերի մարտակարգերի անմիջականորեն հետևում՝ վաշտի հրամանատարից ոչ հեռու (տեսողական ու ձայնային կապի սահմաններում):

Քաղաքում (բնակավայրում) դիտակետ պետք է զբաղեցնել հրապարակների, պուրակների, ծայրամասերի մոտ գտնվող բարձրահարկ շենքերում (բայց

ոչ ձեղնահարկերում կամ ամենավերին հարկերում): Դիտումը պետք է կատարել սենյակների խորքից՝ հակառակորդի դիպուկահարներից պաշտպանվելու համար: Արդյունավետ կրակային խոցման համար նպատակահարմար է, որ ճշտորդն անմիջական կապ ունենա կրակային ստորաբաժանումների կամ հրետանու խմբավորման կրակի կառավարման կենտրոնի հետ:

Մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ մինչև մարտական գործողություններ սկսելը և դրանց ընթացքում պետք է հստակ կազմակերպված լինի հրետանու համագործակցությունը ավիացիայի և մոտոհրաձգային (հրաձգային) ստորաբաժանումների (զորամասերի) հետ, ինչպես նաև այլ գերատեսչությունների ռազմականացված կազմավորումների հետ:

Հրետանային աջակցության և ուղեկցության ժամանակ համազորային հրամանատարի հետ գտնվող յուրաքանչյուր հրետանային հրամանատարի պարտականությունն է իր դիտակետից դիտվող նշանակետերի վրա ցանկացած հրետանային ստորաբաժանման կրակը ուղղել համապատասխան նշանակետերին և ճշտել այն: Կառավարման այսպիսի կազմակերպումն ապահովում է ճիշտ ժամանակին կրակ բացելու հնարավորությունը:

Օպերացիաների (մարտական գործողությունների) վարման ժամանակ հրետանային ստորաբաժանումները, որպես կանոն, տրվում են մոտոհրաձգային (դեսանտային, հրաձգային) գումարտակներին, ականանետային ստորաբաժանումները բաշխվում են վաշտերով, իսկ որոշ դեպքերում թողնվում են գումարտակների հրամանատարների ենթակայության տակ: Ինչ վերաբերում է ռեակտիվ մարտկոցներին, ապա դրանք ամեն դեպքում մնում են գնդերի (բրիգադների) հրամանատարների ենթակայության տակ:

## 3. ՈՐՈՇ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ՏԵՂԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ

Որոշ տեղային պատերազմների փորձը (Աֆղանստան, ԼՂՀ) ցույց է տալիս, որ հրետանային խմբավորման կազմում նպատակահարմար է ունենալ (ընդգրկել) տարբեր մարտական հնարավորություններ ունեցող համակարգեր (հրանոթներ, ՍՄ–ներ, Ա–եր), որոնք զինված կամ ապահովված լինեն տարբեր նախանշանակման զինամթերքով:

Հույժ կարևոր ենք համարում նշել, որ Իրաքի դեմ ԱՄՆ–ի զինված ուժերի մարտական գործողությունների հաջողությունը շատ բանով պայմանավորված էր հաշվողական տեխնիկայի և էլեկտրոնիկայի բնագավառներում տեխնոլոգիական նորույթների օգտագործմամբ ստեղծված սպառազինության կիրառությամբ:

Ժամանակակից տեղային պատերազմների փորձը վկայում է, որ ներկայումս մարտական գործողությունների ժամանակ որոշումները պետք է ընդունել շատ ավելի արագ, քան առաջներում, պետք է մշտապես պահպանել զորամասերի բարձր մարտական պատրաստությունը անձնակազմի սահմանափակ թվաքանակի պայմաններում: Եվ այս գործում հրամանատարների համար մեծ օգնություն կարող են լինել կառավարման համակարգչայնացված համակարգերը*: Ինչպես ցույց տվեցին իրադարձությունները Պարսից ծոցում, շտաբներում դրանց կիրառությունը հնարավորություն է տալիս էապես կրճատելու հրետանու,ՀԿՌՀ և օպերատիվ–մարտավարական հրթիռային համալիրների կրակի պլանավորման գործընթացի տևողությունը: Նշանակետերի գտնվելու տեղերի ճշգրտումը, դրանց բաշխումն ըստ ստորաբաժանումների և խոցումը կատարվում էին դրանց հայտնաբերումից հետո տասնացիորեն մի քանի րոպեների ընթացքում:

Լեռներում հրետանային համակարգերի կիրառման փորձը հաստատեց առանց նախնական նշանափորձման նշանակետերի խոցման բարձր ճշտության միջոցների ստեղծման և հետախուզության նշանակետանշման միջոցների հետագա կատարելագործման անհրաժեշտությունը:

ԲԱՈՒ–ի հրետանու հիմք էին կազմում ամերիկյան 155 մմ Մ109Ա2 և 203,2 մմ ՍիՖՄ110Ա2 ինքնագնաց հաուբիցները, 155 մմ քարշակվող Մ198 և ՏՌ հաուբիցները, ինչպես նաև համազարկային կրակի ՄԼՌՍ ռեակտիվ համակարգերը: Հրետանային համակարգերի մեծ մասը ինքնագնաց էին, իսկ 80 տոկոսից ավելին՝ զրահապատ: Ամերիկյան միավորումներում կային նաև ԱՏԱԿՄՍ (ՄԼՌՍ ՀԿՌՀ հիմքի վրա) մարտավարական հրթիռային համալիրի մի քանի նմուշ. ի դեպ, համալիրը զինված է կասետային մարտական մասով օժտված (կուտակային–բեկորային գործողությամբ 100 մարտական տարր) հրթիռով, որի հեռագնացությունը մինչև 20 կմ է:

ԲԱՈւ–ի հրետանային ստորաբաժանումները և միավորումների մեծ մասը իրենց տրամադրության տակ ունեին հրետանու կրակի կառավարման ավտոմատացված համակարգեր և տեղեկույթի հաղորդման թվային միջոցներ: Մարտական գործողությունների տեղագրաերկրաբաշխական ապահովման համար կիրառվում էին ԱՆ/ՌԽՍՔ–70 տիպի տեղակապակցիչներ, տեղակայման որոշման, ճանաչման ու տվյալների հաղորդման ՊԼՌՍ տիպի համակարգեր և տիեզերական ուղևորային համակարգի ՆԱՎՍՏԱՌ տիպի վրագետնյա ընդունիչ սարքեր:

Հակառակորդի և տեղանքի մասին տվյալներ ստանալու համար ռադիոտեղորոշումային և ձայնային հետախուզության միջոցների, ինչպես նաև հրետանային դիտորդների օպտիկաէլեկտրոնային սարքերի հետ մեկտեղ կիրառվում էին ՕՀ–58 հետախուզական ուղղաթիռներ և «Պիոներ» անօդաչու թռչող ապարատներ: Բացի այդ, ԲԱՈւ–ի զորամիավորումները զինված էին վրագետնյա

նշանակետերի օդային հետախուզման և հարվածների կառավարման «Ջիստարս» ռադիոտեղորոշումային համակարգից տվյալների ընդունման շարժական կետերով: Ի դեպ, այդ համակարգը իրեն շատ լավ դրսևորեց, երբ հսկում էր թշնամու ռեզերվների տեղաշարժերը և հրետանու տարաշարժը այնպիսի հեռավորությունների վրա, որոնք գերազանցում էին զորամիավորումների հետախուզության միջոցների հնարավորությունները: Կրակային խոցման պլանավորման ժամանակ հրետանին կարող էր անհրաժեշտության դեպքում տվյալներ ստանալ նաև օդատիեզերական հետախուզությունից:

Ինչ վերաբերում է Իրաքին, ապա նա ուներ միայն սահմանափակ թվով ինքնագնաց զրահապատ հրանոթներ (155 մմ ֆրանսիական ԺՍՏ և ավստրիական Գ-ՀՆ–45, 152 մմ 203 և 122 մմ 201 հաուբիցներ): Ճիշտ է, այս բացը որոշ չափով լրացվում էր մեծ թվով բարձր շարժունակությամբ ԲՄ–21 տիպի ՀԿՌՀ–ներով և բրազիլական «ԱՍՏՌՕՍ» համակարգերով: Վերջիններս, արված լինելով բարձր անցունակությամբ ավտոմեքենաների հիմքի վրա, զինված էին փոխադրապարձակման բեռամփոփներով, որոնք հանդերձված էին 3 տրամաչափի՝ 127, 180 և 300 մմ արկերով, համապատասխանաբար՝ 30, 35 և 60 կմ հեռահարությամբ: Հատկանշական է, որ համակարգը ըստ որոշ բնութագրերի գերազանցում էր ամերիկյան ՄԼՌՍ ՀԿՌՀ–ները: Իրաքյան հրետանու հրանոթների մեծ մասը քարշակվող էր: Դրանց մոտավորապես կեսը 130 մմ Մ–46 թնդանոթներն էին, բայց կային նաև 155–մմ հարավաֆրիկյան Գ-5 թնդանոթ–հաուբիցներ, որոնք արևմտյան ռազմագետները դասում են քարշակվող համակարգերի՝ աշխարհում լավագույն նմուշների թվին: Հեռահարությամբ ԲԱՈւ–ի համապատասխան համակարգերի մեծ մասը գերազանցող հրանոթների գերակշռումը իրաքցիներին հնարավորություն էր տալիս իրենց կրակային դիրքերը տեղադրել կողմերի շփման գծից զգալի (10–20 կմ) հեռավորությունների վրա՝ պահպանելով քուվեյթյան սահմանի մոտ տեղաբաշխված հակառակորդի հրետանու վրա արդյունավետ կերպով ներգործելու հնարավորությունը:

Սակայն չի կարելի հաշվի չառնել իրաքյան զորքերում ռադիոտեղորոշումային միջոցների պակասը և օդային ու տիեզերական հետախուզության բացակայությունը: Արևմտյան ռազմագետների կարծիքով, իրաքյան հրետանավորները «անկարող եղան հայացք գցելու մերձակա ավազաբլուրներից այն կողմ»: Ասվածից կարելի է անել այն հիմնավոր եզրակացությունը, որ իրաքյան հրետանին իր տեխնիկական մակարդակով էապես զիջում էր ԲԱՈՒ–ի հրետանուն:

Այսպիսով՝ «Փոթորիկ Անապատում» օպերացիայի, ինչպես նաև վերջին ժամանակներս տեղի ունեցած այլ տեղային պատերազմների և ռազմական բախումների ռազմագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ մարտում հաջողության հասնելու համար քիչ է ունենալ հրետանային տեխնիկայի

մարտական բարձր բնութագրեր ունեցող նմուշներ. անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ կրակային համակարգերի կառավարման, տեղորոշման, հետախուզության, որոշումների ընդունման ժամանակակից ավտոմատացված համակարգեր՝ հիմնված համակարգչային տեխնիկայի բնագավառում նորագույն նվաճումների վրա: Իսկ դրանք առավել արդյունավետ կիրառելու համար զինված ուժերում պետք է լինեն գիտակ և տեխնիկային հմտորեն տիրապետող որակյալ մասնագետներ, որոնց պատրաստումը պետք է կատարվի զարգացման հեռանկարների հաշվառումով:

Հրետանու սպառազինության մեջ պետք է ներառնվեն տարբեր նախանշանակման, բնութագրերի լայն ընդգրկույթով տեխնիկական միջոցներ՝ տարատեսակ լիցքերով օժտված համապատասխան զինամթերքով հանդերձ:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանու վերազինումը պետք է դիտվի որպես ամբողջ զինված ուժերի համալիր խնդրի միայն մի բաղկացուցիչ մաս, որը սերտորեն կապված է այլ զորատեսակներում համապատասխան գործընթացների հետ և պետք է կատարվի աշխարհագրական և այլ կարգի կոնկրետ գործոնների հաշվառումով:

Մարտի նախապատրաստման և վարման բոլոր փուլերում կարևոր նշանակություն ունի հրետանային հրամանատարների (պետերի) և շտաբների կազմակերպական աշխատանքը ձևավորվող իրադրության ցանկացած պայմաններում առաջադրվող մարտական խնդիրների հաջող կատարմանը ստորաբաժանումների պատրաստման ուղղությամբ:

Կարծում ենք, որ քննարկված հարցերը հույժ արդիական են մեր զինված ուժերի համար, քանի որ անդրկովկասյան տարածաշրջանում մինչև օրս էլ պահպանվում է և ըստ երևույթին դեռ երկար կպահպանվի ռազմական լարվածությունը:

Այստեղ շարադրված տեսական դրույթները և առաջարկությունները հարկ է կիրառել ոչ թե ձևականորեն, այլ իմաստավորված կերպով, ձևավորվող կոնկրետ մարտական իրադրության հաշվառումով:

Սույն հոդվածը առաջին փորձերից մեկն է ժամանակակից տեղային պատերազմների վերլուծության հիման վրա գիտական հիմունքներով որոշելու Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանու զարգացման օպտիմալ ուղիները: Բնավ չհամարելով, որ տվյալ հոդվածում տրվում է այդ չափազանց բարդ, բայց հույժ կարևոր հարցի վերջնական լուծումը, հույս ունենք, որ շոշափված հարցերը կհետաքրքրեն տվյալ բնագավառի հետ առնչվող բոլոր մասնագետներին և կդառնան հետագա քննարկումների առարկա, ինչը կնպաստի մեր զինված ուժերի զարգացման հեռանկարների որոշման գործին:

# РАКЕТНЫЕ ВОЙСКА И АРТИЛЛЕРИЯ

## БОЕВОЕ ПРИМЕНЕНИЕ АРТИЛЛЕРИИ В ЛОКАЛЬНЫХ ВОЙНАХ

ГЕНЕРАЛ—МАЙОР В. А. АЙРАПЕТЯН

### РЕЗЮМЕ

Артиллерия созданная более 600 лет назад, была и остается основным средством поражения (уничтожения) противника и практически применялась во всех больших и малых, в том числе локальных, войнах. Противоборствующие стороны всегда стремились применять артиллерию, причем успеха добивалась та сторона, которая наиболее эффективно и массировано применяла артиллерию, имея при этом меньшие потери в живой силе и боевой технике.

Классические примеры боевого применения артиллерии дают война в Афганистане (1979—1989гг.), операция "Буря в пустине" в войне США (многонациональных сил — МНС) против Ирака (1991г.), война в Чечне (1996—1997гг.), а также Карабахский вооруженный конфликт (1989—1994гг.), когда азербайджанским военным формированиям противостояли вначале народные ополченцы — героические защитники Арцаха, а затем военные формирования НКР.

Операция "Буря в пустине" неопровержимо доказала, что командиры общевойсковых частей и подразделений должны располагать достаточным количеством артиллерии независимо от средств общей поддержки. В ходе войны в зоне Персидского залива потери иракских войск от огня артиллерии МНС и в первую очередь РСЗО МЛРС, в 100—часовой наземной фазе операции существенно превысили ущерб, нанесенный им авиацией в течении 38 суток. Так, в одной из иракских дивизий они составили, соответственно, 87 и 13 %.

Кроме того, в этой войне было убедительно показано решающее значение применения новейших технологий в системах управления огнем и в средствах разведки, в частности, компьютерной техники и воздушно—космической разведки.

Анализ действий артиллерии в Афганской войне позволяет выработать рекомендации по использованию артиллерии как в горно—пустынной, так и в горно—лесистой местности. Главное, чтобы артиллерийские командиры и начальники, а также командиры общевойсковых подразделений и частей применяли эти рекомендации не догматично, а осмысленно, творчески, в каждом конкретном случае сообразуясь с особенностями как поставленных задач, так и театра военных действий.

# ROCKET COORPS AND ARTILLERY

## BATTLE EMPLOYMENT OF ARTILLERY IN LOCAL WARS

V.A. HAYRAPETYAN, Major–General

## SUMMARY

Artillery created more than 600 years ago, was remains the basic means of defeat of the opponent and practically was employed in all large and small wars, including local ones. The contradictory parties always aspired to apply artillery, and only that party achieved success which most effectively and massed applied artillery, thus it had less losses in manpower and warlike equipment.

The classical examples of battle employment of artillery is the war in Afganistan (1979–1989), operation "Desert Storm" in war USA (multinational forces – MNF) against Irag (1989–1990), war in Chechnya (1996–1997), and also Karabakh armed conflict (1989–1994), when in the beginning the Azerbaijan military formations were resisted by national volunteers – the heroic defense counsels of Artsakh, and them military formations NKR.

The operation "Desert Storm" incontestably has proved, that the commanders of all–arms units and divisions should have enough artillery irrespective of means of common support. During the war in zone of Persian Gulf the losses of Iragi armed forces by the fire of artillery of Multinational Forces and first of all by MLRS, in a 100–hour ground phase of operation during 38 days essentially have been exceeded by aircraft. So in one Iragi division losses of manpower and war-like equipment have made, accordingly, 87 and 13 %.

Besides in this war the decisive importance of application of the newest technologies in control systems of fire and in means of intelligence, in particular, computer engineering and air–space intelligence was convincingly shown. The analysis of actions of artillery in Afgani war allows to develop the recommendations for use of artillery in mountain–deserted, and in mountain–woody districts. Mainly, artillery commanders and the chiefs, and also commanders of all–arms divisions and units would apply these recommendations not in dogmatic way but intelligently, creatively, each time in view of features of set missions and TCA (Theater of Combat Actions).

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», 1(23). 2000թ., էջ 44–53

# ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ.ԱՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ.** ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանային զորքերը, ինչպես և այլ զորատեսակներ ստեղծվել են 7 տարի առաջ հայ ժողովրդի տաղանդավոր զավակ և ճանաչված սպարապետ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ: Ես համոզված եմ, որ ապագա սերունդներն ըստ արժանվույն կգնահատեն Վ.Սարգսյանի անձնուրաց գործունեությունը հանուն Հայաստանի անկախության հաստատման և հայ ժողովրդի պետականության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման ու նրանց մարտունակության բարձրացման: Հիրավի նրա անունը կարելի է դասել հայ ժողովրդի այնպիսի զորավարների պանծալի անունների շարքում, ինչպիսիք են Վարդան Մամիկոնյանը, Մխիթար սպարապետը, զորավար Անդրանիկը, մարշալ Հովհաննես Բաղրամյանը:

Հանդես գալով Հայաստանի Հանրապետության ՊՆ ռազմական ինստիտուտի կուրսանտների առջև՝ Վ. Սարգսյանն ասել է. «Մենք այսուհետև ևս հոգ կտանենք այն մասին, որ ամրապնդենք մեր հանրապետության պաշտպանությունը, որ բավարար միջոցներ ունենանք մեր սահմանների անվտանգության ապահովման համար»:

Եվ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանային զորքերը, հավատարիմ սպարապետի այդ պատգամին, արդեն 7 տարի է, ինչ անխոնջ ծառայում են Հայրենիքին՝ ակտիվորեն մասնակցելով սահմանների անվտանգության ապահովմանը և արժանի պատասխան տալով մեր ժողովրդի խաղաղ կյանքի նկատմամբ հակառակորդի ցանկացած ոտնձգությանը:

Ելնելով տարածաշրջանում տիրող բարդ ռազմաքաղաքական իրադրությունից՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանային զորքերի կառավարման օղակները և ամբողջ անձնակազմը ջանք չեն խնայում հրետանու մարտապատրաստությունը բարձր մակարդակում պահելու համար:

Ըստ իս, բարձր մարտապատրաստության վիճակում հրետանու պահման հիմքում դրված են երկու փոխկապակցված հիմնարար գործոններ.

—հրետանու նյութական մասի մշտական սարքինությունը և պատրաստությունը մարտական կիրառության՝ ընդ որում նյութական մասը վերցված

իր բոլոր պարագաներով՝ մարտապաշարով, հրետանային քարշակներով, հրետանային հետախուզության միջոցներով, օպտիկական սարքերով, հրետանու կրակի և հրթիռների արձակման համար տվյալների նախապատրաստման հաշվողական միջոցներով, կապի միջոցներով և այլն,

—հատուկ հրետանային առումով անձնակազմի այնպիսի պատրաստություն, որի դեպքում նա տիրապետի հրետանային սպառազինությանը և հրետանու կրակի վարման (հրթիռների արձակման) համար տվյալների պատրաստման բոլոր մեթոդների ու եղանակներին, ինչպես նաև հրետանու կրակի կառավարման (ճշտման) արվեստին:

Մենք այստեղ հանգամանորեն կվերլուծենք առաջին գործոնի հետ կապված հարցերը, այն է՝ հրետանու նյութական մասի (ՀՆՄ) ուսումնասիրման և մարտապատրաստ վիճակում պահման հարցերը՝ նպատակ ունենալով օգնելու մեր բանակի երիտասարդ հրետանավորներին, որ նրանք ճիշտ կազմակերպեն հրետանու սպասարկումը: Վերլուծությունը կատարվում է ինչպես Հայրենական մեծ պատերազմի (1941–1945թթ.), այնպես էլ Արցախի ազատագրական պայքարի ընթացքում կուտակված մեծ փորձի հիման վրա:

Ավելի քան 40 տարի ծառայելով հրետանային զորքերում և ուսումնասիրելով Հայրենական մեծ պատերազմի (ՀՄՊ) պատմությունը՝ ես եկել եմ այն համոզման, որ մարտում (օպերացիայում) հաջողության են հասնում այն հրամանատարները, զորապետները, որոնց ղեկավարած զորամասերում և զորամիավորումներում ամենալուրջ ուշադրության առարկա է դառնում անձնակազմի կողմից ՀՆՄ և մարտական տեխնիկայի ուսումնասիրությունը, ՀՆՄ–ի նկատմամբ հոգատար վերաբերմունքը և նրա ճիշտ պահումը:

Վերլուծելով ՀՄՊ սկզբնական շրջանում մարտական գործողությունների ժամանակ մեր զորքերի կրած անհաջողությունները՝ Կարմիր բանակի գլխավոր հրետանային վարչությունն շտապ կարգով մշակեց և 1942թ. հրապարակեց դիվիզիական հրետանու մարտկոցի հրամանատարի մի տեղեկատու՝ «Նյութական մաս և մարտապաշար» ձեռնարկը, որը նախատեսված էր որպես օգնություն հրետանավոր սպաներին: 1944թ. նշված տեղեկատուն չեղյալ հայտարարվեց, և նրա փոխարեն հրապարակվեց մի նոր տեղեկատու՝ «Դիվիզիական հրետանու մարտկոցի հրամանատարի տեղեկատու, մաս II. Նյութական մաս և մարտապաշար» ձեռնարկը:

Տեղեկատուի առաջաբանում գրված է. «Ստալինյան հնգամյակների տարիներին ստեղծված խորհրդային արդյունաբերությունը ռազմաճակատին տալիս է այն ամենը, ինչ անհրաժեշտ է գերմանական բռնազավթիչների վերջնական ջախջախման համար:

Անհրաժեշտ է, որ ամեն մի հրետանավոր, առավել ևս սպա հոգատարությամբ և հմտորեն վերաբերվի իրեն վստահված նյութական մասին, այն պահպանի աչքի լույսի պես:

Հրետանային սպառազինության մարտական կիրառության արդյունավետության բարձրացման և դրա պահպանման նպատակով Կարմիր բանակի գլխավոր հրետանային վարչությունը լույս է ընծայում սույն տեղեկատուն՝ որպես օգնություն հրետանային մարտկոցի հրամանատարին: Այս տեղեկատուում մարտկոցի հրամանատարը կարող է գտնել այն հիմնական տեխնիկական տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են իրեն վստահված նյութական մասի և մարտապաշարի ճիշտ շահագործման համար»:

Այո՛, հենց այդպես՝ յուրաքանչյուր հրետանավոր սպա պարտավոր է իրեն վստահված հրետանին և ՀՆՄ–ն պահպանել աչքի լույսի պես:

Ինչպես վկայում է ՀՄՊ փորձը, դրան հասնում էին երկու ճանապարհով.

—բոլոր մակարդակներում դաստիարակչական և բացատրական աշխատանքի անցկացմամբ, ինչը նպաստում էր հրետանավոր սպաների պատասխանատվության բարձրացմանը,

—խիստ պատասխանատվության ենթարկմամբ, ընդհուպ մինչև ազատազրկումը, առանձնապես ՀՆՄ–ն հափշտակողին քողնելու համար:

Անկասկած, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանին ձևավորվել և զարգանում է ռուսական, ինչպես նաև խորհրդային զինված ուժերի հրետանու ձեռք բերած մեծ փորձի և փառավոր մարտական ավանդույթների հաշվառմամբ: Խորհրդային հրետանավորների անձնազոհությունը, նրանց սխրագործությունները ՀՄՊ ռազմաճակատներում Հայրենիքի նկատմամբ իր զինվորական և ծառայողական պարտքի կատարման վառ նմուշներն են: ՀՄՊ շրջանի փառապանծ հրետանավորների թվում արդարացիորեն նշվում են նաև մեր երկու հայրենակիցները՝ գեներալ–գնդապետ Մ.Պարսեղովը և գեներալ–լեյտենանտ Ք.Իվանյանը: Վերջինս իր ամբողջ ճակատային փորձը և հարուստ գիտելիքները անմնացորդ հաղորդում էր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի երիտասարդ հրետանավորներին: Փորձառու գեներալը նրանց ներշնչում էր, որ պետք է խնամքով ու հոգատարությամբ վերաբերվել հրետանու նյութական մասին, մաքուր պահել, սպասարկել ամեն մի մանրակ, մեխանիզմ, լավ իմանալ և ճիշտ շահագործել հրանոթը, ականանետը. միայն այդ դեպքում դրանք լիարժեք կերպով կծառայեն իրենց նպատակին:

Հարկ է նշել, որ ռուսական բանակում միշտ էլ պատշաճ ուշադրություն էր դարձվում ՀՆՄ ուսումնասիրությանը և պահմանը: «Հայրենական հրետանի. 600 տարի» գրքում հրետանու մարշալ Գ.Ե.Պերեդելսկին, անդրադառնալով 1905թ. ռուս–ճապոնական պատերազմին, նշում է, որ «շարքային հրետանավորները պատրաստության ընթացում, թեև նրանց մեջ մեծ տոկոս էին կազմում անգրագետները, բնական խելք ու մեծ ձգտում էին ցուցաբերում հրետանու նյութական մասի ուսումնասիրության, նոր հրանոթներով կրակի վարման գործնական հնարների տիրապետելու գործում»:

Զորավար Անդրանիկը նույնպես հատուկ ուշադրություն էր դարձնում մարտական զենքի պահման և խնամքի հարցերին: Նա զինվորներին տալիս էր այսպիսի հրահանգներ. «Զէնքերն ու փամփուշտները մաքուր պահել ... Երբ ճամբորդութենէ մը հասար ձեր բնակած տեղերը, ձեր մոսինի մէջէն փամփուշտները դատարկեցեք: Բերդանի կամ որևէ փամուշտ առնող ուրիշ հրացանի մեջ երբեք փամփուշտ չի դնեք, ուր ալ որ ըլլայ՝ վտանգ պատահած ժամանակ շատ դժվար չէ փամփուշտ դնելը: Ձեր բնակած տեղը հասնելուդ պէս՝ բոլոր հրացանները դատարկելէ ետք, նաև շատ լավ մաքրեցեք և զատորներն ալ կախեցեք, որպեսզի զսպանակները (պրուժինները) չի թուլանան»:

Զորամասում սպառազինությունը, տեխնիկան, հրթիռները և մարտապաշարը, այդ թվում և ՀՆՄ-ն սարքին վիճակում պահելու և ճիշտ կիրառելու համար գլխավոր պատասխանատուն և այդ գործի հիմնական կազմակերպիչը գնդի (բրիգադի) հրամանատարն է: Ստորաբաժանումներում տեխնիկայի և սպառազինության մարտապատրաստության համար ոչ պակաս պատասխանատվություն է կրում նաև ստորաբաժանման՝ դիվիզիոնի (գումարտակի), մարտկոցի (վաշտի), դասակի, հրանոթի (մարտահաշվարկի) հրամանատարը:

Սպառազինության և տեխնիկայի (ՍՏ) շահագործման ղեկավարումն իրականացնում է գնդի (բրիգադի) հրամանատարը: Նրանից և զորամասի շտաբից է մեծապես կախված ՍՏ կիրառման, խաղաղ ժամանակ զորքերի մարտական պատրաստության ապահովման և առօրյա կյանքի կազմակերպման ճշտությունը, ինչպես նաև մարտական պայմաններում ՍՏ կիրառման արդյունավետությունը:

Գնդի (բրիգադի) հրամանատարը կազմակերպում է զորամասում ստացվող ՍՏ ընդունումն ու շարք մտցնելը, անձամբ ստուգում է անձնակազմի պատրաստությունը ՍՏ ընդունմանն ու շահագործմանը: Վերջինս ներառում է ՍՏ նախապատրաստումը կիրառման, բուն կիրառումը, տեխնիկական սպասարկումը, պահումը և փոխադրումը:

Խաղաղ ժամանակ ՍՏ կիրառումը խստիվ կանոնակարգվում է այն փաստաթղթերով, որոնցում շարադրված են դրանց շահագործմանը ներկայացվող պահանջները, այն է՝ խաղաղ ժամանակ թույլատրվում է կիրառել ՍՏ միայն այն հատտիպային նմուշները, որոնք գտնվում են լրիվ սարքին վիճակում, անցել են կանոնակարգված տեխնիկական սպասարկում, նախապատրաստված են կոնկրետ պայմաններում, կոնկրետ ՀՆՄ-ով (սպառազինությամբ) խնդիրների կատարմանը, ապահովում են անձնակազմի և երթևեկության անվտանգությունը: ՍՏ շահագործումը թույլ է տրվում միայն դրանց շարք մտնելուց և անձնակազմին, մարտահաշվարկին, վարորդներին (մեխանիկներին) կցագրելուց, անձնակազմի կողմից անվտանգության միջոցառումների ուսումնասիրությունից և համապատասխան ստուգարքի հանձնումից հետո:

Խաղաղ ժամանակ ՍՏ շահագործումը կատարվում է ռեսուրսի՝ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված տարեկան լիմիտի սահմաններում: Այդ ժամանակ ՍՏ շահագործման խիստ կանոնակարգվածությունը առաջ է բերում նրա այնպիսի հանգամանալից պլանավորման անհրաժեշտություն, որով պետք է ապահովվի զորքերի մարտական պատրաստության և տնտեսական գործունեության խնդիրների լուծումը ռեսուրսի նորմավորված ծախսման պայմանով և զորամասի մարտապատրաստության պահպանումը ՍՏ երկարատև կիրառման և պահման դեպքում:

ՍՏ շահագործման պլանավորման ժամանակ գնդի հրամանատարը պետք է նախատեսի սպառազինության, տեխնիկայի, հրթիռների և մարտապաշարի մշտական պահպանումը մարտապատրաստ վիճակում, մարտական պատրաստման խնդիրների լրիվ և ժամանակին կատարման համար ՍՏ շահագործման հաստատված տարեկան նորմերի ճիշտ, արդյունավետ և տնտեսողական օգտագործումը, տեխնիկական սպասարկման ժամանակին անցկացման և մեքենաների հավասարաչափ նորոգման ապահովումը, մարտական և շարային խմբերի ապահովումն այնպիսի մեքենաներով, որոնց այն ռեսուրսը, որ նրանք ունենում են մինչև հերթական պլանային նորոգումը, գտնվում է հաստատված նորմերի սահմաններում:

ՍՏ շահագործման և նորոգման պլանավորումը լինում է երկու տիպի՝ հեռանկարային և ընթացիկ:

Զորամասի ՍՏ շահագործման և նորոգման հեռանկարային պլանով նախատեսվում է դրանց նորոգման հավասարաչափության ապահովում: Դա տեղի կունենա այն դեպքում, երբ ուսումնամարտական և ուսումնաշարային խմբերի՝ հիմնական նորոգում անցնող նմուշների թիվը հավասար կամ մեծ է մարտական և շարային խմբերի այն նմուշների թվից, որոնց ռեսուրսի պաշարն այն նույն տարում կդառնա հաստատված չիջեցվող նորմերից ցածր:

ՍՏ շահագործման և նորոգման տրվելու ընթացիկ պլանավորումը կատարվում է այն նպատակով, որ դրանք պահպանվեն բարձր մարտապատրաստության վիճակում, և որ տեղի ունենա զորքերի մարտական պատրաստության համար ռեսուրսի հատկացված տարեկան լիմիտի պլանաչափ և նպատակային ծախսում: Ընթացիկ պլանավորումը ներառում է մարտական պատրաստության պլանի ապահովման համար զրահատանկային սպառազինության և տեխնիկայի աշխատանքի պահանջմունքի հաշվարկում, զորամասի մարտական պատրաստման, մարտապատրաստության ապահովման համար ավտոմոբիլային տեխնիկայի կիրառման և մոտոռեսուրսի ծախսման հաշվարկում, ավտոմոբիլային տեխնիկայի շահագործման և նորոգման տարեկան պլանի և այլ փաստաթղթերի մշակում:

Այն ՍՏ–ն, որոնք ստացվել են հաստիքային համալրման համար, շարք են մտցվում գնդի (բրիգադի), առանձին զորամասի հրամանատարի հրամանով:

Գնդի (զորամասի) հրամանատարը նախքան ՍՏ–ն շարք մտցնելը կազմակերպում է դրանց ստուգում, սահմանում է անձնակազմին դրանք հանձնելու ժամկետը և կարգը: ՍՏ հանձնումը անձնակազմերին, մարտահաշվարկներին, վարորդներին զորամասի հրամանատարը պետք է կատարի հանդիսավոր կերպով, ստորաբաժանման անձնակազմի շարքի առջև:

Գնդի (զորամասի) հրամանատարը ՍՏ շահագործումը կազմակերպում է անձամբ, շտաբի, իր տեղակալների, զորատեսակների և ծառայությունների պետերի միջոցով: Գնդի հրամանատարի սպառազինության գծով տեղակալը յուրաքանչյուր ամսվա վերջում, ինչպես նաև ուսումնական շրջանի և ուսումնական տարվա ավարտից հետո ի մի է բերում շահագործման պլանների փաստացի կատարման արդյունքները: Գնդի հրամանատարը այդ հանրագումարային արդյունքների, ինչպես նաև անձնական վերահսկման հիման վրա որոշում է ՍՏ շահագործման բարելավման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումները, դնում է խնդիրներ՝ տալով համապատասխան ցուցումներ և հրաման: Գնդի հրամանատարի ցուցումներով և հրամանով սահմանվում է կիրառման համար ՍՏ պատրաստման, իսկ անհարժեշտության դեպքում՝ նաև նմուշների փոխադրման կարգը:

Ճշգրիտ և ժամանակին գնդի հրամանատարի ցուցումների և հրամանի կատարման համար պատասխանատվություն են կրում ստորաբաժանումների հրամանատարները, նրանց տեղակալները սպառազինության կամ տեխնիկական մասի գծով (ստորաբաժանումների տեխնիկներ): Աշխատանքները կատարում են անձնակազմերը, մարտահաշվարկները՝ օգտագործելով սպասարկման, նորոգման և տարհանման շարժական և ստացիոնար միջոցներ: Դրանք կատարվում են ստորաբաժանումների՝ դասակների, մարտկոցների հրետանային դիվիզիոնների (գումարտակների) հաստիքային հրամանատարների պարտադիր մասնակցությամբ:

ՍՏ պարբերաբար ստուգումներ (ստուգողական զննումներ) անցկացվում են պաշտոնատար անձանց կողմից՝ ըստ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնադրությամբ, տեխնիկական ապահովման գծով ուղեցույցներով և ղեկավար ձեռնարկներով սահմանված նորմերի և ժամկետների: Բոլոր աստիճանների հրամանատարների գլխավոր խնդիրն է անձամբ պարզել, թե ինչպես են զորամասի ստորաբաժանումներում ապահովվում ՍՏ մշտական պատրաստությունը և սարքինությունը: Պաշտոնատար անձանց կողմից ՍՏ նմուշների զննումները նախատեսվում են ծառայությունների և ստորաբաժանումների (զորամասերի) հրամանատարների պլաններով և կատարվում են համակազմային, համակազմատնտեսական օրերին և ՍՏ խնամքի ժամերին:

ՍՏ, մարտապաշարի և ռազմատեխնիկական գույքի ստուգումները կատարվում են պարտադիր կերպով անձնակազմի, մարտահաշվարկի, վարոր-

ղի (մեխանիկի), պաշտոնատար անձանց և ստորաբաժանման հրամանատարի ներկայությամբ: Զննումների ժամանակ բացահայտված բոլոր թերությունները գրանցվում են համապատասխան քարտերում, մատյաններում և այլ փաստաթղթերում, որոնք անձնակազմի մարտահաշվարկի, վարորդի (մեխանիկի) համար աշխատանքային փաստաթղթեր են և պահվում են մեկ տարի, որից հետո ոչնչացվում են:

Ավտոմոբիլային տեխնիկայի տարեկան տեխնիկական զննում կատարում է զորամասի տեխնիկական հանձնախումբը մինչև շահագործման ամառային շրջանի սկիզբը: Որպես կանոն՝ տարեկան տեխնիկական զննումը համատեղվում է զորամասի ՍՏ զննումների հետ:

ՍՏ զննումները կազմակերպում և անցկացնում է գնդի հրամանատարը: Որպես կանոն՝ դա արվում է սեզոնային սպասարկման ավարտից հետո կամ մարտավարական զորավարժություններից առաջ (հետո): Զննումների անցկացման ժամկետը նախատեսվում է մարտական պատրաստության պլանով, պարապմունքների ցուցակակարգով: Զննման են ենթարկվում զորամասի համալրման մեջ գտնվող նմուշները (ըստ շարային գրության):

Զննմանը մասնակցում է գնդի (զորամասի) ամբողջ անձնակազմը: Թույլ չի տրվում անձնակազմին ներգրավել զննման հետ կապ չունեցող աշխատանքներում և միջոցառումներում՝ նրան կտրելով զննմանը մասնակցությունից: Այդ օրը չեն պլանավորվում մեքենաների շահագործում և դրանցով պարապմունքներ: Զննման ենթակա չեն ստորաբաժանման այն ՍՏ–ն, որոնք հերթապահության մեջ են, ինչպես նաև այն նմուշները, որոնք ուղարկվում են նորոգման (փաստաթղթերով ձևակերպված):

Զննման օրը նախատեսվում են.

—ՍՏ զննում պաշտոնատար անձանց կողմից՝ ըստ ծառայությունների գծով ղեկավար հրահանգագրերի, ուղեցույցների և հուշագրերի պահանջների ու դրույթների,

—սպառազինության, կապի միջոցների, էլեկտրասարքավորման, հատուկ համակարգերի, համալիրների, ռազմատեխնիկական գույքի, վառելաքսանյութերի որակի և լցոնման լրիվության զննում և ստուգում զորամասի մասնագետների կողմից,

—շարժունակ նորոգումատարհանումային միջոցների զննում,

—ՍՏ կազմում հաստիքային, լրացուցիչ գույքի և պահեստային գործիքների ու սարքերի առկայության (համալրվածության), սարքինության և տեղադրման ստուգում,

—թերությունների վերացում անձնակազմի կողմից և վկայագրերում ու քարտերում (մատյաններում) պաշտոնատար անձանց կողմից նշված աշխատանքների կատարման որակի վերահսկում,

—հավաքակազմի բոլոր տարրերի զննում, հավաքակայանում առկա ներքին կարգուկանոնի և աշխատակարգի կատարման ստուգում:

Զորամասի հրամանատարը զննման արդյունքների հիման վրա տալիս է մի հրաման, որը հասցվում է անձնակազմի բոլոր կատեգորիաներին՝ նրանց վերաբերող մասով: Հրամանում նշվում են լավագույն ստորաբաժանումները, հրամանատարները, հրամանատարների տեղակալներն սպառազինության գծով և մասնագետները, սահմանվում են խրախուսման միջոցները, նշվում են թերությունները, բացթողումների համար կարգապահական պատժամիջոցները, թերությունների վերացման ժամկետները և այլն:

ՍՏ սարքինության ու աշխատունակության պահպանման և կիրառության համար դրանց մշտական պատրաստության ապահովման հիմնական եղանակն է ժամանակին և որակով կատարված տեխնիկական սպասարկումը:

Աշխատանքային շաբաթվա մեկ օրը (շաբաթ օրը) առանձնացվում է որպես համակազմատնտեսական օր, ինչն արվում է մարտական պատրաստության համար ժամանակի կարգավորման, ՍՏ ուսումնասիրության, պահպանման և մշտական մարտապատրաստության վիճակում պահման, հավաքակայանների սարքավորման և բարեկարգման, ուսումնական նյութատեխնիկական բազայի սպասարկման և զարգացման, տարբեր տեսակի տնտեսական աշխատանքների կատարման նպատակով:

Բացի այդ, ամեն ամիս առնվազն երկու անգամ գնդի (զորամասի) հրամանատարի ղեկավարությամբ անցկացվում է համակազմային օր, որին մասնակցում է ամբողջ անձնակազմը:

Համակազմատնտեսական և համակազմային օրերը նախատեսվում են մարտական պատրաստության պլանով: Դրանց կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դրվում է գնդի հրամանատարի վրա: Դրանց անցկացումը պետք է մանրակրկիտ կերպով պլանավորված և նախապատրաստված լինի: Անցկացման պլանը մշակում են գնդի շտաբը՝ գնդի հրամանատարի տեղակալների, զորատեսակների և ծառայությունների պետերի հետ համատեղ:

Պահման և մաքրման սենյակներում պահվող զենքերը, հրետանու սարքերը, մարտապաշարը և անհատական օգտագործման գույքը պետք է զննվեն և կարգի բերվեն ամեն օր՝ խնամման համար օրվա աշխատակազմով նախատեսված ժամերին և միայն բացառիկ դեպքերում՝ համակազմատնտեսական և համակազմային օրերին:

Համակազմատնտեսական և համակազմային օրերի անցկացմանը տրամադրվում է ոչ պակաս, քան 7 ժամ: Օրվա առաջին կեսում պլանավորվում են ՍՏ, ուսումնանյութական բազայի հետ կապված բոլոր միջոցառումներն ու աշխատանքները, որոնցում ներգրավվում է ամբողջ անձնակազմը: Օրվա երկրորդ կեսին կատարվում են տնտեսական աշխատանքներ: Այդ օրերին սովորաբար կատարվում է բոլոր բնակելի և ոչ բնակելի սենյակների ընդհանուր մաքրում ու կարգի բերում և անձնակազմի լողացում:

Համակազմատնտեսական և համակազմային օրերին մասնակցում են գնդի (զորամասի) բոլոր ստորաբաժանումները, բացի նրանցից, որոնք գտնվում են վերակարգում: Յուրաքանչյուր ստորաբաժանում պետք է ունենա ամսական չորս համակազմատնտեսական և երկու համակազմային օր՝ անկախ պահակային ծառայությունից և այլ վերակարգերից:

Համակազմային օրերին մեծ հնարավորություններ են ստեղծվում այն ՍՏ ուսումնասիրության գծով գործնական պարապմունքների անցկացման համար, որոնցով համալրված է զորամասը:

Զորքերում սահմանվում է խնդիրների՝ ըստ նախանշանակման կատարումը ՍՏ պատրաստության վերաբերյալ ստուգմանակարգային զեկույցների համակարգ:

Ուսումնական տարվա ընթացքում համակազմատնտեսական և համակազմային օրերի անցկացումը նախատեսված է լինում.

—զորամասում՝ ուսումնական տարվա համար հիմնական միջոցառումների օրացուցային պլաններով և մարտական պատրաստության պլաններով,

—ստորաբաժանումներում՝ պարապմունքների ցուցակակարգով:

Համակազմատնտեսական (համակազմային) օրվա նախապատրաստումը կարելի է բաժանել չորս փուլի.

—գնդի հրամանատարի տեղակալների, շտաբի, զորատեսակների և ծառայությունների պետերի կողմից աշխատանքների և նյութական ապահովման ծավալի որոշում, օբյեկտներում աշխատելու համար անձնակազմի հաշվարկում (3–4 օր),

—գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով և անձնակազմի հետ աշխատանքի գծով տեղակալների կողմից աշխատանքների պլանի կազմում և անձնակազմի ծանոթացում այդ պլանին (երկու օր առաջ),

—գնդի հրամանատարի, շտաբի պետի, գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալի, հրետանային դիվիզիոնների (գումարտակների) և առանձին ստորաբաժանումների հրամանատարների կողմից աշխատանքների պլանի կազմում և այդ պլանին մարտկոցների (վաշտերի) անձնակազմերի ծանոթացում և նյութական ապահովման նախապատրաստում (մեկ օր առաջ),

—մարտկոցների (վաշտերի) հրամանատարների, նրանց տեղակալների (վաշտերի և մարտկոցների տեխնիկների) կողմից պլանների և անձնակազմերին (մարտահաշվարկներին) տրվելիք առաջադրանքների կազմում, անձնակազմի հետ պարապմունքների անցկացում կամ նրա հրահանգավորում, զորատեսակների և ծառայությունների պետերի կողմից հատուկ աշխատանքների կատարման համար աշխատախմբերի և բրիգադների կազմում, գույքի, պահեստամասերի, վառելիքի և քսանյութերի պատրաստում և հանձնում, գնդի հրամանատարի կողմից համակազմատնտեսական (համակազմային) օրվա անցկացմանը պատրաստ լինելու մասին ստորաբաժանումնե-

րի հրամանատարների զեկույցների ընդունում և սպաներին խնդիրների առաջադրում (նախօրյակին):
Համակազմատնտեսական (համակազմային) օրվա անցկացման մշակված և շտաբի պետի կողմից ստորագրված պլանը հաստատում է գնդի հրամանատարը: Շտաբի պետը այդ պլանից քաղվածքները հանձնում է գնդի հրամանատարի տեղակալներին, զորատեսակների ու ծառայությունների պետերին և ստորաբաժանումների հրամանատարներին:
Զորամասի պլանից քաղվածքների հիման վրա դիվիզիոնների (գումարտակների) և մարտկոցների (վաշտերի) հրամանատարները կազմում են իրենց ստորաբաժանումներում համակազմատնտեսական (համակազմային) օրվա անցկացման պլաններ:
Անձնակազմերին, մարտահաշվարկներին և վարորդներին (մեխանիկներին) կոնկրետ խնդիրներ առաջադրում են իրենց անմիջական պետերը նախօրյակին: Բացի այդ, նրանց տրվում են գրավոր առաջադրանքներ:
Բազմակողմանիորեն նախապատրաստված և կազմակերպված ձևով անցկացված համակազմատնտեսական և համակազմային օրերը պետք է պայմաններ ապահովեն զորամասի մարտապատրաստության հետագա բարձրացման, մարտական պատրաստության խնդիրների հաջող լուծման համար: Անկասկած կարևոր այդ աշխատանքը կատարվում է զորամասի և ստորաբաժանումների հրամանատարության վերահսկողությամբ և անմիջական մասնակցությամբ:
Այսպիսով՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները:
1.Անցած պատերազմների փորձը ցույց է տալիս, որ հաղթում է նա, ով ունի ուսումնավարժված զորքեր, ժամանակակից զենք ու ռազմական տեխնիկա, ում բանակի անձնակազմը լիովին տիրապետում է իր զենքին: Իսկ զենքին տիրապետել նշանակում է իմանալ զենքի (սպառազինության, տեխնիկայի) կառուցվածքը և նրա մարտական կիրառության հնարները, կարողանալ այն պահել օրինակելի վիճակում և վերացնել առաջացող անսարքությունները, ապահովել հրանոթի մարտահաշվարկի (տանկի անձնակազմի) անդամների փոխադարձ փոխարինելիությունը:
2.Բոլոր մակարդակների հրամանատարների (պետերի), անձնակազմի հետ աշխատանքի զծով նրանց տեղակալների կարևորագույն խնդիրներն են անձնակազմի ուսուցման և դաստիարակության ընթացքում նրա մեջ մարտական տեխնիկայի և սպառազինության նկատմամբ սեր սերմանելը, յուրաքանչյուր զինվորի գիտակցության մեջ այդ հարցի կարևորությունն ամրապնդելը:
3.Ստորաբաժանման (զորամասի) մարտապատրաստությունը ուղղակիորեն կախված է մարտական տեխնիկայի և սպառազինության վիճակից, մարտական կիրառությանը նրա պատրաստության աստիճաններից:
4.Զորամասերի և ստորաբաժանումների սպայական կազմի, ենթասպա-

ների սերժանտների ու մասնագետների ուսուցման հիմքում պետք է դրված լինի տեխնիկական պատրաստումը, որը զուգակցվի մասնագիտական և այլ կարևոր առարկաների ուսուցմամբ: Իրենց զենքին տիրապետող զինվորները ի վիճակի են լուծելու ցանկացած մարտական խնդիր:

5.Անձնակազմի ուսուցման, մարտական տեխնիկայի և սպառազինության սպասարկման ու պահման, այդ թվում և համակազմատնտեսական և համակազմային օրերի կազմակերպման իրեն արդարացրած համակարգի արմատավորումը բանակի հրամանատարական կազմի կարևոր խնդիրներից է:

6.Քանի որ ժամանակակից մարտական տեխնիկան և սպառազինությունը թանկ արժեն, ապա արդեն եղած նմուշների պահումն ու խնամքով պահպանումը կարևոր ռազմական և տնտեսական խնդիր է:

## *РАКЕТНЫЕ ВОЙСКА И АРТИЛЛЕРИЯ*

# ОСОБЕННОСТИ ПОДДЕРЖАНИЯ БОЕСПОСОБНОСТИ АРТИЛЛЕРИИ

ГЕНЕРАЛ—МАЙОР **В.А. АЙРАПЕТЯН**

## РЕЗЮМЕ

Важными факторами обеспечения боеготовности артиллерии являются: постоянная исправность и готовность к боевому применению и наличне специально обученного в артиллерийском отношении личного состава, владеюшего артиллерийским вооружением и всеми методами и способами подготовки данных для ведения артиллерийского огня (пуска ракет), а также исскуством управления (корректировки) огнем.

Опыт ВОВ и национально—освободительной борьбы Арцаха показывает, что успеха в бою (операции) добиваются те командиры, в подчиненных которым частях и подразделениях особое внимание уделяется изучению личным составом боевой техники и вооружения, их правильному применению и содержанию, бережному обращению с ними.

В этом плане особое значение приобретает вопрос правильной организации обслуживания вооружения и техники.

## SPECIAL FEATURES OF FIGHTING EFFICIENCY OF ARTILLERY SUPPORT

V.A. HAYRAPETYAN, MAJOR-GENERAL

### SUMMARY

The important factors of ensuring battle readiness of artillery are: usual serviceability and readiness for battle employment and presence of specially trained personal, handling artillery arms and all methods and ways of preparation of the data for artillery fire (launching rockets), and also control (adjustment) of fire.

The experience of Great Patriotic war and national-liberation struggle for Artsakh shows, that success in fight (operation) can be achievable for those commanders, who pay special attention to personnel's studies in battle engineering and arms in the units and divisions subordinated to them, their correct employment and maintenance, and careful handing of artillery arms.

In this aspect special importance gets the problem or correct organization of service of arms and engineering.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», 4(34). 2002, էջ 42

# ՓՈՂԱՅԻՆ ՀՐԵՏԱՆՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **ՎԱՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ** ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Բոլոր զարգացած երկրների հրետանին որակական փոփոխությունների է ենթարկվել: Սպառազինության մեջ ընդգրկվել են նոր հրթիռային կայանքներ, նոր հրանոթներ, այդ թվում՝ համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ–ներ) և ինքնագնաց համակարգեր, ականանետներ ու ռազմամթերք, որոնք իրենց մեջ ներառել են ֆիզիկայի, քիմիայի, մետաղագործության, ավտոմատիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, կիբեռնետիկայի և գիտության ու տեխնիկայի այլ բնագավառներում ձեռք բերված նվաճումները:

Ժամանակակից պայմաններում հրետանին կոչված է լուծելու ամենատարբեր խնդիրներ՝ հարձակման և պաշտպանության ժամանակ հակառակորդի կենդանի ուժի ու կրակային միջոցների ոչնչացում, հարձակվող մոտոհրաձգային ու տանկային ստորաբաժանումների հարձակման կրակային նախապատրաստում և ուղեկցում, հակառակորդի ամրակայուն պաշտպանական կառույցների ավերում և պայքար նրա հրետանու դեմ, պայքար տանկերի, ինքնագնաց կայանքների և զրահափոխադրիչների դեմ և այլն: Ժամանակակից պատերազմում հրետանու առջև դրվող խնդիրների բազմազանությունը պահանջում է հրետանու որոշակի կազմակերպվածքի և ամենատարբեր ձևերի, տեսակների ու նախանշանակման հրանոթների (ՀԿՌՀ–ների, ՀՏԱ–ների) ստեղծում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պայմաններում հրետանու նյութական մասի, այդ թվում՝ ռազմամթերքի, հրաձգության նախապատրաստման և կրակի կառավարման օպտիկական ու էլեկտրոնային միջոցների, կատարյալ վիճակում պահպանումը առանձնակի նշանակություն է ստանում: Իրոք, մեր հրետանին զինված է սպառազինության խորհրդային նմուշներով, այդ թվում՝ քարշակվող և ինքնագնաց հրանոթներով, ականանետներով, ռեակտիվ հրետանու մարտական մեքենաներով և հակատանկային միջոցներով, որոնք 20–րդ դարի վերջի լավագույն նմուշներն են: Մեր խնդիրն այն է, որ կատարյալ վիճակում պահվեն հրանոթների բավականաչափ քանակությամբ եղած նմուշները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հետևյալ հրթիռային զորքերի և հրետանու հետագա զարգացմանը ինչպես Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում, այնպես էլ զարգացած արտասահմանյան երկրներում, միաժամա-

նակ արդիականացնել մեր հրետանին, ուսումնասիրել և կիրառել խոցման նշանակետերի (օբյեկտների) և հակառակորդի հրետանու մարտակարգերի կոորդինատների որոշման ժամանակակից միջոցները, սովորել հրետանին գրագետ կերպով կիրառել մեր լեռնային ՌԳԹ պայմաններում, կատարելագործել հակառակորդի կրակային խոցման եղանակները, մարտում (օպերացիայի ժամանակ) հրետանու խմբավորումների և ստորաբաժանումների կառավարման միջոցները:

Ներկայումս զարգացած երկրներում հրանոթների նոր նմուշների մշակումը և հին նմուշների արդիականացումը կատարվում են զորքի մարտական գործողությունների վարման պայմանների և մարտավարության հնարավոր փոփոխման հաշվառմամբ: Ժամանակակից մարտը բնութագրվում է զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների մարտական գործողությունների արագընթացությամբ, և այս պայմաններում հրետանու մարտական ու տեխնիկական հնարավորությունները պետք է համապատասխանեն համազորային ստորաբաժանումների շարժունությանն ու նրանց կողմից կատարվող խնդիրների բնույթին:

Նման պայմաններում, որպես կանոն, հրետանուն քիչ ժամանակ է տրամադրվում, այդ պատճառով էլ կրակային աջակցության խնդիրը հրետանային զորամասերը և ստորաբաժանումները կարող են կատարել միայն ռազմամթերքի նվազագույն ծախսմամբ հրաձգության բարձր ճշգրտության, հակառակորդի հակամարտկոցային կրակի ներգործությունից խուսափելու համար արագ ծավալվելուն ու մարտակարգ ընդունելուն, ինչպես նաև կրակային դիրքերի և դիտակետերի նախկինում զբաղեցրած շրջանն արագ թողնելուն պատրաստության պայմանով:

Ինքնագնաց հրանոթները (ԻՀ) քարշակվող հրանոթների (ՔՀ) համեմատությամբ տեսականորեն պետք է որ կարողանային ավելի լավ կատարել վերը նշված խնդիրները, սակայն նրանք, թեև ունեն շատ առավելություններ, բայց ունեն նաև մի շարք թերություններ և թույլ տեղեր, օրինակ՝ ունեն զգալիորեն ավելի մեծ զանգված: Բացի այդ, 52 տրամաչափի հավասար փողի երկարություն ունեցող քարշակվող հրանոթները ապահովում են կրակի վարում 40 կմ-ից մեծ հեռավորությունների վրա և հրետանային ստորաբաժանումներին առջևի գծից շատ ավելի հեռու կրակային դիրքեր գրավելու հնարավորություն են տալիս, ինչը նվազեցնում է հակառակորդի հրետանային կրակից խոցման վտանգը:

Արտասահմանյան ռազմագետները քարշակվող և ինքնագնաց հրետանու համեմատություն կատարելիս հաշվի են առնում ինչպես համակարգերի մարտական հնարավորությունները, այնպես էլ հրետանու սպառազինման և ռազմական տեխնիկայով ապահովման, անձնակազմի հանդերձավորման և պահման համար անհրաժեշտ նյութական ծախսերը (տե՛ս աղ.1):

*ԱՂՅՈՒՍԱԿ 1*

## ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ (1995Թ. ԳՆԵՐՈՎ ՄԼՆ. ԴՈԼԱՐ)

| Սպառազինության անվանումը | ՔՀ մարտկոց | | ԻՀ մարտկոց | |
|---|---|---|---|---|
| | քանակը | արժեքը | քանակը | արժեքը |
| 52 տրամաչափ փողով 155-մմ հաուբից | 6 | 5 | 6 | 25 |
| անվային շասսիով զրահապատ քարշակ | 6 | 2,4 | – | – |
| հրամանատարաշտաբային մեքենա | 1 | 0,5 | 1 | 1,8 |
| նորոգավերականգնողական մեքենա | 1 | 0,5 | 1 | 1,6 |
| ռազմամթերքի տեղափոխման մեքենա | 6 | 1,1 | 6 | 6,6 |

Սպառազինության անվանումը ՔՀ մարտկոցԻՀ մարտկոցքանակը արժեքը քանակը արժեքը 52 տրամաչափ փողով 155–մմ հաուբից65625անվային շասսիով զրահապատ քարշակ62,4—հրամանատարաշտաբային մեքենա 10,511,8 նորոգավերականգնողական մեքենա10,511,6ռազմամթերքի տեղափոխման մեքենա61,166,6

Արտասահմանում առավել տարածում ունեն 105 մմ և 155 մմ քարշակվող հաուբիցները: 1990–ականների սկզբին այնպիսի կարծիք էր ստեղծվել, թե 105 մմ հաուբիցները հասել են իրենց զարգացման գագաթնակետին և ենթակա են փոխարինման 155 մմ հրանոթներով:

Սակայն 155 մմ հաուբիցները ոչ լիովին են համապատասխանում ժամանակակից օպերատիվ պահանջներին և մի շարք ցուցանիշներով զիջում են 105 մմ հրանոթներին:

Արտասահմանում միջոցներ են ձեռնարկվում 105 մմ քարշակվող հաուբիցների մարտական հնարավորությունների մեծացման նպատակով, ընդումին դա արվում է հետևյալ ուղղություններով՝ հեռահարության մեծացում, հրաձգության ճշգրտության մեծացում, հրաձգությանը հրանոթի պատրաստման ժամանակի կրճատում, փոխադրումային ուղղաքիների արտա-

քին կախոցում հրանոթների տեղափոխման հնարավորության ապահովման նպատակով դրանց զանգվածաեզրաչափքային ցուցանիշների կրճատում, մասնակի ինքնավարության ապահովում: Որպես ապացույց կարելի է վկայակոչել քարշակվող հաուբիցների երեք արտասահմանյան նմուշներ՝ ֆրանսիական LԺ1 ՄԿ2–ը, անգլիական L118Ա1–ը և հարավաֆրիկյան Ջ7–ը:

Ընդգծելով 105 մմ քարշակվող համակարգերի արժանիքները՝ արևմտյան փորձագետները նշում են, որ առաջին հերթին դրանք առաջվա պես կկիրառվեն լեռներում մարտական գործողությունների վարման ժամանակ, արագ ծավալման ուժերին անհապաղ արձագանքման ապահովման, ինչպես նաև պարաշյուտային, դեսանտային և օդագրոհիչ ստորաբաժանումների կողմից իրականացվող օպերացիաների կրակային աջակցության համար: Նշենք, որ անգլիական քարշակվող հաուբիցներ գնած մի շարք երկրներում նաև մշակվում է 105 մմ հաուբիցների համար այնպիսի ռազմամթերք, որի կիրառման դեպքում դրանց հեռահարությունը կլինի 20 և ավելի կմ:

Հարավաֆրիկյան «Դենել» ընկերությունը մշակել է 57 տրամաչափին հավասար երկարությամբ փող ունեցող 105 մմ Ջ7 տիպի քարշակվող հաուբից, որի առավելագույն հեռահարությունը ակտիվ–ռեակտիվ արկով հրաձգության դեպքում կազմում է 30 կմ, իսկ բեկորաֆուգասային արկով՝ 24 կմ:

Արևմտյան փորձագետները համարում են, որ կատարյալ հրանոթը պետք է ունենա 105 մմ հրանոթների զանգվածին մոտ մարտական զանգված, իսկ կրակային հզորությամբ ու հրաձգության հեռահարությամբ պետք է առաջրելի լինի 155 մմ նմուշների հետ: Ընդ որին հաշվի է առնվում, որ մնացած հավասար պայմաններում 155 մմ արկը 4 անգամ հզոր է 105 մմ արկից: Նրանց կարծիքով մետաղագործության, մասնավորապես ալյումինի և տիտանի ձուլվածքների ստացման ոլորտում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները կարող են ռեալ դարձնել հրետանու զարգացման այս ուղղությունը: Այսպես՝ ըստ ԱՄՆ–ի սպառազինության ԳՀԻ–ի կողմից ներկայացված հայեցակարգի ընդամենը 26 տրամաչափ երկարությամբ փող ունեցող 155 մմ հրանոթը կտեղակայվի ռուսաստանյան Դ–30 122 մմ հաուբիցի հրետասայլի նման եռահենցային հրետասայլի վրա, որի հակահետզլորքային սարքերում կօգտագործվի մետաղի մասնիկներ պարունակող հատուկ հեղուկ: Նրա մածուցիկությունը կարող է փոխվել վայրկյանի հարյուրերորդական մասի ընթացքում, ինչը հնարավորություն կտա հետզլորքի ժամանակ զգալի չափով նվազեցնելու դարձյակի և հենոցի բեռնվածքը: Կրակի կառավարման համակարգը կազմված կլինի NAVSTAR համակարգի տվյալներն օգտագործող ուղեվարային համակարգից, ներսարված բալիստիկական կայանից, լիցքի բոցավառման լազերային համակարգից, նշանառման և կողմնորոշման սկզբունքորեն նոր համակարգից, ինչն զգալի չափով կնվազեցնի հրանոթի զանգվածաեզրաչափքային բնութագրիչները:

Կատարվող աշխատանքների ծավալները տարբեր պետություններում տարբեր են՝ կախված դաշտային հրետանու մարտական կիրառման վերաբերյալ ցամաքային զորքերի հրամանատարության տեսակետներից, տնտեսության գիտատեխնիկական բազայի վիճակից և արդիականացման ծրագրի ֆինանսավորումից:

Անգլիական «BAe սիստեմզ» ֆիրման, մասնակցելով թեթև քարշակվող հրանոթների՝ ԱՄՆ–ի հետ համատեղ կատարվող մշակմանը, պլանավորում է էքս Մ777–ի հիմքի վրա ստեղծել թեթև հրանոթների մի ամբողջ ընտանիք, ինչի նպատակն է կրակային խոցման, այդ թվում նաև հեծելազորային և լեռնային ստորաբաժանումների հրետանիով, լայն սպեկտրի խնդիրների լուծումը: Ընդսմին նախատեսվում է՝

—անմիջական կրակային աջակցության համար մշակել 26 կամ 30 տրամաչափի երկարություն ունեցող փողով հաուբիցներ, որոնց առավելագույն հեռահարությունը լինի 22 կմ, իսկ զանգվածը 3,1տ–ից ոչ ավելի,

—ընդհանուր կրակային աջակցության համար ստեղծել 45,47 կամ 52 տրամաչափի երկարություն ունեցող փողով հրետանային համակարգեր, որոնց առավելագույն հեռահարությունը լինի 40 կմ, ընդսմին զանգվածը չպետք է գերազանցի 4,5 տ–ն:

*ԱՂՅՈՒՍԱԿ 2*

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՔԱՐՇԱԿՎՈՂ 105 մմ ՀԱՈՒԲԻՑՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

| Անվանումը | Մշակող երկիրը | Փողի երկարությունը, տրամաչափ | Մարտա-կան զանգվածը, կգ | Առավելագույն արագաձգությունը, կրակոց/րոպե | Առավելագույն հեռահարությունը, կմ (ԲՖԱ/ԱՌ-Ա) |
|---|---|---|---|---|---|
| ԼԺ1ՄԿ2 | Ֆրանսիա | 30 | 1520 | 12 | 15700/ 15700 |
| Լ118 | Մեծ Բրիտանիա | 37 | 1860 | 12 | 15300/ 17200 |
| Լ118Ա1 | Մեծ Բրիտանիա | 37 | 1860 | 18 | 17200/ 20075 |
| Ջ7 | ՀԱՀ | 57 | 3800 | 6 | 24000/ 30000 |

Անվանումը Մշակող երկիրը Փողի երկարությունը, տրամաչափ Մարտական զանգվածը, կգ Առավելագույն արագածգությունը, կրակոց/րոպե Առավելագույն հեռահարությունը, կմ (ԲՖԱ/ԱՌԱ)ԼԺ1ՄԿ2 Ֆրանսիա 3015201215700/15700Լ118 Մեծ Բրիտանիա 3718601215300/17200Լ118Ա1 Մեծ Բրիտանիա 3718601817200/20075Ջ7ՀԱՀ573800624000/30000:

Պլանավորվում է հրանոթները սարքավորել կրակի կառավարման այնպիսի համակարգով, որն իր մեջ ներառի իներցիալ ուղեվարական համակարգ, բալիստիկական կայան, հզորության բաշխման սարք, ուղիղ նշանառությամբ հրաձգության համար դիտման թվային սարք, կապի միջոցներ, հրանոթի հրամանատարի, նշանառուի և նրա օգնականի համար ցուցասարքեր:

Սպասարկման աշխատանքները հեշտացնելու համար 45 և 52 տրամաչափ երկարությամբ փող ունեցող ժամանակակից քարշակվող հրանոթները սարքավորվում են օժանդակ շարժասարքով, որը շարժման մեջ է դնում հրանոթների ուղղորդման հաղորդակները և արկերի ու լիցքերի լիցքավորման (մատակարարման) մեխանիզմները: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս հրանոթը սահմանափակ հեռավորության վրա տեղափոխելու խնդով՝ 15–18 կմ/ժ, իսկ կտրտված տեղանքով՝ 8–10 կմ/ժ արագությամբ: Քարշակվող հաուբիցների մասնակի ինքնավարությունը, որն ապահովվում է օժանդակ շարժիչով նրանց սարքավորման դեպքում, մեծանում է շնորհիվ կրակի կառավարման ինքնավար համակարգերի զարգացման: Այսպես՝ հարավաֆրիկյան «Դենել» ընկերությունը 155 մմ հրանոթի համար մշակել և փորձարկում է լազերային օղակաձև հոլակի հիմքի վրա այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս առաջին կրակոցը կատարելու կրակային դիրքեր հասնելուց հետո 2,5 րոպեի ընթացքում: Փողի ուղղորդման ճշգրտությունը անկյունաչափի մեկ գիծ է:

Փողային հրետանու մարտական հնարավորությունների մեծացման կարևոր ուղղություններից են եղած ռազմամթերքի արդիականացումը և նոր, ավելի արդյունավետ ռազմամթերքի մշակումը:

Արտասահմանյան մամուլի հաղորդումների համաձայն՝ դաշտային հրետանու համար ռազմամթերքի արդիականացման բնագավառում առաջատար դիրք է գրավում ԱՄՆ–ը: 40 տարուց ավելի է, ինչ ԱՄՆ–ի ցամաքային զորքերի սպառազինության մեջ գտնվում է 155 մմ Մ107 բեկորաֆուգասային արկը (ԲՖԱ), որի թերություններն են ոչ մեծ հեռահարությունը, հիմնական պայթուցիչը չգործարկվելու դեպքում արկի ինքնաոչնչացումն ապահովող պայթուցիչ չլինելը: ԱՄՆ–ի ցամաքային զորքերի հրամանատարությունը ֆինանսավորում է Մ107 արկի արդիականացման ծրագիրը, իսկ 1996թ. որոշում է ընդունվել սկսելու Մ795 ԲՖԱ–ի (46,2 կգ, հեռահարությունը՝ 22,5 կմ) թողարկումը: Այն մշակվել է 70–ականների վերջին, որպես միջուկային լիցք տեղափոխելու միջոց, իսկ այսօր նախանշանակվում է Մ483 և Մ864 տեսակի կասետային հրետանային արկերի (ԿՀԱ) նշանափործման համար: Մ483Ա1 և

Մ864 ԿՀԱ–ները Մ42 (նկ.1) և Մ46 կուտակաբեկորային մարտական տարրերը (ԿԲՄՏ) տեղ հասցնելու միջոց են: Մ483Ա1 ԿՀԱ–ի հանդերձանքն են կազմում 88 մարտական տարրը: Մ864 արկը նախանշանակված է 72 ԿԲՄՏ–ն տեղ հասցնելու համար, ընդսմին դրանցից 48–ը՝ Մ42, և 24–ը՝ Մ46: Մ864 ԿՀԱ–ի կազմում մարտական տարրերի ավելի քիչ թիվը պայմանավորված է հատակային գազագեներատորների (ԳԳ) առկայությամբ, որոնք զգալի չափով նվազեցնում են դիմադրության հատակային բաղադրիչը (վերացնում են հատակային ներհոսքը)՝ դրանով իսկ մեծացնելով հեռահարությունը:

Առաջատար արևմտաեվրոպական երկրները նույնպես շարունակում են ցամաքային զորքերի սպառազինության մեջ եղած հրետանային ռազմամթերքի արդիականացման աշխատանքները: Այդ աշխատանքների անհրաժեշտությունը պայմանավորված է այդ երկրների դաշտային հրետանին նոր բալիստիկա ունեցող հրանոթներով շտապ վերազինմամբ:

Գերմանիայի ցամաքային զորքերի սպառազինության մեջ արդեն 1988թ. մտած է 155 մմ PzH–2000 ինքնագնաց հաուբիցը, որի փողի երկարությունը հավասար է նրա 52 տրամաչափին:

Մեծ Բրիտանիայում պլանավորվում է 2003թ. բոլոր 155 մմ ԱՍ–90Բ ինքնագնաց հաուբիցները, որոնց փողի երկարությունը կազմում է 39 տրամաչափ, փոխարինել 52 տրամաչափ երկարություն ունեցող փողով ինքնագնաց հաուբիցներով, ընդսմին այդ հրանոթը պետք կազմի Մեծ Բրիտանիայի հրետանային ստորաբաժանումների սպառազինության հիմքը:

Արտասահմանյան երկրներում ստեղծվող հրետանային արկերի բնորոշ գիծն է հզորության և արդյունավետության մեծացմանը զուգընթաց հրաձգության հեռահարության մեծացումը, ինչպես նաև արկի բալիստիկայի փոփոխումը՝ փողի անցքի մաշվածքի փոքրացման նպատակով, ինչը կմեծացնի փողի գոյատևությունը: Աերոդինամիկական մակերևույթների շնորհիվ փոքր դիմադրություն ունեցող արկերի ստեղծմամբ հնարավոր է հրանոթի հեռահարությունը առանց գազագեներատորների և հրթիռային շարժիչի օգտագործման հասցնել 35–36 կմ–ի:

Մի շարք արտասահմանյան երկրներում շարունակվում են ավելի լավ ճշգրտային բնութագրերով հրետանային ռազմամթերքի ստեղծման ուղղությամբ աշխատանքները: Ներկայումս առավել մեծ տարածում են ստացել հրետանային ռազմամթերքի ուղղորդման ճշգրտության մեծացման հետևյալ երկու ուղղությունները.

—խոցիչ տարրի (հարվածային միջուկի) ինքնավար ուղղորդում դեպի նշանակետ՝ զգայուն տարրի (նշանակետի տվիչի) միջոցով,

—տիեզերական ռադիոուղեվարային NAVSTAR համակարգի ազդանշանների օգտագործում:

Արտասահմանյան մասնագետների կարծիքով հրաձգության ճշգրտության մեծացման այս երկու եղանակները լրացնում են իրար:

Գերմանիան և Շվեդիան համատեղ հետազոտություններ են կատարում նոր բալիստիկայով հրանոթներով 70–80 կմ հեռահարությամբ 155 մմ հրետանային արկերի ստեղծման ուղղությամբ:

Ֆրանսիական և շվեդական ֆիրմաները համատեղ հետազոտություններ են կատարում թռիչքի հետագծի շտկում կատարող արկի ստեղծման ուղղությամբ: Մշակողների կարծիքով, ուղղորդման նման համակարգը կապահովի հինգ անգամ պակաս ցրում, քան ուղղորդվող 155 մմ արկերը:

Այսպիսով՝ արտասահմանում ակտիվ աշխատանքներ են տարվում ինչպես 155 մմ հրետանային արկերի արդիականացման, այնպես էլ հեռանկարային հեռահար արկերի ստեղծման ուղղությամբ: Արտասահմանյան երկրների ցամաքային զորքերի դաշտային հրետանու համար նոր ռազմամթերքի մշակման ժամանակ շեշտը տեղափոխվել է հրաձգության ճշգրտության մեծացման պրոբլեմների լուծման վրա, քանի որ ճշգրտության մեծացումը կհանգեցնի ռազմամթերքի սպառման նվազեցմանը:

Պենտագոնը, հենվելով փորձարկումների հաջող արդյունքների վրա, 1998թ. «Ռեյտոն» ֆիրմայի հետ կնքեց պայմանագիր ԷքսՄ982 նշանագրումն ստացած հեռանկարային 155 մմ արկ մշակելու վերաբերյալ: Այն նախանշանակվում է եզակի և խմբային զրահապատ նշանակետերի, կառավարման կետերի, կենդանի ուժի և կրակային միջոցների, ինչպես նաև ճարտարագործական կառույցների և այլ կարևոր նշանակետերի խոցման համար: Արկը նախանշանակված է առաջին հերթին «Քրուսեյդեր» (Crusader՝ խաչակիր) և Մ109Ա6 «Պալադին» 155 մմ ինքնագնաց հաուբիցներով, ինչպես նաև Մ198 և ԷքսՄ777 քարշակվող հաուբիցներով հրաձգության համար: Մշակողների կարծիքով, նոր արկն իր մարտական արդյունավետությամբ կգերազանցի սպառազինության մեջ եղած 155 մմ Մ864 կասետային արկին:

Էքս Մ982 155 մմ արկը կարտադրվի երեք տիպի մարտական մասերով (ՄՄ–ով)՝ կասետային, որը լիցքավորված կլինի 64 հատ ԷքսՄ80 բեկորակուտակային մարտական տարրերով, հակատանկային, որը լիցքավորված կլինի «Սադարմ» տիպի երկու ինքնանշանառու մարտական տարրերով (նկ. 2), բետոնահար, որն ունակ կլինի ծակելու 200 րր հաստությամբ պատեր ունեցող ամրաշինական կառույցները:

Կասետային մարտական մասերով արկերի առաջին խմբաքանակը ծրագրվում է պատրաստել 2002թ., իսկ 2004թ. սկսել դրանց սերիական արտադրությունը:

Արտասահմանյան զինվորական մասնագետների գնահատումներով հետագծի ճշտման համար NAVSTAR համակարգից ստացվող տվյալներն օգտագործող, մեծացված հեռահարությամբ արկերի ստեղծումը դաշտային հրետանու զորամասերին և ստորաբաժանումներին հնարավորություն կտա մոտ ապագայում հաջող կերպով լուծելու ցանկացած օդերևութաբանական պայմաններում ինչպես խմբային, այնպես էլ միակի դիտվող նշանակետերի բարձր ճշգրտությամբ կրակային խոցման խնդիրները ռազմամթերքի սակավ սպառմամբ:

Մեծ թվով մասնագետների կողմից որպես հրետանու ապարեզում կատարված հեղաշրջում գնահատված մեծ նվաճում է MRSI (Multiple Round Simultaneous Impact՝ միաժամանակյա հարված բազմաթիվ արկերով) բանելակարգով հրաձգության հնարավորությունը, որն իրացվել է «Քրուսեյդեր» ինքնագնաց հաուբիցում: Հայտնի է, որ սովորական հրետակոծության ժամանակ առաջին արկի պայթեցումից հետո նշանակետի խոցման հավանականությունը ամեն հաջորդ արկի համար նվազում է էքսպոնենտային օրենքով: Դա նշանակետի արագ տարահանման, քողարկման կամ տարակենտրոնացման հետևանք է: Միակի հաուբիցը MRSI բանելակարգում կատարում է արագ կրակահերթ (մեկ րոպեում մինչև 8 կրակոց)՝ կրակոցից կրակոց փոխելով հրաձգության անկյունները ու սկզբնական արագությունները, որոնք համակարգչի միջոցով հաշվարկվում են այնպես, որ արկերը նշանակետին հասնեն միաժամանակ (նկ. 3): Այս դեպքում մեկ հաուբիցը առաջին համազարկով ապահովում է այնպիսի խոցում, ինչպիսին կապահովեին մարտկոցը կամ դիվիզիոնը:

Օգտագործվող էքսՄ982 «Էսկալիբուր» (Excalibur՝ «Արթուր թագավորի կախարդական թուրը») կառավարվող արկի կիրառումը ենթադրում է թռիչքի շտկման համար NAVSTAR արբանյակային ուղեվարային համակարգի օգտագործում: Արկի կառավարման բլոկն ունի խանգարումապաշտպանված ընդունիչ և կողային համակարգչով օժտված իներցիալ ուղեվարային համակարգ, որը որոշում է արկի ընթացիկ կոորդինատները, արագության վեկտորն ու տարածական կողմնորոշումը և հրամաններ է տալիս կառավարման ղեկին: Այսպիսով՝ արկի հետագիծը ամբողջությամբ բալիստիկական չի լինում, ինչը, զուգակցված նետման անկյան փոփոխման հետ, հնարավորություն է տալիս հրաձգության հեռահարությունը մեծացնելու մինչև 57 կմ: Արկի հնարավոր շրջանային շեղումը խանգարումների բացակայության դեպքում 6 մ է, իսկ խանգարումների առկայության դեպքում՝ 9 մ:

Կասկած չկա, որ էլեկտրոնային միջոցների մշտական մանրաչափավորման շնորհիվ MRSI սկզբունքը կներդրվի նաև այլ, այդ թվում՝ քարշակվող հրետանային համակարգերում:

Այսպիսով՝ փողային հրետանու մշտական կատարելագործումը այն բանի վկայությունն է, որ այն մոտակա տեսանելի ապագայում էլ կլինի հակառակորդի կրակային խոցման գլխավոր միջոցներից մեկը: Նույնիսկ մեծ թվով զինված հակամարտություններում ավիացիայի զանգվածային կիրառման պայմաններում հրետանին, այնուամենայնիվ, զորքերի անմիջական կրակային աջակցության հիմնական միջոցը կմնա:

# НАПРАВЛЕНИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СОВРЕМЕННОЙ СТВОЛЬНОЙ АРТИЛЛЕРИИ

ГЕНЕРАЛ–МАЙОР **В.А. АЙРАПЕТЯН**

## РЕЗЮМЕ

Современный бой характеризуется быстротечностью боевых действий, и в этих условиях боевые и технические возможности артиллерии должны соответствовать мобильности и характеру задач, выполняемых общевойсковыми подразделениями. Как показывает анализ, развитие ствольной артиллерии в современных условиях происходит по следующим основным направлениям:

разработка (модернизация) артиллерийских орудий с повышенной дальностью, точностью и мощностью стрельбы при одновременном снижении массо—габаритных показателей, разработка активно—реактивных боеприпасов боевыми элементами, в том числе самоприцеливающимися, с использованием спутниковых навигационных средств для коррекции траектории полета.

*ARMAMENT AND MILITARY EGUIPMENT*

# THE TRENDS AND PERSPECTIVES OF THE DEVELOPMENT OF CONTEMPORARY BARREL ARTILLERY

**V.A. HAYRAPETYAN**, MAJOR–GENERAL

## SUMMARY

The contemporary battle is characterized by high–velocity of combat actions, and in these conditions combat and technical abilities of artillery must correspond to the mobility and nature of tasks being fulfilled by subunits of general troops. As the analysis has shown, the development of barrel artillery in contemporary conditions goes on the following principal trends:

—the elaboration (modernization) of artillery guns with increased range, precision and power of firing at the simultaneous decreasing of mass–overall indexes;

—the elaboration of active–reactive ammunition with combat elements, including self–aiming ones, with the use of satellite navigation means for correcting the flight trajectory.

“АЙКАКАН БАНАК”, 4(34), 2002г., стр. 42
(русский вариант)

## НАЧАЛЬНИК РВиА МО РА
## ГЕНЕРАЛ—МАЙОР В. АЙРАПЕТЯН

### “Направления и перспективы развития современной артиллерии”

Артиллерия основана на достижениях артиллерийской науки, зарождение которой относят к концу XVI, началу XVII вв.

Артиллерийская наука рассматривает очень широкий круг вопросов теории и практики проектирования и производства орудий, приборов и боеприпасов, теорию полета и стрельбы, боевое применение, историю артиллерии.

Аритиллерия, это более широкое понятие и охватывает вопросы стрельбы и управления огнем объединений, частей и подразделений, подготовки материальной части артиллерии к боевому применению, подготовки личного состава к выполнению своих функциональных обьязанностей при вооружении, а также при подготовки стрельбы и управления огнем артиллерии, планирования огневого поражения противника и ее эффективности.

Во всех странах мира под артиллерией понимают род войск, предметы вооружения и науку.

Артиллерия один из старейших родов войск. На протяжении своей многовековой истории артиллерия постоянно являлась главной огневой ударной силой войск, обеспечивающей успех в бою и в операции, а также решение тактических, оперативных и стратегических задач.

Не случайно артиллерию называют “богом войны”. История военного искусства с момента появления артиллерии не знает примеров сражений и войн, где бы артиллеристы не внесли существенного вклада в дело разгрома неприятеля.

Великий полководец А.Суворов говорил об артиллерийской науке, что “она важнейшая из наук для обороны отечества”.

Особую роль артиллерия сыграла в годы Великой Отечественной войны 1941—1945 гг. Маршал Георгий Константинович Жуков на Берлинской конференции в 1945г. отмечал, что “артиллерию надо знать хорошо и отводить ей решающее место. Всякая недо-

оценка артиллерии ведет к срыву выполнения поставленных задач и излишним жертвам".

Артиллерия обладает значительными боевыми возможностями и способна наносить мощные огневые удары по противнику в минимально короткие сроки на большую глубину в любых условиях обстановки, погоды и в любое время суток.

Опыт локальных и региональных конфликтов второй половины XX века подверждает теоретические выводы из уроков ВОВ об огромнной роли артиллерии в достижении целей проводимых общевойсковых операций. Артиллерия и ракетные войска были и в ближайшем обозримом будущем останутся одним из важнейших средств огневого поражения противника. Даже несмотря на массированное применение во многих вооруженных конфликтах авиации, артиллерия остается основным средством непосредственной огневой поддержки войск.

Во второй половине XX века в артиллерии, как и в других родах войск, произошел революционный процесс перевооружения, воплотивший результаты стремительного научно—технического прогресса.

Артиллерия всех развитых стран претерпела качественные изменения. На вооружение приняты новые ракетные установки (ОТР, ТР), артиллерийские орудия, в том числе реактивниые системы залпового огня и самоходные, минометы и боеприпасы, впитавшие в себя все передовое, что достигнуто в физике, химии, металлургии, автоматике, радиоэлектронике, кибернетике и в других областях науки и техники.

Перед артиллерией в разные периоды ее развития стояли различные задачи.

С появлением огнестрельного оружия расширился круг задач артиллерии.

Артиллерия в современных условиях призвана выполнить самые разнообразные задачи: уничтожение живой силы и огневых средств противника в наступлении и в обороне, подготовка наступления и сопровождение наступающих мотострелковых и танковых подразделений, разрушение прочных оборонительных сооружений и борьба с артиллерией противника, борьба с танками, самоходными установками и бронетранспортерами и другие.

Различие задач, которые ставит перед артиллерией современная война, требует определенной организации артиллерии и создания орудий (систем РСЗО, ПТС) самых различных видов, типов и назначения.

На всех этапов своего совершенствования артиллерия зависела от состояния промышленности, науки и техники в стране, от спо-

собов ведения войны, от характера целей на поле боя. Все эти факторы со временем изменялись, менялись и требования к артиллерийскому вооружению. Однако изучение истории развития материальной части и опыта боевого применения артиллерии позволяют определить основные направления развития артиллерии, характерные для всех этапов.

В октябре 2002г. Ракетным войскам и артиллерии вооруженных сил Республики Армения исполнилось 10 лет со дня ее формирования. За этот небольшой промежуток времени наша артиллерия также прошла свои этапы становления и развития.

## Направления развития артиллерии

Основные направления развития артиллерии было и остается повышение могущества орудий, систем РСЗО и противотанковых средств. Могущество или огневая мощь артиллерии определяется мощностью боеприпасов, начальной скоростью снаряда и дальностью его полета, меткостью стрельбы и скоростерльностью орудий (РСЗО и ПТС).

Одним из важнейших направлений развития артиллерии является увелечение ее подвижности. Высокая подвижность орудия — непременное условие успешного использования его в бою. Артиллерия всегда действовала и будет действовать во взаимодействии с другими родами войск и в первую очередь с мотопехотной и с танковыми подразделениями. Она должна быстро передвигаться по любым дорогам и на большие расстояния.

По мере развития артиллерии все большее значение придавалось совершенствованию эксплуатационных качеств орудий, безотказности и надежности действия механизмов и боеприпасов в любых метеорологических условиях, простоте, удобству и безопасности обслуживания орудий, сокращению численности орудийного расчета путем автоматизации процессов зјаряжения и разряжения, повышению живучести орудий, т.е. их прочности, неуязвимости и долговечности.

В настоящее время за рубежом в связи с развитием артиллерийского вооружения и совершенствования тактики ведения боевых действий проводятся мероприятия по обновлению существующих видов артиллерийских боеприпасов, которые проводятся по двум основным напрвлениям:

—Во первых, осуществялется модернизация образцов, уже принятых на вооружение, с целью повышения мощности и дальности стрельбы, а также его унификации.

–Командование сухопутных войск зарубежных стран, совместно с ученными используя современные технологии, стремятся не только продлить срок службы боеприпасов, но и изменить их назначение,

–Во вторых реализуются программы по созданию новых видов многофункциональных, прежде всего кассетных, артиллерийских боеприпасов, обеспечивающих высокую точность стрельбы на большой дальности.

**Модернизация существующих артиллерийских боеприпасов.**

Ведущее положение в области модернизации боеприпасов для полевой артиллерии, согласно зарубежной печати, занимают США. На вооружение сухопутных войск США уже более 40 лет находятся 155 мм осколочно–фугасный снаряд (ОФС) М 107, у которого, как недостаток, небольшая дальность стрельбы и отсутствие взрывателя обеспечивающего самоликвидацию снаряда при не срабатывании основного взрывателя. Командование СВ США осуществляет финансирование программы модернизации снаряда М 107, а в 1996 году было принято решение начать изготовление ОФС М 795 (46,2 кг., дальность стрельбы 22,5 км.), который в конце 70–х годов был разработан как средство доставки ядерных зарядов, теперь уже предназначен для пристрелки кассетных артиллерийских снарядов (КАС) типов М 483 и М 864. КАС М 483А1 и М 864 являются средством доставки кумулятивно–осколочных боевых элементов (КОБЭ) М 42 и М 46. Снаряжение КАС М 483А1 состоит из 88 боевых элементов. Снаряд М 864 предназначен для доставки 72 КОБЭ, в том числе 48 — М 42 и 24 М 46. Меньшее число боевых элементов в КАС М 864 вызвано наличием донного газагенераторов (ГГ), предназначенного для увеличение дальности стрельбы.

Ведущие заподно–европейские страны также продолжают работы по модернизации находившихся на вооружении СВ артиллерийских боеприпасов. Необходимость этого вызвано поспешным перевооружением ПА этих стран орудиями новой баллистики.

На вооружение сухопутных войск ФРГ уже с 1998г. поступает 155 мм самоходная гаубица (СГ) PzH–2000 со стволом длиной 52 калибра. В Великобритании на 2003г. запланировано замена у всех 155 мм СГ АС–90В ствола длиной 39 калибра на имеющем длину 52 калибра и это орудия будет состовлять основу вооружения артиллрийских подразделений Великобритании.

Наряду с повышением мощности и эффективности характерной

чертой создаваемых артиллерийских снарядов зарубежных стран является повышение дальности стрельбы, а также изменение баллистики снаряда с целью уменьшения износа канала ствола, что повышает живучесть ствола. Создавая снаряды с низким сопротивлением благодаря аэродинамическим поверхностям, дальность стрельбы орудия может достигать до 35—36 км, без использования газогенератора и ракетного двигателя.

Продолжаются работы в ряде зарубежных стран по разроботке артиллерийских боеприпасов с повышенными точностными характеристиками. Наибольшое распространение в настоящее время получили два направления повышения точности наведения артиллерийских боеприпасов, при этом:

–первое направление предусматривает автономное наведение поражающего элемента (ударного ядра) на цель с помощью чувствительного элемента (датчика цели),

–второе направление предпологает использование сигналов космической радионавигационной системы (КРНС).

По мнению зарубежных специалистов, оба способа повышения точности стрельбы дополняют друг друга.

ФРГ и Шведия проводят совместные исследование по созданию 155 мм артиллерийских снарядов с дальностью стрельбы 70—80 км. из орудий новой баллистики.

Француэкие и шведские фирмы совместно проводят исследование по создниню снаряда с коррекцией траектории полета. По мнению разроботчиков данная система наведения будет обеспечивать в 5 раз меньше рассеивание, чем направляемые 155 мм снаряды.

Таким образом, за рубежом активно проводятся работы как по модернизации 155 мм артиллерийских снарядов, так и по созданию перспективных дальнобойных снарядов. При разроботке новых боеприпасов для полевой артиллерии СВ зарубежных стран акцент сметился на решение проблемы повышения точности стрельбы что приводит к уменшнию расхода боеприпасов.

В результате успешно проведенных испытаний Министерство армии США в 1998 году заключило контракт с фирмой “Рейтеон” на разработку перспективного 155 мм снаряда, получившего обозначение ХМ982. Он предназначен для поражения одиночных и групповых бронированных целей, пунктов управления, живой силы и огневых средств, а также инженерных сооружений и других важных целей. Снаряд предназначен для стрельбы, в первую очередь, из 155 мм самоходных Гаубиц “Крусейдер” и M109A6 “Пал-

ладин", а также буксируемых гаубиц M198 и XM777. По мнению разработчиков, он будет превосходить по боевой эффективности состояний на вооружении 155 мм кассетный снаряд M864.

155 мм снаряд XM982 будет изготавливаться с боевой частью трех типов: кассетной, снаряженной 64 осколочно—кумулятивными боевыми элементами XM 80; противотанковой, снаряженной двумя самоприцеливающимися боевыми элементами (СПБЭ) типа "Садарм", бетонобойной, способной пробывать фортификационные сооружения, имеющие стены толщиной до 200 мм.

Первую партию снарядов с кассетной БЧ (боевой частью) намечено изготовить в 2002г., а в 2004—ом году приступить к их серейному производству.

По оценкам зарубежных военных специалистов, создание снарядов увеличенной дальности, использующих для коррекции траектории данные КРНС NAVS — TAR, позволит частям и подразделением полевой артиллерии в ближайщем будущем успешно решать задачи по высокоточному огневому поражению как групповых так и одиночных наблюдаемых целей в любых метеоусловиях при малом раходе боеприпасов.

Основные направления развития буксируемой артиллерии армий зарубежных стран

Разработка новых образцов артиллерийских орудий или модернизация старых образцов развитых странах ведется с учетом возможных изменений условий и тактики боевых действий войск.

Современный бой характеризуется быстротечностью боевых действий обьеденений, частей, подразделений и в этих условиях боевые и технические возможности артиллерии должны соответствовать мобильности и характеру выполняемых задач общевойсковых подразделений.

И в этих условиях, как правило будет отведено мало времени для артиллерии, поэтому задачу огневой поддержки артиллерийские части и подразделения могут выполнять лишь при условий высокой точности стрельбы, с наименьшим расходом боеприпасов в готовности быстро развертыватся и занять боевой порядок, а также свертыватся (оставить занятый район огневых позиций и наблюдательных пунктов), чтобы избежать воздествия контрбатарейного огня противника.

По сравнению с возможностями буксируемых орудий, самоходные орудия (СГ) теоретически могли бы обеспечить наилучшее выполнение выше указанных задач, однако не смотря на многие

преимущества — самоходная артиллерия имеет ряд недостатков и слабых мест, например, значительно большую массу самоходных систем по сравнению с буксируемыми орудиями.

Кроме того буксируемые орудия имеющие длину ствола 52 калибра обеспечивают ведение огня на дальности с выше 40км. и позволяет артиллерийским подразделениям занимать огневые позиции намного дальше от передного края , что снижает опасность поражения от артиллерийского огня противника.

Зарубежные военные специалисты, проводя сравнение буксируемой и самоходной артиллерии, рассматривают как боевые возможности систем, так и материальные затраты на вооружение и военную технику артиллерии, а ткже на экипировку и содержние личного состава.

*ТАБЛИЦА 1*

### СРЕДНЯЯ ОЦЕНОЧНАЯ СТОИМОСТЬ ОБРАЗЦОВ ВООРУЖЕНИЯ И ВОЕННОЙ ТЕХНИКИ АРТИЛЛЕРИЙСКОЙ БАТАРЕИ

(в ценах 1995 года, млн долларов)

| Наименование вооружения | Батарея БГ | | Батарея СГ | |
|---|---|---|---|---|
| | Кол-во | Стоимость | Кол-во | Стоимость |
| 155 мм гаубица 52 клб | 6 | 5 | 6 | 25 |
| Бронированный тягач на колесном шасси | 6 | 2,4 | – | – |
| Командно-штабная машина | 1 | 0,5 | 1 | 1,8 |
| Ремонтно-восстановительная машина | 1 | 0,5 | 1 | 1,6 |
| Машина подвоза боеприпасов | 6 | 1,1 | 6 | 6,6 |

Наименование вооруженияБатарея БГБатарея СГКол—воСтоимостьКол—воСтоимость155 мм гаубица 52 клб65625Бронированный тягач на колесном шасси62.4—Командно—штабная машина10.511.8Ремонтно—восстановительная машина10.511.6Машина подвоза боеприпасов61.166.6

ЗВО — 8/2002

За рубежом наибольшее распространение получили 105—и 155 мм буксируемые гаубицы (БГ). В начале 1990—х годов сложились мнение, что 105 мм БГ достигли пика своего развития и подлежат замене 155 мм орудиями. Однако 155 мм БГ не вполне отвечают всем современным оперативным требованиям и по ряду показателей уступает 105 мм БГ.

За рубежом проводятся мероприятия для расширения боевых возможностей 105 мм БГ, которые ведутся по трем направлениям: увеличение дальности стрельбы, повышение точности стрельбы, сокращение времени подготовки орудия к стрельбе.

В качестве примера можно сослаться на три зарубжных образца буксируемых гаубиц: француздкой LG1 MK2, английский L118A1 (рис. 1) и южно—африканской G7 (рис.2)

Отмечая достоинства 105 мм буксируемых систем, западные эксперты указывают, что в перую очередь они будут по прежнему использоваться при ведении боевых действий в горах, обеспечения немедленного реагирования сил быстрого развертывания, а также огневой поддержки операцией, проводимых парашютными, десантными и воздушно—штурмовимы подразделениями.

В ряде стран, закупивших английскую БГ, также разрабатываются 105мм боеприпасы с целью доведения дальности стрельбы до 20 км и больше.

Южно—африканская компания "Денел" разрабатывает 105 мм БГ G7 со стволом данной 57 клб. максимальная дальность стрельбы активно—реактивным снарядом составляет 30км.., а осколочно—фугасным —24км.

Западные эксперты считают, что идеальное орудие должно иметь боевую массу, аналогическую массе 105 мм орудий, а по огневой мощи и дальности стрельбы быть сопостовимым со 155 мм образцами. Достижения современных технологий в области металургии, в частности алюминиевых и титановых сплавов, по их мнению, может сделать реальным данное направление развития артиллерии.

В каждом государстве в зависимости от взглядов командования сухопутных войск на боевое применение полевой артиллерии, состояния экономики (научно—технической базы) и финансирования программы—модернизации отличаются обьемом выполняемых работ.

*ТАБЛИЦА 2*

## ОСНОВНЫЕ ТАКТИКО—ТЕХНИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ 105 мм ЗАРУБЕЖНЫХ БУКСИРУЕМЫХ ГАУБИЦ

| Наименование | Страна-разработчик | Длина ствола, клб | Боевая масса, кг. | Максимальная скорострельность выстр./мин | Максимальная дальность стрельбы ОСФ/АРС, м |
|---|---|---|---|---|---|
| LG1 Mk2 | Франция | 30 | 1520 | 12 | 15700/ 15700 |
| L118 | Великобритания | 37 | 1860 | 12 | 15300/ 17200 |
| L118A1 | Великобритания | 37 | 1860 | 18 | 17200/ 20075 |
| G 7 | ЮАР | 57 | 3800 | 6 | 24000/ 30000 |

Наименование Страна— разработчик Длина ствола, клбБоевая масса, кг.Максимальная скорострельность выстр./минМаксимальная дальность стрельбы ОСФ/АРС, мLG1 Mk2 Франция 3015201215700 / 15700L118 Великобритания 3718601215300 / 17200L118A1 Великобритания 3718601817200 / 20075G 7 ЮАР 573800624000 / 30000

Принимая участие в совместной с США разработке легких буксируемых орудий, английская фирма “БАе системз” планирует на базе ХМ777 создать семейство легких орудий с целью решения широкого спектора задач огневого поражения, в том числе артиллерией кавалерийских и горных подразделений, так:

—для непосредственной огневой поддержки намечается разработать гаубицы со стволом длиной 26 или 30 калибр с максимальной дальностью стрельбы 22 км, а массой не более 3.1 т.

—для осуществления общей огневой поддержки — создать артсистемы со стволом длиной 45, 47 или 52 калибр с максимальной даль-

ностью стрельбы 40 км, при этом масса не должна перевышать 4,5 т.

Планируется оснастить орудия системой управленя огнем (СУО), выключающей инерциальную навигационную систему, баллистическую станцию, устройство распределения мощности, цифровой прибор наблюдения для стрельбы прямой наводкой, средства связи, дисплеи для командира орудия, наводчика и его помощника.

## ЗАКЛЮЧЕНИЕ

В развитии буксируемых артиллерийских орудий прослежиаваются две основные тенденции: первая касается снижения массы систем, вторая — увеличение точности стрельбы. Общая масса орудия оказывает непосредственное влияние на возможность оперативной транспортировки, в том числе на большие расстояния. Зарубежные специалисты в области создания артилерийских систем уделяют достаточное внимание экономическому аспекту проблемы. При уменьшении боевой массы сокращаются расходы на транспортировку орудия.

Повышение точности стрельбы из всех видов орудия — это обязательное требование, предьявляемое к СБР (сил быстрого реагирования), что необходимо для быстрого нанесения огневого удара и совершенного отвода войск. Чем выше точность стрельбы, тем меньше требуется боеприпасов. Сокращение расхода боеприпасов, в свою очередь, уменьшает нагрузку на органы тылового обеспечения и повышает оперативность развертывания артиллерийских подразделений, а возможность и необходимость нанесения точного удара необходима при выполнениии огневых задач в бою и в операции.

Образцовое содержание материальной части артиллерии, в том числе боеприпасов оптических и электронных средств подготовки стрельбы и управления огнем в условиях вооруженных сил Республики Армения приобретает особую актуальность. Да, наша артиллерия вооружена советскими образцами вооружения, в том числе, буксируемые орудия, самоходная, минометы, боеые машины Реактивной артиллери и противотанковые средства, которые являются лутчшими образцами конца ХХ—го века.

Наша задача заключается в том, чтобы содержать в образцовом состоянии имеющиехся, в достаточном количестве, образцы ар-

тиллерийских орудий. Об этом более подробно рассмотрено в моей статье “Особенности поддержания боеспособности артиллерии” (см. журнал “Айкакан Банак” номер — 1(23) 2000г. стр. 44—52).

В тоже время, нам необходимо следить за дальнейшим развитием РВиА как в вооруженных силах Российской Федерации, также в развитых зарубежных странах, одновременно модернизировать нашу артиллерию, изучить и применять современные средства определения координат целей (обьектов) поражения, боевых порядков артиллерии (ОП и НП), научиться грамотно применять артиллерию в условиях нашего горного ТВД, совершенствовать способы огневого поражения противника, средства управления группировками и подразделениями артиллерии в бою (операции).

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ», 1(35). 2003, էջ 9–16

# ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿՐԱԿԱՅԻՆ ՎԱՀԱՆԸ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ՊՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ և ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏ

Յուրաքանչյուր ազգ, որը ձգտել է անկախության և ձեռք է բերել այն, անմիջապես ձեռնամուխ է եղել իր սեփական զինված ուժերի ստեղծմանը, որպեսզի ունակ լինի պաշտպանելու իր նվաճած անկախությունը:

Դարեր շարունակ Հայ ազգին չի հաջողվել լուծել այս խնդիրը, այդ իսկ պատճառով հարևան և այլ հզոր պետությունները գերել են հազարավոր հայերի և զավթել մեր ժողովրդի զբաղեցրած պատմական տարածքները: Դրա ապացույցներից են հայերի նկատմամբ թեկուզ 1914–1922թթ. Թուրքիայի կատարած բարբարոսությունները:

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանը հռչակեց իր անկախությունը, իսկ 1991թ. դեկտեմբերի 21-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, որը ձեռնամուխ եղավ զինված ուժերի կառուցման դժվարին գործին, քանի որ հանրապետությունն ստիպված էր մարտական գործողություններ վարելու իր հարևան Ադրբեջանի դեմ՝ նրա կողմից սանձազերծված պատերազմում:

Հայաստանի Հանրապետությունը և նրա զինված ուժերը 2002թ. հունվարի 28-ին առաջին անգամ նշեցին բանակի ստեղծման տարեկիցը՝ նրա 10-ամյակը: Բանակի անցած 10-ամյա ուղին և նրա կայացման փուլերը վառ կերպով ներկայացվեցին այդ կապակցությամբ տեղի ունեցած հանդիսության ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթում, որը համարում եմ պատմական իրադարձություն:

Սկսվեց բանակաշինության կայուն զարգացման, զինված ուժերի զորատեսակների մարտունակության բարձրացման և կարգապահության ամրապնդման փուլը, ձևավորվեցին կանոնավոր բանակի հատուկ չափանիշներ և ավանդույթներ, որոնք նպատակաուղղված են մարտունակ և հայրենասեր զինծառայողներ դաստիարակելու և մեր Հայրենիքի սահմանները անձեռնմխելի պահելու կարևոր գործին:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարևորագույն մասն ԵՆ կազմում հրթիռային զորքերը և հրետանին, որոնք այսօր կրակային խոցման նրանց ամենազգխավոր միջոցն ու ուժն են:

Այո՛, մեր բանակը այսօր ունի հզոր զորատեսակ՝ հրթիռահրետանային զորք, որը զինված է ժամանակակից հրետանային սպառազինությամբ, մարտունակ է և պատրաստ է կատարելու ցանկացած մարտական առաջադ-

րանք: Նրա անցած մարտական ուղին եղել է դժվարին այն առումով, որ Հայաստանի Հանրապետության և Արցախի ամբողջ արևելյան սահմանագծով ընթանում էին ծանր մարտական գործողություններ: Նորաստեղծ պաշտպանության նախարարությունն ստիպված եղավ միաժամանակ վարելու ծանր պաշտպանական մարտական գործողություններ և ստեղծելու, կազմավորելու մարտունակ ստորաբաժանումներ, զորամասեր և զորատեսակներ: Հրետանային ստորաբաժանումների ձևավորման սկիզբը կարելի է համարել 100 քք ԿՍ–19 հրանոթների հաշվարկների մարտական կիրառումը սահմանամերձ շրջաններում՝ Նոյեմբերյանում, Իջևանում, Տավուշում, Գորիսում, Կապանում, ընդհուպ մինչև Արարատի շրջանը: Ազերիների հարձակվող ուժերի վրա այդ հրանոթներից կրակող ազատամարտիկների շարքերում կային հրետանավորներ, որոնք ծառայել էին ԽՍՀՄ բանակում, կարող էին և ստիպված էին գործարկել հակակարկտային ԿՍ–19 հրանոթներ:

Կարճ ժամկետներում հրետանու կազմավորումը, նրա կազմհաստիքային կառուցվածքի մշակումն ու հաստատումը, մարդկային և նյութական ռեսուրսներով համալրումը, զորամասերի և ստորաբաժանումների մարտական պատրաստման կազմակերպումը, նրանց լիաներդաշնակեցումը և մարտի դաշտ դուրսբերումը ժամանակի հրամայականն էին:

Հրետանային առաջին ստորաբաժանումները՝ դասակի և մարտկոցի դասական կազմով, ձևավորվեցին զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու վարչության կազմավորումից և Հայաստանի տարածքում տեղակայված 7–րդ Խորհրդային բանակի որոշ զորամասերի հրետանային սպառազինության ընդունումից հետո, ինչը կատարվեց քաղաքակիրթ եղանակով՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրի:

Ամենակարևոր և հզոր հրետանային սպառազինության ընդունումը Ռուսաստանի Դաշնության զորամասերից պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի կողմից հանձնարարված էր հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետին:

Պաշտպանության նախարարության բոլոր օղակներում աշխատանքը եռում էր գիշեր ու ցերեկ, պահանջվում էր շտապ կազմավորել հրետանու տեսակների ստորաբաժանումներ և դրանք տեղափոխել սահմանամերձ շրջաններ՝ անմիջապես ծեռնամուխ լինելով նրանց մարտական կիրառմանը:

Թեև հրետանային զենքի ու զինամթերքի ընդունումը կատարվեց հաջողությամբ, սակայն մնում էր ամենադժվարին հարցը, որն անհապաղ լուծում էր պահանջում: Դա կադրային հարցն էր՝ ովքե՞ր պետք է նշանակվեին նորաստեղծ հրետանային ստորաբաժանումների և զորամասերի հրամանատարներ, ովքե՞ր պետք է հրետանին ղեկավարեին սահմանամերձ շրջաններում:

Թշնամին չէր սպասում, նա ամեն կերպ ձգտում էր առաջանալու և զավթելու Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքները: Այդ խնդիրը նրան հաջողվեց կատարել մասնակիորեն՝ գրավվեցին Արծվաշենը, Շահումյանը այնուհետև՝ Մարտակերտը, Ասկերանի մատույցները:

Հրետանային զորքերի ղեկավարման գլխավոր կենտրոնը հրետանու վարչությունն էր, որը հաջողվեց համալրել լավ մասնագիտական պատրաստականություն ունեցող մի քանի սպաներով: Այսպես՝ շտաբի պետ նշանակվեց գնդապետ Առնո Արշակի Տատինցյանը, օպերատիվ բաժնի պետ՝ փոխգնդապետ Ներսես Մերգելի Մուրադյանը, վարչության սպաներ՝ մայոր Մենելավ Տիգրանի Գրիգորյանը, այնուհետև՝ գնդապետ Լևոն Արշավիրի Միքայելյանը, որը Ա.Տատինցյանի ողբերգական մահից հետո դարձավ հրետանային զորքերի վարչության շտաբի պետ: Հրետանու վարչություն ընդունվեցին փոխգնդապետներ Հենրիկ Նահապետի Ղազարյանը և Իվան Սեմյոնի Մարգարյանը, Բաբկեն Ջալալի Աբրահամյանը, Երվանդ Շաքարի Հասրաթյանը, Կամո Սրապիոնի Մանուկյանը: Վարչության սպաները, համագործակցելով մյուս վարչությունների հետ, անմիջապես ձեռնամուխ եղան հրետանային ստորաբաժանումների կազմավորմանն ու անձնակազմի ուսուցմանը, միաժամանակ նրանց պետք եղավ միջոցներ ձեռնարկել հակառակորդի գրոհն ու առաջխաղացումը կասեցնելու համար:

Սակայն ամենակարևոր խնդիրներից մեկը դեռևս մնում էր նորաստեղծ հրետանային զորամասերի հրամանատարների և հրետանու պետերի ընտրության դժվարին ու կարևոր խնդիրը: Եվ շատ շուտով մենք կարողացանք լուծել նաև այդ խնդիրը:

Աստծո կամքով թե մեր հայ ազգի հեռատեսությամբ, տասնյակ տարիներ շարունակ Խորհրդային բանակի՝ հարևան Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղակայված և բարձր մակարդակ ունեցող հրետանային ռազմական ուսումնարանում սովորել և հարուստ գիտելիքներով ավարտել էին մի շարք հայորդիներ, որոնց մի մասը արդեն պահեստազորի սպաներ էին մեր հանրապետությունում, իսկ մյուս մասը Հայրենիքի կանչով թողեց իր ծառայությունը ռուսական բանակում և վերադարձավ Հայաստան ու զինվորագրվեց նորաստեղծ ազգային բանակին: Ես մեծ հարգանք ունեմ այդ սպաների նկատմամբ և ցանկանում եմ թվարկել նրանց անունները, ովքեր նշանակվեցին նորաստեղծ հրետանային զորամասերի հրամանատարներ: Դրանք են՝ գնդապետներ Վազգեն Մամիկոնի Ղավալյանը, Ալբերտ Աշոտի Դավթյանը, Ժորա Իսահակի Գասպարյանը (ներկայումս՝ գեներալ–մայոր), փոխգնդապետներ Միքայել Գուրգենի Գրիգորյանը (ներկայումս՝ գեներալ–լ0: Օրհասական էր հատկապես 1992թ. սեպտեմբերի 20–ից մինչև հոկտեմբերի 15–ը ժամանակահատվածը: Թշնամին մեծ ուժերով ձգտում էր հետ գրավելու Լաչինը, և մենք պետք է ամեն կերպ պահպանեինք այն միակ ճանապարհը դեպի Ստեփանակերտ, որով Ար-

ցախին էր հասցվում Հայաստանի և համայն Սփյուռքի օգնությունը:

Ծանր էր իրադրությունը ոչ միայն Լաչինում, այլև ամբողջ Զանգեզուրում, Մարտակերտում, Ասկերանում, Մարտունիում, Հադրութում, ինչպես նաև Նոյեմբերյան–Տավուշ հատվածում: Արյունաքամ էր լինում հայ ազգը: Բազմաթիվ հայորդիներ զոհվեցին հանուն Հայրենիքի, իսկ մեր ճակատային դիրքերը պետք է ամեն կերպ կայունացվեին ռեալ ուժերով ու միջոցներով, և ամենակարևորը՝ մենք պետք է անցնեինք հրետանու հզոր ուժի զանգվածային կիրառմանը: Եվ այն անհետաձգելի միջոցառումները, որոնք իրականացվում էին պաշտպանության նախարար Վ.Սարգսյանի ջանքերով, հրետանու և սպառազինության վարչությունների, զորամասերի հրամանատարների անմիջական մասնակցությամբ մուտեցրին այն օրը, երբ ճակատի ամենակարևոր ուղղություններում մեր հրետանին իր հզոր կրակային ուժով դարձավ գերիշխող. ստեղծվել էին հրետանային զորախմբեր, որոնք անմիջապես բացահայտում էին թշնամու կրակակետերը, գրոհի պատրաստվող ուժերը և ձեռնամուխ էին լինում դրանց կրակային խոցմանը:

Զինված ուժերի հրետանու ստեղծումը շրջադարձային եղավ պատերազմի հետագա ընթացքի համար: Կամավորական ջոկատները և նորաստեղծ բանակի առաջին կանոնավոր մոտոհրաձգային ստորաբաժանումները ի դեմս հրետանային առաջին ստորաբաժանումների ձեռք բերեցին թշնամու կրակային խոցման հուսալի և հզոր միջոց: Կազմավորվեցին և մարտադաշտ ուղարկվեցին հրետանային առաջին մարտկոցները և դիվիզիոնները, որոնք էական նշանակություն ունեցան մարտական գործողությունների բարեհաջող ծավալման համար:

Մեր հրետանին օրեցօր հզորացավ և բազմապատկեց իր մարտական կարողությունները: Նա ոչ միայն ճնշում էր հակառակորդի գրոհները, այլև իր հուժկու կրակով ճանապարհ էր հարթում յուրային զորքի համար և նրան առաջնորդում դեպի հաղթանակ:

Ազատամարտիկները մեծ երախտագիտությամբ լցվեցին հրետանավորների նկատմամբ, քանի որ ականատես դարձան այն «հրաշքին», որը գործում էր հրետանին՝ «պատերազմի աստվածը»: Հարավարևելյան ուղղությամբ գործող զորամիավորման, որի գլխավոր հրամանատարն էր արդեն նախկին 6–րդ հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Միքայել Գրիգորյանը և մեր նորաստեղծ հակատանկային–հրետանային գնդի ուժերով (հրամանատար՝ գնդապետ Է. Ապրիամով) ոչնչացվեցին հակառակորդի 30–ից ավել տանկեր և զրահատեխնիկա:

Հաշվի առնելով հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում ձեռք բերված հաջողություններում ՀՀ զինված ուժերի հրետանու ունեցած մեծ ավանդը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 1993 թ. սեպտեմբերի 30–ի հրամանով (ստորագրված

ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ–լեյտենանտ Նորատ Տեր–Գրիգորյանցի կողմից) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում հոկտեմբերի 19–ը հանդիսավոր կերպով նշվում է որպես հրթիռային զորքերի և հրետանու օր:

Ցավոք, Հայոց բանակի հաղթանակները հնարավոր չեղան առանց զոհերի: Մարտերում հերոսի մահով ընկան մեր քաջարի հրետանավորներից փոխգնդապետ Սամվել Սաֆարյանը, կապիտան Գուրգեն Արշակյանը, կապիտան Վահագն Հակոբյանը, մայոր Պետրոսյանը, Արկադի Սեմերջյանը, փոխգնդապետ Գագիկ Մարգարյանը և ուրիշներ, որոնց անունները ոսկե տառերով են գրված Հայոց բանակի պատմության էջերում:

Հրետանու կայացման գործում իրենց ավանդն են ներդրել պաշտպանության նախարարներ սպարապետ Վազգեն Սարգսյանը, Վազգեն Մանուկյանը և Սերժ Սարգսյանը, ինչպես նաև գեներալ–լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գնդապետներ Ռայմոնդ Մազուզյանը, Հայկ Մանուկյանը, Պողոս Աբրահամյանը, Ներսես Մուրադյանը, Լևոն Միքայելյանը, Կարապետ Հովհաննիսյանը, Յուրի Քարամյանը, Հրանտ Մանվելյանը, Վալերի Կարապետյանը, Արամայիս Բաղդասարյանը, Ալիկ Հովսեփյանը, փոխգնդապետ Սևադա Հովհաննիսյանը և ուրիշներ:

Մի շարք երիտասարդ սպաներ իրենց արժանի ավանդը ներդրեցին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանային առաջին ստորաբաժանումների կազմավորման գործում, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցան մարտադաշտում հրետանու մարտական կիրառմանը: Նրանց թվում նշենք կապիտան Անատոլի Ղավալյանին, մայորներ Սերգեյ Առուստամյանին, Արմեն Սողոմոնյանին, Մհեր Գալստյանին, Նվեր Գրիգորյանին, Կարեն Բաբայանին, փոխգնդապետներ Գարուն Աբգարյանին, Մկրտիչ Մարտիրոսյանին:

Հիշատակության են արժանի 1992–1994թթ. հրետանու կիրառման գործում նշանավորված մի քանի դրվագներ:

Այսպես՝ ազատամարտիկ Գարուն Խաչատուրի Աբգարյանը, որը շատերին հայտնի է որպես «գրադ Գարուն», և նրա ընկեր Անդրեյ Գաբրիելյանը (հատուկ զունդ) մարտադաշտ էին դուրս բերել մի մարտական «Գրադ» կայանք (ԲՄ–21), որով ակտիվորեն հրթիռային համազարկեր էին պատրաստում ու հուժկու կրակով ոչնչացնում էին թշնամու կենդանի ուժը Լաչինի մոտակայքում: Նշված մարտական մեքենան մարտի ժամանակ պետք է սպասարկի առնվազն 6 մարդ՝ նախատեսված մարտական հաշվարկի կազմով, իսկ մեր խիզախ հրետանավորները երկուսով կարողանում էին լիցքավորել մարտական մեքենան (մեկ արկի քաշը՝ 100 կգ), պատրաստել կրակի տվյալները և կատարել սպասարկման բոլոր աշխատանքները:

Մեր վարչության սպաների օգնությամբ Գարուն Աբգարյանը դարձավ գրագետ հրետանավոր սպա, մարտկոցի հրամանատար, իսկ այնուհետև՝

հրետանային դիվիզիոնի հրամանատար: Նա ծանր վիրավորվեց, իսկ զինադադարից հետո շարունակեց իր ծառայությունը հրետանու վարչությունում: Այժմ փոխգնդապետ է, զորամասերից մեկի հրամանատարը և մեծ պատասխանատվությամբ կատարում է իր զինվորական պարտականությունները:

Մարտի դաշտում զոհվեցին հմուտ հրետանավորներ կապիտաններ Վահագն Հակոբյանը և Գուրգեն Արշակյանը: Մոտոհրաձիգների հետ գտնվելով առաջնային դիրքում՝ քաջարի հրետանավոր Վ.Հակոբյանը ղեկավարեց գնդի հրետանու կրակը, իսկ երբ զոհվեց վաշտի հրամանատարը, ստանձնեց հրամանատարությունը: Սակայն ուժերն անհավասար էին, և նա զոհվեց 1993թ.: Նույն ճակատագրին արժանացավ ինքնագնաց հրետանային գնդի հետախուզական դիվիզիոնի հրամանատար, կապիտան Գուրգեն Արշակյանը: Վահագն Հակոբյանը և Գուրգեն Արշակյանը Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվեցին «Արիության համար» մեդալներով:

Զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու ստեղծման ու կայացման սկզբնական շրջանում, բացի կադրային հարցերից, կարևորում եմ ռուսական բանակից ստացված տարբեր տեսակի հրետանային սպառազինության տեխնիկական սպասարկման արդիականացումը մեր պայմաններում, քանի որ հանրապետությունում ընդհանրապես չեն եղել համապատասխան վերանորոգման գործարաններ և անհրաժեշտ մասնագետներ: Այս գործում իրեն լավագույն ձևով դրսևորեց գնդապետ Մարատ Սեմյոնի Ղարիբյանը, որը կարողացավ իրականացնել բարդ կառուցվածքային հակատանկային համալիրների և միջոցների տեխնիկական սպասարկումը, հակատանկիստներ պատրաստելու կարևոր խնդիրը:

Հրանոթների վերանորոգման գործում իր մեծ ներդրումն ունեցավ վերանորոգման գործարանի առաջին տնօրեն Հովհաննես Սիմոնյանը, որը 1992–1993թթ. իր գործարանի բազայի վրա կազմակերպեց տարբեր տեսակի հրանոթների վերանորոգումը և վերականգնման աշխատանքներն ու սպասարկումը՝ ստեղծելով մի աշխատունակ կոլեկտիվ, որի անդամների թվում ուզում եմ առանձնակի նշել հրետանային սպառազինության ինժեներ–մեխանիկ գնդապետ Միխայիլ Շամիրի Դավթյանին, ավագ մասնագետ, այժմ արդեն կապիտան Ռուստամ Սիմոնյանին: Սկզբնական շրջանում մեզ հաջողվեց հրետանային հրանոթների վերանորոգման համար օգտագործել տեխնիկական գումարտակի հնարավորությունները: Այս գործում իրենց պատրաստականությամբ աչքի ընկան «Ամեն ինչ անել ֆրոնտի համար» գումարտակի նախկին հրամանատար, այժմ արդեն գնդապետ Դավիթ Աբրահամյանը, ենթասպա, այժմ արդեն մայոր Միքայել Նազարեթյանը: Հրետանու հրանոթների վերանորոգման աշխատանքները ՊՆ սպառազինության վարչության ջանքերով իրականացվեցին նաև մեկ այլ գործարանում, ինչը մեծ նվաճում էր:

Նշված բնագավառում մենք դեռևս շատ անելիքներ ունենք:

Զինված ուժերի հրետանու կազմավորման, համալրման գործում մենք առանձնակի նշանակություն ենք տվել սպայական կադրերի և կրտսեր մասնագետների պատրաստմանը: Դա ի սկզբանե եղել է պաշտպանության նախարարի, նրա տեղակալների ու հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետի ուշադրության կենտրոնում: Այստեղ իրենց ծանրակշիռ դերն ունեցան սպայական վերապատրաստման դասընթացները (հրետանու ցիկլի պետ՝ Բ.Լ.Պետրոսյան), պոլիտեխնիկական ինստիտուտի հրետանային ամբիոնի բազայի վրա ծավալված բարձրագույն սպայական դասընթացները (դասախոսներ՝ գնդապետ Ի.Բուլիկյան, Ռ.Մարտիրոսյան, Կ.Մանուկյան, Հ.Ալիխանով): Հետպատերազմյան տարիներին սպաների պատրաստման գործին ձեռնամուխ եղավ «Երևան» նորաստեղծ բարձրագույն բազմաբնույթ զինվորական ուսումնարանը: Բավականին թվով հրետանավոր սպաներ պատրաստվեցին և վերապատրաստվեցին Ռուսաստանի Դաշնության ռազմական ուսումնական հաստատություններում:

Ծանր պատերազմական իրավիճակում մենք անխափան պլանավորում և իրագործում էինք զինված ուժերի հրետանու պատրաստությունը, նրա ներդաշնակեցումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սպաների և շտաբների պատրաստությանը, համալրմանը անձնակազմով, տեխնիկայով, սպառազինությամբ, օպտիկական սարքերով, կապի միջոցներով: Վարչության սպաները գործուղվում էին զորամասեր, որպեսզի հսկեն և զորամասերի ու հրետանային ստորաբաժանումների հրամանատարներին բազմաբնույթ օգնություն ցույց տան մարտական պատրաստման կազմակերպման, շտաբների պատրաստման մեթոդիկայի մշակման, մարտկոցների և դիվիզիոնների զորավարժությունների, սպաների հետ հրետաձգության մարզումների անցկացման, ինչպես նաև զորամասերում անհրաժեշտ կենցաղային պայմանների ստեղծման գործընթացներում:

Պետք է նշել, որ վարչության սպաների ծառայողական ժամանակի մեծ մասն անցնում էր զորքերում. այդ էր պահանջում ժամանակը, երբ հրամանատարները դեռևս չունեին ղեկավարման փորձ և գործնական հմտություններ:

1994թ. զինադադարից հետո Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրետանու սպայական կազմը, քաջ գիտակցելով, որ պատերազմը դեռևս չի ավարտվել, և ազերիները հարմար պահ են փնտրում այն վերսկսելու համար, ձեռնամուխ եղավ հրետանու մարտական պատրաստականության որակի հետագա բարձրացմանը և զորքերի անձնակազմի կարգապահության ամրապնդմանը:

Տասը տարվա ընթացքում վարչության սպաները որակապես փոխվեցին: Գաղտնիք չէ, որ որոշ փուլերում վարչությունում ծառայել են առանձին սպաներ, որոնք չէին համապատասխանում Հայոց ազգային բանակի պահանջներին, և մենք այդպիսի սպաներից ազատվում էինք՝ տեղափոխելով այլ

պաշտոնների կամ զորացրելով բանակից:

Մենք մշտապես հղկում ենք հրետանու կազմահաստիքային կառուցվածքը, սպաների հրամանատարական և ստորաբաժանումների մարտական պատրաստման ծրագրերը, պատրաստել և հրատարակել ենք բազմաքանակ հրետանային գրականություն: Մենք աչքաթող չենք արել նաև հրետանային զենքի սպասարկման և պահպանման հարցերը: Մեր նախաձեռնությամբ վարչության սպաները պատրաստել և զորքերում անցկացրել են հրանոթների, ականանետների սպասարկման և շահագործման ցուցադրական պարապմունքներ, ինչպես նաև մասնակցել են տարբեր մասշտաբի հրամանատարաշտաբային զորավարժությունների՝ առանձին հրետանային գնդերի մասնակցությամբ:

Ընդհանուր առմամբ կարևորելով Արցախյան պատերազմի ընթացքում պաշտպանության նախարարության հրթիռային զորքերի և հրետանու վարչության՝ որպես հրթիռահրետանային զորքերի կառավարման հիմնական կենտրոնի դերն ու նշանակությունը, ինչպես նաև սպաների կատարած աշխատանքը, ուզում եմ առանձնակի նշել այն փաստը, որ վարչության գործունեությունը նպատակաուղղված է եղել ինչպես հրետանային ստորաբաժանումների, զորամասերի կազմավորմանը, այնպես էլ նրանց հետագա զարգացմանը: Այդ զարգացումը ներառում է բազմաթիվ խնդիրներ, որոնցից հիմնականներն են՝ հրթիռահրետանային զորքերը մշտապես պահել մարտունակ վիճակում՝ ղեկավարելով նրա ամենօրյա մարտական պատրաստման աշխատանքները, պլանավորել և իրականացնել հրթիռահրետանային զորքերի մարտական պատրաստումը, որի հիմնական մասն է սպաների հրամանատարական պատրաստումը, պատրաստել և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ներկայացնել հրթիռահրետանային զորքերի զարգացման հեռանկարային ծրագրեր, ակտիվորեն մասնակցել կադրերի պատրաստման աշխատանքներին, կատարելագործել զինված ուժերի հրետանու մարտական կիրառման և հակառակորդի կրակային խոցման տարբերակները, ինչպես նաև ուսումնանյութական բազայի զարգացման ուղիները:

Զինված ուժերի հրետանու մարտական պատրաստությունը թերի կլիներ, եթե մենք չհետևեինք և չստեղծեինք հրետանու համապատասխան ուսումնական բազա:

Այսօր զինված ուժերի զորամասերում և ստորաբաժանումներում գործում են մեծ թվով հրետանային հրաձգարաններ (ՎԱՊ) և մասնագիտական լսարաններ: Բավականին բարձրացել է դրանց հագեցվածությունը, ստեղծվել է սպաների դաշտային հանդերձավորումը: Բարձր և ժամանակակից որակի ուսումնանյութական բազա է ստեղծվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, որտեղ պատրաստվում են նաև հրետանավոր սպաներ:

Հետպատերազմյան տարիներին բարելավվել են հրետանային զորամա-

սերի և ստորաբաժանումների անձնակազմի սոցիալ–կենցաղային պայմանները, կառուցվել են նոր զորանոցներ, բարելավվել են անձնակազմի հանդերձավորումը և սնունդը, ինչը հնարավորություն է տալիս բարձր որակով կազմակերպելու և անցկացնելու բարոյահոգեբանական, ազգային գաղափարախոսական ու հայրենասիրական դաստիարակչական աշխատանքները:

Մի պահ հայացք գցելով դեպի անցածը՝ երկար ու ձիգ տասը տարիները՝ հիշում ենք, թե ինչպես էին կրակային դիրքերում տեղավորված հատուկենտ հրանոթներ ու ականանետներ, որոնց արձակած թեկուզ մեկ արկն ու ականը ոգևորում և քաջալերում էին մեր ազատամարտիկներին, նրանց մղում հերոսության և անձնազոհության: Այսօր մեր հրետանին ազգային բանակի հզոր կրակային վահանն է, այն համալրված է և շարունակում է համալրվել բարձրագույն և ակադեմիական կրթություն ստացած սպաներով, ինչպես նաև պաշտպանության նախարարության Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի շրջանավարտներով, որոնք, պահպանելով մեր փառապանծ հրետանավոր զորավարների՝ հայազգի գեներալ–գնդապետ Մ.Ա.Պարսեղովի և գեներալ–լեյտենանտ Ք.Ի.Իվանյանի՝ Արցախյան պատերազմի մեր հմուտ հրետանավորների ավանդույթները, շարունակում են կատարելագործել իրենց գործնական հմտություններն ու մասնագիտական գիտելիքները:

Հայոց բանակի հրետանավորների նշանաբանն է՝ «Հակառակորդին խոցել առաջին իսկ կրակոցով, առաջին իսկ համազարկով, առաջին իսկ վայրկյաններին և հրետանու հրետակոծման առավելագույն հնարավորությունների սահմաններում»: Այդ նպատակով նրանք արդյունավետ են օգտագործում ուսումնական ժամանակը և ուսումնամարտական հրաձգությունները կրակադաշտերում:

Ազգային բանակի հրթիռահրետանային զորքերը գտնվում են մեր հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատարի և պաշտպանության նախարարի ուշադրության կենտրոնում, մարտունակ են և մշտապես պատրաստ՝ անհրաժեշտության դեպքում դիմակայելու հակառակորդի ցանկացած ոտնձգությանը և անառիկ պահելու մեր Հայրենիքի սահմանները:

Այսօր ավելի քան 10 տարվա բարձունքից հետադարձ հայացքով մենք վերլուծում ենք այն ուղին, որն անցել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրթիռահրետանային զորքերը, մի ուղի, որը հայ ազգի պատմության համար եղել է կարճ, բայց բեղուն, լի մարտական սխրանքներով, հերոսությամբ, հայրենասիրության բովանդակալից դրսևորումներով, բանակաշինության ստեղծարար և քրտնաջան աշխատանքով:

# 4. ԶՈՐԱՎԱՐԻՆ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն նախարար

Ես՝ Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանս, քաջ գիտակցելով իմ ազգին սպասվող մեծ աղետը, որը ծրագրել էր Ադրբեջանը՝ սկսած 1985 թվականից, որոշեցի թողնել իմ զինվորական ծառայությունը Ռուսական բանակում և 1992թ. փետրվար ամսին ներկայացա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին և զեկուցեցի նրան իմ պատրաստակամությունը՝ ծառայելու նոր ստեղծվող Հայկական բանակում և կռվելու թշնամու դեմ:

Արդեն 12-րդ տարին է, որ ծառայում եմ ազգային բանակում, կարծում եմ, որ կատարել եմ պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից ինձ հանձնարարված բոլոր մարտական և ուսումնական խնդիրները, որի ընթացքում չեմ խնայել ինձ, իսկ 1992թ. հոկտեմբերի 8-ին վիրավորվեցի թշնամու կողմից Լաչինի մոտակայքում մարտական գործողության ժամանակ, արյունս թափվեց հանուն Հայրենիքի և նրա հաղթանակի:

Դժվարին 1992–1994թ. ակտիվ մասնակցել եմ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերի ստեղծմանը, ղեկավարել եմ հրետանին մարտի դաշտում (Լաչին, Մարտակերտ, Կապան–Հորադիզ, Կրասնոսելսկ, և ինձ համար ամենադժվարինը՝ – 1994թ. հունվար–փետրվար ամիսներին Քելբաջարի 2–րդ և վերջին հաղթական օպերացիայում և այլ ռազմաճակատային հատվածներում):

Միշտ էլ մեծ ուշադրություն եմ դարձրել ղեկավարության հրամանների ճիշտ և ժամանակին կատարմանը, հրետանու որակի և մարտունակության բարձրացմանը, Հայրենիքին նվիրված հրետանավոր մասնագետների պատրաստմանը:

Իմ զինվորական գործունեությունը նվիրված է եղել բազմաբնույթ խնդիրների կատարմանը և բանակի գլխավոր կրակային ուժի՝ հրետանու զարգացմանը և հզորացմանը, որի ընթացքում ներդրեցի իմ գիտելիքները և փորձը, որը ես ձեռք էի բերել իմ երկարամյա զինվորական ծառայության ընթացքում:

Հայոց բանակի զինված ուժերի հրթիռահրետանային զորքերը կայացած մեծ կառույց է, որը պատրաստ է դիմակայելու թշնամուն:

Իմ այս համառոտ գրության մեջ ես չեմ անդրադառնում իմ անցած մարտական ուղուն, դժվարին և մեծ պատասխանատվությամբ կատարած մար-

տական ծառայությանը: Միշտ էլ պատրաստ եմ ծառայելու Հայրենիքիս:

Այսօր՝ հոկտեմբերի 29-ին, գեներալ-լեյտենանտ Ա.Աղաբեկյանը ինձ տեղեկացրեց, որ ինձ ներկայացնում են զորացրման Հայաստանի Հանրապետության զինված ուժերից: Ես չեմ կարող դեմ լինել Ձեր որոշմանը: Ուստի իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Հայաստանի Հանրապետության նախագահին և անձամբ Ձեզ, որ ինձ հնարավորություն տրվեց երկար (ավելի քան 11 տարի) տարիների ընթացքում ծառայելու Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և լինել նրա հրթիռահրետանային զորքերի անփոփոխ պետը:

*Խորը հարգանքով՝*
*Հրթիռահրետանային զորքերի պետ*
*գեներալ-մայոր Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 29.10.2003թ.*

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ, ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻՆ,
ՀՀ ՊՆ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ, ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ –
ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻՆ,
ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ,
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ,
ՊՆ ԵՎ ԳՇ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ
ՊԵՏԵՐԻՆ, ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՆ,
ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԵՏԻՆ,
1, 2, 3, 4, 5 ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻՆ,
ՊՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻՆ

ՊԱՐՈՆԱ՛ՅՔ

Համաձայն ՀՀ նախագահի հրամանագրի և ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 3630 հրամանի՝ տարիքի կապակցությամբ ես ազատված եմ պաշտոնից և անցնում եմ պահեստազոր:

Մեծարգո՛ պարոն Նախարար,
Հարգարժա՛ն գեներալներ և սպաներ

Ձեզ բոլորիդ հասցեագրում եմ իմ գրավոր շնորհակալությունը մեր 11 ամյա համատեղ զինվորական ծառայության համար, որի ընթացքում մեզ հաջողվեց կազմավորել և պատրաստել մարտական գործողություններին մասնակցելու ունակ Ազգային բանակի հրթիռահրետանային զորքերը, որը և իր նպաստը բերեց 1992–1994թթ. մեր պանծալի հաղթանակներին: Չկա որևէ մեծ կամ փոքր մարտական գործողություն, որին մասնակցած չլինի հրետանին՝ իր անձնակազմով և իր հզոր զենքով:

ՀՀ զինված ուժերի հրետանին մեր բանակի ամենահզոր կրակային միջոցն է թշնամու խոցման համար:

Պատիվ եմ ունեցել երկար տարիներ՝ 1992թ. մինչև 2003թ. նոյեմբերի 3–ը, ղեկավարել ՀՀ ԶՈւ հրթիռային զորքերը և հրետանին, որի ընթացքում նշված զորատեսակը անցել է իր կայունացման և զարգացման դժվարին էտապներով:

Փառք ու պատիվ Արցախյան պատերազմում զոհված մեր մարտական ընկերներին, խորին շնորհակալություններս բոլոր նրանց, ովքեր իրենց ուժն ու եռանդը, գիտելիքներն ու փորձը ներդրեցին Ազգային բանակի և նրա հրթիռահրետանային զորքերի զարգացման գործին:

Ձեր բարյացակամ վերաբերմունքը հրետանու և նրա վարչության պետին միշտ էլ ուժ ու եռանդ են ներշնչել ինձ ծառայելու երկար տարիներ Ազգային բանակում և ամբողջությամբ նվիրվել ազգանվեր ծառայությանը:

Մաղթում եմ Ձեզ բոլորիդ, նորանշանակ հրթիռային զորքերի և հրետանու պետին նորանոր հաջողություններ Ազգային բանակի ամրապնդման, հետագա զարգացման ու հզորացման գործում:

*Ամենայն անկեղծությամբ և խորը հարգանքներով՝ Ձեզ բոլորիդ*
*գեներալ–մայոր Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 31.10.2003թ.*

# ԳԵՆԵՐԱԼ Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՊԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂ ՄԱԶՐԱՅԻ ՄԱՍԻՆ

ՏԵՔՍՏԸ ԳՐԵԼ Է ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ (ԾՆՎԱԾ 1923Թ. ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՁՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ) **ԱՐՏԱՎԱԶԴ ԱՂԱԲԵԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ**

## ՄԱԶՐԱ

Գեղեցիկ գյուղ է Ներքին Մազրան՝ բազմած Խուստուփ լեռան լանջին՝ Շիշկերտ գյուղի հարևանությամբ:

Մազրայի հորիզոնը բաց էր, ծովի մակերևույթից բարձր էր 1800 մ, սահմանակից էր Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղին: Մազրան ուներ լայնատարած, խոտառատ արոտավայրեր, բերրի հողեր: Ամառը այն բազմերանգ ու բուրավետ ծաղկաստան էր: Տարեց գյուղացիները հուզմունքով ու ցավով են վերհիշում Մազրա գեղատեսիլ գյուղը: Մազրան 1878թ. ուներ 12 ընտանիք, եկել էին Քաջարանից, Շվանիձորից:

1922թ. գյուղում բնակվում էին 56 ընտանիք՝ 400-ից ավելի բնակիչներով: 1930թ. ստեղծվեց կոլտնտեսություն, որն ամենաունևորը և առաջավորն էր շրջանում: Հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ (խոշոր և մանր), հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի և բոստանային կուլտուրաների մշակմամբ: Սակայն տարերքը ընդհատեց գյուղի կյանքը: Գյուղից վերև լեռնալանջի մի վիթխարի հատված նստվածք տվեց, փլվեց և մեծ վնաս հասցրեց գյուղին, շատ տներ փլվեցին, եղան զոհեր:

1939թ. գյուղացիները տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Շիշկերտում, Ծավում, Քաջարանում, Կապանում, Երևանում ու այլ վայրերում:

Սկսվում է պատերազմը: 76 մազրացիներ մեկնում են ռազմաճակատ, մասնակցում են ահեղ մարտերին: Պատերազմում զոհվել են 35 հոգի: Նրանցից 18-ը ամուսնացած չէին: Նախկին մազրացիները որոշեցին զոհվածների հիշատակին հուշարձան կառուցել արդեն 30 տարի գոյություն չունեցող հին գյուղատեղում: Կանաչազարդ ու ծաղկառատ գյուղամիջում կառուցեցին մենավոր հուշարձան (հեղինակ՝ Վազգեն Վարդանյան):

1967թ. հուլիսի 27-ին տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմում զոհված 35 մազրացիների հիշատակին նվիրված հուշարձանի հանդիսավոր բացումը: Զոհվածների հիշատակը հավերժացնելու պարտքը մազրացիներին բերել էր իրենց ծննդավայրը՝ Մազրա գյուղը, նախկին գյուղատեղը:

Պատերազմում երեք որդի կորցրած 100-ամյա Նազլու Խաչատրյանը դողացող ձեռքերով կտրում է ծաձկոցի ժապավենը:

Հուշարձանի վրա քանդակված է արծիվ, ավտոմատավոր զինվոր և 35 անմահ անուններ, փորագրված է. «Հավերժ փառք մեծ հայրենականում զոհ-

ված մազրացիներին»: Բացման խոսք է ասում պատերազմի վետերան Բաղդասար Սարգսյանը, մազրացի մարտիկների սխրագործությունների մասին պատմում է համագյուղացի, Երևանի բնակիչ Հարություն Հարությունյանը, ելույթ են ունենում զոհվածի թոռ Էմմա Աբրահամյանը, Գրիշա Սարգսյանը, ծավեցի Գառնիկ Բարսամյանը, դպրոցականներ Էմման և Զոյան արտասանում են զոհվածներին նվիրված ստեղծագործություններ, Գրիշա Իսաջանյանը կարդում է ստացված հեռագրերը: Հայրենիքի համար զոհված մազրացիների հիշատակը միշտ վառ կմնա, նրանց կընդօրինակեն սերունդները:

Այդ օրվանից զոհվածների հուշարձանը դարձավ Մազրա գյուղի միակ բնակիչը ...

Ամեն տարի մազրացիները գալիս են այցի զոհվածների հուշարձանին և գյուղին: Նրանց թվում է Հայրենական մեծ պատերազմում քաջաբար զոհված լեյտենանտ Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանի որդին՝ Վլադիմիր Հայրապետյանը, որն այժմ Հայաստանի Հանրապետության բանակի գեներալ–մայոր է, պաշտպանության նախարարության հրթիռահրետանային զորքերի վարչության պետ:



Հայրենական մեծ պատերազմում (1941-45 թթ.) զոհված Մազրեցիների հուշարձանը Կապանի շրջանի Մազրա գյուղում 1967 թ., ձախից աջ գեներալի հորեղբայր Սերյոժա Հայրապետյանը իր որդի Համլետի հետ (6 տարեկան), Հրանտ Իսաջանյանը և պատերազմի վետերան Սեդրակ Աղազույանը:

## ՑՈՒՑԱԿ

## ՄԱՁՐԱ ԳՅՈՒՂԻՑ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ

1. ԱվետիսյանԱլեքսանԱստուրի
2. ԱղազույյանԱշոտԽաչատուրի
3. ԱղազույյանՔաջիկԽաչատուրի
4. ՄինասյանԽաչատուրԱռաքելի
5. ՄինասյանԹովմասԱռաքելի
6. ՄինասյանԼալազարԱվանեսի
7. ՄինասյանՄամիկոնԱվանեսի
8. ՄինասյանԳուրգենԱվանեսի
9. ԲարսամյանՊավլիկՆիկոլայի
10. ՀայրապետյանՊետրոսՎարդանի
11. ՀայրապետյանՄեսրոպՆերսեսի
12. ՀայրապետյանԱրտեմՆերսեսի
13. ՀայրապետյանԱստուրՋհանգիրի
14. ՀայրապետյանՕնիկՋհանգիրի
15. ՀայրապետյանՇավարշՋհանգիրի
16. ՀարությունյանԿորյունԱղասի
17. ՊողոսյանԱրտուշԲեգլարի
18. ՋհանգիրյանՀամազասպՊողոսի
19. ԴանիելյանԱբգարԻսաջանի
20. ԻսաջանյանԲաբկենՄելիքի
21. ԵփրեմյանՎազգենԱրամի
22. ՄարտիրոսյանԲագրատԽոսրովի
23. ՄարտիրոսյանՀովհաննեսՍիմոնի
24. ՄաթևոսյանԶավենԹադևոսի
25. ՍարգսյանԱվագԽաչատուրի
26. ԳրիգորյանՍուրենՀովսեփի
27. ԲաղդասարյանԵղիշեԳրիգորի
28. ԳրիգորյանՀայկՄկրտիչի
29. ՄկրտումյանԲաբաջանՀարությունի
30. Մեսրոպյան ԳրիշաՊապաշի
31. ԲաբայանՇահենԿարապետի

32. ԲաբայանՎարազդատԿարապետի
33. Սարգսյան ԿամսարԱրշակի
34. ԽաչատրյանՍուրենԳրիգորի
35. ՀայրապետյանՎահանՎարդանի

*ԱՐՏԱՎԱԶԴ ՄԿՐՏՉՅԱՆ «Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում» ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1998թ.*

*Գեներալ Վ.Հայրապետյանի ծննդավայրը՝ Շիշկերտ*

## ՇԻՇԿԵՐՏ

Շիշկերտը Սյունյաց աշխարհի հինավուրց գյուղերից է, հիշատակվում է IV դարում: Ավանդաբար պատմում են, թե շշաձև կերտված կամ սուր–սուր գագաթներ ունեցող սարերի մեջ է գտնվում Շիշկերտը: Գյուղում կային մի քանի ջրաղացներ, ձեթի գործարան, տնտեսական շինությունների ավերակներ:

Գյուղը գտնվում է բարձր լեռնային գոտում, 1900 մ բարձրությամբ, Խուստուփ լեռան արևելյան լանջին: Այստեղ կա երկաթի հանքավայր: Հնում երկաթը հալում և գյուղատնտեսական աշխատանքային գործիքներ էին պատրաստում: Գյուղում կանգուն է XVII դարում կառուցված Հռիփսիմե եկեղեցին, գյուղից 2 կմ հեռու՝ Նավաշեն եկեղեցին, Քոսաջուրի եկեղեցին, որտեղից բխում է հանքային ջուր: Կան սառնորակ ջրեր, աղբյուրներ, տեսարժան գեղատեսիլ վայրեր՝ Ծաղկասարը, Յուղածու սարը, Հարթասարը, Քարանձավը և Խուստուփը: Գյուղը արևելքից սահմանակից է Շիկահող և Կեմանց գյուղերին, արևմուտքից՝ Մեղրու շրջանին: Հայրենական մեծ պատերազմից առաջ գյուղն ունեցել է 132 տնտեսություն՝ 951 շնչով: Կոլտնտեսությունն ուներ 8 հազար ոչխար, պետությանը տարեկան տալիս էր 120–180 տոննա հացահատիկ, կարտոֆիլի բերքը 450–500 տոննայից անցնում էր:

Գյուղի կոլտնտեսությունը միավորվեց Ծավի պետական տնտեսությանը, բնակչությունը տեղափոխվեց Ծավ, որտեղ ապրում են առանձին թաղամասում՝ Շիշկերտ անունով: Այժմ կառուցվում է Նոր Շիշկերտ գյուղը: Շիշկերտցիները չեն մոռանում իրենց երբեմնի մեծահամբավ գյուղը և ցանկանում են վերադառնալ այնտեղ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 147 շիշկերտցիներ, զոհվել են 59–ը, նրանցից 32–ը ամուսնացած չէին:

Շիշկերտ գյուղից էր տանկային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Նավասարդ Հարությունյանը, որը հերոսաբար զոհվեց մարտում՝ հետմահու պարգևատրվելով Լենինի շքանշանով:

1967թ. օգոստոսի 7–ին բոլոր շիշկերտցիները հավաքվեցին գյուղում, ուր տեղի էր ունենում Հայրենական մեծ պատերազմում զոհված շիշկերտցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը:

Հուշարձան–կոթողը բարձրադիր լայնքով բազալտե հուշասյուն է՝ որդուն ճանապարհի դնող մոր խորաքանդակով, որի հակառակ կողմում փորագրված են զոհվածների անունները:

Դիմացը ծաղկանոց է: Հուշարձանը կառուցված է Նվարդ Հարությունյանի նախագծով:

Ամեն տարի մայիսի 9–ին շիշկերտցիները այցելում են մենավոր հուշարձանին:

**ԱՐՏԱՎԱԶԴ ՄԿՐՏՉՅԱՆ** *«Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում» ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1998թ.*



Գեներալի ծննդավայրը – Շիշկերտ գյուղը

## ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ

## Личные награды генерал–майора В. А. Айрапетяна

1. Орден за службу Родине в ВС СССР 3 ст.,
2. «Վարդան Մամիկոնյան» շքանշան,
3. Մարտական խաչի 2–րդ աստիճանի շքանշան,
4. «Արիության մեդալ» մեդալ,
5. «Անդրանիկ Օզանյան» մեդալ,
6. «Գարեգին Նժդեհ» մեդալ,
7. «Դրաստամատ Կանայան» մեդալ,
8. «Մարշալ Հ.Բաղրամյանի անվան» մեդալ,
9. Медаль "Маршал Советского Союза Жуков",
10. Медаль "Ветеран Вооруженных Сил СССР",
11. Медаль "За воинскую доблесть в ознаменование 100–летия со дня Рождения В.И.Ленина",
12. Юбилейная медаль "25–лет Победы в Великой Отечественной войне 1941–1945гг.",
13. Юбилейная медаль "50–лет Вооруженных Сил СССР",
14. Юбилейная медаль "60–лет Вооруженных Сил СССР",
15. Юбилейная медаль "70–лет Вооруженных Сил СССР",
16. Медаль "За безупречную службу I степени",
17. Медаль "За безупречную службу II степени",
18. Медаль "За безупречную службу III степени",
19. «Հայաստանի երկրապահ» հուշամեդալ
20. Юбилейная медаль "60 лет Победы в Великой Отечественной войне 1941–1945гг."

# ПРИКАЗ

## НАРОДНОГО КОМИССАРА ОБОРОНЫ

## N 0416 / 19019 г. МОСКВА 25. 10. 1941 г.

Опыт войны показал, что многие общевойсковые командиры плохо знают боевые свойства артиллерии, не ставят ей боевых задач и часто неправильно применяют этот мощный род войск в бою.

Не зная как правильно применить артиллерию в том или ином виде боя, естественно, не могут и требовать правильного боевого применения артиллерии от подчиненных им командиров.

Часто общевойсковые командиры не хотят считатся с разумными докладами и предложениями начальников артиллерии по боевому применению артиллерии или держат в секрете от них свои решения, вызывающие перегруппировки и изменения в действиях артиллерии, не понимая того, что нужно дать артиллерии время на разведку, совершение марша, развертывание, организацию управления и взаимодействия с другми родами войск, а также для подвоза (а при отходе и вызова) боевых припасов.

Обшевойсковые командиры плохо заботятся о своей артиллерии, при наступлении не помогают ей скорее и лучше выполнить боевую задачу, а при отступлении не назначают к ней прикрытия, не оказывают ей нужной помощи саперами на марше, нередко оставляют свою артиллерию беззащитной, благодаря чему, она несет огромные потери в личном составе и материальной части.

Ставка Верховного Главнокомандования трбует от общевойсковых командиров, чтобы они изменили свое отношение к артиллерии, изучали и знали артиллерию, приняли все мери к правильному и разумному применению ее в бою, обратив особое внимание на взаимодействие артиллерии с пехотой, танками и авиацией.

В целях лучшего боевого использования артиллерии, лучшего взаимодействия ее с другими родами войск, улучшения управления артиллерией и повышения контроля по боевому использованию артиллерии, а также повышения ответственности обшевойсковых командиров и артиллерийских начальников за боевое применение артиллерии:

**ПРИКАЗЫВАЮ**

1.Начальников артиллерии фронтов, армий, корпусов дивизий и бригад назначить заместителями соответствующих обшевойсковых командиров, представив им права, установленные существующими уставами и Положениями Красной Армии.

2.Каждый факт неправильного боевого применения артиллерии, особенно оставление противнику материальной части и боеприпасов, немедленно расследовать и виновных привлекать к строжайшей ответственности.

3.КАТЕГОРИЧЕСКИ ЗАПРЕЩАЮ использовать личный состав артилерии в качестве пехоты.

*ВЕРХОВНЫЙ ГЛАВНОКОМАНДУЮЩИЙ И. В. СТАЛИН*



## ԳԵՆԵՐԱԼ Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՄԵՆԱՍԻՐԱԾ ԵՐԳԵՐԻՑ ՄԵԿԸ

### Песня артиллеристов

Слова В. Гусева, муз. Т. Хренникова

*I*

Горит в сердцах у нас любовь к земле родимой,
Идем мы в смертный бой за честь родной страны.
Пылают города, охваченные дымом,
Гремит в седых лесах — суровый бог войны.

ПРИПЕВ:Артиллеристы, точный дан приказ,
Артиллеристы, зовет Отчизна нас !
Из многих тысяч батарей,
За слезы наших матерей,
За нашу Родину—Огонь, огонь !

*II*

Узнай, родная мать, узнай, жена—подруга,
Узнай, далекий дом и вся моя семья,
Что бьет и жжет врага стальная наша вьюга,
Что волю мы несем в родимые края.

ПРИПЕВ:Артиллеристы, точный дан приказ,
Артиллеристы, зовет Отчизна нас !
Из многих тысяч батарей,
За слезы наших матерей,
За нашу Родину—Огонь, огонь !

*III*

Пробьет победы час, придет конец похода,
Но прежде, чем уйти к домам своим родным,
В честь армии родной, в честь нашего народа
Мы радостный салют в полночный час дадим.

ПРИПЕВ:Артиллеристы, точный дан приказ,
Артиллеристы, зовет Отчизна нас !
Из многих тысяч батарей,
За слезы наших матерей,
За нашу Родину—Огонь, огонь !

# КРАТКИЙ БОЕВОЙ ПУТЬ ГЕНЕРАЛ—МАЙОРА **ВЛАДИМИРА АСАТУРОВИЧА АЙРАПЕТЯНА**

## НАЧАЛЬНИКА РВиА ВООРУЖЕННЫХ СИЛ РЕСПУЬЛИКИ АРМЕНИЯ В ПЕРИОД С 13 ИЮНЯ 1992г. ПО 1 НОЯБРЯ 2003г.

Владимир Асатурович Айрапетян родился 25 июня 1942г. в селе Шишкерт Капанского района Республики Армения, где и закончил 7 классов в местной школе. В 1957 году в составе семьи Айкануша Айрапетяна (сестра его отца, которая взяла семилетнего Владимира на содержание и воспитание после смерти его матери 1949г., а отец — Асатур Айрапетян погиб на фронте еше в 1944г.) переехали на постоянное местожительство в г.Ереван, где он продолжил учебу в средней школе N 90 Шаумянского района и закончил ее в 1960 году.

В 1961 году он поступил в Тбилисское артиллерийское училище, которое закончил с отличием в 1964 году и был направлен в войска для прохождения дальнейшей службы.

Образование высшее, в период с 1968 по 1972гг. он обучался на командно—штабном факултете Военно—артиллерийской академии имени М.И.Калинина г.Санкт—Петербурга.

После окончания академии он проходил военную службу в разных военных округах вооруженных сил СССР, а затем Российской Федерации, прошел все командно—штабные должности от командира взвода, батареи, дивизиона, начальника штаба артиллерийского полка, командира артиллерийского полка, (1975—1980гг.), начальника штаба артиллерии, а с 1990 года начальника артиллерии 28—го армейского копуса. В 1981 году ему было присвоено воинское звание “полковник”.

Хорошо зная военно—политическую обстанивку в Закавказье, он в начале февраля 1992 года прибывает в Армению, в очередной оптуск, лично обращается к министру обороны Республики Армения Вазгену Саргсяну и выражает готовность добороволыно вступить в ряды вооруженных сил Республики Армения и защищать интересы армянского народа. На беседе у министра обороны Республики Армения пртисутствовали его заместители — генералы Г.Далибалтаян, М.Абрамян и Андраник Кочарян.

После многочасовой беседы, в ходе которой присутствующие генералы и лично Вазген Саргсян убедившись в высокой военной подготовке полковника В.Айрапетяна ему предлагают должность начальника управления ракетных войск и артилерии (РВ и А) вооруженных сил Республики Армения. На этой же беседе министр обороны В.Саргсян подписывает рапорт полковника В.Айрапетяна, обещав ему, что он немедленно будет обращаться в Москву—министру обороны Российской Федерации, с просьбой перевести его из Сибирского военного округа (г. Кемерово) в распоряжение министра обороны Республики Армения — для прохождения дальнейшей службы.

Приказ министра обороны Российской Федерации маршала авиации Шапошникова состялось в мае 1992г.

После сдачи должности полковник В.Айрапетян в сердине июня 1992г. прибивает в г.Ереван и поступает в распоряжение министра обороны Республики Армения В.Саргсяна, приказом которого от 13.07.1992г. он с 1—го июля 1992года приступает к исполнению обязанности начальника управления ракетных войск и артиллерии и в этой должности он прослужил до 1 ноября 2003г., более 11 лет.

С первого дня назначения на должность полковник В.Айрапетян с высокой ответственностью приступает к формированию Управления артиллерии, артиллерийских подразделений и частей, одновременно лично возглавляет комиссию по приему артиллерийского вооружения и техники из соединений и частей 7 Гвардейской Армии Российской Федерации, которая дислоцировалась в Армении и по соглашению между руководителями Российской Федерации и Республики Армения подлежало к частичной передаче и приему боевой техники, вооружения и жилого фонда.

Под руководством и непосредственным участием начальника РВиА полковника В.Айрапетяна сформорованные в короткие сроки первые артиллерийские батареи, а затем дивизионы отправляются в приграничные с Азербайджаном районы, где уже шли боевые действия, занимают боевые порядки и своим мощным огнем поддерживают фидаинские подразделения (джокаты), а затем вновь созданные мотострелковые подразделения, которые получив поддержку артиллрерии стали давать отпор врагу, уверенно удерживать занимаемые позиции и рубежи, а местами переходить в наступление.

Основные артиллерийские подразделения и воинские части (отдельные дивизионы, полки, бригады) были сформированы и в ос-

новном укомплектованы вооружением, техникой и личным составом уже к началу октября 1992 года, которые активно участвовали в приграничных сражениях как в Арцахе, так и по всей восточной границе Армении, начиная с Мегри, Капана и до самого Ноемберяна.

Начальник РВ и А не только занимался формированием управления РВиА, артиллерии непосредственного почнинения,но и в вновь созданных мотострелковых полках и бригадах, лично выводил артиллерию в пограничные районы, руководил занятием боевых порядков, организовывал их подготовку и управление огнем артиллерии, взаимодействие с мотострелковыми частями, а в самых ответственных участках лично управлял огнем артиллерии.

К началу октября 1992 года сложилось очень сложная обстановка в районе Лачина, где азеры предприняли попытку закрыть Лачинский проход, который связывал НКР с Арменией, наступая большими силами с юго—восточной и северо—западной стороны г. Лачина.

Полковник В.Айрапетян с разрешения министра обороны Республики Армения создает сильную группировку артиллерии (гаубичной, реактивной, пушечной и противотанковой), скрытно разместив и взявь на себя управление огнем, во взаимодействии с общевойсковыми группировками наносит ощутимые потери группировке противника, жестокие бои шли особенно в период с 1 по 12 октября 1992г. Несмотря на ранение (9 октября) он уверенно руководил артиллерией до выполнения поставленной задачи. Лачниский проход был расширен, вражеские подразделения начали отступать.

Начальник ракетных войск и артиллерии полковник В.Айрапетян лично управлял огнем артиллерии и на других участках и направлениях, Горис—Капан, Мартакерт, Кельбаджар—Омар, Тауш—Казах и др.

28 мая 1994г за активное участие в Арцахской войне и при этом за проявленную храбрость, умелое руководство РВ и артиллерией вооруженных сил Республики Армения в ходе боевых действий, Указом Президента Республики Армения Левона Тер—Петросяна полковнику Владимиру Асатуровичу Айрапетяну присвоена высокое воинское звание “генерал—майор”.

Высока заслуга генерал—майора В.Айрапетяна в формировании и создании РВ и артиллерии вооруженных сил Республики Армения, в укреплении восточных границ НКР и Республики Армения. Он лично участвовал в боях по защите востчных границ Родины, по освобождению захваченных врагом армянских территорий, доб-

ровольно вступая в вооруженные силы Республики Армения, активно участвуя в строительстве и формировании вооруженных сил, он показал свою любовь и преданность Родине, а в войсках он заслужил доверие, признание, авторитет и уважение.

Обладая высокими профессиональными знаниями, личными организаторскими способностями, практическим опытом, он активно помогал командованию соединений, частей и подразделений по выполнению боевых задач.

## Служение Родине и подвиги

—1992 г., июль—октябрь, Лачин

Сложилась сложная обстановка, противник предпринимал все усилия по закрытию Лачинского коридора, соединяющей Республику Армения с НКР. Под командованием полковника Владимира Айрапетяна созданная группировка артиллерии наносил точные огневые удары по наступающей группировке противника, воодушевленные успехами артиллерии наша оборонительная группировка не только успешно удержала занимаемые позиции, но и местами перешла в контрнаступление, этими действиями они намного расширили Лачинский проход в сторону НКР.

Несмотря на ранение правой руки он не уходит из поля боя, продолжает управлять огнем артиллерии до конца боя и выполнения поставленной задачи.

—1992г., ноябрь—декабрь — участвует в оборонительных боях г.Мартакерта.

—1993г., апрель—май — участвовал в боях на оборонительном участке Капан—Шикаог—Сращен—Цав, лично руководил артиллерией, точным огнем наносил ощутимые потери противнику, особенно в районе Сращена и в азерской деревни Келлу.

—1994г. с 1—го января по 18 февраля — направление Кельбаджар—Омар.

С 20 по 31 декабря противник организовал наступление крупными силами в направлении Омар—Яншак—Камышлы и Омар—Сейдлар—Демерчидам и имел определенные успехи. В ходе неорганизованного отступления Ванадзорского мотострелкового полка артиллеристы 28—го декабря 1993г оставляют противнику батарею 122ммГ Д—30 (4 орудия) на огневых позициях в деревне Сейдлар, эвакуируют только личный состав и артиллерийские тягачи батареи.

Прибыв 1—го января 1994г. в район деревни Демерчидам, где был размещен командный пункт наших войск и узнав об оставлении единственной артиллерийской батареи, лично организовывает разведку и уточняет расположение передовых подразделений противника, принимает решение и лично с водителем артиллерийского тягача из Гюмринского артиллерийского полка 2—го января, несмотря на реальную опасность, успешно выводит все 4 орудия на новые огневые позиции, устранив неисправности на орудиях, которые нанесли отступавшие разведывательные подразделения мотострелков, к исходу следующего дня батарея начала наносить огневые удары по противнику под руководством полковника В.Айрапетяна.

За короткие сроки выводит в район боевых действий мощную артиллерийскую группу (из Гюмри) в составе гаубичной, пушечной, реактивной и протовотанковой артиллерии, которая своим мощным огнем наносила ощутимые потери противнику.

Появление такой мощной артиллерии вселила уверенность в действиях личного состава мотострелков. Под общим руководством Начальника Главного Штаба вооруженных сил Республики Армения, генерал—лейтенанта Г.Андресяна, наши войска из обороны переходят в наступление и в ночь с 17—го на 18—ое февраля 1994г. наши войска сопровождаемые огнем артиллерии, нанесли ошутимые потери противнику, который отступая оставлял не только своих убитых и раненых солдат, но и артиллерийское вооружение, много боеприпасов, средств связи и управления.

Данная операция считается одной из успешно проведенных вооруженными силами Республики Армения в ходе всей Арцахской войны, в результате которой наши войска полностью освободили Кельбаджарский район и овладели Омарским хребтом.

Генерал—майору Владимиру Айрапетяну характерна личная отвага, честность, храбрость и ответственность за порученное дело, который активно и целенаправленно руководил и участвовал в создании и развитии ракетных войск и артиллерии, управлял ее боевыми действиями на самых ответственных и опасных участках.

За проявленную высокую ответственность и личную храбрость в служении Родине и в ходе всей Арцахской войны генерал—майор Владимир Айрапетян награжден правительственными наградами Республики Армения, орденом “Боевой крест 2—й степени”, орденом “Вардан Мамиконян”, медалями “За Храбрость”. имени Нждэ, Андраника Озаняна,, Д.Канаяна, маршала Баграмяна и за

долголетнюю и примерную воинскую службу в Советской Армии он был награжден “Орденом за службу Родине в ВС СССР 3–й степени”, медалями “За воинскую доблесть в ознаменовании 100–летия со дня рождения В.И.Ленина”, за безупречную службу 1–й, 2–й, 3–й степени и другими наградами.

Генерал–майор Владимир Асатурович Айрапетян был первым и безсменным начальником Ракетных войск и Артиллерии в период с 1–го июля 1992 года по октябрь включительно 2003 года.

В настоящее время генерал–майор Владимир Асатурович Айрапетян работает в комиссии высшего офицерского состава при министре обороны РА.

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



ԿԼԻՄԵՆՏ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1940 թ. մայիսի 1-ին Հայաստանի Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ մտավորականի ընտանիքում: 1957 թ. ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, իսկ 1966-ին՝ գերազանցությամբ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Մինչև 1968 թ. աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում՝ որպես կրտսեր, ապա ավագ գիտական աշխատող: 1968 թ. դեկտեմբերին ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ արտադրությունից կտրված: 1971 թ. առ այսօր աշխատում է նույն ինստիտուտում՝ սկզբում կրտսեր, ապա ավագ առաջատար գիտաշխատող, իսկ 1994-ից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» թեմատիկ խմբի ղեկավար: 1979-ից պատմական գիտությունների թեկնածու է, իսկ 1994-ից՝ պատմական գիտությունների դոկտոր: Հանրապետությունում հայկական ազգային զորամիավորումների Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցերը և հայ զորավարների կենսագրությունները լուսաբանող ճանաչված մասնագետներից մեկն է:

Հեղինակ է 13 մենագրության. «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին», Ե., 1980, «Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում», Ե., 1983, «Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում», Ե., 1990, «Մարշալ Բաղրամյան»,

Ե., 1997, «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945 թթ.)», Ե., 2001, «Գրիգոր Արտեմի Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Ե., 2001, «Հայրենական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.», Ե., 2002 (երկու հրատարակություն), «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)», Ե., 2002, "Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945)", Е., 2004, "Маршал авиации С.А. Худяков—А.А. Ханферянц", Е., 2006, "Маршал Советского Союза, дважды герой И.Х. Баграмяна", Е., 2007, "Участие воинов-армян в Сталинградской битве (17.07.1942—2.02.1943)", Е., 2007, «Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան», Ե., 2007: Համահեղինակ է 6 գրքի, "Книга о героях", Ժ., 1985, «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի», Ե., 1988, «Գրիգոր Հարությունյան, Կյանքը և գործունեությունը», Ե., 2000, «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում», Ե., 2001, "Участие сотрудников Национальной академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941-1945)," Е., 2001, "Маршал Победы — И.Х. Баграмян", Е., 2002, 2003 (два издания на рус. языке).

Հայրենական 76-րդ լեռնահրաձգային և 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիաների պատմության, Խորհրդային Միության մարշալ Ի.Խ. Բաղրամյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ արխիվային փաստաթղթերի ու նյութերի ժողովածուների կազմող-համահեղինակ է (երեք ժողովածուները հրատարակվել են ռուսերեն): Հեղինակ է ավելի քան 60 գիտական, 110 հրապարակախոսական հոդվածների, Խորհրդային Միության հայ հերոսների և Փառքի շքանշանի հայ լրիվ ասպետների, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին երեք բազմատպաքանակ պլակատների (հայերեն և ռուսերեն լեզուներով), 25 գրքի խմբագիր է, այդ թվում՝ «Հուշամատյան» (Ե., 1995, 1996, 1998, 2005) քառահատորյանի խմբագիր և 1-ին և 4-րդ հատորների առաջաբանների հեղինակ, 8 միջազգային և 16 հանրապետական գիտաժողովների մասնակից: Պարգևատրվել է «Մարշալ Բաղրամյան», «Մ.Ա. Շոլոխով», «Հայրենական մեծ պատերազմի 60-ամյակը» մեդալներով, Հայաստանի ԳԱ նախագահության «Գովեստագրով» և Ռուսաստանի ԳԱ նախագահության հատուկ մրցանակով՝ պատվավոր վկայականով (2007 թ.): Ամուսնացած է, ունի մեկ տղա, երկու աղջիկ, 4 թոռ և 1 թոռնուհի:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳՐՔԻ ՄԱՍԻՆ ........ 5
ԱՌԱՋԱԲԱՆ ........ 7
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ ........ 15
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ........ 24
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ ........ 36
ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1994թ. հուլիս-2003թ. հոկտեմբեր) ........ 58
ՎԵՐՋԱԲԱՆ ........ 72
ՀԱՎԵԼՎԱԾ ........ 77

1. ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ, ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԳԵՆԵՐԱԼԻ ՄԱՍԻՆ ........ 77
2. ՄՏԵՐԻՄՆԵՐԻ ՉԱՓԱԾՈ ԽՈՍՔԸ ԳԵՆԵՐԱԼԻՆ ........ 153
3. ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ........ 163
4. ԶՈՐԱՎԱՐԻՆ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ ........ 276

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ ........ 294


---


ԿԼԻՄԵՆՏ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

КЛИМЕНТ АМАСИЯЕВИЧ АРУТЮНЯН

ГЕНЕРАЛ-МАЙОР ВЛАДИМИР АСАТУРОВИЧ АЙРАПЕТЯН

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Համակարգչային շարվածքը՝ Վիգեն Ավանեսյանի և Արմինե Դավթյանի
Կազմի համակարգչային ձևավորող՝ Աննա Սարյան
Սրբագրիչ՝ Լիանա Միքայելյան

ISBN 978–99941–1–327–9
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 18.5 տպ. մամուլ. 5.25 մամուլ նկ.:Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28,
ֆաքս՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայք՝ www.zangak.am
Գրախանութ՝ Երևան, Խանջյան փող. 29, հեռ.՝ 54–06–07,
էլ. կայք՝ www.book.am

|3500 yr.|

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

А II
92347





